



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԾԻ ԱԵԱՆ
ԱԿՊԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՈՒՄՆԵ
Կ. Ա

39/082/
5-43

ГОСУДАРСТВЕННАЯ
БИБЛИОТЕКА
ИМЕНИ В. И. ЛЕНИНА
МАСКОВСКИЙ ЦЕНТР

З. П.

27
3

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ

обозначенного здесь срока

Возвращена

7. 0.

06 APR 2010

ЭМИНСКІЙ ЭТНОГРАФИЧЕСКІЙ СБОРНИКЪ

ИЗДАВАЕМЫЙ

при Лагаревскомъ Институтѣ Восточныхъ Языковъ

Выпускъ V.

Армено-курдскій эпосъ, собр. С. Айкуни.



ԷՄԻՆԵԱՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՐ

ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԵԱՄԲ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ.

Հ Ա Տ Ո Ր Ե.

Հ Ա Յ - Ք Ր Դ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(Բազմաթիւ քրդական սրգերով և 13 քրդական տղանակներով՝ ձայնագր. թեւաճի 2, Կոմիտասի)

Հ Ա Ի Ա Բ Ե Ց

Ս. Հ Ա Յ Կ Ո Ւ Ն Ի.



ՄՈՍԿՈՒԱ-ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.
ՌՅԾԳ-1904.

„RECUEIL ETHNOGRAPHIQUE
d'ÉMINE“

publié par l'Institut Lazareff des langues orientales à Moscou, sous la direction du Prof. G. Khalathiantz.

Vol. I. Matériaux ethnographiques, recueillis par *A. Mkhithariantz* dans le district d'Alexandropol (ancien Chirak), gouvernement d'Erivan. 1^{re} partie: Littérature populaire arménienne, recueillie d'après la tradition: contes, récits, proverbes, dictons, énigmes, etc. 2^{me} partie: Croyances et superstitions, moeurs, coutumes et professions. Glossaire du dialecte de Chirak. Moscou—Alexandropol. XII+338 p. in 8°. Prix 1 r. (2 fr. 50 c.).

Vol. II. Epopées populaires et contes en différents dialectes, recueillis dans l'Arménie de Turquie par *S. Haïkouni*, 1^{re} partie: Moscou—Vagharchapat. X+447 p. in 8°. Prix 1 r. 25 cop. (3 fr.).

Vol. III. Mots tures empruntés par l'arménien, étudiés et rangés dans l'ordre alphabétique par *H. Atcharian*. Moscou—Vagharchapat. IV+381 p. in 8°. Prix 1 r. 50 cop. (4 fr.).

En regard de chaque mot ture, imprimé en caractères turs et en caractères arméniens, le glossaire donne la transcription en caractères latins et la traduction française, afin de rendre le travail accessible aux savants européens.


Vol. IV. Contes (48) arméniens populaires en différents dialectes, recueillis par *S. Haïkouni*. Supplément: Deux variantes de traditions héroïques arméniennes de *David de Sassoun et de Mher*. 2^{me} partie. Moscou—Vagharchapat. IV+462 p. in 8°. Prix 1 r. 25 cop. (3 fr.).

Vol. V. Epopée arméno-kurde, recueillie par *S. Haïkouni*. Moscou—Vagharchapat. 1904. VIII+304 p. in 8°. Prix 1 r. 50 cop. (4 fr.). Ce tome contient les traditions héroïques des Kurdes, telles qu'elles nous ont été transmises dans les différents dialectes arméniens du vilayet de Van; c'est pour cette raison que nous les avons nommées arméno-kurdes. Outre des éléments purement kurdes ces traditions renferment qu'on rencontre aussi dans les poésies des autres peuples iraniens, et qui rappellent d'une manière curieuse le *Châh-Nâmeh* de Ferdoucy, et présentent peut-être des variantes de l'épopée perse; tels sont les traditions de Roustem, de son père Zal, des héros Bedjan, Sam etc. En tout, ce tome contient 28 récits, dont 13 renferment des chants kurdes; la musique de ces chants a été placée à la fin du volume, avec les transcriptions arménienne et européenne du texte.

Tous ces ouvrages se vendent à l'Institut Lazareff des langues orientales, Moscou (Russie).

Z. n.

39(082)
5-213
W



1348

ЭМИНСКИЙ ЭТНОГРАФИЧЕСКИЙ СБОРНИКЪ

ИЗДАВАЕМЫЙ
при Лазаревскомъ Институтѣ Восточныхъ Языковъ
Выпускъ V.
Армено - Курдскій эпосъ, собр. С. Айнуни.

№ 9002

ԷՄԻՆԵԱՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԵԱՄԸ

ԱԶԱՐԵԱՆ ԺԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ.

Հ Ա Տ Ո Ր Ե. (5)

ՀԱՅ-ԶՐԴԱԿԱՆ ՎԷՊ.

ՀԱՒԱԳԵՑ

Ս. ՀԱՅԿՈՒՆԻ.



ՍՈՍՎՈՒՆ—ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.
1889—1904.



01.06.2013

На основаніи опредѣленія Совѣта Спеціальныхъ Классовъ Лазаревскаго Института восточныхъ языковъ отъ 22 Декабря 1903 г. печатать дозволяется.

Директоръ *Вс. Миллеръ.*

1078
39

Обложка и предисловіе настоящей книги напечатаны въ Москвѣ, остальная же часть—стр. 1—304—въ Вагаршанатѣ, въ типографіи Эчмιάдзинскаго монастыря.

Типографія Х. Бархударяцъ, Москва, Срѣтенка, Мясной пер., д. Бѣльева.

Отъ редакціи.

Настоящая книга, составляющая пятый выпускъ „Эминскаго этнографическаго сборника“ и третью часть изъ собраній С. Айкуни, заключаетъ съ себѣ курдскія эпическія сказанія, передаваемые у армянъ Ванскаго вилайета на различныхъ мѣстныхъ армянскихъ говорахъ, почему и эпосъ этотъ названъ нами армено-курдскимъ. Кромѣ чисто-курдскихъ, въ немъ встрѣчаются и обще-иранскіе эпическіе мотивы, составляющіе любопытные отголоски „Шахъ-Намэ“ Фирдоуси, а, быть-можетъ даже и варианты персидскаго эпоса въ болѣе ранней его формаціи. Таковы сказанія о *Ростамѣ*, объ отцѣ его *Замѣ*, о герояхъ *Беджаннѣ* и *Самѣ*; въ нихъ упоминается и о царѣ *Кайкавустѣ*, о *Кивѣ* (Гивѣ), *Мах-Мариджаннѣ* (Мениже), *Сіанушѣ*, а также о рустемовомъ конѣ *Рахшѣ* (вар. Ашхаръ и Ашхаль), о „бѣломъ“, „красномъ“ и „черномъ“ дивахъ и мн. другомъ.—Любопытно замѣтить, что сыномъ Рустема въ предлагаемыхъ разсказахъ является не Сохрабъ, какъ въ „Шахъ-Намэ“, ни же Зурабъ, какъ во многихъ кавказскихъ сказаніяхъ этого рода, а *Мхеръ*,—имя, которое въ одинаковой степени употребительно у курдовъ и у армянъ Ванскаго округа и съ-которымъ послѣдніе связываютъ и другіе эпическіе разсказы; между ними особенно популяренъ эпосъ о „Давидѣ Сасунскомъ и сынѣ его Мхерѣ“, четыре варианта котораго были напечатаны во второмъ и четвертомъ выпускахъ „Эминскаго этнографическаго сборника“. Не лишне также указать, что приведенные въ нашемъ сборникѣ эпизоды изъ персидскаго эпоса иногда наслоены сказочными мотивами, какъ это замѣчается и въ кавказскихъ версіяхъ иранскихъ сказаній*).

*) Ср. *Вс. Миллеръ*, Экскурсы въ область русск. народн. эпоса. Приложение: отголоски иранскихъ сказаній на Кавказѣ, стр. 37—69, Москва, 1892.

Что касается чисто-курдских сказаний, то содержание их большею частью взято из действительной жизни и потому они заслуживают особенного внимания, как вѣрное изображение быта курдовъ, ихъ нравовъ, обычаевъ и вѣрованій. Нѣкоторыя изъ этихъ сказаній, какъ видно изъ сравненія, представляютъ варианты изданныхъ Академіей Наукъ, подъ редакціей извѣстнаго ираниста А. Социна, курдскихъ рассказовъ*); таковы *Мамъ и Зинъ*, *Рустемъ* (I и II), *Иосифъ и Зулейха*, *Джанбелли*. Но наша серія, судя по крайней мѣрѣ по этимъ общимъ сюжетамъ и въ особенности по двумъ рассказамъ о Рустемѣ, — и богаче и разнообразнѣе сборника Социна, хотя курдскій эпическій матеріалъ и прошелъ черезъ народную армянскую среду.

Здѣсь же слѣдуетъ замѣтить, что, кромѣ сравнительнаго изученія иранскихъ эпическихъ мотивовъ, настоящий выпускъ представляетъ важность и съ точки зрѣнія армянской діалектологіи, такъ какъ предлагаемые рассказы записаны, какъ было упомянуто, на различныхъ говорахъ Ванскаго нарѣчія.

Всѣхъ рассказовъ въ этомъ выпускѣ 28. Изъ нихъ 13 заключаютъ въ себѣ и *курдскія пѣсни*, иногда довольно пространныя (въ томъ числѣ 5 рассказовъ цѣликомъ приведены по-курдски); къ нимъ приложенъ близкій армянскій переводъ, сдѣланный тѣмъ же неутомимымъ собирателемъ г. Айкуни при помощи знающихъ курдскій языкъ лицъ. Съ цѣлью дать понятіе о курдскихъ напѣвахъ, редакція „Эминскаго этнографическаго сборника“ поручила знатоку народной пѣсни архимандриту Комитасу записать напѣвы прилагаемыхъ здѣсь пѣсенъ: они помѣщены въ концѣ настоящаго изданія съ армянской и европейской транскрипціей текста пѣсенъ.

Г. X.

21 Февраля 1904 г.
Москва,
Лазаревскій Институтъ
Восточныхъ языковъ.

*) Kurdische Sammlungen, II Abt. Erzählungen und Lieder im Dialekte von Bohtan gesammelt, herausgegeben und übersetzt von A. Socin, S. Petersb., 1890. Ср. рассказы на страницахъ 99, 126, 147, 153, 266 нѣмецкаго перевода.

СОДЕРЖАНІЕ.

Отъ Редакціи „Эминскаго этнографическаго сборника“ I—VIII
АРМЯНО - КУРДСКІЙ ЭПОСЪ.

	Стр.
1. Ростамъ и Заль (на Моккскомъ нарѣчій)	3— 13
2. Ростамъ, Атамбжи и Дюро	14— 24
3. Ростамъ Заль (на говорѣ Артикэ)	25— 39
4. Бѣджанъ	40— 53
5. Самъ (на Моккскомъ нарѣчій)	53— 60
6. Кантили Сіапушъ и Хозбекъ*)	60— 70
7. Лейли Меджлумъ*) (по курдски, перев. на ново-литер. арм. яз.)	71— 75
8. Джанбалли*) (на Моккскомъ нарѣчій)	76— 95
9. Далу Хамза	96—111
10. Абабалакъ (на Озмійскомъ говорѣ)	111—115
11. Хасамъ-Ага*) (на Моккскомъ нарѣчій)	115—123
12. Война между Хасанъ-Ага Хайдарскимъ и Езидомъ Кокъ-Ага (перев. на ново-литератур. арм. яз.)	123—126
13. Чомаръ-Бекъ (на Моккскомъ нарѣчій)	126—128
14. Мирза-Ага, Тели Ашавъ*)	129—131
15. Куллекъ и Кяро*) (перев. на ново-литер. арм. яз.)	131—147
16. Куллекъ и Кяро*) (на Арчешскомъ говорѣ)	147—167
17. Сіамантъ (на Моккскомъ нарѣчій)	168—177
18. Сіабенто и Хачэ-Зеринъ (на Хлатскомъ говорѣ)	178—187
19. Рошкъ, Аpezэти же Аpezэтанъ (на Озмійскомъ говорѣ)	187—200
20. Мамъ и Зинъ*) (на Ванскомъ нарѣчій)	201—227
21. Мама-Зинъ (стихотворный перев. на ново-литератур. арм. яз.)	227—264
22. Езидъ дервинъ Авди*) (на смѣшан. Ванскомъ нарѣчій)	264—268
23. Севахачэ*) (курдскій текстъ и подстрочн. перев. на ново-литератур. арм. яз.)	269—273
24. Хамутэ Шанкэ*) (курдскій текстъ и подстрочн. перев. на ново-литератур. арм. яз.)	274—279
25. Хамэ Мусэ*) (курдскій текстъ и подстрочн. перев. на ново-литератур. арм. яз.)	280—283
26. Начаръ-оглы (на смѣшан. Ванскомъ нарѣчій)	283—293

ПРИЛОЖЕНІЕ.

27. Гусепъ и Залехъ (на Моккскомъ нарѣчій)	297—303
28. Молла Муси Сайранъ*) (курдск. текстъ и перев. на ново-литератур. арм. яз.)	304

) Обозначенные звѣздочкой () эпическіе рассказы содержатъ курдскія пѣсни, напѣвы которыхъ переложены на ноты архимандритомъ Комитасомъ помѣщены въ концѣ настоящаго изданія.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ.

Ներկայ գիրքը, որ «Էմինեան Ազգագրական Ժողովածուի» հինգերորդ հատորն է կազմում, իսկ պ. Ս. Հայկունու հաւաքածուներից երրորդ մասը, — պարունակում է իւր մէջ Քրդական վէպեր, որ շրջում են Վասպուրականի հայ ժողովրդի բերանում տեղային այլ և այլ բարբառներով. այս է պատճառը որ ներկայ հատորը մենք հայ-Քրդական վէպ անուանեցինք. Բացի բուն քրդականից՝ նորա մէջ կան և ընդհանուր Իրանական վիպական եղանակներ, որ հետաքրքրական արձագանք են Թիրբուսու «Շահ-Նամէի» և կամ գուցէ վարիանտներ Պարսից վէպի՝ իւր աւելի-հնագոյն ձևերով: Այսպէս են՝ օրինակ, վիպական պատմութիւնները Ռոստամի մասին, նորա հօր Զալի, Բէձան և Սամ հերոսների մասին. սոցա մէջ յիշվում են Կայրավուզ թագաւորը, Կիվը (Քիվ), Մահ-Մարիջանը (Մէնիժէ), Սիափուշը, նոյնպէս և Ռոստամի նժոյգ Ռախշը (վար. «Սշխար» և «Սշխալ»), «սպիտակ», «կարմիր» և «սև» դևերը և այլն. հետաքրքրական է նկատել, որ առաջարկուած վէպերի մէջ Ռոստամի որդին ոչ թէ Զոհրաբ է կոչվում՝ ըստ «Շահ-Նամէի» և կամ Զուրաբ ըստ Կովկասեան վիպական զրոյցների, — այլ Մհեր, — մի անուն, որ հաւասարապէս գործածական է Վասպուրականի Քուրդ և հայ ժողովրդի մէջ և որի հետ տեղային հայերը կապում են և այլ վէպեր. սոցա մէջ մեծ ժողովրդականութիւն է վայելում «Իււրիթ Սասունցի և Մհեր», որի չորս վարիանտները լոյս տեսան «Էմինեան Ազգագրական Ժողովածուի» երկրորդ և չորրորդ հատորներում: Աւելորդ չէ նոյնպէս դիտել, որ պարսկական վէպի յիշեալ պատմութիւնները մեր ժողովածուի մէջ ևս երբեմն հէքիաթային բնաւորութիւն են կրում, ինչպէս որ այդ նկատվում է և Իրանական վէպերի Կովկասեան ճիւղերի մէջ*):

Ինչ վերաբերում է բուն Քրդական վէպերին՝ պէտք է ասել, որ դոցա բովանդակութիւնը առած է իրական կեանքից. շատերը նո-

*) Համեմ. В. Миллеръ, Эскурсы въ область русскаго народнаго эпоса. Приложение: отголоски иранскихъ сказаний на Кавказѣ, стр. 37—69. Москва, 1892.

ցանից ճշգրութեամբ կատարուած իրողութիւններ են, ուստի և արժանի են առանձին ուշադրութեան՝ ինչպէս ճշգրիտ պատկերներ քրդերի նիստ ու կացի, սովորոյթների և հաւատալիքների: Այս վէպերից մի քանիսը, ինչպէս երևում է համեմատութիւնից, վարիանտներ են՝ տարիներ առաջ յայտնի իրանագէտ Ա. Սոցինի խմբագրութեամբ Գիտութեանց ձեմարանում հրատարակուած՝ քրդական պատմութիւնների*): այսպէս են՝ Մամ ու Զին, Ռոստամ (Ս. և Բ.), Յուսէփ և Զուլէյխա, Զանբելի: Բայց մեր ժողովածուն՝ համեմատութեան առնելով գէթ այս ընդհանուր նիւթերը և մանաւանդ Ռոստամի մասին երկու պատմութիւնները, թէ՛ հարուստ է Սոցինի հրատարակածներից և թէ՛ բազմատեսակ, թէպէտ և քրդական վիպական նիւթերը անցել են հայ ժողովրդական միջավայրից:

Այստեղ իսկ նկատելու է, որ բացի իրանական վէպերի համեմատական ուսումնասիրութիւնից, ներկայ հատորը կարևորութիւն ունի և հայ բարբառագիտութեան տեսակէտից, որովհետև առաջարկուած պատմութիւնները գրի են առնուած, ինչպէս յիշեցինք, Վանի բարբառի այլ և այլ գաւառաբարբառներով:

Ընդամենը այս գիրքը պարունակում է իւր մէջ 28 վէպ կամ պատմութիւն. դոցանից 13-ը ունին և քրդական երգեր՝ երբեմն բաւականին ընդարձակ (դոցա թվում 5 պատմութիւն առաջ են բերուած ամբողջապէս քրդերէն). դոցա կցուած է և բնագրին շատ մօտ հայերէն թարգմանութիւն, որ կատարուած է նոյն անխոնջ բանահաւաք Ս. Հայկունու աշխատանքով՝ աջակցութեամբ քրդերէնին հմուտ անձինքների. — «Էմինեան Ազգագրական Ժողովածուի» խմբագրութիւնը՝ քրդական երգերի եղանակներով մասին որոշ մի դադարաւոր տալու դիտմամբ, յանձնեց ժողովրդական երգի մասնագէտ Արժ. Տ. Կովիտաս վարդապետին ձայնագրելու այդ եղանակները եւրոպական երաժշտական խաղերով. գորքա ղետեղուած են ներկայ հատորիս վերջը՝ երգերի բնագրի հայ և եւրոպական տառագարձութեամբ:

Գր. Խ.

21 Փետրուարի 1904 թ.
Մոսկուա.
Հաղարեան ձեմարան
Արևելեան Լեզուաց:

*) Kurdische Sammlungen, II Abt. Erzählungen und Lieder im Dialekte von Bohtan, gesammelt, herausgegeben und übersetzt von A. Socin, S. Petersburg, 1890. Համեմ. գերմաներէն թարգմանութեան 99, 126, 147, 153, 266 էրեսներում ղետեղուած պատմութիւնները:

ՆԻԻԹԵՐԻ ՑԱՆԿ.

«Էմինեան Ազգագրական Ժողովածուի» խմբագրութեան
կողմից I—VIII

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՎԷՊԵՐ

	Ե ր և Վ.
1. Ռօստամ ու Չալ . . . (Մոկաց Նորտուգայ բարբառով)	3— 13
2. Ռօստամ և Ատամբժի ու Դիւրօ . . . » . . . »	14— 24
3. Ընօտամի Չալ (Արծկէի լեզուով)	25— 39
4. Բէճան » . . . »	40— 53
5. Սամ (Մոկաց բարբառով)	53— 60
6. Ղանտիլի Սիափուշ և Հեղբէկ*) . . . » . . . »	60— 70
7. Լէյլի Մէջլում*) (բրդերէն՝ աշխարհաբանի վերածած)	71— 75
8. Ջամբալի*) (Մոկաց բարբառով)	76— 95
9. Դալու համզա » . . . »	96—111
10. Աբարալաբ (Ոգմեցոց լեզուով)	111—115
11. Հասամ աղա*) (Մոկաց բարբառով)	115— 123
12. Հայդարցի Ալի աղայի և Եզլի Գօբ աղայի պատերազմը (Թարգմանութիւն գրական լեզուով)	123—126
13. Չոմար Բէկ (Մոկաց Նորտուգայ բարբառով)	126—128
14. Միրզա աղէն, Թէլի Աշան*) . . . » . . . »	129—131
15. Քուլլեք ու Կեանօ*) (Թարգմ. գրական լեզուով) . . .	131—147
16. Քուլլեք ու Կեարօ*) (Արծէշու լեզուով)	147—167
17. Սիյամանտ (Մոկաց Նորտուգայ բարբառով)	168—177
18. Սիյամէնտօ և Խաճէ Չէնին (Խլամայ լեզուով)	178—187
19. Ռօշք, Ապրզէթի ժր Ապրզէթան (Ոգմեցոց . . . »	187—200
20. Մամ ու Չին*) . . . (Վանայ Շամշադին դիւղի . . . »	201—227
21. Մամազին (ոտան. Թարգմ. գրական լեզուով)	227—264
22. Եզլի Դերվիշի Ավդի*) . . . (Վանայ խառն բարբառով)	264—268
23. Սեահաջէ*) (բրդ. բնագիր և բառացի Թարգմ. գրա- կան լեզուով)	269—273
24. Համուտէ Շանկէ*) (բրդ. բնագիր և բառացի Թարգմ. գրական լեզուով)	274—279
25. Համէ Մուսէ*) (բրդ. բնագիր և բառացի Թարգմ. գրա- կան լեզուով)	280—283
26. Նաչար Օղլի (Վանայ խառն բարբառով)	283—293
ՑԱԻԵԼՈՒԱԾ.	
27. Յուսեփ ու Չալեի (Մոկաց բարբառով)	297—303
28. Մօլլա Մուսի Սպրան*) (բրդ. բնագիր և բառացի Թարգմ. գրական լեզուով)	304

*) Աստղանիշ վէպերը ունին բրդական երէկը, որոնք ձայնագրուած են եւրոպական խաղերով Արժ. Հ. Կոմիտասի աշխատութեամբ և տեղաւորուած գրքիս վերջում:

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ Վ Է Պ Ե Ր



Типография Эчмиадзинскаго монастыря. Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի.
Вагаршапатъ Ваղարշապատ
1903

I

ՌՕՍՏԱՍ ՈՒ ԶԱԼ



(Մական Եւրոպայ Տիմ գիւղի բարբառով *)



ալ խեծաւ ուր ձին, զնայ Աաֆիուֆայ սար Գեհիր. արուաւ ձիաւորմ' կեօ խեծե, սարիմ պէս Զոջ ի, վի- քեանց' էդ սարից իջաւ տակ, էկաւ մօ Զալ:

Զալին սասց.— Իիւ ին մարդ իս էսա տեղ:

Զալ ուր ախուն չըկարցաւ տակը' ես Զալն իմ.— Ես մէ Ծու- դաւայ մարդմեմ, սասց. էկեր իմ, Գեհիր կան կզեամ, բանմ ընկի եմ ձեա, տանեմ եմ օղուլ ոււաղիցն, ուտենք:

Էդա ձիաւոր ինչ Զալին դէմ առեց, թողեց, զնաց:

Որ զնաց, Զալ սասց.— Էսա էրկիր յըմեն եմ ձեռն ի. էսա մարդ էկաւ. առանց տփել, տառանց սպանել եմ ձեռնէն զնաց, պտի էրթամ իտե. զանեմ, տալանեմ:

Էլան ընկեան իտե, զնաց մէ գեօրգով զարկեց ուր համառով: Ձիաւոր զըւրաւ,— Զնայ մարդ, սասց. քե ին պտի, տամ քե, թող զնա քու ինչին ինչ ձընէ կուզես:

Իլաւ, Զալ զատաղաւ, ուր մընէ հեռու-զնաց:

Իի մէլ սասց.— Զնայ-հայ, ես Զալ ըլեմ, զըրաւ մը չը զարկեմ, ես էմէլ զըւրիմ, էրթամ ինե, մէկ զըրաւ էլ զարկեմ:

Զըւրաւ զնաց ինե, մէկ զըրաւ էլ զարկեց ինոր քեամկին.

Զըւրաւ էդ ձիաւոր ձիաւ քեամկի միջէն. Զալին բռնեց, զրեց ուր ճառն տակ:

* Պատմած է ժողովարար Պետրոս Վերտեան Խաւրովի բռն, որ երկու տարի է Երեւանեան Գեղարք կապրի. իսկ սա սովորած է 2010 անուն մէկէն. որը հայնպէս ժողովարար է: Պետրոս զիտ բազմաթիւ ճեմարներ եւ Բրդական վէպեր: Թէեւ ինչ տարի է երկրէն դուրս ելած է. սակայն իւր հայրենի բարբառի տեղ տեղ փոխած է. գուցէ ժողովարարութեան պատճառաւ:



—Այ մարդ, ասաց. ես դիտեմ, դիւ էկար ձի ար՝սպանիս, բալի դիւ աղայ իս, խեղճ մարդ իս. ես քե չեմ սպանե, քե կը թողիմ, ես լսեր իմ, Ռօստամ կայ Իրանցոց մէջ, թի դիւ բերիս եմ ձեռ, գեայ եմ կռիւ, քե կը թողեմ:

Չալ ասաց.—Ես չըմ գիտի, դիւ ի՛նչ մարդ էս. քեռ անուն ինչ ի: Ասաց.—Եմ անուն Սալման Սնտու ի. Թիրանցի. ասա Ռօստամին դեայ եմ կռիւ:

Ասաց.—Թի ընձի թողնես, անհ ընի, եմ աչք ինի Ռօստամի աչից, ես քե խրմակ օրողկեմ, դեայ քիւ կռիւ:

Չալ դնաց, մտաւ յօտն, դիւ վըր ուր շինեց, ասաց.—Ռօստամ մանար, forվայ ի, չու եօթ-ութ տարի վրէն ընձի, զանաւանայ, նոր կօրողկեմ, կերթայ, եփ ես տըսայ, ի՛նչ իմ աչք ընկեալ Ռօստամի աչից, կօրողկեմ, կերթայ:

Չալի եօթ տարին քրմըմաւ, Ռօստամ ջոջացաւ. էլաւ դիւ ընկեալ, ասեմ ի՛նչ Ռօստամ նսան ի դալափի դէմ ուր գլեօս կը խուղի, Չալի աչք ընկեալ մըջ Ռօստամի իրիսին, իրաց. ասաց մըջ ուր մտին.—Ես ինչի օրողկեմ էդ ֆեօրփան էրթայ էն ֆեաֆիրին կռիւ:

Չալ որ իրաց, Ռօստամի աչք ընկեալ ուր խօր աչից մէջ, տըսաւ ուր խէր, ասաց.—Ընչի կըլաս:

Ասաց.—Ես էսա եօթ տարի մտեր իմ յօտն, որ քե շտըսէր, ես անհ եմ արեր Սալման Սնտու խրմայ, որ եփ եմ աչք ընկի քիւ աչից, քե օրողկեմ կռիւ. ես կըլամ որ դիւ ֆեօրփայ իս, չես կռնայ կռիւ անի:

Ի՛նչ խէր ասաց. ինոր ըռըկվեր (զայրոյթք) իլաւ կայնաւ, ինոր ճակտի փոնթեր իլաւ Սիսայ սարի գոլ ու նըհըլքեր, ճոռ ու մոռ, դամարեք կայնաւ, ասաց.—Որ դիւ ձի չասիր, որ ասիր, տ'եհամ Սալման Սնտու կռիւ:

Իլաւ խօր, մօր ասաց.—Ես տ'երթամ Սալման Սնտու կռիւ. ես խեծել-մարդ չըմ տանի կռիւ մինակ տ'եհամ: Խօր ասաց.—Եմ Աշխալի բալաքի (ձին) վրէն ըեհար կաց. ես չըմ տանի խը ձի, եփ ի՛նչ ես նեղ տեղ ընկեայ. եմ ձին կը յիմնայ, սալպնդքեր ձեռով կը քանդի, ինոր ակնջքեր սալինդարի (բարտի) պէս կը խաստանայ, կը ցցուի. որ էրթաս, տըսնաս, յիմնաս որ ես նեղ տեղն իմ, եմ դեօրդ-եմ մարբայ, եմ ֆելպեքան՝ կապեալ վեր եմ ձիու քեամկին, ձի խրմայ օղորկես, դեայ. փախից խանիս դիւս, պիրուն կապիս վրէն, ուր դասիւր տաս, էն կգեայ, խասնի ձի:

1 Քելպեքան երկաթեայ կեռն է, որ հակառակորդին կը ձգե խոյս տալ միջոցին կը ֆառե իրեն, կամ ձիուց կը ձգե զետին:

Իլաւ, ձեռ թալեց, սալինսար քեակեց, շըլտեց, դրեց վըր ուր թեաց.—Ես տեհամ Սալման Սնտու կռիւ, ասաց.

Իլաւ դնաց. որ իլաւ, գնաց. խօր սիրա դրեք չտուեց, իլաւ ուր խօրգե Պէժան օրողկեց Ռօստամի խոն: Չալ դատամանց իչկաց, Ռօստամ ասաց Պէժանին.—Պէժան, ընչի կգեաս եմ խոն, դարձի, դնա յետ:

—Չէ, ասաց: դիւ դոր էրթաս. տ'ղեամ: Բեռի ու խօրգե յէլան, էրկուս դեացին. դնացին մըջ Իրանայ դաշտին մէկ աղբուր տըսան. նստան վըր աղբրին, ինոնց խաց, ջիւր կերան 1. դորիս Ռօստամ քնաւ. Պէժանին ասաց.

—Ի՛նչ մարդ էսա արդրանք կեռայ, կերևայ, ձի խանես վեր:

Պէժան տըսաւ էրկուս դե, մէկ գեռոջու տիկ բռնած կգեան որ էն աղբրէն ջիւր տանէն. դնաց յառէջ, ասաց.

Ե՛յ, աղէկ մարդեր, էդա տիկ տուէք, ես էրթամ վըր աղբրին. լցեմ, ձե խրմակ բերեմ. մէկ մարդ մըջ աղբրին կեօ քնիր ի, forփայլի, կը վախենայ, մի՛ դնացէք:

Դեեր լանկեով թալին թըլս Պէժան.—Գէ, դնա դեռ, ասին. ինչիս կեղնի թըլ կգնի, վախենայ, թըլ վախենայ:

Պէժան ձեռ դարկեց մէկի փողպատ, մէկ մէկի փողպատ, էրկու դեերն էլ բռնեց, բիրեց դարկեց յիրար, ըսկուս ի՛նչ որ դիւ մէկ ճնճողակ զարկիս յիրար. զարկեց, ուր ձեռաց մէջ փլըլըցուց: Են տըսաւ էրկու դե էլ էկան տակ, ասին.—Հանք, իչկանք, ի՛նչ դառու մէջ ընկեան մեր աղբրեր: Չալ սիւրքներ, չորս կանթին, բռնած՝ էկան ջըլի Պէժան էմէլ դնաց առէջ, ասաց.—Մե ֆեօրփեն կեօ, վըր աղբրին քընէ, ձե տըսնայ, կը վախենայ. տուէք, լցեմ, բերեմ. տուէք, դնացէք:

Իլան մե մէկու յիշունց տուին.—Չեր ֆեօրփեն կը վախենայ, դասլոտի, ի՛նչ կիւնի թըլ էլին, ասին:

Պէժանի ըռիկ իլաւ, բռնեց էրկու դանեց յիրար, էլմէլ սալանեց: Եդ դեեր քեռուսուն աղբր էն, ինոնց մէկ քեօր կար, էդ քեօր թողած էն տեղ ուրանց տան մէջ. քսան մնացած տան մէջ, քսան դնացած նեհիր:

Եդոնք աւիրութենի խրմայ գրած կաֆիլուֆայ սար:

Եդ տան մնացած քսան դիւուց Պէժան սպանեց չորս, տան մնացած տըսնըվեց՝ տըսնըվեցից չորսն էլ էկան ջըլի:

—Երթանք, իչկանք, մեր աղբրեր ի՛նչ էլան, ասին:

1. Եմել բայ բնօրհանրապէս զարձած իր ֆրեկեմի մէջ, նոյնպէս հայերենը չի գարձածր Պեռու:

Էրկու տիկ էլ առան, էկան վըը աղբրին:

Պէժան յառէջ գնաց, ասաց.— Ադա տիկեր տուէք ընձի, մե մարդ վըը աղբրին քընէր ի, ձե տըսնայ, կը վախենայ:

Էդա գևեր աըսան, կեո ուրանց աղբրքերաց ջանդակ մըջ դաշտին, ասին.— Ը՛լի թի չընի մե աղբրքեր էս ի սպանե, էկան ինե-թըխ Պէժան, կուռան: Էդա չորսին էլ սպանեց, թախեց էն տեղ: Չորսն էլ էլան էկան, տըսան ուրանց աղբրքերաց լեւեր կեո մանչ դաշտին, էդա մէկ մարդ կայնե կեո դայ:

Դաս էդա մարդուն արին, խասան յիրար, Պէժան՝ յըմենի մէ տեղ տփեց գետին. էդա չորսն էլ սպանեց:

Խինդն էլ իլան էկան, տըսան ուրանց աղբրքերու լեւեր կեո նահան էն էն տեղն ի թալի, նահան էն տեղ:

Էն քսանից տըսնըութ սպանեց. մնաց էրկու:

Էն էրկու ջոջեր իտին դումահիք իկան, տըսան տըսնըութ աղբրքեր սպանած ի, կեո ինոնք էրկսով խասան դըրի Պէժան:

Պէժան մէկ ձեռ թալեց մէկի փողպատ, մէկ ձեռ մէկի փողպատ. ուլըրից. մէկ մէկի կը պիղին, կը տանէն ասեմ չու Խորի, էն տեղէն կը պիղին, կը բիրեն կգեան էս տեղ:

Պէժան նեղն ընկեաւ, յետեանց գնաց դըրի Ռօստամ, որ Ռօստամ ակխաւ, գիտցաւ կեո կուի ի. իլաւ վեր, էն էրկու գևեր դանեց գետին, սպանեց: Իշկաց տըսնըութ մարդ էլ կեո սպանած ի, ասաց.— Պէժան, դիւ ձի ընչի չը խանիր վեր:

Ասաց.— Ինոնք ճնճուկ էն, տփերիմ գետին, պլաւան, ամօթ էր խանի վեր:

Ռօստամ ու Պէժան էլան, գընացին Կոֆկուֆոյ սար, տըսան կեո մէկ տուն մըջ սարին, էդա տան բիւլոր վըրան. դիււ, բան չը տըսան: Ռօստամ լանկեմ՝ զարկեց պատին, պատ փլաւ. ինոնք գնացին մտան մըջ տան, տըսան գևերաց տունն ի:

Գևեր տըսան, ինոնց ֆուզարայ բռնին:

Ինոնք նստան դուան յիտե. գևեր յեղարին լցուան տուն, խաց կերան, գինի խման, էեյն ուրախութեն արին:

Ռօստամ ասաց Պէժանին.— Դնա էդա գևերաց մօտէն գինի, աբաղ բեր, խմենք:

Պէժան որ գնաց, գևեր գինի չտուին, դըւրաւ էկաւ, ասաց.— Չը տուին:

Ասաց. Դնա, դի մէլ ուղի. ասա, եմ աղէն դայ ի, խաց, գինի տուէք, եմ աղէն ուտի, խմի:

Ասին.— Մենք կըլենք, շողաց ալուր ինչխ կը մըրի, մենք էլ քիւ աղին տը մըրինք:

Ռօստամի ըռըկվեր իլաւ, գնաց քսան դեն էլ սպանից, էն քեօր մընակ թողեց:

Պէժան ասաց.— Քեռի, աղջիկ կենայ ընձի, ես անեմ կնիկ:

— Խա, թըղ կենայ, ասաց.

Իլաւ վեր տնէն, էրթան ի կուիւ, դիւս ընկեան. աղջիկ մնաց մըջ տան. մէկ ջոջ քեար Ռօստամ գլորեց, բերեց դէմ դուան զարկեց, դիւս բռնեց, Ռօստամ ու Պէժան թողին գնացին:

Շատ ու քիչ գնացին, գեղիմ ըուստ էկան, գեղի կըր դըրին:

Պէժան գնաց մըջ գեղին որ խաց, ջիւր բիրէ ուրանց: Գնաց որ, Սարմանի Սնտին կեո խարն ի թալի էն գեղի վըէն, չուրս խոգի օրողիկը ի, չա խարն առնեն, գեան:

Պէժան էկաւ տըսաւ, փոյլոյոց իսկաց գեղական, էն ինոր կը տփի, էն ինոր կը չարչըրի, էն ինոր փողպատ բռնած, էն ինոր թե կը քեչե դիւս. էն ինոր կը ջանջխի, Ջըւրաւ, գնաց մօ Ռօստամ:

Ռօստամ էկաւ մըջ էն գեղին, խարցուց.— Դիւ իչ մարդ էք:

Ասին.— Մենք Սարման Սնտու մարդքերնինք, էկերինք խարն առնինք՝ տանենք Սարման Սնտու:

Ռօստամ էկաւ էրկըսի թե քեչեց, խանեց դիւս, սպանեց. մէկի լեզուն քեչեց, մէկի ձեռ կտրեց, օրողկեց Սարմանի Սնտու՝ ասաց.— Չուաբ տարէք Սարմանի Սնտուն, իչ կանի, թըղ գեայ Ռօստամի կուի:

Ինոնք էլան գնացին, Չուաբ տարան Սարմանի Սնտուն:

Էդա գեղական ուրանց խտուն էլան յըմն իւրոց գուներ չինին, ինոնց գեղ խողին, աներ կուրիսցուցին, արին գետնի գեօն, ասին.— Սարմանի Սնտին մեր գեղ կը տըսնայ, մե սպանի: Ռօստամն ի արե, յինք գիտի, Սարմանի Սնտին:

Սարմանի Սնտին Թիրանցի խիծլիս առեց, էկաւ վըը Ռօստամի կուի:

Ռօստամ նստաւ ուր տեղ, Պէժան էլաւ, գնաց կուի:

Սարմանի Սնտու խօրոտ աղջիկմ էլ կայ, ուր աղջիկն էլ բիրե կուիւ Սարմանի Սնտին ուր խեյվաբ (սպիտակ վրան) ջոկ գրեց, աղջկայ խեյվաբ ուր մընէ գատն դրեց:

Մէկ մէկ ա փայլեվանքեր էկան թըղ Պէժան կուիւ, Պէժան որին իչ կը խասնի, կը գանի գետին կսպանի, որին իչ խասնի, կսպանի. որ իչ կգեայ մեյսան կսպանի:

Դորիս չորս փայլեվան էկան դըրի Պէժան կուիւ, բռնին Պէժանին, տը գանին գետին, սպանին: Հալա Ռօստամ դինք յիրար չտար: Փայլեվանքտեր Պէժանին գրին գետին, տըսպանին, Սարմանի Սնտու աղջիկ կանչեց.— Էդա մարդ մըրսպանէք, ընձի խըմակ օրողկէք, գեայ, ես սպանեմ:

Տարան, գնացին, տուին աղջկայ ձև. աղջիկ տարաւ, գնաց ուր խեյվարի մէջ, որ արնպանէր. աչք ընկեաւ Պէժման, սիրտ կպաւ ինն, չսպաննեց. ձեռ թալին մէ մէկու վրով: Ֆերզքեր ասին.—Պէժման տանի, տսպանի:

Ինոնք մընան մըջ էն կուռն, մենք հանք (գնանք) մօ ձին:

Ձին փախին մէջ սալարնդքեր յըմեն քանդեց ձեռքերով. Գալ գնաց, արսաւ, ասաց.—Ռօստամ նեղ տեղն ի ինկի, ձին օրող կենք էրթայ:

Իրան ձին փախեց խանին. թամբ գնին վրէն, ինոր գետօգ կապին վրէն, ինոր մարդալ կապին վրէն, ինոր խանչալ, սուր կապին վրէն. ինոր քելպեքան, ինոր կապէն գրին վըր Աշխարի քեամկին, թողին գնաց:

Աշխարի բալաք մըջ մէկ սահարուն գնաց, խասաւ Ռօստամին. խըա ճամբխին ինչ գնաց, Ռօստամի գետօգ քեամկից պատաւ. Աշխարի բալաք բիրան զարկեց, զգետօգ վիրուց, առեց. գնաց, խասաւ Ռօստամին:

Ռօստամ յէլաւ, սիրով զարկեց մըջ ձիու յերսին, քեամակ արաց ձին: Ձին մէկ լանկի զարկեց Ռօստամին, լեղու էկաւ խըա Ռօստամին.—Չէ, դիւ կիօ կը արնաս, գետօգ խը ճամբխին պատաւ, եմ բերնով բունի, բիրի, էկայ:

Էլաւ ուր ձիու իրես պագեց, էլաւ քիմարմ տուեց, իլաւ խեժաւ. ուր գետօգ դրեց վըր ուր թիւին, գնաց, կայնաւ մէյջան:

Սարմանու Սնաու մարդքեր մէմէկա էկան ինն, որուն խասնեց, սպաննեց, սպաննեց էդա Ֆերզքեր, չուժ հոսուն քառսուն խողի սպաննեց. որ կը կայնի Ռօստամի գետօգի գէմ:

Մէկ Ֆերզքերաց մընէ շուաք տարաւ Սարմանու Սնաուն. Սարմանի Սնտին զատամանց նատեր. կիչկէր, Գնաց, ասաց.—Աստուած քիօ տուն աւիրի, դիւ նատերես գայ, մե յըմեն կտորեց Ռօստամ:

Նոր Սարմանի Սնտին իկաւ Ռօստամին կուռ:

Էն խեժուկ ուր ձին, էն խեժուկ Աշխարի բալաք:

Չուժ յէվարին կուռան. մէկ մէկու զարկին գետօգերով:

Յէվարին էն գնաց ուր չաքին մէջ, էն ուր:

Սուաւտուն էմէլ էկան կայնան, մէմէկու զարկին:

Ձին լեղու էկաւ խեա Ռօստամին.—Ռօստամ, ինչ կանես. դիւ էտա մարգուն ճար չըս տանի, ես ինչ կասեմ, դիւ էն արա:

Ռօստամ Սարմանի Սնաուն ասաց.—Մենք իչնիք վեր, մե սիրտ տանք մէմէկու. քու շտրի անենք (զօտեմարտինք):

1 Առաջի ոտներով:

Սարմանի Սնտին ասաց.—Չէ, յէս օր մենք գետօգով տը կուռ անենք:

Ինոնք իրեք օր կուռ արին. ինոնք յէմալ դրոպ կը դարնէն, գետօգեր բրինձակ կը բանէին, խաւք կընցնէր միջէն, թիւքիներ չէր դպնէր բրինքերաց կողբանք:

Ամէկ գնաց ուր խեյվար:

Ռօստամ նօժդարի գեղ թալեց. եարեմ ժրաւ:

Մէկէլ օր էլմին գնացին մէյջան, կուռ արին:

Աշխարի բալաք ասաց.—Չեր քելպեքանքեր թալէք, մէ մէկէլ փակէք վըր ձիու քեամկին:

Էլան թալին, մէմէկէլ կափաննա արին:

Գորիս Աշխար ասաց.—Ձի քեչի մէյջարնից դիւս:

Աշխար քեչեց Սարմանի Սնաուն մէյջարնից դիւս:

Սարմանի Սնտին ասաց.—Էսա չէլաւ, դիւ ճիլա արիր, էսա լեպով դիւ եմ վիլ տը կտուս՝ մարիժար քեօ ձիուն ի, մենք տըջնենք վե՛ մեր սիրտ տը զարնինք յերար. քիւ Աշխար զախմ ի վըր եմ ձին:

Իջան վէր, ինոր սիրտ տուին մէմէկու. քուչգըրի բունին մըջ մէյդընին էն ինոր սկոկեց, էն ինոր սկոկեց բսկուն արին, իչ գուրթան թալին, խոպան քեակին, ըսկուն քեանդեցին:

Սարմանի Սնաու աղջկայ աչք վըր խօրն ի, վըր Ռօստամին ի: Աղջիկ Պէժմանին ասաց.—Սա մկայ եմ խօր անուն տամ, քեօ քեռուն վիրուցի, տփի գետին:

Պէժման ինչ ասաց.—Չէ, ես մըկայ կանչեմ եմ քեռուն, եմ քեռին գիտի թի ես մեռուկ իմ. որ յիմնայ թի ես սաղ իմ. քեանի հարաքեք կայ ուրին, ընցկուն քեռուսուն հարաքեք կդիայ:

Կանչեց Պէժման.—Բեռի. ինչ կանես, չես տփի գետին:

Ռօստամ գիտցաւ օր Պէժման սաղ ի. քեանիմ (որչափ որ) հարաքեք կէր, քեռուսուն Ֆերզ փալեվանի հարաքեք էկաւ վըր Ռօստամին, Սարմանի Սնաուն ասաց.—Իու կատիր սպաներ իմ Պէժմանին, դիւ չես ասիր պուղա եմ արեր, տալեր եմ մօ եմ աղջիկ:

Սարմանի Սնաու դասալքեր կտորաւ. Ռօստամ վիրուց վըր ուր գլխուն, տփեց գետին Սարմանի Սնաուն. ինկլիզի մկրատ թալեց, Սարմանի Սնաու վիլ կտրեց: Որ Սարմանի Սնաու վիլ կտրեց, դորիս ընկեաւ էդա Ֆերզքերաց մէջ, որ սպաննեց, մէկէլ փախան, գնացին Ռիրանցոց մէջ:

Էդա գեղական ինչ աներ հողեր էն, դուներ շիներ էն, պիրուն թալին, գհողեր տուին յեա, դուներ խանին դիւս:

Ռօստամ գնաց Սարմանի Սնաու աղջկայ մօտ. Պէժմանին ասաց.—Էսա աղջիկ կենայ ձիկ, անեմ ձի կնիկ:

Դորիս խորգին ասաց.— Ծնորխաւոր բնի քե խըմակ:

Ռօստամ յէլաւ, մէկ յօսայ տուեց շինել մըջ էդա գեղին. էդա կնիկ գրեց ինե, ինք, կնիկ մնացին մըջ դայ յօսին:

Ռօստամ էրկու ամիս մնաց մօ կնիկ: Իդա գեղի ռէսին ասաց Ռօստամ.— Կնիկ մնայ դայ, ինչ պինայ, տուէք. ձե ամանար:

Կնիկ էլաւ էրկու խորհով, Ռօստամ ուր բազպանդքերաց մէկ տուեց կնկեան, ասաց.— Կնիկ. էսա բազպանդ կենայ մօ քե, թի որ ձի լաճ իլաւ, բազպանդ կապես ձեռ, անուճ դնես Մհեր, ես կեօ գնացի եմ տեղն, եմ աչքը վրը քե ի:

Էլաւ. խեծաւ ուր Աշխար, Պէժան էլ խեռ ընկեաւ. Էկան մըջ Իրանցոց, Կաֆիուֆայ սար, գեերաց տան մօտ. էդա գեերաց քեօր խանեց, պսակեց վըր Պէժանին. առին գնացին:

Ինոնք կենան դայ, մենք դառնանք վըր Ռօստամի կնկեան: Ինը ամիս, ինը օր կըրմի կնկեան, Աստուած լաճ մը տուեց:

Բազպանդ կապեց ձեռ, անուճ գրեց Մհեր:

Էդ լաճ որ կըրէր մէկ ամօրկան, մէկ տարեկան կը ջոջնէր. չուր իլաւ էրկու տարեկան, իլաւ տաս տարեկան:

Մըհեր մէջ սղեներաց ճան կը խաղէր, ինչ ըռըկվեր ընէր որ կը դանէր. որին վիդ քեչեր, որին թիվ քեչեր գիւտ:

Էդա գեղի ճօր ժողովրտան մօ մէ մէկ, ասին.— Դիւ հեթիմ իս, դիւ բիճ էս, մըջ մե մի խաղայ:

Մհեր գնաց մօ մեր, ասաց.— Եան եմ խօր սալղ տաս, եմ խօր անուճ ինչ ի, ճօր ձիկ կասեն «բիճ»:

— Գեօ խէր Ռօստամի, դիւ Ռօստամի լաճն իս:

— Որ Ռօստամի լաճն եմ, ես պտի խանեմ Ռօստամին:

Իլաւ էդայ կնկուղի ձե նժաղուճ քեչեց վըր ուր, գնաց. դաս արաւ ուր խօր խէրանին գեխ:

Գնաց, չխապաւ ուր խօր խէրանին. գնաց մէկ կուու մէջ ըռաս էկաւ, սվ դիտի ինչ կուիւ էր:

Յիւրիչ ազգ մը էկած էր վըր Ռօստամին կուիւ:

Մհեր գնաց, գինք տուեց գեխ էն ազգ, ինչ էկերէր վըր Ռօստամին կուիւ. գինք տուեց ինե:

Էն մէկէլ էկաւ կուիւ Ռօստամին:

Էլաւ Մհեր գնաց մօ թաղաւոր, ասաց.— Մէկ ձի տու ընձիկ, խեծնեմ, ես էլ էրթամ կուիւ:

— Զիմ տուեր եմ քե, հայտե, գնա, ասաց:

1 Մհեր անուճ ընդհանրապէս քե հայեր եւ քե քոյր կը դնեն երախայոց վերայ:

Զիմ առեց, գնաց, կայնաւ մըջ միյսընին, կու ուզեց:

Թագաւոր խապար ի, յըմա կուիւ արողքեր խապար չեն:

Ռօստամի մարդքեր ասին.— Էն ձիաւոր մըզնէ ընէր, մեք թագաւորին մօնացուցինք:

Թագաւորի մարդքեր ասին.— Թի որ էն ձիաւոր մըզնէ ընէր, մեք Ռօստամի ճուճ յըմեն սպանենք: Զըն գիտի ձիաւոր վիւ մէնէ ի. թագաւոր կիմնայ. խեծել չիմնայ:

Իլաւ Ռօստամ, իջաւ, գնաց միյսան կուիւ:

Էն լաճ, Ռօստամ մէմէկու զարկին, չեն գիտի խէր ու լաճ էն: Մհեր գնաց մօ թագաւոր, Ռօստամ էկաւ ուր տուճ:

Թագաւոր ուրախացաւ, ասաց.— Էսա ձիաւոր Ռօստամի ճուճ տը փըճըցուցի, աղէկ Աստուած տուեց ձիկ:

Մնաց մէկէլ օր, էլմէլ էկան կուիւ:

Դորիս ձիանքերաց իջան վեք, ինոնց սիրտ տուին մէմէկու, քուչդրի բուճին Մհեր ու խէր:

Զուր կէս օրին ինոնք մէմէկու չյաղթին:

Կէս օրին Ռօստամ Աստըծու անուճ տուեց, որ Աստըծու անուճ տուեց, Մհերին օլըրեց, տուեց գետին:

Ռօստամ իլաւ, Ինկիլի միրատ խանեց, ուր լաճու վիդ տը կտուէր, լաճ ասաց.— Ես պտի մարդու տղայ չեմ, որ դիւ ընձի սպանես, եմ խօր ձեռնէն չես պըծնի:

Խարցնեց թի.— Տղա, դիւ վիւր լաճն էս:

Ասաց.— Ես Ռօստամի լաճն եմ:

Ասաց.— Որ դիւ Ռօստամի լաճն էս, բազպանդ չանց տու: Բազպանդ չանց խուր խօր:

Մէմէկու ճանչցան, ասաց.— Կեախն ի եմ տուճ աւիրի, եմ լաճ սպանիր ի:

Ձեռ թալեց վզնով. տուեց, գնաց մըջ խեծլիս:

Իլաւ Ռօստամ խեծաւ Աշխար, լաճն էլ խեծաւ ուր ձին. քեչեցին, թառ ու մառ արեցին, գնաց:

Ինոնք էլ զըւրան, գնացին ուրանց տուճ:

Գնացին վըր թագաւորի դօտուճին յըմեն փախուցին:

Ճանպիլէ.— Զէնոր լեճ խաղիւտ, յըմեն պողլատ էր. գէնու աչքեր մընակ միս էր:

Էն, Ռօստամ կերթէն կուիւ. օրալան իրեք խարիր վաթուճ ու վեց դիւ (նետ) կը դանէր Ռօստամին. Ռօստամ պե հալ կըլնէր, կըհեր նոժդարի գեղ կը թալեր ուր բրինքերաց, կը ժրեր:

1. Այս մի ընդարձակ հուղ է, սակայն Պեսոսու միայն այս չափը գիտե:

Մէկ օր էկաւ, նստաւ Ռօստամ, ուր ջոջեր դանչեց, ասաց.—
Էկէք, իշկացէք, ինոր ջոն յըմեն պողոտա ի, իմ դիր ասար չանի
մըջ ինոր լեշին:

Իլան ուր կարդացողքեր Սողոմոնին իշկացին, տըսան ինոր
ջան յըմեն պողոտա ի, ասին.—Որ դիւ կեհաս կուիւ առաւտուն,
էրկու ճեղղ դիր շինես, դնես քեօ անեղան վրէն. կանչես, լեպ տա-
նես անեղան վրէն (հմայութիւն), ասես. «քեօ աչքեր ձի շանց տու,
նոր կուիւ անենք»:

Գնաց կուիւ. կանչեց ձանպիլին.—ձանպիլն, քեօ աչքեր ձի
շանց տուր, նոր ձի դարկ:

Յէլաւ, ուր աչքեր շանց տուեց:

Որ շանց տուեց, Ռօստամ դիւլպէն բունեց, իշկաց. աչքեր տը-
սաւ. դիր թալեց դըլս աչքեր, զանեց մըջ աչքերաց:

Պոռաց ինի իլաւ, կանչեց.—Նաման. դիւ ընձի սպանիր:

Ասաց.—Ա՛յ Բեամբ, դիւ օրական իրեք խարիր վաթսուն ու
վեց դիր ձիկ կը դարկէր, ձընէ ձէն չէր ըլէր. ես մէկ դիր եմ դարկե:

Ռօստամի մահը.

Ճղալ ուր մէջ դուուման էր Ռօստամին. մէկ օր Ռօստամին
ասաց.—Ա՛խ, Ասործու մէկիկ բարին, մէկ օր խեծնէր Աշխարի բա-
լաք, ձի խըմակ մեյսան մը տէր դիմայ, ես տըսնէր. իշ կըլէր, ըլէր:

Ճղալ իշ արեր էր. դեազտիկ մեյսընի մէջ փուրիր էր քեառ-
սուն կեազ լէնք, քեառսուն կեազ էրկէն խոր, քեառսուն կեազ
խորանդը, փէտ բրբէր, ծածկեր էր, օր Ռօստամ գեայ, ինի ինի:

Ռօստամ ասաց.—Ճղալ, ես քեօ խաղրի խըմակ մեյսան մի տամ:
Իլաւ խեծաւ Աշխար, գնաց մեյսան, մեյսան տուեց, էն դեախ
ինչ մեյսան տուեց, ձին գնաց, խասաւ ինչ խորի բերնին. ձին գիտ-
ցաւ թէ խոր էր, մէ բուեթ թալեց դըլս Աշխար, որ էրա խոր թաւա:
Որ էրա խոր թաւա, Աշխարի նալ թաւա սանեն, էկաւ դիւս, գըլ-
խուն ի վեր թաւա, գնաց:

Ռօստամ գիտցաւ թի ձին ուր նալ թալեց:

Չին գէդ խոր խըլցուց, գնաց մեյսընի գլուխ, գըլըա յետ,
էմէլ էկաւ խորի վրէն, որ թաւա, էսա դեախ չխըլցուց, ձիու առջի
ոտքեր ընկեաւ խորի բերնին, յետի ոտքեր ընկեան մըջ խորին, Չը
խըլցուց, փրթընան, գնացին մըջ խորին:

1. Պետոս ձանպիլին իր միջանկեալ պատմած է, որ իբր զործ ունեցած
է Ռօստամի հետ, սակայն զայն անգամ կր շիտրէր, Դատրի անուն կտար. զայն
անգամ եւ կատր, «Դատր ու Ռօստամ մէկ է, ժաղ չկայ ինէ»:

Դորիս, էնտեղ դիրգեվան (նես ու աղեղ) կէր մօ Ռօստամ.
դիր թալեց դըլս ճղալ, ճղալ գինք թալեց դէմ, ճնարի ծառին. դիր
դանեց, ճնարի ծառ ծակեց, զճղալն էլ ծակեց, ընցաւ. Կաֆկուֆայ
սարն էլ ծակեց, գնաց Թիրանցոց հողի մէջ:

Ռօստամ ու Աշխարի բալաք ընկեան մըջ խորուն, մըջ խորուն
ճղալ բեւեռքեր գարկած էր. չքուն էրա բեւեռքերուն:

Էկան պառաւան վըր Ռօստամին, որ խորից խանեն դիւս, ինչ
արին չկըցան խանէն:

Մէր էկաւ վրէն, Ռօստամ մօր ասաց.—Մէրիկ. ձիկ դիւ խա-
նիս, չէ բու մարդ չկուայ խանի. քիւ ծամեր թալ տակ, ես ձի թա-
լիմ քեօ ծամեր, ձի քեչե դիւս:

Մէր ուր ծամեր կախից տակ, Ռօստամ թաւա, մօր ծամեր
բունեց. մէր ծընայ գլուխ զախմով զանեց, որ քեչեց. Ռօստամ խո-
րու բերնից թաւա կեօ կէս սահարայ ճանրախ գնաց, ընկեաւ դիւս:

Ռօստամ էն դեախ ուր գեօլանք արաց:

Համ ննար, համ ճղալ, համ գնար.—Թէ չինարը, թէ ճղալը և թէ ժայռը.
Չե պու Ռօստամե կոռե Զալ,—Ինչպէս էր Ռօստամի Զալը

Ամբ կըր սե սար շեթ շաւ սալ.— Կեանք վարեց երէք հարիւր.
վաթսուն և վեց տարի

Հեթ պշուկ ա քրթալ.—Դեռ փոքր է ինչպէս երեխայ
Դայե հըմպես կըր բա մալ:—Մայրը գրկեց, տարաւ տուն:

2

ՌՕՍՏԱՍ

ԵՒ

ԱՏԱՄԲԺԻ ՈՒ ԴԻԿՐՈ

(Նորուզայ բարբառով *)

Ժամանակով Ռոստամէ Ձալ կըլի, սարեր կերթայ ավիուս գարկել, նեղիւր անել:

Մէ ժամանակ վրէն կընցնի, նեղութիւնի մէջ կընկնի. կգեայ տունը: Աստուած հրաման կուտայ. հրազին մէջ կասի.—Ռոստամ, կեամ մը չինի, դարկ ծով, ձիւմ, դիւս կգեայ:

Առևտ կելլի. կասի.—հրազիմ տիսե. էրթամ ծովու կուաղը. տիսնամ եմ հրազը կը կատարի թի չէ:

Կելլի վեր, կեամ կառնի. կերթայ ծովու կուաղը. կեամ կը դարկի ծովու մէջ. գարկելու բաւտան հրեղեն ձիւմ դիւս կգեայ. որ դիւս կուգեայ, ճակատ կը սլազի, խեծնի. կուգեայ տուն:

Էդ ձիւն անուն Ռախչի բաւաք կըլի:
Էդ քաղքին մէջ Պամաթ շահ բենքսան (անողորմ, անգութ) կըլի, քեռասուն խատ կնիկ ունի:

Էդա քառասուն խատի պուճուր կնկեան մտէն մէկ տղայ կըլի, անուն Ասֆանտիյար:

Էդ Պամաթ շահ իւր դիւնի մէջ կասի.—Ով էրթայ, Ռոստամի Ձալի ձեռներ կապի. նզմեք լիք խող անի. վզից կախի, սար-քօլ, սաք բերիկ աւնի. դայ, իմ թաղաւորութեն տամ ինոր:

Իւր տղէն Ասֆանտիյար որ ջանփուլաս էր, կասի.—Ես պտի էրթամ, պապօ:

Էն ժամանակ Ասֆանտիյար կըլի, կերթայ. կը տիսնայ մէ բանձր

* Պատմած է, նորուզայ Սիփուս գիւղացի Վարդան Մարտիրոսեան, որ երկար ատի վան մնացած է. 2 ատի եւս տեղս կը բնակի. բարբառը աստ խառնած է: Սա լատ է իւր երկրի մէջ նայ ասողներէն. կատ քէ երգերէն աս լաւ կասն հայեր եւ երգեով:
1 Մի քանի տեղ Աճրասիյար ասած էր Վարդան:

սար. կըլի սարի վրէն կը կայնի. կը տիսնայ մէկ բարակ ծուխ մի կըլի, կէն Ռոստամ: Ձալ ընտեղ: Ռոստամի Ձալ էն տեղ իչ կանի. կը տիսնայ կնն մէ վերու եղ սպանիւր ի, գարկելի ի սաղ եղը մէկ շիւրի, մէկ ձեռքով բուներ ի վըր կըակին, կեկի, կուտի. մէկ ձեռքն էլ դրեր ի իրեան:

Ասֆանտիյար կասի.—Է, էսա իչ գոնպայի. ես կասեմ ակա շարքի մէջ ես գոնպայ եմ. էսայ ընձնից շատ գոնպայ ի:

Ասֆանտիյարի աչք վախեցաւ, աօաց.—Ես ինչխ ինեմ:

Էլաւ մէկ ջաղչի քեար գլորեց պանկեազեր, որ քեարը գեայ. Ռոստամի Ձալին փորձի, տիսնայ ճարապար կը խանի—կուվարբով ի թի չէ:

Էդա Ռոստամ կը տեսնի քեար գլորի, կուգեայ, ինք զինք կասի.—Էս օր գեարուն չի, որ գետին կակուղցիր ի, քեարեր պրծնի սարից կուգեայ. կայ-չկայ էդա փայլեվանի բան ի:

Ռոստամ սաք կը դարկի, քեար կը բունի, ուր տեղ կը դադըը-ցուցի:

Էդա Ասֆանտիյար կասի.—Էյ-էէյ, էսա շատ գոնպայ փայլե-վան ի. ըստուց ընձի զարար պտի գեայ:

Ուր նեա ու անեղ կը թալի ուր թե, կուգեայ մօ Ռոստամ, բարե կուտան մէմէկու ու կը նստին:

Ռոստամ կը ճանչնայ Պամաթ-շահի լանն ի Ասֆանտիյար, կըլի վեր, շատ պատիւ կանի, կոնախլը կանի:

Էդ տեղ Ռոստամ կը խարցու.—Ասֆանտիյար, խէր ըլլի, ընչի էս էկեր մօ ձի:

Ըն տե կասի.—Դտիս, ընչի էմ, էկեր էմ, էկերէմ որ քիւ ձեռք կապեմ. քիւ նզմեք լիք խող անեմ քեօ վզէն կախեմ. տանեմ. էր-թամ եմ խօր խամար:

Ռոստամ կասի.—Փրկի կըրան (մեծ Աստուած) անեալս իմ ձեռքեր կը կապի, Ասֆանտիյար՝ ձեռ կապել չէ, ամա քիւ խարբի խամար նզմեք իլին խող կախեմ եմ վզից, կընկնեմ քիւ յէնջի:

—Ձէ, կասի. բըլսօ քիւ ձեռներ պտի կապեմ:

Էն ժամանակ խօսքիմ ինորից, խօսքիմ ինորից, խօսք իրարու վրայ չէրթայ. էն տեղ կուի կանեն:

Մէկ օր կուի, էրկու օր կուի, չուր կօթ օր կուի կանեն:

Ռոստամի Ձալ աստըլ ունի. Ռոստամի խէր Ձալ ընտեար ի, կը տիսնայ Ռոստամի աստը շատ մթղաւիր ի, կասի.—Էյվախ նեյ վախ, Ռոստամ շատ նեղութիւնի մէջ ի:

Ձալ կըլի վեր, կերթայ, կը հասնի Ռոստամին. կը տիսնայ էն-քան ետալու արիւր ի, փոկե մաղի տեսակ ծակըկեր ի, կը դան-չի.—Ռոստամ:

էն էլ կասի.—Ձա՞ն, խէրիկ, մէկ էլ քիւ ձէն ընկաւ եմ ա-

կանջու։
Կասի.—Ռօստամ, դիւ իշխօ ինոր խեա կուլու կանես, ինոր

ջան սողալատի։ Պիւրկեվան (նեա աղեղ) չբանի։
—Պա, կասի, ինչխ անեմ, խէրիկ։

Կասի.—Գնա, դարե կեազի, հաշա փէտ կայ, բե. բալփի մէ

կերպով ինոր աչքեր խանես։
Կերթայ, դարե կեազի կը բերի, կը դնի վըր նեա անեղան,

կասի.—Ասֆանտիյար, քիւ աչքեր խան դիւս, մէ խատ քի տիսնամ.

դիւ ընձի որ բօտ արեր իս, ես կը մեռնեմ, եմ սրտի վրէն շմնայ

մեազ, մէկ խատ քի տիսնամ. շայնամ թի մեռնիմ։
էն ժամանակ Ասֆանտիյարի քեճ կուզեայ, գլուխ շափարից

կը խանի գիւս։
Որ գլուխ գիւս կը խանի, Ռօստամ դիր կը զարկի։ Որ դիր

կը զարկի, մէկ ծէր կը մտնի մէկ աչք. մէկէլ ծէր մէկ աչք։
էն ժամանակ զուոց մընէն կերթայ։

Ռօստամ կը դանչի.—Ա՛յ կիսի, սեսա կրբի։
Դիւ ընձի կը զարկէր խինգ խարիբ դիր։

Ընձից չէր երթար հաւար դր։
էս օր ես քե զարկերէմ մէկ դարե կեազի (երկհիւղ փայտ)։

Քեզնից կերթայ խինգ խարիբ հաւար կազի։
էն ժամանակ կասի.—Ռօստամ. տխարք աչքի լուսու վրայ ի,

դիւ եմ աչքեր հանըցիր, իչ անեմ էլ ախարքի վրէն։
Ռօստամ կասի.—Ասֆանտիյար, մը վախենայ, ես քե խամար

տներ կը շնեմ, դնեմ ինե չուր օր մեռնելուս։
Ասֆանտիյար կասի.—Ընձի խամար մէկ տուն շինի, մէկ սուն

թող ինե։
Ռօստամ կըլի մէկ տուն կը շինի, մէկ սուն կը թողի մէջ. էն

տան ծածքն էլ կը բառնայ էդ սան։
Խէր-Ձալ կասի.—Ռօստամ. դիւ գըտիս Ասֆանտիյարի միտք

իշի, քե ստի տանի տակ, սուն փրցուցի. քե գայ անի ուր խեա-

երկու դռնէն շինի, մէկ դռնէն մտնէք. էն մէկէլ դռնով փախնես։
Ռօստամ տուն կը շնի. Ասֆանտիյար կը դնի մէջը։

Ասֆանտիյար որ կը մտնի մէջը, քամակ կուտայ դռան։
Ռօստամ կը փախնի մօ մէկէլ դռան, գիւս կըլի։

Ասֆանտիյար կասի.—Ռօստամ. դիւ տան մէջն էս։
Կասի.—Սա, տան մէջն էմ. քիւ կող նստուկ էմ։

էն գեախ լանկով կը զարկի, սուն յեռջինէն կը փրցուցի։
Ընչի.—Ռօստամն էլ ուր խեա մեռնի։
Ռօստամ կը փախնի. տուն կը տապի վրէն, կը մնայ տակը։

Ասֆանտիյար կը մեռնի։
էն գախ խաղար կերթայ Ասֆանտիյարի խօր Պամաթ շահին

խամար. Պամաթ շահ կասի.—էյ վախ, ես էմ, էն լաճ, էլ ինչխ անեմ։
Կըլի մէկ երկու տ օրի միջոց վրէն կընցնի։

էդ Ռօստամին մէկ աղբէր ունէր, անուն ձգալ. ասեմ Ռօստա-

մից մեծ էր. ձեռքէն բանըմ չգեայ, ըսեց սարսախ մարդ. Ռօս-

տամ էրես չտայ ինոր։
Պամաթ շահ կասի.—ձգալ. քիւ աղբէր քե էրես չտայ. արե,

քե անեմ մէկ չալուս, մէկ ջոջմ, ես մէկ պին բաւի մը. գնա, մէկ

կերպով քիւ աղբէր սպանի։
ձգալ կասի.—Լաւ, կը փչացուցեմ զՌօստամ։

էն գեախ ձգալ կերթայ մօ Ռօստամ, բարև կտայ։
Ռօստամ կասի.—ձգալ. Աստուած խէր անի, դիւ ընչի էկար

մօ ձի. քիւ իրես բարի իրես չէ էս օր։
ձգալ կը վերաւորուի, կասի.—Դիւ, խաղա ասեն մէկ սոխ

սարկի. կտառկես, ես քիւ աղբէրն էմ. մէկ բան ասեմ չիս անի։
Կասի.—Դիւ Խարի խամար կանեմ, ձգալ։

ձգալ Պամաթ շահին կիմցուցի։
Պամաթ շահ իչ կանե. կըլի քեառսուն կաղանոց մէկ խօր կը

փոքի, մէջը խրօս կը զարկի, խօրի բերնի խրօս մըր կը թալի.

կը ծածկի։
էն գեախ ձգալ կերթայ մօ Ռօստամ. կասի.—Աղբէր շան.

բարև քեզ. էմէլ Ռօստամ կասի.—ձգալ, էս օր քիւ իրես բարի չէ.

էս օր եմ մեռնելու օրն ի։
Կասի.—Ռօստամ, իչ կըլի, ձի խամար մէկ ձի խաղցուցես.

մէյսան մի տառ, երթաս, դաս, ես տիսնամ։
Կասի.—ձգալ քիւ խարի խամար կը խաղցուցես.

Ռօստամի ձին ինչ ժամանակ ծովուց դիւս բնկաւ. խրիչտակ

նալիբ, Ռօստամին ասի ի, իչ գեախ քիւ ձիու նալ. ձիու սաքե-

րուց ընկեաւ, էն օր քիւ մախն ի։
Ռօստամ կըլի, կը խեծնի ձին. էրկու-իքեք գլուխ կերթայ,

կուզեայ, կը խաղայ. Խաղալու բաւան, կուզեայ փուշ փալասի

վրէն, որ խօրի բերան սարքած ի։
Կը խասնի խօրի բերնի մօտը, ձիու նալը կը թռնի.

Ռօստամ կասի.—էս օր եմ մեռնելու օրն ի, եմ ձիու նալ

սունէն էրու, եմ մախուան սրտուան էլ եմ աղբէր էղաւ։
էն ժամանակ կիսի խօրի մէջ խրօսի վրէն. խրօս քեամկից

կը մտնի, դօժից կուտայ դիւս էն գախ ձին էլ կիսի վրէն. Ռօս-

տամ կը կանչի.—ձգալ, Աստուած քիւ տուն աւըրի, դիւ ընձի տալիբ

սպանել. սրտուխ եմ նեա անեղ տու եմ ձեա. ճեզներ, խաւքեր

1078
39



Եւ աչքեր չխանեն, մինչև կուգան մեզի խորից կը խանեն, կը տանեն:
 Նեա անեղ կտայ Ռօստամին, Ռօստամ զձդալ կը տխնայ.
 Կեօ նեա անեղը կը բռնայ, թալի ինե. ձդալ զինք կը փախնի
 ճնարի ծառի յէնջևը. էն ժամանակ կը կանչի Աստուած. նեա անեղ
 կը քցի, կերթայ ճնարին կը դարկի. ճնար կը ծակի, կը դարկի ձդալ
 կսպանի. կելլայ, կերթայ զնարի մէջ:

Էն գախ Ռօստամ ուր անուն կտայ, կասի.—ԱՅարբմ ժպօ
 Ռօստամէ Զալ. համ ճնար, համ ձդալ, համ զնար, ԱՅարբմ ժպօ
 Ռօստամէ Զալ:

Էն գախ ձդալ էն տեղ կսպանի, Ռօստամ էլ խորի մէջ կը
 մեռնի:

Ճուար գնաց Պամաթ շահի խրմար.—Ռօստամ ընկեալ խորի
 մէջ, մեռաւ. ձդան էլ ուր ձեռով սպանեց:

Էն գախ Պամաթ շահի ցեղի մէջ կըլի ուրախութեն, խաղալ,
 Բէճ անել- Ռօստամի ցեղի մէջ կըլի սե. սուգ, լալ, գոռալ:

Ռօստամի ցեղ մեծ ու պատիկ թրի ու կրակի բերան կուտան.
 պիրուն կսպանեն էգ ու որձ. մարդ չմնար:

Կը մնայ ինոր էրկու խարս. էրկու խարսն էլ էրկու խոզեով:

Էգ էրկու խարսներաց մէկն էլ կը փախնի սարի մէջ. մէկն էլ
 ուրին կը թալի եօթ ծովու ասեն:

Զալն էլ շատ ծիրացիր-շատ իխտիյարցիր ի, հարաքեաթէ ըն-
 փերի, էլ չեն սպանիր. կը թալէն խորի մէջ. դանէ դան խաց ջուր
 կը քցեն մօտը:

Էգ խարսներէն մէկ՝ էն ինչ սարի մէջն ի, մէկ զադեմ կը
 գնալնի, մանի մէջը. ժամանակմ զաղի մէջ կայրի: Էն իչ ժամա-
 նակ կուգեայ, Աստուած տղէմ կուտայ էգոր: Էգ տղի անուն ուր
 մէր էլ դրեց Դիւրօ:

Ժամանակմ էգ տեղ մնաց էգ խարս չուր Դիւրօն ջոջացաւ:

Էն իչ ծովու ասեն ի, Աստըծու խրամանքով պառկաւ. էն էլ
 մի աղայ բիրեց, անուն դրեց Ատամբի:

Էն ինչ սարի մէջն ի, Դիւրօն հապան կառնի. կերթայ, խաց-
 քան կը ժողուի. կը բիրէ. գինք, մէր կուտեն:

Էն ինչ ասի մէջ ի, կերթայ ձիւկ կը բռնի, խաւք կը դարկի
 կը բիրէ. էն տեղ եօլա կը տանին, կուտեն:

Ատամբին մէկ օր ծովուց դիւս կընկնի-չորան, կերթայ:

Շատ ու քիչ կերթայ, կերթայ կը հասնի ուր պապիէ քաղաք
 գիւս կըլի:

Որ կերթայ պապիէ քաղաք դիւս կըլի. խապար կերթայ Պա-
 մաթ շահի խամար.—Մէկ զօրպա փայլեվան էկեր ի քաղաք, իսկն
 Ռօստամի ցեղիցն ի:

Կասի.—Որ սկուն ի, գնացէք, բիրէք տխնամ:
 Գնացին բիրին, Պամաթ շահ տխաւ.—Օհօ, սաց. իսկն Ռօս-
 տամի ցեղից կըլի, ինոր թիկունքի լէնք օխար թիգ. ինոր ձեռաց
 հաստութեն քընց մէկ գերան, ինոր մատներ կեօ եմ արմունկ:

Պամաթ շահ կասի ուր փայլեվանքերաց. - Մէ ճառապար ից-
 քեցէք յառէջ. տխնանք, կանայ խանի, թէ չէ:

Փայլեվանքեր կըլենն յեալը, էսա տեղ, էնա տեղ չեն գատանայ,
 կասի.—Չանըմ, իչ գործ ունիք ընձի խեռ. ընչի էք ընկի իմ յեալը:

Կասեն.—Գիտես, ընչու ընկերենք քիւ խեռ. նառապար կայ-
 քցենք քիւ դէմը, որ խանիր, մեր ցեղիցն էս. որ չխանիր, Ռօստամի
 ցեղիցն էս, քե կը տանենք բռնատուն:

Կը բիրեն, լաւ զննիլիեցն կանեն, կայիմ կը կապեն, կասեն.
 —Դէ, քեաչի, կտուի:

Էն էլ թիւքեր չբացուի, դարկի կտուի. ոճ յյաղթէ:

Էնեց ձեռներ կատուկ տանեն քցեն բռնատուն Զալի մօտ.
 ուր սպակե մօտ:

Պապն ի, դռնով տանելու բացան թքի ինե, կասի.—Ամօթ
 չէ, զօրպա փայլեվան՝ էկեր էս. ես ծերացիր իմ, քի իչ իւն, դիւ-
 սահադին պապակիս փայլեվան:

—Ա՛յ պապալղ, կասի, ընձի լօմս մի դիր, մի մեղադրիր, ընձի
 խախտ. եմ գլխիւ գալած նաղլ անեմ, որ դիւ իմանաս:

Եմ մէր Ռօստամի խարսն էր, Պամաթ շահ որ կուտեց Ռօս-
 տամի ցեղ. եմ մէր փախաւ, գնաց ծովու ասեն. էն տեղն իմ իւն.
 մարդ չեմ տխե. էս օր քաղքի մէջ դիւս էլայ, եմ ձեռներ կապեցին,
 ձգեցին բռնատան մէջ:

Զալ կըլի, Ատամբու գլխիւ կը պազնի, կասի.—Ա՛յ որդի, դիւ
 որ կաս, եմ թուն էս, ես քիւ պապն եմ:

Կմնայ մէ միջոց, էրկու միջոց բռնատան մէջ Զալի մօտ:

Էգ Պամաթ շահին էլ մէ աղջիկ ունի ինչպէս Էրեանայ քաղաք՝
 դատն ի ուր խօր մընէն: Նամակ կը գրի ուր խօր խամար.—Պամաթ
 շահ, էգ բռնաւորն որ դիւ բռնեքէս. ընձի խամար օրողկէ, գեայ.
 ես ինու էրուն իմեմ եմ աղբօր էրունի տեղ (Ասֆանտիյար էգ աղջ-
 կան աղբէրն ի):

Պամաթ շահ կը խանի բռնատանից, չորս ձի կը լծի.—Տարէք,
 քալիմ արէք եմ աղջկան, ինչ կանի, թող անի:

Էն ժամանակ կերթան, կը խամանին գետի մօտ. կը նկատան,
 ձիանք կը թուան: Ատամբին կը մնայ սէլի վրայ, արեգեական դէմ
 վառուի. իրենք կերթան գետի բերան, կը քընէն:

Թա Ատամբին սէլի վրայ վառուի. տարողներն էլ քնէն. մենք
 դառնանք Դիւրօ վէն:

Դիւրօն էլ ինչ ի արէ, մէկ խառ պալքեմ՝ շինէ, մէկ արժին ինոր բերնի լէնքն ի. պալքէն դնի ուր թեին, կերթայ. մարդ ընի, դեօղ ընի, քալի, շալի, բիրի զաղի մէջ գինքն ու մէրը կուտեն. էն մէկ օր էդ Դիւրօ աչք կինի մէկ սեռթեն, կերթայ դպա էդ սեռթեն: Կերթայ, կերթայ, կը մօտանայ, կը տխնայ մէկ սէր Կերթայ, կը մօտանայ սէլին, կը տխնայ մէկ փայլեվան դրած կեօ սէլի վրայ, էլ էնհնց զօրպա փայլեվան չկայ: Խրտ մօտանայիւ կը թքի ինն:

Էդ փայլեվան կասի.—Այ փայլեվան. դիւ ընչի կը թքես. ես—Վա՛ւ. եմ գլխին գեղած նաղլ անեմքե խամար, նորէն թքի: Կասի.— Հալ էսննցն ի, եմ մէր եօթ ծովու մէջն ի. ես Ատամբժին էմ, ծնայ գնացի եմ խօր քաղաքը. ընձի խափրցըն, եմ ձեռներ ծնայ կապըցըն. հիմայ ճամբիբի ուր աղջկայ մօտը, ձը մօրթի, եմ էրուն խմը: Էն գեախ Դիւրօ կասի.—Վա՛ւ, դիւ սր կաս, մէկ աղբօր աղայ ինք:

Դիւրօն կասի.—Համբերի, իս էրթամ մօ փայլեվանքեր, դեամ Կերթայ չալի դուաղ մէկ մէկ նանախ կը գարկի գլխընկրաց մէջ, չորօն էլ կստանի: Աուգայ, զննիլ կը կտուի, կառնի Ատամբժուն, դուզ կերթայ մօր մօտ, էն իչ սարի մէջն ի: Էն ժամանակ իչ կտանի մօր մօտ. մէր կըլի, գէմէն կը փախնի: Փախնելիւ բաւան Դիւրօն կասի.—Մէրիկ, ընչի կը փախնէս. գէմէն, եմ խօրորօր աղէն ի:

Էդ գեախ մէրն ի, կդեան, շատ մէմէկու կուրտխանան: Առաւօտ Դիւրօն կասի.—Ատամբժի, դիւ նստի դայ, ես էրթամ, մէրդ ասից խանեմ դիւս:

Դիւրօն ի, կերթայ ասի մէջ, Ատամբժու մէր կը խանի, կը բիրի սարի մէջ մօ իւր մէր, կը մէտեղուին:

Մէ միջոց վրէն կընցնի, կասեն.—Մենք սրի էրթանք Պամաթ շահի վրէն կուիւ. մեր խօր քօլ խանինք:

Մէրեր կասեն.—Ձեր սրապիւ իչքան որ սպրանք-մալ կայ, կեօ մօ Մըսըրայ լալասար ի:

Կըլեն վեր, կը դանչեն Աստուած, որ էրթան Մըսըր, մօ լալասար: Չխօսի մէ տեղ կերթան:

Իչ որ Դիւրօ ձեռնի, մէկ նանախ, ինոր բերնի լէնք մէ արժին, իչ որ Ատամբժու ձեռնի. մէկ դալաւայ իս ինչպէս արե ուր ձեռ փէտ: Կըլեն վեր, կերթան, իչ որ մէկ ծաղկընկրով, խոտով, ջրով, կանաչով տեղ: Էդ տեղ կը նստեն, կուտեն, կը խմեն: Կը տխնան որ էդա նստած տեղ գեերաց տեղն ի. գեերն էլ իրեք աղբէր էն, նստած տեղն էլ էն սստիկ աղբօրն ի-սրւտակ դիւուն. Կը տխնան քոզ էլաւ խրտ էրկնուց:

Ատամբժին էսաց,—Դիւրօ, մէ սա քոզ թօ բացուը՝ տխնանք իչ ի կուգեայ:

Ատամբժին տխաւ քօզ բացուաւ, սրւտակ դի էկաւ, գայիւ բաւան սկսեց կուիւ անել.—Այ փայլեվան, սսաց. խաւք ուր թեով, օձ ուր սրտով չէր կարայ դեայ, ես կուիւ կուգէմ:

Էն տեղ բանեցին, կիւլաւ կարան, որ կիւլաւ կըսնելիւ ժամանակ Ատամբժին դգե իսկեց դեաին. էն գախ որ կոխեց դեաին, զանակ թալեց, դիւ վիզ կտուէր. դե ան քեաչեց.—Հէյ վախ, սսաց:

Ատամբժին սսաց.—Դէ, էլի վեր, դիւ չամաչեցիք մէ սուս էրունի արով ախ քեաչեցիք. էլի վեր, քեզի ազա արեցի:

Ատամբժուն դե սսաց.—Խորհուրդմ կայ եմ սրտի մէջ, էն կատարէմ, եմ էրուն քեզ հալալ:

Ասաց.—Դիւ սրտի խորխուրդն իչ ի, ընձի սսա:

Ասաց.—Ես Ռօստամի սրւտակ դեմ էմ. Պամաթ շահ որ Ռօստամ սպանեց, Ռօստամի քօլն խանէր, թո դիւ ընձի սպանէր:

Որ դեմ ըտենց սսաց, Ատամբժին սսաց.—Ես էլ Ռօստամի թուն էմ:

Էն տե շատ ուրախ էլան:

Էլան վեր, քչեցին, դնացին: Շատ-քիչ գնացին, էլմ ջրով, կանանչով, ծաղկով խոտով պատահան:

Ատամբժին սսաց.—Արե՛, նստենք էս տեղ, էսոր տէր կայ, թող գեայ. իմանանք իչ մարդ ի:

Մէկ էլ տխան կարմիր դե էկաւ. գայիւ բաւան.—Այ խոզածին. էսա եմ տեղն ի, մէկէր անտէր ի, դիւ իկէր, նստեր իք վրէն:

Էն գախ կարմիր դե իսեա կիւլաւ կարան. Ատամբժին գկարմիր դե թալեց գեաին. որ կոխեց գեաին, դանակ քեաչեց, սրտի սպանէր. կարմիր դե ախ քեաչեց:

Որ ախ քեաչեց, Ատամբժին սսաց.—Դիւ չամաչեցիք սրւտ էրունի արով ախ քեաչեցիք. իլի վեր, քե ազա արի:

Ասաց.—Խորխուրդ ունեմ եմ սրտի մէջ, մրազ ունեմ, եմ մրազ կատարէր, դիւ ընձի սպանէր:

Ասաց.—Կարմիր դե, քիւ մրազ սսա:

—Ես Ռօստամի կարմիր դեմ եմ. ես էրթէր, Ռօստամի քօլ Պամաթ շահի մօտէն առնէր, թո ընձի սպանէր:

Դէ, էլի, դնա՛, սսաց, ես Ռօստամի թուն էմ, մինչև քսան աուուր գեաս, դոուս անինք, էրթանք Պամաթ շահի վրէն:

Կարմիր դե գնաց խրտ ուր հալին, դինք, Դիւրօն ջխօսի էլան, դնացին:

Շատ քիչ գնացին, էլմ ծաղկով, ջրով, խոտով տեղ ըլաս էկան, դնացին, նստան վրէն:

Ատամբժին ասաց.—Արե՛, նստենք ըս տե, հալպար խոր աէր կայ. գեայ, տխանանք:

Նստելիւ բաճան ախան գեերայ ջոջ աղբէր.սե դե էկաւ, գեօն գեշացե, աչքերաց էրուն կը թափի:

Էն գեախ Դիւրօ շատ երկուղ արաւ. շատ վախեցաւ մօտէն:

Ատամբժին ասաց.—Դիւրօ, մը վախեցի:

Ատամբժին, սե դե կպան յիրար առաւտուն աղօթարան գեւ չէր բացուե. ջլստով կպան յիրար, էնենց գեախն կը ճղճղուի, ինոնց տաց դէմը ինչխ վիսկի թափն, ճղճղին: Աստուածութեն էնենց դուվար իտու Ատամբժուն. Ատամբժին սե դե կոխեց գեախն. կոխելիւ ժամանակ վիզ պտի կտռէր, սե դե մէ ախ քեաշեց:

—Իլի վեր, ասաց. մէկ գգէլ էրունի արով ախ քեաշեցիր. գիւ չես ամաչիր:

—Ա՛յ փայլելան, ասաց. ես էրունի խամար ախ չի քեաշեցի. մենք իրեք աղբէր էնք, իրեքն էլ Ռօստամի գեերն էնք, մենք իրեքն էլ ահս արուկ ինք Ռօստամի խամար, Պամաթ շահ Ղօստամ սպանեց, գնաց կորաւ. մենք ինոր քօլ խանէնք, յետոյ դիւ ին կանէր, անէր:

—Որ էնենց ի, ես Ռօստամի թոռ Ատամբժին էմ, գնա՛, մինչև քսան օր ժամանակ էմ տուե, քսան աւուր վրէն դիւ իրեք գեան էլ դէք:

Էն իլաւ. գնաց. էնոնք էլ ջլստով գնացին:

Գնացին շատ քիչ, գնացին Մսրրայ քաղաք:

Գնացին, սալթաով, սալթաով լալսարի տունը գնտան, խաբըրցին. մէմէկու յայանի էլան թի.—Մենք Ռօստամի թոռներն էնք. թի՛ իսն էլ լալսարն եմ:

Էլան վեր, էն տե խօսքերն մէկ արեցին.պայման արին.—Էրթանը մէ տեղ. մեռնինք մէ տեղ. էրթանը Պամաթ շահի վրէն:

Լալսար ասաց.—Մէ քապուր ասկեար ընձի-եմ պարաք որ ես բիրեմ, էրթանը Պամաթ շահի վրէն:

Էլան վեր, էն քապուր ասկեար, լալսար. Ատամբժին, Դիւրօն մէկ տեղ էկան. խասան գեերաց բլանքեր, էգ իրեք գեերաց խեա մէկ տեղ դօռուն արեցին, էկան:

Շատ-քիչ էկան, էկան, Պամաթ շահի քաղքին մօտացան:

Ատամբժին ինոնց խօսողն էր-ինոնց մեծը. ասաց.—Էս քաղքին օխաը խատ դարկեախ ունէր. սե դե՛, էս մէկը քեզի. մէկն էր իտուր կարմիր գեին, մէյն էլ իտուր սըւտակ գեին. մէյն էլ իտուր լալսարին, մէյն էլ իտուր լալսարի քապուր ասկիին. մէյն էլ իտուր Դիւրօյին, մէյն էլ առեց իւր:

Ասաց.—Էս օխաը դարկեախն էլ բռնէք, բան ի, չի Պամաթ շահ դարկեախներաց փախնի:

Ճապ գնաց Պամաթ շահի խամար, ասին.—Աստուած քեօ տուն աւըրի, ին կանես. Ռօստամի թոռներ օխաը դարկեախներն էլ քեզ վրայ բռնած էն:

Ասաց.—Ինչխ անեմ, ինչխ չանեմ:

Ինու աղջիկն էլաւ, աղայ մարդու դըլըլիւ խաղեաւ. գնաց կուլ անել, մէկ հատ էլ դուրի դարման լցեց, դրեց ուր միջաց առջև. գնաց, խասաւ մօ Ատամբժին, ասաց.—Ա՛յ փայլելան, առ էսա դուրին, խոտըտան, որ դիւ կուսա եմ դրալի յէօջև քե բռնես:

Ատամբժին դուրին առեց, խոտխըտաց. որ խոտխըտալու ժամանակ խեքը դիտուց գնաց, էն գեախ առեց. Ատամբժուն փախմանակ խեքը դիտուց գնաց, էն գեախ առեց, գնաց, էգիր օղի մէջ, դուռ ցուց, տարաւ. էնենց մեռուկ տարաւ, գնաց, էգիր օղի մէջ, դուռ վրէն շինեց:

Էն քաղքի մէջ էլ մէկ կնիկ կայ, Ռօստամի ցեղերաց ի, էգ կնկայ անուն Քեաշտասալանուկ ի. էգ Քեաշտասալանուկ կըլի վեր, ին կանի. կըլի վեր, քեանիմ աղայ մղայ կառնի, կերթայ, կերթալու քաց, ես գեամ. մէկ կտոր տու էնու էրնից, ես խմեմ:

Աղջիկ կասի.—Արի, նստի էսա տեղ, ես էրթամ. մէկէլ աղբէր—Դիւրօն էլ բերեմ. մէկին դիւ խմի, մէկին ես խմեմ:

Էն գեախ Քեաշտասալանուկ կը մնայ էն տեղ, էն կնիկ, կերթայ կուլ անել:

Էրթալու բաճան էգ Քեաշտասալանուկ ջիւր կը զարկի Ատամբժու իրեաները. խեք կուզեայ գլեօխը, կասի.—Ատամբժի. էլի՛, գնա՛. էն ին որ կուգեայ, կուլ անել, էն աղջիկ ի, էն գեղ կուտայ. կը բնէք, ամօթ չի ձի գեօրայ:

Ատամբժու խեքը կուզեայ գլեօխ.— կըլի վազեվազ կերթայ. կերթայ, կը տխանայ էն աղջիկ, Դիւրօն կանած մէմէկու դէմ, խապար կուտան:

Ատամբժին կերթայ, որ Դիւրօյից կառնի. առնելու բաճան էգ աղջիկ էրմ դուրին կուտայ Ատամբժուն.—Ա՛ն, փայլելան, խոտխըտայ, որ յէօջև եմ դրալին բռնես քե:

Էն ժամանակ դուրին կառնի, առնելու բաճան էլ չխոտխըտաց. կը զանի ուր միջաց յէօջև:

Աղջկան կասի.—Ի՛է, քիւ գրողն գորկ, ես եմ դըրալն յէօջև կուտամ եմ գուշմընին:

Էն ժամանակ աղջիկ ին գըրալ պտի զարկի, ին որ մարդ թօղ թողթըլի:

Դոր էկաւ Ատամբժուն, ին որ Ատամբժին զարկեց. աղջիկ

ձիւնց բիրեց տակ: Էն գեախ դանակ թալեց, վիզ կտրեք, աղջիկ ուր ծըծվեր շանց կուտայ:

Էն գեախ Ատամբժին կասի.— Բիւ խօր օճխի մէջ մարդ չկէր, քիւ խօր քաղաք բամբախ էր, դիւ կուզեաս կռիւ:

Էն ժամանակ ձապ կերթայ Պամաթ շահի խամար. Պամաթ շահ կըլի, կը վախնի. փախնելու բաժան կերթայ, ծովու դաս կանի: որ զինք քցի ծովը:

Ատամբժին կընի յեառ.— Հա էսա տեղ զանի, սպանի, հա էնա տեղ զանի, սպանի. կերթայ, խամանի ծովու բիրան. որ կը խամանի ծովու բիրան. դուլ (ջրշուն) ծովուց կըլի դիւս. խրտ ընկիւն դիւս, զՊամաթ շահ կը վիւ. զիւրու ժամանակ Ատամբժին թրով կը դարկի, դուլ կսպանի:

Էն գեախ Ատամբժին ուր անուն կուտայ.

Ա. Բարբալ, կասի, Ատամբժու խամար:

Ատամբժի դուլ սպանեց Պամաթ շահի խամար:

Պամաթ շահ սպանեց Ատամբժի տեղ:

Ա. Բարբալ Ատամբժու խամար:

Էն ժամանակ Ատամբժին դառնայ, կուզեայ մօ դեեր, մօ լալէն, մօ Կիւրօն: կինին քաղքի մէջ, ինչ տար Պամաթ շահի ցեղից մարդ կայ, պիրուն կսպանեն:

Կը դառնան, կերթան, ինոնց մէջէր էն սարից կը բերեն, կուզեան քաղքի մէջ:

Կերթան, ինոնց Պաղ-Չալ խարից կը խանեն, կը բերեն:

Էն ժամանակ էն ջուխան էլ կը փայտին:

Օխոր օր, օխոր դշեր խարանիս կանեն:

Գեերաց կասի.— Դնացէք դիւ ձեր խող ջրու վրայ:

Ինոնք խասան ուրանց մրազ, գիւքն էլ ձեր:



3

ԸՌՈՍՏԱՄԻ ԶԱԼ

Քաղքերունաց Արծկի Անրնձկայս զիւղի բարբառով *

Հայ Բրոյական Վէս.

Վախճով մէկ փայլեալան կեղի Ստանանայ քաղքին մէջ: Թագաւորին փեյլիվանութեն կենայ, ինչ դաս, ինչ իրաւունք էղի կուտայ էդ փեյլիվանին, էն փեյլիվան շատ դոչախ կեղի:

Էդ փեյլիվանի անուն Զալ կեղի, ասա-քսան տարի թագաւորի ասէջ փեյլիվանութեն կենայ: Ասու խրամաքով էդ փեյլիվանի տղէմ՝ կեղի, էդ տղին անուն կը դնեն Ըոստամ:

Իրեք, շորս տարի արանք կընցնի, էդ տղէն կը մեծանայ, դնայ վարժատուն, էրկու-իրեք տարի ուր խամար կը կարթայ, Աուր մէկին էդ տղէն վարժատունէն կեղի, կուզեայ տուն որ խաց ուտայ, կուզեայ տեաի փողնի մէջ իրեք-չորս տղայ ուր ունեւնին գըրու կը խաղան, էդ Ըոստամ կը վերցու, աղէկներու գըրու կը թալայ. կը թալայ կուրխայ: էդ աղէկներ չգիտեն թէ էդ Ըոստամն ա, բիրսկերի կասեն.— Քու մէր . . . դու յորին մեր դուլ թալեցիր, կուրխեցիր:

Ըոստամ կասայ, տղա, շանթի, ես Ըոստամն էղիմ, դու իմ ճակտի մէջ ընձի բուժր տաս: Ըոստամ կը վերցնէ էդ բուժր տուող տղէն, կը դանի ունթ, կը տանի պաղչի մէջ ձեռը կը թալէ ծառ, զգնայ ձեռաց, բերայ, աղի մէկ սա շրտով կը կասայ էդ

* Ասած է Կառ մախսի Յաւարիւնեան, յսած է փոք ժամանակին մի Նայէ, սակայն ընդհանրապէս հայեր օրայնեալ մէջ կը պատմեն, որպէս եւ բազմաթիւ Բրոյական վէպեր: Թէեւ Բրոյական վէպ է, բոլոր այնչափ չեն նեկեր, այլ ընդհանրապէս հայեր եւ Բարդ Բնչուներն եւս կը պատմեն:

ծառ, ձեռ կը թալայ մէկէլ ծառն էլ կեռայ, բերայ. էն մէկէլ ոտն էլ չըտով կը կապայ մէկէլ ծառը:

Էդ էրկու ծառներն օր կը թողայ, էդ ծառի զրպիւն տղէն կը կիսուել օրքալըխէն, կէս կը մնայ էն ծառին, կէս կը մնայ էն ծառին: Ընտանամ թողայ, կուգեայ տուն, խաց կուտայ:

Էրկու իրեք օր էդ տղի խէր կընկի խարց ու փորձ, վինից կը խարցուցայ, տղի սալղ չըն խայ, տղի խէր դալալ կուտայ կանչել, կասայ.—Որն օր իմ տղին սալխ տուեց, ինչ օր ուղայ ախշըքի էրես, կուտամ: Ամենքը ուրին ընկեալ պոտտեց:

Մարթու մէկ զնաց, տեսաւ որ պաղչիմ մէջ շանդկիմ կէս մէկ ծառէն կախուկ ա, կէս մէկ ծառէն կախուկ ա, ասաց.—Կեղի-չեղի էդ մարթու տղէն էս ա:

Էլաւ, զնաց էդ տղի խօրն ասաց.—Վալա Ֆլան մարթու պաղչի մէջ կէս էն ծառէն, կէս էն ծառէն կախած ա, կօ չի գետեմ. քո տղէն ա, չէ, չէ:

Մարթն էլաւ, առաւ չորս խինգ մարթ որ պտի տեսնի. էկաւ տեսաւ ուր տղէն էր, հուճմարին ասաց.—Սա իմ տղէն էս թաղից կուգեմ, տեսամ որն ա էսքան չարչարանքով իմ տղէն սպաններ:

Էդ տղի ընկերախը դուլ կը խաղէն, լսեցին էդոր ասած խսեն, ասին.—Ազա, քո տղէն որն ա էդքան չարչարանքով սպաներ, հլխի ետխեն մի բռներ, հանց Ընտանամից մարդ չսպանէր:

—Տղա, ասաց. դու տեսար Ընտանամն ա սպանէր:

—Սա, ասաց, տեսայ: Ասաց,—Իմալ տեսար:

Ասաց.—Մենք զըլուլ կը խաղէնք էսա տեղ, ես, քու տղէն, ուրիշ տղէք. Ընտանամ վարժատնէն էկաւ, վերցուց մեր զըլուլ թալեց, մեր էլ չի դիտենք թէ Ընտանամն էր, քո տղէն էնոր ԲՅրտեց, էն ա Ընտանամ չթողեց օր բերնէն էլէր, ասաց. «ես Ընտանամն էղիմ, դու մըջ իմ ճակտին ընձի ԲՅրտես» . վերցեց, զարկեց ուր ունթ, մենք փախանք:

Էդ մարթ չկանայ Ընտանամին բան ասա, էլաւ զնաց ուր տուն. էլ աչկեարայ չենեց ուր տղի սպանել, էլաւ, ձեռաց տկով մազպարա շքեց, շարսթմ՝ էրկու էգմալ էդ մարթը ընկեալ մըջ քաղքին. էնոր դանմիւռ էնեց, էնոր դանմիւռ էնեց.—Թէ էսօր իմ տղէն ա սպաներ վաղը ձեր տղէն կսպանայ, Ե՛ սուր կը բանի վրէն, Ե՛ թուր, էսմա էղի, մենք չենք կանայ դիմանանք:

—Ապա էդոր ճարն ինչ ա, խարցուցին էդ մարթիք:

—Ճարն էն ա, մէկ մազպարա տանք թաքաւորին, եան մեղնից ձեռ քաշայ, եան ընտուց ձեռ քաշայ:

Էլան Բոմով, պիլըլըիով առան էդ մազպարան գեացին, էն թուրթ

տարան տուին թաքաւորին, թաքաւոր թուրթ առաւ, կարթաց, ասաց.—Իմալ կասէք, ձեր տեղ ինչ ա:

Մեր ասած էն ա, քու փեյլըլանի մէկ հաղ կեամ թողեր ես, էղե չոր գուլա ձի, էլ չախուի. մենք չենք կանայ դիմանանք, եան էնոր մօտէն ձեռ կը քաշես, եան մեր մօտէն. մենք կերթանք ուրիշ թաքաւորի խող:

Ասաց.—Էնի մէկ մարթ ա, դու խաղար-խաղար մարթ էք, ես ձեզնից ձեռ չեմ քաշեմ. դու գեացէք, էս էն տղէն կը ճամբխեմ սուրկուց: Էդ մարթիք էլան, էկան ուրանց աներ:

Թաքաւոր Զալին զանչեց, ասաց.—Ձալ, էս դիդաք քեզի ամալ էմ տուեր իմ ձեռ չընէր ես քու տղին սպանեմ, քո տղէն ճամբխայ ուրիշ երկրներ, թո էրթայ ուրին սպարուի, դոր էրթայ քու տղէն կասլուի:

Ձալն ասաց.—Թաքաւոր սաղ մնայ, կերթամ, կը ճամբխեմ: Կուգեայ տուն, ուր կնիկ առն չեղի. կը տեսի ուր տղէն վարժատնէն կուգեայ: Խաց կուտայ, կը պրծնի: Կասայ.—Տղա, էլ պտի չմնաս էս քաղքի մէջ, թաքաւոր քե սուրկուց ա արե:

Սփո, ասաց. ես էլ չկայնիմ, զարի կերթամ, զարի էն գախ որ իմ հերս կելլի, իմ աչքեր կը մթնտայ, սար իմ աչքին լուճ կերեայ:

Էլաւ տղին խարնիս տուեց, ճամբխու գրեց. տղէն զնաց: Տղէն քիչմ տեղ զնաց, դարձաւ ասաց.—Սա, ես էս դարտակ ու տկուղ դոր կերթամ, իմ խօր էրկու թուր կայ, չուր մկայ տուն խաց կուտէի, մկայ պտի էրթամ գողութենով, մարգասպանութենով պտի սպրուիմ, էրթամ մէկ թուր առնեմ:

Դարձաւ, խոր ասաց.—Սփո, քու էրկու թրէն մէկ տուր ընձի, ես պտի էրթամ շարսութենով սպրիմ, իմ տուն դան չէ:

Որդի, ասաց. զնա, էրկու թրէն որ մեկ խաւնիս, էն տար:

Թուր թալեց էկաւ, խոր ձեռ պաքեց:

—Որդի, ասաց. քե պախեցի, խասուցի, քո բար չկերայ:

—Սփո, ասաց. ընչի ընձի կանիծես, ընձի օրչնայ:

—«Որդի, ասաց. Աստուած քե յիմսաց էղի, քո թալած թուր կաուր էղի, քո թալած թրի գէմ մարդ չդիմանայ» .

Տղէն էր զանչեց ուր Աստուած, ընկեալ ուր ճամբխու:

—Աստուած, ասաց. դու ընձի ամօթալից չենէս, դուճմրնի յառէջ սլուտակ էրես պախեա:

Տղէն էր, կէս սնարի չափ զնաց, չզնաց, մէրն էկաւ տուն. խարցուց Զալի մօտէն.—Դոր ա Ընտանամ, յորի չեկեր ա խաց կերեր ա Խօր սիրտ դժարցաւ, արցունք պրծաւ, զըլըլուլէն աչքերուց էկաւ, ասաց.—Քո աչքեր Բոնայ. թաքաւոր եմք էնեց, տղէն ճամբխեցինք սուրկուց:

Կնիկ տեսի կը մնայ ճծով, կերթայ դուռն կասայ:
—Գե-ես մայի ճծով, իմալ էնեմ, իմ տղէն տեսի, ընձի կսպանայ:

Ասաց.—Գնա՛, տեղ թալ, պարկի. քե դիր խիւանդութեն, օր քու տղէն նեհիբից կուգեայ, կասայ.—Մարէ, քե ինչ էղեր ա, դու ասա. ես խիւանդ էմ, կը մեռնիմ, քոնէ կը խարցուցայ, էրթամ ինչ դեղ բերեմ քե, դու ասա թէ Սե սար կայ, էն տեղ անմախութենի ջուր կայ, խնձոր կայ. ինչ որ Աստուածութեն տեղծեր ա էն տեղ կայ. օ գնաց էն տեղ, մեր եօթ գլխէն դե էն տեղն ա, քու տղէն կսպանայ. մենք կը մնանք էս տեղ, Բեյն կենեք: Տղէն էկաւ տուն, տեսաւ ուր մէր պարկե, ծանտը կը տքայ, կասայ.—Մարէ, քեղ ինչ ա էղեր: Կասայ,—Լա օ, ջրփոխուերէմ, ուռուցուերէմ, կը մեռնիմ:

—Մարէ, ասաց. քե ինչ դեղ պէտք ա, դու ասա, ես բերեմ:

Կասայ.—Բան ընձի չի սաղցուցայ, ընձի օր սաղցուցայ Սե սար կայ, էնտեղ անմախութենի ջուր, խնձոր կայ. բերես, կը սաղնամ:

Բարի լուս բացուի հազրներուն հաւդէհիւ միլիբին (եթեանասուն երկու աղգին), վըր էնոնց. խեծաւ ուր ձին, թուր թալեց թե, դանչեց ուր Աստուած, ընկեաւ ճանքախ. շատ գնաց, քիչ գնաց, Աստուած գիտայ. մէկ գեղիմ ըռաս էկաւ, չխասաւ էդ սար: Ձիու կեամ թալեց ձիու վիղ, ասաց.—Ձին վին դուռ գնաց, կայնաւ, էն տեղ դօնախ կեղիմ գիշեր. լուսուն կելիմ, կերթամ: Աստուծոյ խրամանքով ձին գնաց կայնաւ խայիւորիմ դուռ. տղայ չկայ էղոր, եօթ խատ խուրնիկ խրեղէն աղջիկ կայ էղոր: Աղջիկներ էլան դուռ, տեսան օր ձիաւորմ դուռ կայնուկ ա: Ձիաւոր խարցուց.—Աղջիկներ, ասաց. էս օր գշեր ընձի դօնախ կը պախէք:

Ասին.—Կայնի դագ, մղի ջոջ կայ, խարցուցենք, կուգեանք, քեղի ջուար կուտանք: Աղջիկներ գեացին մըա խէր, ասին,—Մեր դուռ դօնախ էկերա:

Խէրն ասաց.—Լա օ, դօնախ օր կայ Աստուծոյ դօնախն ա, թօղ գեայ:

Մարթու ձին քեային, մարթ գնաց յողեն, թաղիս, եարախ բերին:

Մնաց իրիկուան գեախ. էդ տան տէր ասաց.—Քու անուն ինչ ա:

Ասաց.—Իմ անուն Ըռօստամ ա:

Ասաց.—Դու վին տղէն էս: Ասաց. Չայի տղէն էմ:

Ասաց.—Սօրմաղ այիայ օլմասն, (հարցնել ամօթ չը լինի). խէր էղի, յճատ կուգեաս, դճը կերթաս:

Ասաց.—Կերթամ Սե սար, անմախութենի ըան կայ, բերեմ քիմ մօր:

Էխտիյար իմաստուն էր, գլուխ տարաւ, բերեց, ասաց.
—Տղա՛, բանըմ ասեմ, չէղի ըռըբիս:

Ասաց.—Ընչի ըռըբիմ, ախըբի գործ ա:

Ասաց.—Տես, իմ աղջկայ օրն սիրուն ա, տամ քե, իմ մալ իպայ էնեմ վըր քե, նստի, կեր, չուս յօր մեռնելուն. արի, մէրթար էն տեղ, կսպանուիս, էն տեղ էրթըցող սաղ չ՛ դառնայ:

Ասաց.—Չուս ես իմ մուրազը չկատարեմ, կարգուելու անուն ես իմ վրայ չի բերեմ:

Բարի լուս բացուի վըր ձեղի. լուս բացուաւ, էլաւ ընկաւ ճանքախ:

Գնաց, չուս կէս օրին խասաւ Սե սար:

Գնաց, տեսաւ որ կարմիր բասան քաչուկ ա էգու չորս բոլոր, բիրուն խնի գլուխ ու խնի արուն:

Գնաց, ձին կսպեց դարկեախ. զարկեց, դարկեախ կոտրեց, մտաւ մըջ բաղին, կերաւ, խմեց, փարչմ ջուր լցեց, դնեց մըջ խուրհիմին, մէ քայն էլ եմիտ լցեց. բերեց, կսպեց ձիու քարկ:

Ասաց.—Շատ անուշ ա էսա բաղ. քիչմըն էլ սրտի պտտեմ:

Գարձաւ բաղիցը էկաւ օ կեամ դանի ձիու գլուխ, խեծի. տեսաւ եօթ գլխէն դե գեօրգ վըր թեին էն տեխէն էկաւ. նա, խողածին, ասաց. դու ըսի իմ անուն չի լսեր էս. դու դարկեախ կոտրերէս, մտերէս ներս:

Ասաց.—Ես քու անուն լսեր էմ, դուց էկայ, դու ինչ որ լում՝ իմ աչից էրեաս, դու մարթ յորին կեղիս, «գատանց էլի աչքն էս խանէ, մօտանց տիրոջ.» «էս օր եան իմ մէր պտի լայ, եան քու մէր»:

Դեն ասաց.—Որ դու դօչախ էս, մէկ դրապ գարկ ընձի, տեսինք դու իմալ մարդմ էս որ քղի կը գովաս:

Ասաց.—Դե՛, որ ես իմ դրապ գանիմ, դու սաղ չես մնա. առջին դո՛ւ գար:

Դեն ասաց.—Ըռօստամ, դէմ տուր, իմ գուրգ էկաւ:

Ըռօստամ ասաց.—Քու գուրգ կը լամի ճօերու քօլի, որ կըռքօլի խաղան:

Դե գուրգ գանեց, Ըռօստամ ինչ օր ճնճղուուն, գուրգ բոնեց:

Ասաց.—Դե՛, ես էրախայ էմ, ընձի խետ խանաք կենես դու, տղա մարթու դրապ գարկ օր մարթու ջկըբից բռնայ:

Ասաց.—Դե՛, գորն էկաւ ընձի, դայաղ տուր, էկաւ դրապ:

Ասաց ու գարկեց, յէմալ գանեց օր ջանդրկի կէս գնաց, տեղա տեղ մնաց կայնուկ: Էդ տեղ թուրը առաւ, պրծաւ վըր դիւուն, էնեց ըռըցայ, փրթեց. թափեց ցած:

Էկաւ գշերը էդ հխտիյար մարթու տուն էլման դօնախ էկաւ:

Էխս՛յաւ էլման ասաց.— Բաօստամ. արի՛, իմ աղջիկներէն մէկ առ, իմ մալ խալա էնեմ վըր քե. օրմ կը մնասուիս, մեղքիս դու, ինչ որ էնեց, չարա չեղաւ խըտ Բաօստամի Զալին: Էս իխոյաւ իմաստունէր, աղջիկներուն ասաց.— Խորջին բացէք, ջուրն էլ եմիտն էլ փոխէք, զայ չէնէք, թը մնայ:

Փոխեցին, բարի լուս բացուաւ, էդի ընկաւ ճանրախ: Դեն աւէդուր մէր կայնած էն աանիս. տեսան որ բարանկ, թող մը կեղի ճամբխու խեա, մէր վերցուց.— Բաօստամ եկաւ. հետ ընձի կապանայ, հետ քղիկ:

— Գու տուն աւիրի, ասաց. Բաօստամ էնեց տեղ մէնք ճամբխե որ սկի չգիայ, դու էդ ինչ ա կասես էկաւ մօտըցու, տեսան օր Բաօստամն ա:

Դեւ կնկեան ասաց.— Դու էլի պարկի, քղի գիր ծանար խիււքնութեն, ես էլ մոխմ խոր, տեսինք ինչ կեղի: Դեն մաւա մըջ խորին, կնիկ էկաւ ծանար պարկաւ:

Բաօստամ էկաւ իջաւ, տեսաւ ուր մէր նալախի գեացեր ա.— Մարէ, ասաց. քու ասած ջուր բան բերեր էմ, էլի, տես քու իւսահ չէրթայ, աւես:

Ասաց.— Էրկու խառ բեր, տեսինք: Բերեց, կերաւ մէկ խառ, ասաց.— Լա օ, դու քոն օնախ էս իմ խէլք քոնէ չկորէ ընձի անմախտիան եմիտ բերես, գեացեր էս Շէրվընու թթու խնձոր բերեր էս, ինչ:

Տղէն կերգուի, խորուց կեղի, կասայ.— Մարէ, վալա գեացեր էմ, գդե սարներ էմ, դու էդ ինչ ա կասես:

Բաօստամ օր էդլան կասայ, դե ախանջ կենայ.— Վայ կասայ ինքն ուրին գե, էս անաստուած աղէն գեացեր մեր եօթ զլխէն գեն էլ սպաներ ա, պա մենք իմալ պախ էնենք:

Կը մնայ, չանք լուսնայ. աղէն կեղի, կերթայ նեջիբութենի:

Դե կուգեայ, կասայ.— Իրիկունը քու աղէն կուգեայ, ասա. Ես խիւանդ էմ, մէքի կը վախնամ, էս տեղ մնացի, սարիին խազանք, օր ընցուցենք:

Տղէն կուգեայ, խը լուսուն կեղի օր էրթայ նեխիբութեն, մէր կը վերցու.— Լա օ, ես էս տեղ մնալի, խեղճ, Եէ ջուր տուող, նե խաց տուող, ընձի կը թողես մին ումուտին անտէր, անտիրական:

— Ապա ես իմալ էնեմ, դու ասա, ես քու խօսք էնեմ:

Ասաց.— Մնացի էս տեղ, էրկու իրեք օր սարիին խազանք:

Ինքն, ուր մէր կը նստին սարիին կը խազան:

Ինչ ղնդար կը խազան, աղէն զըմէր կը տանի:

Մէրը կասայ.— Լա օ, նալալարա օր մը քղի ծիծ էմ տուե.

օյին մը թող, ես քե տանեմ:

Օյին մէկ մէր զը աղէն կը տանի:

Մէր կասայ.— Լա օ, քու ուժ ինչ կը յաղթայ:

— Մարէ, կասայ. դու ինչ կուգես իմ ուժից:

— Լա օ, նալալար շաղիկ մը վեր քե ջոջ իմ, կեղի օր քոնէ էլ ուժով մարթ կայ:

Կասայ. Մարէ, ախըքի էրես ընձի բան չգալբայ, քեառսուն կեաղ սնաղայ զնիլ՝ որ կապեն սուն, կը զաւթայ. էլ բան չգալբայ:

Մէր բերայ քեառսուն կեաղ բնատայ զնիլով կը կապայ սուն:

Տղէն կասայ.— Մարէ, գնա դէն:

Տղէն օր կը ձմրկտայ, զնիլի կտորներ ամեկը ախշար մը կերթայ:

— Լա օ, ընձի սութ կասես, խա. նալա ուղիղն ասա, քղի ինչ կը զաւթայ:

Ասաց.— Ընձի քեառսուն դեաղ կանփէ ճուպն կը զաւթայ:

Մէրն ասաց.— Տղա, կանի, քու սութն՝ օղորդ ճրպեմ էդ խեա էլ:

Տարաւ, էլման կապեց էդի սուն ճոպնով:

— Տղա, ասաց. մէկ իրար տուր, տեսինք:

Իրար տարու բաւեսան ճոպնի կտորներ ինչ որ ժաժի թափաւ:

— Տեսնը, տղա, որ դու սութ ասան էս:

— Մարէ, ասաց, ես սութ ասան չեմ ամա, խուժ կաթ ծծողին բաղդ չկայ, վախենամ դու իմ զլուխ վնաս մը բերես:

Ասաց.— Լա օ, ես քու մէր էդիմ, ընչի քու զլուխ վնաս բերեմ:

— Մարէ, ասաց, ախըքի մէջ ընձի անդան լար, որ իմ էրկու բուղ էտեէն կապես, էնի կը զաւթայ:

Կապեց ասաց.— Տղա, քե իրար տուր, տեսինք:

Տղէն ձեռներն յիրար տարու բաւեսան արուն. սղազալէն քաւարներուց թալեց:

— Մարէ, ասաց. արե՛, իմ ձեռներ արձկայ, մրմուռ թալեց իմ սիրտ, իմ ջկեար կտրտաւ:

Մէրն ասաց.— Սութ կասես. ճոպան կտրող, զնիլ կտրող էդ անդան լար չի կեարնար կտրէր:

Տեսաւ չի կեարնայ կտրէր, կանչեց դիւուն, ասաց.

— Դե՛, քոնէ կուգէմ, օտնէն փրթես մինչև դլուխ:

Փրթեցին, լցին մըջ մաղէ դարարին. կապին վրը ձիուն, դոր էս էկեր էս, էն տեղ գնա:

Աստուծոյ խրամանքով ձին տղու կերթայ էդ էխսիյաւ մարթու դուռ կը կայնի. էդ տեղ էդ մարթու եօթ ախչիէ մէկը կեղի դուռ, կու տեսի, օհօ, Բաօստամի Զալի ձին, կը մտի ներս, կասայ.—

Անձ, ջանճակ մը կապուկ վըր ձիուն, կասես Ընօտամի ձին ա: Էխսիյար իմաստուն էր, էդ տեղ իմցաւ:

—Աղչի, ասաց. Վաղէք, ջանճակ բերէք ներս:

Չարս-խինգ աղչիկ ժողուին վերէն: Ընօտամիին կը վերցնեն, կը տանեն օդէն:

—Աղչի կասայ. եմիտը ծեծէք, էնէք միմամ:

Բերայ տղի ջանդակ, կը դնայ տախտակիմ յըէն, ձեռ ձեռաց տեղ, աչք աչքի տեղ կը դնայ, ոտ ոտաց տեղ կը դնայ. էդ միմամ կը բերայ քաշայ տղի ետեհներու վրէն. կալուկ եօղանմէլ կը թալայ վըր տղին, կը պարկին, քնին, կասայ.—Չանք լուս տեսինք Աստուած ինչ դուռ կը բանայ:

Բարի լուս կը բացուի հազրենքուն, վըր էդ մարդեկաց. աղչկընէր կը լցուին յօդէն, Աստուծոյ խրամանքով էդ աղչկներու ձէն կընկի տղի անկաջ, տղէն բիրթէն շակի նստի, կասայ:

—Պապէ, ես էրեկ էկայ քու տուն նաղ ի, ընձի սպանեցին. մկայ քու տուն նաղ իմ, էս իմալ բան ա:

Պապէն կասայ.—Տղան, զա էրող էս տեսեր դու. տղան, կասայ, արե, իմ եօթ աղչկէն մէկ տամ քզի, իմ մալ իպայ էնեմ վըր քզի, օրմ քզի կտպանեն, մեղք էս:

Տղէն ասաց.—Պապէ, էն իմ ծնող մէրն էր, ես ինչ խաւապայ. քու աղչիկ էլ օղլու աղչիկ ա, ես ինչ սլտի խաւալընամ. խուժ կաթ ծծողին լազդ չկայ, քեանի ես սաղ իմ, էրդուժ կուտամ, խուժ կաթ ծծող պտի չառիմ, իմ ձին քեանչեայ, ես էրթամ:

Տղի ձին կը քեանչէն դուս, բոնայ էդ մարթու ձեռ աղչէն կը պագայ, կասայ.—Պապէ, քու ամակ ընձի խալալ էնայ, քու սուրբ բերնով ընձի օրչնայ. ես էրթամ խըտ իմ ճամբսուն:

—Որդի, ասաց. Աստուծոյ օրչնիքը խըտ քզի էղի. դնա:

Տղէն գձին էմալ քչեց օր, իմալ օր կուլլին քվընի բերնէն կելի. Էկաւ մօտըջաւ մաղարին. դե ու մէր տեսան, էսի Ընօտամի Չալի ձին էկաւ, ասեցին իրարու.—Էս ձին խեծող ան պտի էղի, զախար ճամբսորթ-մամխորթ ա: Բիրտէն, օնն էսի Ընօտամի Չալն ի. Դե վախաւ, մտաւ մըջ խորին, մէր դնաց, պարկաւ:

Ընօտամ էկաւ տուն, տեսաւ թուր պատից կախ ա: Թուր թալեց վիդ, գնաց, կանաւ խորի վերէն, ասաց.—Դե, դե, էլի արե դուս, մը վախենայ, քզի բան չեմ ասե: Գնա էն քեառտուն կեազանոց ճողան ու պալթէն առ, էրթանք մեհեն. փէտ բերինք: Տարաւ մեհեն, ինչ դաճար ճողան փէտ տարաւ, դե ճղճղտեց, շալակ գնեց, շալկեց. անաւ էկաւ տուն:

Դեռն ասաց.—Քզնէ կուզեմ, էդ խազան իլին. ջուր լցիս,

դնիս վըր օնխին, մէկ չխտիկ փէտ չմնայ, բիրուն վառես օր իմ մէր, դնեմ համամ: Դե վառեց. ջուր յէմալ կեռայ, թարայ ար էրկու մգրալ քոյ կելի:

Ընօտամ դնաց կայնաւ մօր գլխու վերէն, ասաց.—Մարէ, յէլի քե դնեմ համամ:—Լա օ, ասաց, էդա ջուրը յէմալ կը բղրղկայ, էդոր ձէն իմ ակնջնէր կը խուլցուցայ, ընձի կը տանես կերիցես:—Մարէ, քե չիրիցեմ, համամ կը դնեմ. մարէ, էն օր որ թուր տուր դեռ ձեռ, ընձի կը փրթեր, էն օր իմ ջան իմալ էր, քար էր, չէ ամեկը ուր բրդած՝ կուզեայ ուր գղալ:

Էլաւ էդա տեղ մօր ճիւ բունեց, բերեց, դնեց մէջ քեառօթին: Էդոր աղչիկմ էղեր էր, էն էլ թալեց մըջ քեառօթին, դեռ ձին էլ բունեց, դնեց մըջ քեառօթին, ասաց:

—Դէ, Բեճով ձեզի ուրախութեն էնէք:

Ընօտամ էլաւ ուր մօտի խալալ փարէն լցեց ուր քամարին մէջ, կապեց մէջը, թըեց վըր շեման, ասաց.—Էսա տեղաց խաց ու ջուր ընձի խառամ էղի, բեբի դունեսա էղաւ, դնաց:

Շատ դնաց-քիչ դնաց, Ապառաժ դիտայ, դնաց մէկ քաղքիմ օսխիլ էղաւ. որ տեղ դնաց՝ էդոր տեղ չի տուցին, ասաց.—Աստուած, ես ինչ դիդար Բեաճիւր մարդ էմ, էս դիդար օնխիլին մէջ դոր դացի, ընձի տեղ չի տուին: Գնաց, կայնաւ ժաման դուռնն էլաւ ժամէն, էդ մարդուն չի տարաւ տուն. յէտի խեռ ժամխար ժամէն էլաւ, ասաց.—Ախպէր, չէլաւ, չէլաւ, դու տեղ մը տուր, էս օր սրաւ էղիմ, լուսուցն կերթամ:

Ասաց.—Ախպէր, տեղ չունիմ, մէկ պզտիկ բողտիկմ ունիմ, քեզի կը տանիմ, քզնէ կեղիմ ամօթով:

Ասաց.—Ախպէր, յորին կելիս ամօթով, սրաւ ա, սրուինք լուսուն կերթամ: Էդ մարթ առաւ, գնաց տուն:

Ձին քեանչեց բակի մէջ. բերեց, փօսմ թալեց, էդ մարդ նստաւ: Մնաց չուժ կէս գչեր, Աստուծոյ խրամանքով ժամխորի կնիկ պարկաւ, աղչիկմ բերեց: Ընօտամ վերցուց.—Ժամխար քեզի ինչ էղաւ:

Ասաց.—Ասելու չէր որ լիս ասեմ, աղչիկըմ էղաւ:

Ասաց.—Ժամխար, իմ պտոպածն էլ էդ էր, գտայ, Աստուծոց էդ կուզի: Գնա, ասա քո կնկան, թո ծիծ չտայ էդ աղչիկէն, ես բերեմ ընձիկ:—Ընօտամ, ասաց. էդ անատուն իմալ պտի տանես, պախես: Ասաց.—Կը տանեմ, թէ մեկաւ Աստուծուն ա, թէ մնաց, ընձիկ ա:

Էլաւ էդա ժամխորին էրկու-իրեք խաբիր օսկի տուեց, աղչիկ ասեց, ընկեաւ ճամբալս: Շատ քիչ Աստուած դիտայ ինչ դնար գնաց, դնաց. գնաց մէկ քարձը սարիմ ընաց էկաւ. շա՛տ վարկեց

մնաց էդ սար. տասնը չորս տարի էդ աղչիկ պախեց, ջնջըցուցեց՝ էղաւ խորնիկ խրեղէն: Պարկաւ էդ աղչկայ ծոց, Աստըծոյ խրամանքով տարին օր թմաւ, էդոր աղէմ տուեց Աստուած, էրկու իրեք տարի արանք անցաւ. էդ աղէն մեծացաւ: Աւուր մէկին Ըռօստամ գնաց ցեղորութենի, տեսաւ քառսուն խառ գե էկան, էդ կնկայ շատրի առէջով ընցան գեացին: Իրիկունը Ըռօստամ ցեղորութենից էկաւ տուն. կնիկ Ըռօստամին պախս չենեց, շատց թէ քեռսուն խառ գե մեր դոնով գեացին: Լուսցաւ, էլման Ըռօստամ գնաց ցեղորութեն, տեսաւ զեք էլման էկան, գեացին. կնիկն էլաւ դուս, խարցուց.—Ախարտիք, դու սր տեղացի էք: Ասին.—Մեզի մասի ախարէր: Ասա, ասաց. ինչ ասեմ:

—Մենք էկեր էնք Ըռօստամ սպանենք, դու կաննաս, քու գլխուն ճար էնե: Ասաց.—Ինչ ճար էնեմ, իմ ձեռ ինչ կայ:

Ասաց.—Ա՛ռ էսա յեսան, իրիկունը Ըռօստամ կուգեայ, կը քնի, կընկի խորունդ քուն, յեսան պռայ վըր փորուն, ասա.—ամիս մը մնաս քնուկ, ամիս օր կը քնի, էլիս վեր:

Իրիկունը Ըռօստամ էկաւ, կնիկ իսկի պախս չենեց:

Ասաց.—Կնիկ, խաց բիր ուտեմ, նեղացուկ էմ:

Խաց բերեց, կերաւ, քնաւ. օր ընկաւ խորունդ քուն, յեսան բերեց պռայ էդոր փորուն, ասաց.—Ամիս մնաս քնուկ. ամիս օր կը քնի էլիս վեր:

Առաւօտուն կնիկը—գեաներու տուն, դոր իս, էկայ քղի:

Ամիսն օր քնաւ, կնիկն առաւ ուր աղէն, էկաւ ուր տուն —Կնիկ, ասաց. յէս օր դչեր ինչ դնար էրկէն էր, շատ էմ քնեք յէլի, իմ ձին քաշայ, էրթամ ցեղորութենի:

Ձին կը խեծի կընկի ճանրախ. շատ կերթայ-քիչ կերթայ, խազալի քարիմ տիէն յանկարծակի կը թռի. Ըռօստամ թռնելու բացան կընկի էտե, խասպեխաս կեղի որ դանի. օր կը դանի, Ըռօստամ կուգեայ քիթ ու մրթի վրէն: Ըռօստամ չու՛մ շտկաւ, խազալ տուեց. էլաւ դէ սարի գլուխ: Էդ տեղ Ըռօստամ կասայ.—Մեցգիլի եախուն, քրասի շոխ, պուրսայ պիւ իծիլիլի վար. (երկարութիւնը շատ, վարձքը քիչ, այս տեղ մի խարդախութիւն կայ): Էն տեղ խայլին մէջըէն կը խանայ, կիչկայ, կը տեսի, էյ, ձեռաց գեացէ. էդ մեռնելու դուռ: Էդ տեղէն կը խեծի ձին, քու ու փոռման կու, գեայ.—Վայ անատուած կնիկ, կասայ. կնկեան անուն խողի չկայ. էս ինչ փորձանք բերեց վըր ընձի:

Կուգեայ տուն կասայ.—Կնիկ, խիւանդ եմ ես, իմ տեղ թալ, ես քնիմ: Ձինք կընայ սոթ-աղուէս քուն:

Կնիկ կը բերայ յեսան կը պռայ էդոր փորուն, կասայ.

—Իրեք ամիս քնես, իրեք ամիս քնի, նոր էլիս վեր:

Կնիկ կառի ուր աղէն, կերթայ գեքնելու տուն:

Ըռօստամ կը շտկի, կը նստի, կասայ.—Կնիկ. գնա, թի ես քու հախեն էկայ, զարի Ըռօստամն եմ, թի չէկայ, քու լաչին խազար խեռ իմ գլխուն էղի: Ըռօստամ մեղեց.—Թէ ես առիմ իմ թուր էրթամ, դու վաթ չէ մացեր, շատիմ էս կնիկ ուր էրած պալ մարսայ ու էրթայ, ես իմալ էնեմ:

Չարէն կարաւ, Ըռօստամ էլաւ շուն մորթեց, էլաւ տիկ, մտաւ մէջը, գնաց.—Էրթամ, իչկիմ, ասաց. շատ էն, քիչ էն:

Գնաց, գնաց. Աստըծոյ խրամանքով էդ կնիկ սր մէկ տուն էր, գնաց էդ տուն: Կնկան աչքեր որ կառի շան տիկ, կասայ.—Եամա՛ն էդ շուն մեք դուս, էդու աչքեր կը մանի Ըռօստամի: Չարի աչքեր Փէտմ կը զանէն էդ շան. շուն չփախի. բռնեն, շուն տիլի միջէն կը խանէն, օ, էս Ըռօստամի Չարն ա: Դե կասայ.—Աղէկ էսի էկաւ, ընկաւ մըջ մեր լիին, կայնի, շարշարանքով էսի պալ սպանեմ: Ինքայ, քառսուն գեաղ գեծիլով կը կասայ սուննուկի, եթ կանթէն բէարօց ջուր կը լցայ, կը գնայ Ըռօստամի: Չարի գլխու վրէն. ճրագն էլ կը գնայ վըր բէարօցին կասայ.—Չարշարանքով քու խողին պալ խանեմ քու փորու միջէն:

Էդ Ըռօստամ մնաց մըջ ուր հալին, էդոնք պարկան քնան, ուրենց քեք էնին: Դե Ըռօստամի աչիչ յառէջ Ըռօստամի կնիկ գրկեց պարկաւ:

Մնաց շում կէս գչերին, Ըռօստամի աղէն էլաց, ասաց.

—Մարէ, ընձի ջուր մը տուր, խմեմ:

Ասաց.—Վարամ ընկի քո բերան, դուն էլ կենես քու խօր պէս, էկե, ընկե մըջ գերութեն, շես կանաս ջուր առնես խմես:

Խօր սիրտ մըմըրաց վըր աղին, ասաց.—Կօյա ջուր, էլի կօտիկ առ, լից ու խմայ:

Տղէն էկաւ առաւ կօտիկ, ջուր լցեց, խմեց:

—Տղան, ասաց. արե մըտ ձի, բուն ասեմ քե:

Տղէն էկաւ, Ըռօստամ խարցուց.—Տղան, մեր տուն կը ճանչնան: Ասաց.—Խո՛ւ, կը ճանչնամ:

Ասաց.—Կաննաս էթաս, իմ թուր բերես:

—Ափօ, ասաց. մէ թախալ չքաշայ, քու թուր կը խասուցեմ, տուր նըր, էրթամ, բերեմ:

Տղէն գնաց մըջ շատրին նըր պանեց, ճրագ էնեց, տեսաւ թուր պատէն կախ ա. աղի ձեռ չխասաւ որ թուր բերէր, էլաց. Աստըծուն շարին էկաւ. ինչ որ մէկ մէկաւ ասէ, աղան, ընչի կու. բաս, քուրսին բեր, դիր քու օտներու տակ, էլի, թուր առ ու գնա:

Տղէն քուրսին գնեց օտներու տակ, թուրն առաւ, էկաւ, տուեց խօր:

Տղան, ասաց, թուր բերեցիր:—Բերեցիր, ասաց:

—Տղան, ասաց. Կանանս թուր պատեր, զննիլ կտրես:

Բերեց պատեր, զննիլ կտրեց:

—Տղան, ասաց. առ զննիլ ճօթ յուշիկ պատաս, ձէն չէլի մօտէն: Տղէն պատեց, փաթ արձկեց:

Ասաց.—Տղան, դու զնան, քնի, չէլի վախենաս:

Ասաց.—Ընչի վախենամ, զանե ես քեզնից չեմ, դու տաս սպանեա, խինգ էլ ես կսպանեմ:

Ասաց.—Լա՛ Օ, դու զնան, քնի, էն պիտուն քու խօր բութուն արի չէլի:

Խէր գլխուց բարօս զնեց տակ, քաչեց թուր, դանչեց ուր Աստուած, ընկեաւ մըջ տներուն, եռտունը վինը դեն սպանեց, էկաւ տուն զննիլ փաթեց բոլոր, բարօս զնեց վըր գլխուն, կայնաւ: Քիչ մնաց, գլխանց բռնաց:

Բօռարուն պէս տուն, սներ ըսան պէս ինչ օր կը գողանա:

Էդոր կնկան սիրող դե շտկաւ, նստաւ, ասաց:

—Ինչ կը բօւտաս, կանի, տես, քզի շարչարանքով սպանեմ:

Ասաց.—Անարգ նեհեմ առլանը, չուլ տա կեյի սալլանը (անամօթը ինչ բանէ կամաչի, քուրչ կա հաղնի, կը շարժի):

Ասաց.—Ին, քե բանմ տեսմ, չեք ըւրքիս: Ասաց.—Չէ:

Ասաց.—Իմ աչք կպաւ, էրաղ տեսայ, քառտուն դե սպանեցիր, մէքի դու մնացեր իս:

Ասաց.—Չարի դու չես անչընաս, նոր էս ընկի իմ ձեռ:

Քիչ մնաց, Ընօտամ զննիլ-մննիլ արցըկեց, գնաց, կանաւ դիւտ գլխու վրէն, բռնաց:

Որ բօւտաց դե խինգ թիղ քնու միջէն թաւա վեր:

Ին բռնաց.—Տղէքներ, խասէք, Ընօտամ փրցեր ա:

Ասաց.—Տղայ-մղայ չկայ. տղայ-մղայ պիտուն մատդերէմ քզիկ, քզիկ էլ կը մատդեմ իմ կնկան, որ իմ կնիկ ընձե ազատեցիր:

Կնիկ, ասաց. կանի քզիկ էլ մատդիմ իմ տղին, որ պախեցիր, չսպանեցիր:

Էլաւ ուր տղի ձեռ բռնեց, թալեց ուր թեւ առաւ էկաւ ուր շատ, քաչեց ուր ձին, խեծաւ, տղէն թալեց քարէ դանչեց ուր Աստուած, ընկաւ ճանրախ, ասաց.—Էսա տեղաց խաց ու ջուր ընձի խարաւ էլի: Ասաց.—Տղան, իմ խօր վարբան ընկեր ա իմ միտք, որտի էրթամ իմ խօր երկիր: Շատ քիչ Աստուած գիտայ ինչ դնդաւ էկան ճանրախ: Էկաւ, տեսաւ մէկ լպուտ, սնտուկ մը շալկե, յինք ուր կնիկ. ուր տղէն ճամբառ խեւ կերթան: Ընօտամ էկաւ: Էդա լպուտին խատաւ, ասաց.—Բարե քե, ախպէր լպուտ:—Աստուած բարին քե, աղան, ասաց:

Ասաց.—Ախպէր լպուտ, էդ ինչ ա, քու շալկին:

Ասաց.—Աղան, չեմ գիտեմ, խեղքի պակասութեն ա, էսա եօթ տարիյա սնտուկ իմ քամակն ա: Ասաց.—Ընձի չես էնես քե ախպէր: Ասաց.—Աղան, ես դոր, դու դոր: Ասաց.—Լպուտ, աղէն էլ Աստուծոյ տեղծածն ա, լպուտն էլ: Նդան ախպէր էդա տեղ:

Քիչմ տեղ դեացին, տղուրմ էդոնց ընաս էկաւ:

Ասաց.—Ախպէր, քու սնտուկ դեր տակ, քիչմ էսա տեղ նըստինք. ընահաքնանք, էրթանք:

Ասաց.—Ախպէր, թող քո խօսքն էլի, դնենք:

Ախպէր, ասաց. դու յէլի, ցան ժողուայ, թօ տղէկներն էլ էրթան զըրջ ժողուին, ես էլ օճալս կը դնեմ, քո կնիկն էլ ջուր բերայ, վուիկ էփայ. ուտենք, էրթանք:

Բերեց վուիկ էփեց, քեաւէն լցեց, դնեց էդ չորսի յառէջ, մէկ էլ լցեց, դնեց ուր յառէջ: Ընօտամի յաչք վըր կնկան ա:

Տեսաւ, կնիկ գողտուկ էապեմ լցեց, սնդկի դուռ բացեց, դնեց մըջ սնդկին. Խաց կերան, պրծան:

Ընօտամ ասաց.—Ախպէր, ես կը բաժուիմ, իմ մօտի փող կէս ընձի, կէս քե, քո սնտուկին որ կայ. կէս ընձի, կէս քե:

Կնիկն ասաց.—Ախպէր, ինչ կայ մըջ սնտուկին, պիտուն քըրչ ու պըրնկ էն, քաք չոր էն:

Ասաց.—Ես քու քըրչ ու պըրնկին դայիլ էմ, դու իմ օսկուն դայիլ չեմ:

Տեսաւ որ կնիկ գլխացաւանք կէնայ, լանկէն զարկեց Ընօտամ, սնտիկ գուռ կտրեց, տեսան բուրա մարդմ մըջ սնտուկին. դգալ, պաղաւ, մնաց էդ մարթու բերան:

Լպուտ ասաց, քաժա քու կնիկ, էս մարթ պաի պսակեմ վըր յերարու թող խասին ուրենց մուրագին:

Բերեց էդ էրկուսն էլ դնեց դեաին, խաւա պէս մորթեց:

Էդ լպուտ կեցաւ, Ընօտամին օրչնեց, ասաց:

Էս եօթ տարիյա, էս սնտուկ իմ քամակն ա, իմալ օր դու ընձի ազատեցիր, Աստուած էլ քզի ազատայ:

Առաւ դպուտ, էկաւ խօր երկիր:

Էնոնք խասան ուրենց մուրագին, դուք էլ խասնիք ձեր մուրագին:



4

Բ Է Ճ Ա Ն

Արձկնի Առընձկոյս զիւղի բարբառով *

Ռօստամ Գայքալուդայ քաղքէն ա. Բէճան էլ էդոր խորդէն ա էդ քաղքին մէջ պառաւմ կեղի. էդ պառաւ ուրին բաղմ կը տնկէ, էրկու իրեք տարի էդ բաղ կը շախի, կը սլախի: Մէկ օր կերթայ բաղի եմիւ ժողուայ, բերայ. կու տեսի ծառի վրէն բան չթողածին, թափթրիած՝ տարած ա.

Պառաւն ա, խեղճ-խեղճ կուգեայ ուր տուն, կասայ.—Տարող րեւիւմ էզի յԱստուած, աէր չունիմ, տիրական չունիմ:

Պտտայ կուգեայ վախսին (յաջորդ տարին) կրեթայ. կու տեսի էյման տարած ա, կասայ.—Էրթամ մօտ թագաւորին դանգատ:

Կերթայ օր Բէճան դռնից կելի դուս:

Աստուծուց կեղի, Բէճան կը խարցուցայ էդ պառուուց. կասայ.—Մամէ, դոր կերթաս:

Կասայ.—Կերթամ մօտ թագաւոր դանգատ:

—Մամէ, ինչ ա քու դարս օ կերթաս դանգատ:

Կասայ.—Օ ես ասեմ, դու ինչ պաի կենս:

Կասայ.—Դու ասն, մենք էլ մե կօրայի մարդ էնք:

Կասայ.—Բաղմ տնկեցի, շախեցի, մկայ իմ բար տարած ա:

Կասայ.—Գնն մըտ Ռօստամ էնոր դանգաի, էն օր քեզնէ կը խարցուցայ. «քու դող սրն ա, ընձի ասն, ես ինքն կէնեմ». դու էլ կասես՝ «իմ դող Բէճան ա»:

Պառաւն ա, էլաւ դնայ մըտ Ռօստամ, զինք թալեց Ռօստամի օտայ, ասայ.—Վերին դէն Աստուած՝ ներքին դէն քեզի դաս էնե-

* Պատմած է Դաւօ Մուխսի Յարութիւնեան:

րեմ, էկերեմ. եան դարսիս դարման, եան զլխիս Յարման:

Կասայ.—Մամէ, քու դարս ինչ ա, ասն տեսիք:

Ասայ.—Տղայ չունիմ, շարոր չունիմ, գութան չունիմ, աէր չունիմ, տիրական չունիմ. ես էմ՝ էն մէկ բաղ, էս պառաւ հալսվս պախեցի, շախեցի, բերի խասուցի բար, յէլայ իմ ջուլ ջուլ ժողուեցի, գեացի օր իմ բար թախթիեմ, բերիմ. գեացի, տիտայ լինչ օր տուերիս, արե՛ տար,» «էզեր ա աչնան բաղ, նե եմիւ նե բար, նե հալ, էկերիմ մըտ քե դանգատ, ինչ գիտես էմալ էքաս:

—Է՛, ասայ. պառաւ, քու գող գիտես, սրն ա:

Ասայ.—Չէ, չեմ գետեր, վըր ընձի մութն ա:

Ասայ.—Որ չեա գիտեր, ես իմալ քարուն տանիմ, քսիմ չոր փէտ»:

—Ես էն գիտեմ, մէկ մարդմ ընձի րուս էկաւ, անուն Բէճան էր ասայ. պառաւ, ես էմ քու գող»:

Խըտ էդ տեսլուն՝ Բէճան մտաւ ներս:

Ռօստամ Բէճանին ասայ.—Բէճան, դու իմ խօրգէն էղիս. ախշար մեր ձեռաց տակ զար ա, մեր ձեռաց մէջ կը գողայ. էն մարդ որ ընկի մեր ձեռաց մէջ, քամենք ձէթ կուգեայ էն մարդուց, դու պաի էրթաս էդ պառուուն գողութեն էնիս, կելլիմ վղէզի կը բռնեմ, տփեմ էզա պատ, ամեն կտորմ ախշար էրթայ:

—Բեռի, կասայ Բէճան, ես գող չեմ, դու ընձի դասուր անր, ես էրթամ էդ պառաւ գող բռնիմ. օր բռնեցի, բերեցի՝ բերեցի, օր չբերեցի՝ իմ կողեր ծակայ, իմ ձեռներ մտու ինս:

—Դէ, կասայ, քե իրաւունք ա, դնն:

—Դէ, կասայ, մարդմ էլ տու ընձի, օր էզի ընձի շիւս, որ ես էն գող բռնեմ, չէղի վաղն ասես «Բէճան սութ ասայ»:

Կասայ.—Մարդ սն կուգես, տամ քե:

Ասայ.—Ընձի տու Կիվ (Կիվ Ռօստամի մողիկն ա):

Տուեց, ասայ.—Դէ, գեացէք, ինչ կէնէք, էնէք:

էլան էկան, իրանց նետ անեղներ թալեցին թե ուրենց. րեսպիւր տեսան, խեծան ձիանք, գեացին պառաւ բաղի կուշտ, վըր ձամբխուն կայնան:

Կիվ, ասայ Բէճան, դու իմ ձին բռնէ, կայնի, կերթամ բաղի մէջ, թի գող էկաւ, լարեցի, չկարցայ բռնեցի, կուգեանք, ձիանք խեծինք, կընկինք յետե, կը բռնինք:

Ասայ.—Բէճան, դու դնն, ես էս տեղ ալլասա կը կայնեմ, որ քու դալապալըս էլաւ, ես կը խասիմ:

Բէճան դնայ, մտաւ մըջ էգուն ծառին տակ, էրկու իրեք սահար իչկեց, տեսաւ մարդ չկայ. մէկ էլ իչկեց, տեսաւ ինչ մէկ խատ զինք պատէն թալեց տակ քընց ամպրոցմ, Բէճանի գլխու մէկ

մաղ էղաւ քընց գերան: Տեսաւ էդ մարդ ներկի գլխուց ծառեր, ճղեր ջարդելով՝ եմիւ կերելով՝ դնաց էն գլուխ. էն տեսէն էլ առաւ էն մէկէլ ներկէն՝ կերելով ջարդելով էկաւ, խասաւ մէկէլ գլուխ. էն մէկէլ ներկէն էլ առաւ, էկաւ, պաի գեայ Բէճանի վերէն. Բէճան էլ նստուկ էր էն ներկի ծառի տակ. էկաւ, խասաւ, մէկ ծառ էր մնացեր՝ օր խասի Բէճանին.— Վայ, սասց. ես քու ֆիլան բիճան էրան՝ էրան էնիմ, չէ ես Բէճան էմ, Ռօստամի խօրգին էմ. դու իմ անուն չէս լսերէս, քու փոր տասուերկու պրօճակ կայ օր դու կուգեսս մըջ իմ էզուն ջարդիս, կուտես:

Բէճան օր կը խասի, էդի գինք կը թալի պատից, կը փախի- Բէճան կը վազէ Կիլի մօտ, կերթայ, կը տեսի Կիլ չկայ, ձէն օր կելլայ, Կիլ կը փախի:

էն տեղ Բէճան կասայ.— Ախշար իմ էրես կը թքեն, թող իմ նանգկին թքեն. խանդակտուր կը պառնայ, դի էտե կընկի, շատ քիչ՝ Աստուած գիտէ ինչ դգար կերթայ. տեսի մէկ էլ դե կը մտի մաղաբիմ մէջ: էն տեղ Բէճան կասայ.— Պաի մալիմ ինե:

Մտաւ, սասց.— Եան էնի ընձի պոի սպանայ, եան ես: — Դէլի, դե՛, պուսց Բէճան. եան Աստուած ինձ կուտայ, քե կսպանեմ, եան քե կուտայ, ընձի պոի խորիս, չէդի ասիս «էսա մարդ գեաղտիկ ընձի գարկեց:

Դե սասց.— Բէճան, արի՛, նստենք, խաց կուշտ ստենք, եան Աստուած ընձի կուտայ, եան քե:

Կասայ.— Դու քու խաց կեր, ես իմ խաց ստեմ, դու իմ բարեկամ չէս, ես քու խաց ուտեմ, «խաց քընց ձի գօրպայ ա», օրական ես խազար մարդ կանամ սպանեմ, կտորմ խաց չկանամ սպանեմ, քրգուճմ գեալին տեսիմ, վերցեմ, կը դնեմ իմ գլխուն, քընգի բանձր կը բռնեմ էն խաց:

էդ տեղ էն ուր խաց կերաւ, էն ուր խաց: Կերան, պրծան, ուրենց ճղարէն քաշեցին: Բէճան կասայ.— Դէ, էլի, դէ, էլի:

Դե կասայ.— Ընչի գանինք, իրարու ետալի էնինք, չարչրենք, էլի, կիլաւ կպինք, ըռհար բանմ ա, թը դու ընձի կոխեցիր, իմ արուն ինչ օր քու մօր ծծի կաթ քե խալլալ էդի, թը ես քե կոխեցի, քու արուն իմ մօր ծծի պէս ընձի խալլալ էդի:

էդ տեղ կելին «գեարնան բողա գոշու պէս կը դիպին յիրար, էն կը ճխտայ դէն, էն կը ճխտայ դէն, էն . . . իրար կը ջարդեն. էս խեռ Բէճան կատարուա, կառնի վըր կուան, կը ծեփոյ գեալին, չք կը գանի վըր սրաին, պնջնիրուց արուն կը թալայ:

էդ տեղ դե խորունք ախ քաշեց:

Նա՛, դե՛, սասց. դու չես ամշնաս էդ կեալսից, ախ կը քաշիս պուտմ արնի խամար:

Ասաց.— Ես արնի խամար ախ չքեաշիմ, ընձի եռսունինը ախպէր կայ. Բեռլի եռսունինը ախպէր ընձի չեղածէն, դու իմ ախպէր էղած էր:

Ասաց.— Ազատ, քե էլ չեմ սպաներ:

էլան նստան, նոր բաժա էղան ախպէր— դեստերայ:

Բէճանին էս խեռ պատիւ պախեց, ինքամ էնեց:

Բէճան սասց.— Ընձի իզին սուր, էրթամ երկիր:

Ասաց.— Բէճան, Աստուած քո բան յաջողայ, դնա՛:

Դե ուր գլխու մաղէն բուրակմ մաղ կուտայ, կասայ:

— Նեղ տեղ ընկիս, տուր կրակ, ես կը խասիմ:

Կասայ.— Դե՛, ախշարք քրգինք էլ գօրպա մարդ կայ օր ես նեղ տեղ ընկիմ:

Կասայ.— Յէմալ գօրպա մարդ կայ աշխարք, քեզի կենայ դայվալթի. Բէճան, էն աղէկութեն օ դու ընձի էնեցիր. ես չմոռնամ, ա՛ս. էս բուրակ մաղը խըտ քե:

Բէճանն էր, էլու տուեց ճանքախ, գնաց. ճանքախ մուրբաւ, ինքն էլ չգիտէ ինչ ճամբիով կերթայ. for forքնդայ դէմէց դէմ գնաց գնաց Սպահանայ քաղաք. գնաց ախպրիմ՝ բուս էկաւ, նստաւ վըր էդ ախպրին, խաց կերաւ, ջուր խմեց. էդոր քուն քաշեց, քնաւ. սահաքմ քնի, էրկու քնի:

էդի էդ տեղ կենայ քնուկ, մենք դառնանք Սպահանայ թագաւորի վրէն: Եդ Սպահանայ թագաւորի աղջիկ կուգեայ եայլին, եռսուն, քառսուն կոն խետ՝ անուն տղա մարդ խեռ չեղի, պիտ բուն կնիկ էն, աղջիկ էն:

Եդ թագաւորի աղջկան անուն էլ Մախմարի ջան էր:

Մախմարի ջան ուր առաջի (ծառային) աղջկէն կասայ:

— Ա՛ւ էդա կուզում (աղնձեայ կուժ), ջուր աւ արի՛. չայ էփայ:

Աղջիկն ա, կառնի կուգեայ. կուգեայ, կը տեսի օ, քսան տարեկան աղէմ պառկէ վըր ախպրին, Բեաճր վարդի պէս կը վառի, էն դի խօրոտ ա-

Աղջիկը կը տեսի տղի քրտինք էն էրեսէն, էն էրեսէն. գլու գլու կը թափի, խելը կերթայ. էդա տեղ կընկի, կասայ:

— Աստուած, եսլան էլ խօրոտ կեզի ախշրքի էրես:

Աղջիկն ա խելը կերթայ, կելի կուզում գօրգակ կառի կերթայ. օր կերթայ Մախմարի ջան կասայ:— Աղջի՛, դու էս սահաքմ դացերիս, ինչ կենիս, չես իգեսաւ:

է՛, աղջիկն ա, իդա տեղ սութ սասց.— Ծլան էղաւ, բեճան էղաւ:

Ասաց.— Աղջի՛, էս օր քե խաք:

Աղջիկն էր, կուզում տարաւ, դարգըկեց որ ջուր չկայ ինն:

—Աղջի, ասաց. ես քու ծծողաւ տեղն եմ, ես մէ թագաւորի աղջիկ եղիմ, դու շան մը աղջիկ եղիս, ընձի խափեմ, ես'ն տղու կասես. եսն քու գլուխ կը կտուես:

Աղջիկն էր, ասաց.—Մախմարի ջան, քեղնէ ինչ պահեմ, Ասարծուց ինչ, մէկ խառ տղէմ վըր ախարին էր, նակեանի դացի քիսա վերէն, աչքս աւաւ տղէն, իմ դիտու խելք դնաց:

Մախմարի ջան հրա տեղ չաւտաց, ասաց.

—Ես թագաւորի աղջիկ եղիմ, ախշար մեր ձեռն էղի, էն ինչ մարդ էղի, գեայ մըջ մեր արնօտին, ասաց—աղջի, սութ կասես:

Ասաց.—Սութ չեմ ասե, ընկիմ քու յառէջ, էրթամ էն տելս' սութ էլաւ, իմ գլուխ դարկ:

Ընկեաւ էդոր յառէջ, գեացին, տեսաւ տղէն ձեռ դնէր բարձի տեղ ուր աղնջի սակ, քներ ա:

Մախմարի ջանի աչք աւաւ ինն, տաս տեղով խուճան կտուաւ.

—Վայ, աղջի, ասաց. Աստուած քու առն աւիրայ, դու իմանաղ մնացիր: Աղջի, իմալ էնինք էս տղէն խանինք վեր քնուց:

Ասաց.—Մախմարի ջան, դու դիտիս, դու ճարմ էնայ:

—Աղջի, ասաց. դնան, քաֆուր վարդ առ, արի, ես էս տղէն վարդով պտի խանեմ վեր:

Բերեց վարդ դարկեց ջուր, դարկեց էդոր ճակատ. էրես, աչք. քիթ ու մուռթ: Տղէն աչքեր բացեց, տեսաւ էրկու խառ աղջիկ ուր կուշտ նստած ա. էլաւ, նե' խօսք, նե' դրուցք, դնաց աղբուր վրացուաւ. էլաւ ուր նետ ու անեղ թաղեց ուս պտի էրթայ. աղջիկէն աչք առաւ տղէն, բաժը, բոյ, բուսաք բօսուն քրցագ, աստուած ձութեն սկի դուռ շտուկ, տղին ասաց:

—Տղան, գոր կերթաս, կայնի, քոնէ բան կը խարցուցեմ, խաւքն ուր թիտի. օձն ուր պարտով էս տեղրանք չկրնէր դէր. «Ինչ էս կուրիսեր, չիս կարաս դտիս», ինչ կը պտտես:

Ասաց.—Ընկեայ մէկ դեի էտե, չկեարցայ խասերի, էկայ, ընկեայ էս տեղ:

Ասաց.—Էս օր գիշեր ընձի դօնախ չեմ էղիս:

Ասաց.—Օր թը կամենաս, կեդիմ:

Ընկեաւ տղի յառէջ, դեացին ուրենց կօն. տղին խաց ու ջուր բերեց, խօրոտ կերակուրներ բերեց, որ տղէն խաց կերաւ. պրծաւ:

Շարաթմ, էրկու էդ տղին իզին շտուեց, էդ կօնի կնկտիք, աղջիկներ դեացին, էդ տղին ու Մախմարի ջանին սատանութեն էնեցին թագաւորին: Մախմարի ջան էդա տեղ իմցաւ, ասաց.

—Բէճան, չընկիմ քու մեղաց տակ, էլի, դնան:

Ասաց.—Ընչի արով էրթամ, ընձնէ ընչի նեղացար:

Ասաց.—Ընկեայ քու մեղաց տակ քե բիրի էսա տեղ մկա կուգեան քե կապաննեն. իմ խէր լսեր ա, մկա փայլեվանքեր կճամփայ:

Ասաց.—Էդա դսեն ընձի չասիր, որ ասեցիր, թը դեան ընձի սղաննեն, դու գնան, դատանց կայնէ, մկայ դու գեա, քչուս խաց բի, ես ուտեմ, օրմ' էղերիմ, օրմ' կերթամ:

Մախմարի ջան իչկեց օր, կիօ քսանը չորս խառ փայլեվան կուգեան, չովսնեք ձեռ, ամեն չովսի գլխի վերէն խինգ նուկի բիրեռ կայ, ասաց.—Բէճան, Աստուծոյ սիրուն էղի. էլի, փախի, էկան:

Ասաց.—Մախմարի ջան, կիօ ես շատ չամախ տեսերիմ, էս փախող մարդ չեմ, էնոնք քսանը չորս' ես մէկ էմ, եսն քսանը չորսի մէր կուլայ, եսն մէկի մէր:

Փայլըվներ էկան, էն կասայ' ես կը գանեմ, էն կասայ' ես կը գանեմ, կապանեմ. էն կասայ' փարայ-փարայ կենիմ. էն կասայ' ես անուն կէնեմ. էն կասայ' ես գլուխ կը կտուեմ, տանեմ թագաւորին. էն մէկիզոնք կասեն' էնու ջանդակ պտի էնիք բղիկ-բղիկ:

Փայլըվներ դեացին, մօտըցան կասեն.—Իչկայ, տես, քնապոխ խաց էլ կուտայ. խողին պրծուց, խաց էլ կուտայ:

—Տօ, ախպէր, ընչի կը գանիք, էկէք մօտիկ, խուլ էմ, չեմ լսե, ինչ կասէք, ասէք:

Էդ Փայլեվաներու ջոջ կասայ:

—Տղէք, խասէք, գարկէք, էդոր ջոջ փերդ անկանջ թողէք:

Ասելու բաժեսան Բէճան թռաւ, կայնաւ. էդ թուելու զարպէն շուս չորեր դնաց մըջ խողին.—Չէ, ասաց. ես Բէճանն եմ, Ռօստամի խօրգէն եմ. դու իմ անուն չըսերէք:

Էլ ըզոնց մանալ շտուեց, վի՛ր գարկեց, ընկուց. քսանը չորսն էլ ընկուց էն տեղ, բերեց արտուէրկու խողու աչքեր խանեց, էդ մէկէլ ստուերկսի կողեր ծակեց, թեք մըտուց մըջ կողերուն, դնեց էդ ֆօներու շալակ, ասաց.

—Գեացէք, ձեր թագաւորին բարե կնէք, ձեւան մարդ կայ ախշարք:

Էդ քաղքի մարդն էլ ինչ դդար կայ, թափած վըր ճանփու.—«Էդ ինչ գօռեղ մարդ ա էկե մըտ Մախմարի ջանին»:

Ըդ մարդիկ տեսան ստուերկու խառ մարդ շալ չլիս՝ խըտ ճանփու կուգեան Գեացին, տեսան ընդոնց փայլըվներ. էդ մարդեկայ աչք առաւ էդա ֆօն մարդիկ, փախան, դեացին թագաւորին խապար տուին թի, ձքու փայլըվներուն էս անեպներ խանած ա գլուխ:

Էդա տեղ թագաւոր դալալ կուտայ կանչել, ինչ դդար ասկա'ր, դօս'ն, մարդ կայ, պիրուն կը ժողուէ:

էն ասկար, դօճուն թը կենայ էն տեղ, մենք դառնանք վըր Մախմարի ջանին, Բէճանին:

Մախմարի ջան վերուց.— Բէճան, քու գլխուն. արևուն դուրբան էղիմ, էլի, փախի, դնա, մկայ իմ խէր դոճուն կենէ, կուզեսայ վըր քե, կսպանայ: Ասաց.— Չեմ էրթամ:

Ասաց.— Օր չերթան, իմ խօր ձին կայ, ձին Արարտան ա. համ չալ ա, համ բաւ ա, էս տաս տարի կապեր ա խամ, նե օր ա տեսեր, նե՛ արև առեր վերէն. իսան չմօտենայ, էնոր գեարին, էնոր ջուր, էնոր կեր յերգսէն կուտան, թը կարցար, էն ձին բերիբ. քսան դոճ կը ջարդես, խազար քու ձին կը ջարդայ. թը չըբեցիր, դու մէկ մարդ էս, շատ սպանես, էրկու խարիր ջան պոի սպանես. ինչ պոի սպանես, խո թագաւորմ չես յադտես:

Ասաց.— Ձին որ տեղ ա կապուկ:

Ասաց.— Իմ խօր քսան ձի կայ կապուկ, ընեզ կապուկ էն, կերթաս էն ընեզ. ձին կընցիս, դուռմ կայ էն տեղ, էն դուռ օր բացիր, էն ձին էլ էն տեղն ա, էնոր կեմ, թամբ էն տեղն ա:

Տղէն մտաւ ակքատի խալաւ, էլաւ գնաց:

Գնաց էդ քաղաքի մէջ դարադուլութեն քաչեց մինչև յիրկուն, անգեան գեախ էլաւ տանխի վրէն, տանխ ծակեց, զինք ծակէն թալեց տակ. նըթ զարկեց, ուր մոմ կարուց. տեսաւ օ քսան ձի կապուկ ա դադ, գնաց տեսաւ դուռ մէլ էդ տեղ կայ, դուռ բանալու բաւան, ձին հոհոցմ գնեց. չուբայ կը թալայ, չթողի մօտանայ:

Բէճան ասաց.— Ես Բէճան էլիմ, էսի ձիմ էղի էսի ընձի պոի յաղայ. Խասնելու բաւան ձիւ ճակտի պոճուկ բոճեց, դոճմ գարկեց ձիւ անկըձի աակ, սանաքմ ձիւ խելը գնաց. պուպուզուկ մնաց, էրկու օտաց վրէն: Բերեց այար գնեց վըր ձիուն, դոլան, դուռուն անգեց, կեամ գարկեց, դանչեց ուր Աստուած, քաչեց դուռ, ոտ գնեց զանկուն, նստաւ. «Մախմարի ջան դր էս, էկայ քե: Մախմարի ջան ասաց. Բէճան, բերեցիր ձին:— Խա, բերեցիր: Ասաց.— Ասաճեք մէնի. էս խեռ կը յադտես:

Մնաց, չուր լուսցաւ, տեսաւ օ թագաւորի դօճուն էկաւ, աստղին հապ կայ, արկին չկայ:

Ասաց.— Պէ, Մախմարի ջան, խաց բի, ուտեմ. կայնելու վախ չէ. էս օր մախուան խնդիր ա:

Թուաւ վըր ձիուն, ձին քչեց մեյքընի մէջ, թը տաս ինք սպանեց, խարիր ձին սպանեց. Բիմիսի դուխ կարեց, Բիմիսի աչք օտուց, Բիմիսի սաք կտուեց, չանք իրկուն դօճունի կէս էն ջարդեց:

Բէճանն էր, գարձաւ էկաւ ուր տեղ, թագաւորն է. էն էլ առաւ ուր դօճուն, գնաց ուր տեղ:

Թագաւորի ձեռաց տակ ինչ ըռայար կար, թել տուեց, պիրուն ժողոտեց, առաւ էկաւ:

Բէճան ասաց.— Խաց բեր, ուտեմ:

Խաց կերաւ, պրծաւ, ուրին-ուրին տուումիս կեղի:

Կասայ.— Չանըմ, իմ դասաբրէն դե ձի իմաց տուեց թը— Շնեղ տեղ ընկիտ, ես կը խասիմ. կայնի, տամ կրակ, տեսիմ ժամանակէ մարդուն բարդ կայ, չկայ:

Կրակ տուել բաւան դե հազր, առջև կայնաւ:

— Բէճան, ասաց. էլի, ընձի կերակուլ էփայ:

Ասաց.— Դանէն քու կերակուլ ինչ զնդար ա:

Ասաց.— Եսուն զիտը բրինձ ա, զիտըմ եղ ա, մէկ օխչրի ջանդակ ա:

Բերեց, էփեց, դրեց դեռ յառէջ. դեն էր կերաւ, պրծաւ:

Իչկեց, տեսաւ օր մարդ չմնացեր ա ակըքի էրես, էկան:

Դե ասաց.— Բէճան, էս օր ես կուր կէնեմ, ես կէնեմ, ասաց. դու բամաւա էնէք:

Դեն էր, էլաւ, ընկեաւ մըջ ասկրին. չուր մկայ իսան էր, մկայ դե ա. դե տեսնելուց որ արտու մեռաւ, որ արտու պատուաւ:

Դեն էր, ես գարձաւ, թագաւորն էլ ուր ասկար ուր դօճուն ետ դարձուց,

Դեը թը կէնայ տուն, մենք դառնանք վըր թագաւորին:

Թագաւորն է, դանչեց ուր վէգիրներ, նազիրներ, դանչեց էկան օն իփլար. դանչեց ինչ օր ջոջ մարդ կէր, ասաց.

— Էկէք, ճարմ էնինք, մաաք խալխի մեղաց տակ:

Երոնց մէկ վերուց.— Ճամբխու վերէն քեռտուն գեադ լէնք, քեռտուն գեադ էրկէնք փորինք, լուսուն էրթանք, կուր էնեմք՝ օր էն մարդ դեսայ, ընկի մըջ էն փոսին, բոնինք, ճար էս ա, էլ ուրիչ ճար չկայ:

Թագաւորն էր, դանչեց էրկու խարիր մարդ:

— Էս գիչեր, ասաց. էն ճանբախ պոի փորէք, չքէք. յեմալ չքէք օր խըտ գեանի դուճին էղի, պելու չեմայ:

Գիչերուայ մէջ փորեցին, չքեցին, պրծան:

Դեն էր, ասաց.— Էս օր էլ ես կերթամ կուր, վաղն էլ դոճ գիտես, ինչ գիտես, յեմալ էնայ:

Դեն էր, էլաւ կուր, կուր էնեմքն դնաց, ընկեաւ մըջ էդ փոսին. մկայ արտու չեն կանայ տայ վըր գեուն, էն կտրին մարդիկ կուտան վըր դեուն: Ինչ մարդ ընկեաւ դեռ ձեռ թալեց մըջ փոսին, պիրուն ջարդեց. էդ անագին փոս ջանդակ լիին լցուաւ, դե էլաւ դուռ, էկաւ Բէճանի տուն, ասաց.— Էլի. իմ խաց բեր, ես ուտեմ, էս խեռ ես կերթամ:

Դին էլ էլաւ, զնաց, մնաց Բէճան:

Թագաւորը էլաւ, չորս խառ մարդ խրկեց Բէճանին թը թագաւոր քաւրիձ էներայ, պախ դաս դօնախ:

Թագաւոր ինչ էնեց, եւսուն խառ ուր փայլվնեբուց ջոկեց, բերեց, զնեց ուր մօտ, սասց.

— Էն մարդ կը բերեմ սուն, օր խաց կուտայ, փրցիք վերէն: ձեզի աեսիմ, էնու ջոջ փերդ, էնու ահանջ թողէք:

Էդ մարդիկ Բէճանին առան էկան:

Էդ տեղ կը տեսի օ փեյլվնեբը գողտուկ քըստ ու փըստ կէնին էն կասէ, «ես դըսուն կը դանիմ.» էն կասէ, «ես դըսուն դանիմ.» էն կասէ, «ես աչիչ կը դանեմ,» ամեկը ուրին բանմ կասայ:

Բէճան էդոնց կասայ.— Ախպրտիք, էլէք, գեացէք, ձեր ճօհերու մեղք չընկի իմ վիզ, միայ կելեմ, ձեր վիզ կը բռնեմ, կը տփեմ էնա պատ, խաղար տարի կպրի պէս եռաք, էդ պատէն չպրծնիք:

Փայլեվնեբն ա, ասին.— Մենք ինչ դաւի ունինք, էլան գեացին: Թագաւորն ա, կասայ.— Բէճան, արի՛, ես ու դուն իրեք օյին սաղորն խաղանք:

Սաղորն խաղցին. իրեք օյին զթագաւոր տարաւ:

Թագաւոր սասց.— Բէճան, դու քու գլուխ կը սիրես, իմ գլուխ կը սիրես, ինչ աչխրքի էրես քե կը զարայ:

Ասաց.— Թագաւոր, դու սաղ մնաս, ախչրքի էրես ընձի բան չզարայ, մէկ բան կը զարայ:

Ասաց.— Էն մէկ բան ինչ ա:

Բու ձիու սրչի մազ բերես, էտեանց կապես իմ էրկու բուզ, էն ընձի կը զարայ, ես դիտեմ, սասց. դու իմ գլուխ կը կտրես. էլ ինչո՞ւ չարչարանքով կտրես, իմ գլուխ կը կզեցուցեմ, կտրայ. նաւեհութենով ընչի կտրես:

Ասաց.— Ես կուզեմ քու դուլաք իմանամ:

Իերեց, կապեց տղի էրկու բուզ էտեանց, տեսաւ օ աղէն զարուա: Ղանչեց ջալատին, սասց.

— Տարէք, էս մարդուն ջանցակ մազ-մազ բրդէք:

Ջալասներն ա էդա մարդ առան գեացին, իրարու ասին.

— Մենք էսա մարդու գլուխ յորին կտրենք:

— Ապա ինչ անենք՝ չկուենք, թագաւորի ձեռնէն չենք պրծինք:

Թագաւորը ինչ գիտայ, զիչերը քեառսուն գեազանոց խոր կուտանք փորել, թալենք մըջ խորին:

Խոր տուեցին զարկել. բերեցին, թալեցին խոր:

Թագաւորը զանչեց ջալասին.— Ջալա՛ս:

Ասաց.— Էն ինչ ա, թագաւոր ապրած:

Ձեզնէ կուզեմ, Մախմարի ջանի ջանդակ էնէք լօղում. լօղում:

Առան Մախմարի ջանն էլ գեացին:

Ջալասներ ասին.— Թագաւորական աղջիկ ա, նե՛ սուր կը բանի վրէն, նե՛ թուր. մենք իման լօղում. . . . էնինք:

Ասաց.— Միատակ շաղիկ՝ թողինք վրէն. միատակ քումպան մի, թընկի գեզի մէջ, խաց ժողուայ, ինչ դիտեն թը թագաւորի աղջիկ ա:

Ադա աղջիկ կընկի մըջ գեզին, խաց կը ժողովուայ, կը տանի, թալայ մըջ խորին, Բէճան կուտայ:

Շնա, քիչ, Աստուած դիտայ, ինչ յճըր կը մնայ էդա խորին: Կսոնք թօ մնան ուրենց հալի մէջ:

Քեանիմ՝ տարի արտօքը կընցի, իրեք խառ իմաստուն մարդ կուգեան մըջ էդ քաղքին. իրեք, չորս շարաթ էդ մարդիկ էդ քաղքին մէջ կը պտտեն:

Աւուր մէկին Մախմարի ջան կիմնայ օր էդ մարդիկ իմաստուն էն, աչք վըր էդ մարդեկաց կը պախայ:

Օրմ էլ էդ մարդիկ կելին օ էրթան. Մախմարի ջան կընկի էտեներ, կասայ.— Ախպրտիք, դու ձեր Աստուածը կը սիրէք, կայնէք, ձեզի բան մը կասեմ:

Էն էրկուս կայնան. էն մէկն՝ էրկսին սասց.

— Ի՛նչ շուն գեայ, ինչ դէլ գեայ, դու կը կայնիք:

Էն էրկուսը ասին.— Մեզի տուեց Աստըծու սուրը, որ Աստուած չսիրենք, քեմք ենք.

Էն մէկն սասց.— Օր յըմալ ա, կայնենք, չում աղջիկ գեայ, զա էն աղջիկ շատ դարձի տէր ա:

Աղջիկը էկաւ, բարե տուեց էդ մարդեկաց.

Ասաց.— Բարե՛ ձեզի, աղաներ:

Ասին.— Աստըծու բարին քե, աղջի՛:

Աղաներ, սասց. ձեզնէ մէ բան կը խնդրեմ, դալամ միւրեհեպ. թուզթ ունիք, էրկու խապար կայ ձեզի ասելու. ասեմ, գրէք, Աստուած ձեր բան յաջողայ:

— Բու բան ինչ ա, ասեցին:

Ասաց.— Մախմարի ջան, դուխորուի ջան Բէճանի կիրիձես, Ռօստամի բերաղդ: (Հոգի Մախմարի, հոգի դուտար, Բէճան կալաւոր, Ռօստամ ապերախտ):

Էդ մարդիկ իմաստուն էն, էդ աղջկայ ասել խառկացան. գրեցին, թուզթ ասին, աղջկայ ասեցին:

— Բու սրտի խորհուրդ չանք չկատարենք, չենք հանդատի. օրական մեզի խաղար միլիօն փող էլ տան:

Շնա, քիչ, Աստուած դիտայ ինչ դղար գեացին. գեացին, աւուր մէկին քաղքին դախիլ էղան. էրկու իրեք օր մըջ էդ քաղք

քին պտտեցին. էրթցող՝ գալացողից խարցուցին՝ էս քաղաք վի՛ քաղաքն ա:

Թը. «էսա քաղաք Քանկայուզ քաղաք կասեն»:

—էս քաղաք զօռեղ փեյլըվընի անուն ինչ ա:

Ասաց.—Չօռպա փայլըվա՛ն կը խարցուս:

—Խն, ասաց. զօռպեն կը խարցուցեն:

—«Ռօստամէ կօռէ Չար»:

Ասաց.—Մեր պտտածն էլ էդ մարդն ա. ինչ օր դու կասիս իմալ էն մարդու տուն պտի գտինք:

Ասաց.—Գնա տուն չաւըրի, մարդ խարցըցելով ախշարքէն կէլի:

Գեացին, Ռօստամի տուն գտան:

Ընձի պէս Ֆուղարա մարդմ նստուկ էր էն տեղ-պատի տակ, էդ մարդուն ասեցին.—Ա՛ն էսա տաս օսկին. զնն, տես, Ռօստամ տունն է, թէ չէ:

Գնաց էդ մարդ, տեսաւ տունն էր, էկաւ էդ մարդեկաց ասաց.

—Շատ մարդ կայ մօտը, խարցուցին:

—Յինք մէքի ա, մարդ չկայ մօտը:

Էդոնք գեացին ներս, բարև տուեցին. էդ էլ բարև տուաւ:

Թուղթ խանեցին, տուեցին Ռօստամի ձեռ, Ռօստամ կարդաց:

—Վնյ, ասաց. Բէճան մկայ սա՛ղ ա:

Ասին.—Խն, սաղ ա, մըջ խորին ա:

Բերեց իրեք օր էդ մարդեկաց ազար, լքբամ, ինչ ասես էնեց:

Ասաց.—Մ՛տմընաք, մի վախենաք. ինչ ձեր լեզուն բոլըրէ, էն ուզէք, ինչ որ ուզէք պտի տամ Բէճանին ուղուրին, ինչ ասամ, կուրուս չերթայ:

Ասին.—Իրեք խատ ձի կուղենք քու խեծած ձիանքներուց:

Էլաւ իրեք խատ ձի ուր ձիանքներուց տուեց, իրեք բեռ էլ օսկի տուեց, ասաց.— Հալա ձեր աղէկութենի տկէն չէլայ:

Էնոնք գեացին ուրենց ճամբաուն, մենք դառնանք Ռօստամի վերէն:

Ռօստամն էր, էլաւ դալալ տուեց կանչել, ուր մարդիկ ժողովուեց, բերեց խարիր յիսուն ջորի, մալ-թամալ ինչ կէր, բարձեց վըր էդ ջորիքներուն, մարդիկաց ասաց.

—Իմ տան մուղար կացէք, չու՛մ ես գեամ:

Էլան, տուեցին ճանբախ, շատ քիչ, Աստուած գիտայ, ինչ դսրք էկան. էկան, մէկ նեղ ճամբաում ընաս էկան, նե՛ կանայ դէն էթայ, նե՛ դէն. տեսաւ քեռասուն խատ դև էլաւ, էդ քարվնի առէջն առաւ:

Ռօստամ ասաց.—Տղն, էս քալար ընչի կայնան, դնա առէջ. տես, չէլի ճանբախ նեղ ա, առէջ չկանայ էրթայ:

Տղէն գնաց. տեսաւ օր քեռասուն խատ դև դատ, չու՛մ դարձաւ, Ռօստամին խասաւ, էդ տղէն հախու պատուաւ:

Ռօստամն էր, ուր գուրգ վերցեց, քչեց առէջ, ասաց.

—Նա՛, եա՛, դեեր, դու իմ անուն չրեքէք՝ դու ընձի չճանչնաք, չէ՛ ես Ռօստամն եմ, ախշար իմ ձեռ զարն ա, չէ՛, ես Բէճանի քեռին եմ Է՛:

Բէճանի ախպէր դև էդ դեերներու մէջ կեղի, կը վերցէ, Ռօստամին կասայ.—Ռօստամ, ես, Բէճան էղեր էնք ախպէր, ես, Բէճան գեացերինք Սպահան, ինչ դդար ասկար, դօտուն կայ, պիթուն ջարդերէնք:

Ասաց.—Ինչ էնեմ օր Բէճան թալած ա մըջ խորուն, իմալ ախպէրէս:

Ասաց.—Ես գիտի Բէճան էկերի տուն, ես ինչ գիտի թալած ա մըջ խորուն.

Էդա տեղ նստան խաց կերան, ուրխուլթեն էնին:

Բէճանի ախպէր դև ասաց.—Ռօստամ, մեզի իզին կուտաս, առնեմ եռասուն իննը խատ ախպէր, էրթամ, էն քաղաք աւերեմ. առնեմ Բէճան, գեամ:

—Հալա մի գեաք, ասաց Ռօստամ, շարթմ, էրկուք մնացէք, նոր էկէք:

Գեերներ էլան, քչու՛մ մազ տուին Ռօստամին, դրին վըր ճամբաուն, գեացին:

Ռօստամ գնաց մըջ էդ քաղքին քալալ էղաւ, գնաց խնդիրք մը դրեց, տուեց թագաւորին թէ.—Ես բուճար եմ, պարտքնաերեմ, էկերեմ էս տեղ, իզին տաս, իմ մալ սաղուցեմ, տանեմ տամ խղի պարաք, խղի ձեռ չմնայ մեր Եախեն, քու քախս քանին էլ գիչեր, ցերեկ տուա կէնեմ:

Էդոր խնդիրք դուս էկաւ, ասաց:

—Էնոր իզին ա, իմալ ծախայ, թո՛ ծախայ:

Շարթմ, էրկու մնաց մըջ էդ քաղքին, խնդիրքէլ տուեց:

—«Աստուած ուր թոր կտոր էնայ, խղի պարտք տուեցի, խաղար օսկի էլ խէր տեսայ, խնդրեմ թագաւորից, իզին տաս, ես քեսախպ-քիւսուպի մէկ խեւմ էնեմ:

Ռօստամն էր, էլաւ, գդալ օսկի, աման արծաթ հարեւեին խաց տուեց:

Էդ Մախմարի ջան գնաց խաց ուտելու, վի՛ն կուշտ գնաց, չթողեց խաց ուտելու:

Ռօստամ դալալ տուեց դանչել:

—Ո՛ն օ Աստուած կը սիրայ, ուր առէջի գդալ, աման տանի:
Ամենքը առան գդալ. աման, տարան:

Ռօստամ դանչեց Մախմարի ջանին, ասաց.—Արև, քե բանմ՝
ասեմ:

—Աղջի, ասաց, քու անուն ի՞նչ ա-
ին էլ ասաց.—Իմ անուն Մախմարի ջան ա:

Ասաց.—Բէջան սա՛ղ ա թէ մեռեր ա:

Ասաց.—Բէջան ֆլան ձորի մէջ՝ քեառսուն գեազանոց խորի
մէջ սաղ ա:

Ռօստամ դանչեց աշպարհին.—Աշպա՛գ, քեզնէ կուզեմ, ինչ.
կերակուլ ես, իմ ախպէր կուտենք. էն կերակուլից չքեա:

Աշպագ չքեց, տուեց Ռօստամին. Ռօստամ տուեց աղջկան,
ասաց.

—Տա՛ր Բէջանին: Աղջիկ տարաւ Բէջանին:

Բէջան չու՛մ իրիկուն անօթի մնացած էր, չվնօլ խաց, էդ կե-
րակուլ իջուց մըջ խորին:

Բէջանն էր, ասաց.—Ա՛խ Մախմարի ջան, ես չու՛մ իրիկուն
մնամ խորի մէջ անօթի, դու էրթաս գեղի մէջ քե՛ծ էնելու:

Ասաց.—Ի՞մալ էնեմ, խարուստ մարդ՛մ էկեր էր, խե՛ր կենէր,
անգցայ:

Բէջան բրդու՛ճմ էդ կերակուլից կերաւ, իմցաւ, տեսաւ էն
կերակուլն ա, յինքն, ուր քեռին խրտ իրարու կերած էն:

Էնոնք կենան թը էն տեղ, մենք դառնանք Ռօստամի վրէն:

Ռօստամ քեաչեց ուր բարխանէն անգեան գեախ, գնաց վըր
էն խորին կայնաւ:

Դեօխ կախեց մըջ էն խորին, ասաց.—Բէճանն:

Ասաց.—Խրամէ՛.

Ասաց.—Ձան, չէ քու ձէն մէկ էլ ընկեաւ իմ յանկեանջ, թո
Աստուած իմ խողին առնի:

Էլաւ, էդ գեռքներու մազ տուեց կրակ:

Որ տուեց կրակ, քեառսունն էլ էկան, Բէճանի ախպէր գե
մտաւ մըջ խորուն. Բէճանի ձեռներ արձկեցին, խանկեցին:

Ռօստամ դանչեց Մախմարի ջանին, ասաց.

—Էս քաղքի մէջ քե ինչ տուն խաց չտուեւ նշանց տա՛ւ, քաղաք
պտի աւրեմ, էրթամ:

Մախմարի ջան նշանց տուեց, Ռօստամ էլաւ, առաւ դե՛ք,
ընկեաւ մըջ յեղա քաղքին, յեմալ էնեց, ինչ օ Դաւիթի աւեր:

Էլան ուրենց բեռ, բարխանէն բարձին. Քանկայուղայ քաղաք,
դո՛ր իս, էկայ քե՛:

Էկան, էկան, խասան ուրենց քաղաք:

Խէր լաճուն էսաց.— Ա՛յ սրգի, չէ իս ան օր քի ըսըցը «անիւնք
Բեօզարըն, անիւնք խատ մի մարդիւթին չըն ինի, սա օր ըս տե ին,
կեօ վաղ Պնի Բառէն ին, քեառսուն օր կայ, կեօ անիւնք բարձած՝
գեացած. զմի խափցըն, գեացըն. օրգի, յիւրը աղջըկ ուզը, քի
խամար բիրիմ. մի խարսնա չընք բարլի:

Ձանբալը էսաց.— Քեան զան աղջըկ յաւել ըզի խարամ կե-
նայ, թն կըրկ չէնիմ, սոսակուիլիւ անիւն վար ձի չխանիմ:

Ձանբալը դեարդ էրաւ, կսկծու խընդցաւ, ընցիուն էլաւ.
մէկ կըսը թը «խարսնը», տաս կըսը թը «կը մեռնը»:

Խէր անցիուն հեթիմ իրի վրէն չսաղացաւ:

Օրէն մէկ գէվրիլմ իրի ան տե, Հագարու ամբրին էսաց.

—Ինչ տաս ըզի, քիւ տղէն սաղացնիմ:

Էսաց.—Ինչ դիւ ուզըս տամ:

Էսաց.—Շատ բանմ չըմ ուզը, մէկ ձիմ կուզըմ, խեծնիմ կան գեամ:

Էսաց.—Ձըմ չէ. խարիր ձը կտամ, դիւ սաղացցիս:

Էսաց.—Մէկ ձը ընը խեբիք է:

Նստան մինչև յիրկուան. յիրկուան մարդիք յէլան գեացըն քնիլիւ:

Ադա դէվրիչ Ջանբալու էսաց.

—Դիւ վի լանն իս: Էսաց.—Հագարու ամրի լանն իմ:

Էսաց.—Ձէ, Հագարու ամրի լան չկայ:

Էսաց.—Ինչխ Հագարու ամրի լան չկայ:

Էսաց.—Աընցկուն, մկայ Հագարու ամրէն կըսը՝ ըզի լան կայ, անիւ թոն լան չկայ: Դիւ արարում աղջըկ տիսիրիս ընցկնեմ վար օտաց մեռերիս, ապա դիւ փաշի աղջըկ տիսնըս, վողիրը տիսնս մէկ օր սաղ չըս մնայ:

Ջանբալի էլ միհագա էրաւ, էսաց.—Դէվրչի խուսքն ի:

Ուր մտէն էլսան, էթալ իտիւ ակնջին:

Օրէ օր սաղացաւ. էլմէլ էլաւ առաջը Ջանբալէն:

Մէկ ժամանակմ վերէն ընցաւ, օրէն մէկ սչ ընկեաւ մտանիք: Պինաւչան խանում էլմ ընկեաւ միտը. իօր էսաց.—Տ'էրթամ իտիւ Խէր էսաց.—Որդը՝, մ'իերթայ, աչդ կան ածու, ինչ աղջըկ կուզըս, քի խամար բիրիմ:

Ջանբալը էսաց.—Բեան գան աղջըկ ըզի խաւամ կենայ, իս տ'էրթմ իտիւ:

Էլաւ խուրճմ ուսկը իլից, դձըն խիծաւ, ուսկըն էթալ յուր քեամակ, քչից գինաց:

Գինաց թէ օրմ՝ թէ էրկու, թէ տաս, գինաց ձզըրու քաղաք գիւս էլաւ: Մինչև ձզըրու քաղաք դտի էրթայ, անով գէն չգտէ էրթայ:

Մարդ չճանչնայ, մանչ քաղքին կան կգեայ:

Կեա դէն. կեա դէս կերթայ, յէւջիւ տքնին կը կայնը:

Տքնի տէր էսաց.—Դիւ ինչ մարդ իս, գիւ աստեղաց մարդ չըս նմանի. կեա դէն կըեաս, կեա դէն կըեաս. իմ տքնի յէւջիւ կը կայնիս:

Էսաց.—Իս աս տեղաց մարդ չըմ, իս կարիպ մարդ իմ. սարհացը մարդիրիւց իմ, մարդ չըմ ճանչնայ, չըմ գտի դիւր տ'էրթմ:

Ադա տքնի տէրն էլ էսաց.—Աս օր իրկուան ըզի կօնախ իս Մնաց ան տե մինչիւ իրկուան:

Իրկուան տքնի տէր աւրց, տարաւ տուն:

Նստան խաց կիրան, կայնա խման:

Եդ տքնի տէր էսաց.—Դիւ դիւր տ'էրթա, ինչ գուրծը տ'էրթաս, ինչ բանի տէր իս:

Էսաց.—Ես խին առնելիք ունիմ Պնի բառէն տ'էրթամ յիտիւ: Ադա մարդն էլ էսաց.—Թը գիւ ըզի կըսըս, գիւ աը չէրթաս, թը հագար կուրու թը էրկու հագար կուրու ընը. չուրս խագար ընը քի կամ, մէրթար:

Էսաց.—Դիւ շատ աղէկ կըսըս, մարդ ուր խալալ մալ չը թուղնը, կերթայ խաւամ մալը իտիւ կան գեայ. կերթամ իտիւ:

Էսաց.—Դիւ ադա տեսակով տերթաս:

Էսաց.—Խն, սլա ինչխ տէրթամ:

Էսաց.—Դիւ ադա տեսակով էրթաս. անիւնք արար ին, քեանց դէլ անօթը ին, քեանց օձն էլ մերկ ին, գիւ չըս կէրի էրթայ:

Էսաց.—Ինչ տեսակ տ'էրթամ:

Էսաց.—Կը տանըս քիւ շիւրիք, քիւ ձըն, քիւ ճակիր կը ծախիս, կինիս ուսկը, կը լցիս եեամար, կը կապըս քիւ չփլախ մէջք (մերկ), կերթաս խըն թաղըսմ կառնիս, կը բիրիս, կարիս էնըս կեափանակ, թլըս քիւ թիւ, քիչեմէլ կը կարըս, կը դնըս քիւ գլեօխ՝ կօնմ կըռնիս քիւ ձեռ, քիւ ճանբախ կը բոնըս, կերթաս, սր քի դէմ առնը, կըսը, քիչիմ. Զուղարամ կերթայ ըռննայուրճենի:

Ջանբալը էլաւ գուր չուրիք, ինչ կէր, ծախըց, էրաւ ուսկը, էլից եեամար, կապըց ուր մէջք գինաց խըն թաղսմ իրի, կարըց, խագեաւ, իդի գլեօխ, մէկն էլ կարըց, էրաւ կեափանակ. էթալ ուր թիւ, կօնմ էլ բոնըց ուր ձեռ, ընկեաւ ճանբախ.—Բառսան, գիւ դիւր իս, իս էկայ քի:

Յաւիւրմ ճանապարհ թէ ամսում ճանապարհ գինաց, արնցկուն էլաւ. էլ չկէրի նստը, կայնը: Ջանբալուն էլ Հագարու ամրը աղէն էր, խուվ տեղէն չէր ըլլը արե նստը. պայա կան չըր իկե, ձիով կան կգէր:

Բեարմ խուվ արսաւ սարլմ մէջ, էսաց.

—Տէրթամ նա խուվ, քիչմ նստըմ, ըռնաթմ, նիւր կըլլըմ, կերթամ:

Գինաց նստաւ ան խուվ. սլառկաւ, քիւն տարաւ:

Գիչմ մնաց, ուխչար էկըն ան տե:

Ուխչրի աչ ընկեաւ զՋանբալը, խրտնան:

Միծ խուվիւ ան մէկէլ խուվըռուն էսաց.

—Գինա նա քուսըր տակ, ուխչար խրտնան. խի ինչ կայ, ջաւնալա՛ր ի. ինչ ի:

Խուվիւ գինաց քեարը տակ. արսաւ մարդմ ան տե քընի, սըր ձեռ իտոր, նա մարդ էլսան վիւ.—Դիւ ինչ մարդ իս, աս տեղ քնիրիս:

Էսաց.—Իս Յուդաբա մարդ իմ, ճամբորդ իմ, նեղացիրիմ, իկիրիմ աս տե քնիրիմ:

Ջանբալըն էսաց.—Նա ուխտար վիրն է:

Էսաց.—Քիւ տուն չաւիրը, դիւ աշխարք կան չը՛ս իկի. աս Պինաւչան խանուամի ուխտարն է:

Ինչ ան խապար էտու, ուրախացու, էսաց.

—Անուն լայ. չտիսնամ էլ . . .

Ջանբալը էսաց.—Անթը իմ, քիչմ խաց լը՛ք խայ, ուտրմ:

Խուվիւ էսաց.—Աստուծու սասաղէն, Պինաւչա խանուամի գըլ-խուն չկայ խաց, կաթ, էրթանք մատ խովիւքիր. խաց դնիմ ան տե, կաթ դնիմ, քեանի կէրիս. կի:

Էլան գեացըն մատ խուվիւքիր, խաց գըրն ան տե, կաթ կթըցըն, կերաւ:

Էսաց.—Իս ըլլմ ձին օգնական, անեպ օրէն խացմ կուտէք:

Էսաց.—Պարկն էլ տանք քի կտան էլ տանք դքի, համա կթև ու կի:

Մէկմ չաբաթմ դինաց խատ ուխտարին, ադու վուտ աընցկուն էրի վար ուխտարին, ուխտար անցկուն կալաւ էլան, մէկմ տաս էրուս Ադա խուվիւքիր անցկուն ուրախցան ասըն.

—Էսա մարդ Աստուծուց էրի, էլաւ մի օգնական:

Ադիւ անունն էլ գրած քեաչալ:

Օրէն մէկ Քեաչալ էսաց.—Իս ուխտար տը շամբըմ, էրթամ:

Անիւնց միծ էսաց.—Ինչու խամար տը շամբըս:

Էսաց.—Աչուն էրի, ձմեռ իս բըրիկ, տկոդ, անութը ինչխտ՛էնիմ, էրթամ բանիմ խալ կան գեամ, ձմեռն էլ ըզի ապրուստ ըլնը. դիւ հախը տէր էք, ձի քեափանակ կայ, ձի ուտնաման կայ, ձի խալու կայ, իս ինչխտ՛ապըրմ:

Ադիւնց միծն էլ էսաց.—Քիւ նա ուխտար մը՛շամբը, իս էրթամ մատ Պինաւչա խանուամ. թէ ուր մօտէն ձի հախմ կապըց, իտու, կեօ իտու, թէ չիտու, մինք իրիքիս խուվիւ ինք. դիւ էր վերէն՝ չուրս, մի հախ միք կէնընք չուրս բաժին:

Սաբուան (չովիւներու գլխաւորը) գինաց մատ Պինաւչա խանուամ, էսաց.—Իրիք—չուրս ամիս կայ մէկ քեչիւրկմ էկը խատ մի անիւ վուտ անցկուն էկը մի ուխտարըն, ուխտար էլած մէկն տաս. անցկուն կլաւցած, մկայ կըսը. ուխտար տը շամբիմ. ձը հախ չկայ, բան չկայ, իս բըրըկ, տկոզիմ. իմ խնդիրք քի՛ն է էն է, անիւ հախմ կապըս, խալաւ-խաղիւստ տաս, ուխտար չշամբը. ան ուխտար շամբը. իսն էլ խատ ան ուխտարըն չըմ էրթայ:

Պինաւչա խանուամ էսաց.—Իէ, աս օր էլի գինա, քիւ ուխտար-

ընն խատը, վաղը իս կգեամ պէր, կը տիսնամ ինչ մարդ ի, հախմ անիւ խամար կը կապըմ:

Խուվիւ գինաց, Քեաչալ խարցնից.—Ինչ էրըր:

Էսաց.—Պինաւչան ձի էսաց. «վաղը իս գեամ պէր, անիւ հախմ կը կապըմ»:

Էսաց.—Խնդրիմ ձինէ, վաղը մինծութին տէք ձը:

Խուվիւքերն էլ ասըն.—Ամին օր աուիրիք քի, դիւր կը տանս տար: Քեաչալ ուխտար տարաւ անցկուն տեղմ, չուրս բուլուր արտ էր: Ամին մէկ յեռջիւ արտըմ կայնան, ուխտար կէրէձան:

Պինաւչա խանուամ, խսեամ չուրըք բարձած՝ էկըն պէր:

Աչ ընկեաւ վար ուխտար, էսաց.

—Աստուած ձի տուն ասըրը. սար չկէր. ադա ուխտար բիրիրիք մանչ արտիրուն:

Խուվիւքիր ձեն չածըցըն, Քեաչալը կինաց յեռջիւ, էսաց.

—Շուտուց իմ աչն ան արօտն էր, մինք չուրս խուվիւ ինք, խուվիւմ թը կինայ ան արտն, մէկ էն, մէկ էն. իս կը նստըմ պէր-քեար, խսամ ուխտար թը տայ պիր, դիւ նստը ուխտար կթէ. պիր կըլնը, ուխտար կաունըք, կերթըք սար:

Խուվիւքիր ամին մէկ կողմ գեացըն, Քեաչալը նստաւ աւր-քեար, խսամ ուխտար էտու պիր, Պինաւչա խանուամն էլ ուխտար կթից:

Պեր էլաւ, մնաց էծ ու մագիմ. մագին էտու Պինաւչա խանուամի ձեռ, էծն էլ գաստով իթուղ, գինաց, էսաց.

—Խիւսամ, էծ անկթիլ գինաց. գնա, էծ առ, բի, ախոս է:

Խիւսամ գինաց իտիւ իծուն, կաթու աման էլ լիք իլի, Պինաւչա խանուամ կոտ իդի վար ամնը բիրնըն, մաքին կթից կոտ: Քեաչալին էլ ալմաստ ակ մատնըք ուր մատէն էխան, գեաղտըկ էթալ կաթը մէջ. կաթ մէրուաւ, էլաւ կտուրմ պանըր:

Պինաւչան իրըչից, տըսաւ կաթ մէրուաւ. մաքին կթից գեաըն, տեսաւ մաքու կաթ գուլալ էր, էսաց.

—Նա ինչ կէր խասաւ նա կաթըն:

Աւըց զկոտ, գարգըկից գեաըն, տեսաւ մատնիքմ մանջ կոտին, գմատնըք աւըց, ըրըչից ինի, տեսաւ ուր մատնիքն ի, ինչ խատ Ջանբալը փուխը, նուր բըրըչից Ջանբալիւ իրիս, տըսաւ օր Ջանբալըն է, երգ էսաց:

Գաւառի խօսակ սե խօնախան մաչան Աւեր երկիր երեք իջևան տներէն վեսս հեռու է.

Ջանբալի խամըչի մաչիս պե սա Ջանբալին գարգարուած չորորա-լով գնաց,

Ջանբալի ազիզ շուսնա չը քեար Ջանբալին անուշ հովիւ է ոչխարի առաջ:

Ոյ յօ շմնի մը չը չը խո կըր: Վայ իմ վրայ, ես ինձ վրայ ինչ
արիւ
Ձանբալի շու նա քոք ու խապուտա Ձանբալին մուշտակ ու վերարկուի
կոշաւ խո կըր. փոխարէն թաղիք է հագած.
Ձանբալի ազիզ շուան քիւ, մը նաւ Ձանբալին անուշ հովիւ էր, ես
նա կըր չճանաչեցի.
Ոյ յա խիւստ օ, զուկեան, քարիկա: Ախ մշակ, շուտ արաւ, կատարէ,
Հեադրան քիւնէն, զուկեան, ամէ քար- Ձորիներ բեր, շուտ արա. մենք
կեա: բառնանք.
Ձանբալիյէ մընէ Հարիյէ ժը վոշարի իմ Ձանբալիս եկած է վերին նա-
ժօրի, հանգէ
Դիւ սընկ ու քարէ մընէ մը ուքա- Դու խղճիս առաջ Աստուծոյ թըշ-
նա խոնէ հեաշաչ կեա: ուառիս հալալ արա:

Ձէն ընկեալ խուսամօջ ահանջ, խուսամ էծ էթուղ իրի, էսաց.
— Խուսամ լազ (շուտ) էրայ. ջուրըք բի, բառնանք, էրթանք.
Իմ ծծեր կեռայ, իմ լաճ միայ տուն կլայ, միբաթ կի՛նայ ան էծ
թուղ էրթայ սարբեք, (երկրորդ անգամ երբ կթենք, առաջին էնի
կը կթենք):

Խուսամ ջուրըք տուրց իրի, գկաթ բարձին:

Պինաւշան Սարբուանըն էսաց.

— Աստուած ձի տուն աւըրը, դիւ Աստուծուց չըք վախինայ. Գե-
չելըկ բըբիկ, ահլոզ, իրեք ամըս կայ խատ ուխչարըն կան կածը-
ցըք, չըք ընը շուտով խապար տէք, իս անիւ խալաւ խագիւտ
էնէր, անիւ հախ կառէր, նիւր էրթէր խատ ուխչարըն, էսաց՝
Քեաչըրկ թուղ գեայ խա ձի, էրթանք տուն, ձեռքմ չիւր կառնըմ
թուղ խաղըն, չարոխ մէլ ուր խամար չըն, կեափանակ մէլ ուր
խամար չըն, գեայ ուխչարըն խատնը:

Սարբուան էսաց.— Աստուծու սիրուն. գՔեաչըրկ շուտ խրկիս
գեայ, օր շուտ չեկաւ, իս ուխչար չամբիմ, գեամ:

Պինաւշան խանոււմ ուր միարլի էսաց.

— Ձի աչք նէ ըզի կրյնի, նէ Քեչիլը՛կ:

Էլան կաթ բարձին, գեացըն, խա ճանփէն կերթէն, խուսամօջ
էսաց.

— Դիւ խապըր կնարէն ինչիս իս:

էսաց.— Իս քգպէիս իմ ձեռ կը բունիմ. սղա կըսիմ-հիլա-հիլա,
Պաղտատ կըսիմ, յիւա մասալա»:

էսաց.— Խուսամ, գիչիք ցերեկ իս կըսէր «Ախ Ձանբալի, միս
Ձանբալի, աս Հագարու ամըր լաճն է, Ձանբալի է, ձը ապով
զինք ինչ խալի էր խասըցը, իս իմ լաճու անուեն էլ անիւ սիրուն
գըրբըմ Ձանբալը:

Խուսամ էսաց.— Գիւ ջան ինչիս կուզը անցկուն էնիմ:

Գեացըն տուն. Ձանբալըն էսաց.— Աստու ուր խըւանդանաս:

Պինաւշանը կեատուր էսաց.— Տար բեօեկ էք մարդ:

Պինաւշան էսաց.— Աղուրթ Արապուն բաղղ չկայ, քիւ Սար-
բուան իրիկ ինչ էկաւ աս տեղ. ամին խնդրուաւ. ասա մարդու
խամար էր. խըւանդ տանըմ բեօեկ, մարդմ անիւ լիղուն չխասկա-
նայ. խաց ուղը, ջիւր ուղը, աս տե ընը իս անիւ լիղուն քիչմ կը
խասկանամ, ինչ ուղը իս կատմ:

Կիսուր էսաց.— Պինաւշան, իս քի սպուլ կըսըմ թը չէ, տաս
տարը թը կեանայ ան տեղ, դիւ չըս ամնայ, ժխո իս չըմ ամնայ:

Ձանբալի էլ պարկու ան տե, դասու զոցըցուց, Պինաւշան
խանըմն էլ էլաւ, թեռներուն բիրան էրաց:

էսաց.— Մարդու աղէկ դատ ընը, մարդ դընը թեռլի, բիրան
կարը:

Ինչ աղէկ խալաւ կէր, էթալ վաւր թեռներուն, ձեռք մէլ
նակ իդի վար թեռներուն, մնաց մինչիւ իրիկուն:

Պինաւշա խանըմ էսաց.— Իս ինչիս էնիմ, թէ լիւր դօտակ ձի
խամար Ձանբալը խամար թըլիմ, էրկու մարդ տակ տերեան, թէ
թաղիս ու բառ թըլիմ, Ձանբալը բառն ու թաղսըն մէջ չըինի,
էսաց (մտածեց) մէկ գչիւր էր, լիւր դօտակ խուսամուչ խամար թուղ
ընը, թաղըս ու բառ ձը խամար, Ձանբալը խամար թուղ ընը:

Խուսամ մտաւ լիւր դօեկը մէջ. Պինաւշան էլ մտաւ թաղսը
մէջ բառը:

Շատ բըբից Ձանբալը չէրի, էսաց.

— Իս գտիմ, ան քիւնիրը, չակախըցըմ՝ չակախըր գեայ:

Ոյ յարմեկ, ոյ յա դիյէ. Վայ ինձ վրայ. վայ մօրս վրայ.
Ձանբալիյէ մըն նախոյէ յե հեաշիյէ. Իմ Ձանբալիս հիւանդ է բակի
վրայ.

Ձանբալի. դիւ ուքեան, վաւրս. Ձանբալի. դու ել (գարթիւր), արի.
Սինկ ու քարէ մըն շուքրանայ Սրտիս, ծոցիս վրայ թշուառիս
Խոնէ բազի հարս լլնայ Մինչև լոյսը բացուի,
Հարս լլնա ուքը սեռան սրբակիյէ: Մինչև մեր առաւօտեան ասաղը
դուրս գայ,

Ձանբալի քիւնուց էլաւ վի, բըբից լիւր դօտակ տիտաւ էսաց.—
մայան անիւ տեղ նա է Գինայ մտաւ խուսամուչ կուշտ, խուսամ
էլ Ձանբալու գլեօխ գրկեց վար ուր սրտըն:

Պինաւշան էսաց.— Ձանբալը ուր ճանրախ շաչ էրաւ. դան չա-
կախըցիմ, չգեայ մա ձը:

Ոյ յա խըսամ օ, քրիւնէ քեռան. Վայ ծառն, էչերու սերունդ.
Դիւ սաճ մար, դու խարտան: Դու չհասկանար այս երկու խօսքից.

Ձանբալիյէ մըն հարիյէ մը վարարի Իմ Ձանբալիս եկած է վերին եր-
ժօտան. կէրնեբէ.

Դիւ բախա քար սրճիւն բարան: Դու կանգնիր կուրծքի առաջ:

Ձանբալի խուսամուչ կշտէն էլաւ, գինաց Պինաւչանը կուշա,
բերան իղի Պինաւչանը սրբոտ, ձեռ իթալ ծծըր:

Անիւ մտքով Կանը գեռքը ծըծըրնիր:

Դարը շանքրի Ձանբալիյա մըն դարը Իմ Ձանբալու օրօրոցի փայտը
հեծիրի. թղենոյ փայտ

Հուսայ յէ կրի լը ձեղիրի. Վարպետը շինած է, բայց ձիղի-
բէն շինած.

Ձանբալի, դիւ դեպի խո սիկ ու Ձանբալի գու բերանդ ծծերուս
բարո. մէջ տեղ գիր.

Մը ուարանա խոսք բանա կար խաչա Աստուծոյ խիզն թաղ վզիդ շուրջը,
գեառանը:

Սկար, շառ դեա շիւ մարը շրկաշիր: Գուլոդ ու աչքերդ չթրչին կաթի
ծորերէն:

Դարը շանքրի Ձանբալիյէ մըն դեարը Ձանբալու օրօրոցի փայտը խնձու-
սերի րի փայտ.

Մը հաժանի քար բարբի. Երդիքի առաջ կը շարժեմ.

Սրբէ ազը Ձանբալիյա մազըն ընա Առաւուս ես մեծ Ձանբալու հետ
հառըմ, ճանապար կընկնեմ.

Ես բըրբ բը հեղըմ սկար շառ դեա. Այն փոքրը կը թողում քու աչքի
առաջ:

Բեանը տղէն կը բնէր. տղէն կը խանէր վի, տղէն կէր, ան
կօրուրէր:

Կըսուր էսաց.— Պինաւչան, աս օր ինչ իլի քի, քիւ տղըն. մընչ
գիւ կը ռահաթիս, մընչ քիւ տղէն:

Պինաւչանը մէր էսաց.— Խնամը, վըր՝ չըսըս, Պինաւչան խու-
վէն չըր ընըր, նստըր արիւ, մկայ իլի աղա, խովը կը բուր, խո-
վը կը թուգընը, իլի շոչըրար (սչխար կթող), ամեն գուրծ ընկի
Պինաւչանը վրէն: Կըսը.— Պինաւչան, ինչ կիւգեայ վար քիւ լեզուին,
ըսա:

Դարը շանքրի Ձանբալիյա մըն Իմ Ձանբալու օրօրոցի փայտը
Դարը ընասիւք մեծանի լը վի Այդ փայտը կացինով հմ կտրած
կալի այս կէտիս.

Սրբէ ազը Ձանբալիյա մեղին ընա Վաղ առաւուս մեծ Ձանբալու հետ
հառըմ. ճանապար կերթամ:

Ես բըրբ բը հեղըմ սկար շառ դեա Ես կեզ ո՛վ փոքրիկս, պիտի թո-
բարբ: զու՛մ շու՛ն պապու՛թ երեսինս

Դարը շանքրի Ձանբալիյէ մըն Ձանբալու օրօրոցի փայտը
Դարը ընասիւք մեծանի լը հեղիյէ. Ուռենի փայտ, գոր կը շարժեմ. ...

Ես պըրբ բը հեղըմ սկար շառ դեա Ես փոքրիկը պիտի թողում քաժ
խասիյէ կեսուրոջս աչքի առաջ

Էլան, պարկան, քինան, քիչմ՝ քինան, լուս աստղը էրի՛
խսամ դձիանք խոխ, յէռջի տուը նալիլ, հազըր.

Էրի գինաց ազուցմ իզար Պինաւչան խանըմը կուզ, էսաց.
— Իլի, լուսաստղ էրի, գեացէք, ձը խուզըն ազատեցէք:

Պինաւչան էլ իլաւ. Ձանբալի էլ էլաւ. գուրինց շուրիը խա-
գեան. Ձանբալի գիւր հակըր կապըց վար ուր, ձեռ իզար ուր ճեպ.
ըրփմ ուսկը էխան, էլից խուսամուչ փեռ, էսաց.

— Խաղար տարը խսամութին էնիս ընցդեմ ուսկը չըր իտու
քի, գինան, չիւր քիւ տղը տղէն էլ ուտը, խէրիք է:

Էլան գիւրենց ձիանք խեծան, խաբը ուզըցըն խուսամուչ մօտէն:
Ձանբալը ուր պար խուս գախ ձգիւրէն:

Պինաւչան էսաց.— Ձանբալը, աղ ինչ կէնըս:
Էսաց.— Մի ճանբալս էն է:

Էսաց.— Տնաւիր, անիւնք արար ին, մինք տանս օր էրթանք,
անիւնք նուր տնէն ըլնին, անիւնք տը գեան, մի խասնըն, մինք

անիւնց ճանկին չընք կէրի ազատուը, քիւ պար տու գախ աղօ-
թըրան, էրթանք:

Թա օրմ, թա էրկու օր գեացըն, մէկ բասանմ տիսան:
Էսաց.— Պինաւչան խանըմ, անա ինչ բասան է:

Էսաց.— Ժխօ գիւ գիւնէն կան չըս իկի, ան Մերտին է, իմ
իրիկ ան տե Կայմագամ է:

Ձանբալի էսաց.— Մինչիւ չէրթամ, Մէրտին բամաւա չէնիմ
չընք էրթայ:

Էսաց.— Բե գուրծ չուենիս Մերտին:
Էսաց.— Չէ, տ'էրթանք:

Էսաց.— Տ'ակախին, վար մի ազատմ չկայ:
Էսաց.— Չէ, տ'էրթամ:

Գեացըն քաղքը մէջ:
Էրկու ձիու հաւարը խուս կնկեան ձեռ, ինք ընկեաւ մանչ

քաղքըն, կան իրի:
Կայմագամու խօլամ իրի ան տե, դՊինաւչան խանըմ տիսաւ

դարձաւ գինաց, խապար խուս էսաց.
— Պինաւչա խանըմ կե՛օ մանչ քաղքըն ի. էրկու ձիու հաւարը

ձեռ նստիւրիը ան տե:
Կայմագամ էսաց.— Իլի, գինան, Պինաւչա տը գեայ, ինչ էնէ.

մէկ խօլամըմ էլ էսաց, իլի, գնան, տես, թա դուրթ Պինաւչան խա-

Նըմ ան տեղ ի, առ էրի, թ'անտե չէ, էրի, զանիւ լեզիւն կըտուընք, վաղ մէկէլ չըլնը անցկուն սուտ ըսը:

Խզմեքեաք էլաւ գինաց. տեսաւ աղուրթ Պինաւչան խանըմ ան տե նստը, էրկու ձիու հաւսար, կեօ ձեռ բունը:

Էսաց. Պինաւչա խանըմ, իլի՛, Ահմատ աղան քի կանչը:

Պինաւչան էսաց.—Ան մարդ ինչ ըզը բիբի աս տե, քեանց քիւ Ահմատ աղան կտորճ է:

Խզմեքեաք դարձաւ, գինաց:

Չանբալի էրի ան տե:

Պինաւչան էսաց.—Աստուած քիւ տուն աւըրը, չի իս քի ըսը, «չընք էրթայ Մէքտին». չիւր մկայ էրկու գաս (լրտես) էկած է իտիւ ձը, իլի՛, քաղքէն ընկնինք դիւս, կգեան գմին էլ սպանըն, թուղ սպանըն:

Անունք քեաղքէն ընկեան գիւս:

Ահմատ աղը խօլամ խալար տարաւ Ահմատ աղան էսաց.

—Ահմատ աղա՛, իս ըսըցը, չէրի. Իս ըսըցը «Ահմատ աղան գքի կուզը», ան էսաց, «ան մարդ ինչ ըզը բիբի, քեանց քիւ Ահմատ աղան կտորճ է»:

Ահմատ աղան էլ իլաւ, չիւր դուր խալաքիր խաղեաւ, ձըն բերըն ան տե, չիւր ձըն խիծաւ, անիւնք քեաղքէն կեազմ հեռացան:

Ահմատ աղան էլ գինաց խալաւ:

Չանբալը ըրըչից յետուց տեսաւ ձիաւուրքիր. կրակը դարզ յիտուց կգեան. էսաց.

Վի Մերթի թեաք սիւր չեայ Ահա այս Մերթիի պարսպի առաջ Բրոք սուար դեաքեաքն թեաք դա- Բանի ձիաւորներ դուրս եկան փույթ դայ գուան տուաջ.

Բիւնաւչան, փփաք մերի խոս րդեա Ա՛յլ Բինաւչան, դու քու շուն յնասիա: մարդդ ինձ ճանաչացնել տուր:

—Մերթ մըն Ամասը Ահմասիյեա. —Իմ այրս Ամատ Ամատի է.

Բո մեա լասա, Բունանիյեա Գլխարկը կարմիր, Բունանական (Օսմանեան)

Ճգմեա դեաք ա Մերթիյեա. Կօչիկը գեղին Մերթինական.

Շարվար հեղին ա Մանգանիյեա. Վարդիքը կանանչ Մանգանիյական (Սղերդի մօտ աւան).

Արա բօզ ա քաւաւայիյեա Աքան մոխրագոյն թայնաֆայական

Չաւա կօր ա քրնասի ա Աչքը կոյր է, գե՛ ճանաչիր.

Չակեաք դիւ քաւար նակիա Եթէ դու հաւատ չես ընծայիր.

Դաւար եվի մակիա

Ես դա շուրանիյեա

Դե քըլա որի. դե քըլա որի Թող այնպէս լինի, Թող այնպէս լինի.

Ահս կըրար շանրի քը ինալա Ուխտ ե խոստում հողուոյս պարտք լինի.

Եան ազը քը կուծմ. դիւ ժը մըրաքի: Կամ ես կսպաննեմ, դու ինձ հետ գաս,

Եան ազեմի քը կուծը դիւ ժը քարը: Կամ գիւ կսպանէ դու նօրա հետ կերթաս:

Ակըն մօտացան, Ահմատ աղան ինչ մօտացաւ, աչ ընկեաւ գնուանն (քուռակ), տիսաւ, վոտ ու ձեռ թուլցաւ, զկնըկն էլ մուռցաւ նուանու դարսէն, կանչից էսաց.

—Ժխտ ձը՛ բառսան չկէր, դիւ գեացըը, իմ նուանըն առըր բիրիր:

Չանբալըն էսաց.—Կնըկ բառսան չկէր, իս աղջըկ Կանի զեաք ուզըմ, դիւ Պնի բառէն վարքի պսակըս.

Էրկուս առըն յիբար: Ահմատ աղան քեանի ձեռ պար կտայ դախ ձուանըն. ձըն ուր վոտ կանը դախ ձուանըն. Չանբալը գձուանու պար կտայ դախ ձըն, ձուանըն չուրս վուտանով կը թուըր վար ձիու քեամկըն:

Չանբալի իզար զԱհմատ աղէն սպանըց: Խուլալքիր դատու խիտ կանչըցըն:

—Դիւ զԱհմատ աղէն սպանըցըր, մի ձեռնէն գիւր տ'աղատուըս: Չանբալի էսաց.—Իս սպանըցըր զԱհմատ աղէն սպանըցըր, ձի ինչ: Էդու խուլալքիր կանչըցըն.—Տա՛ր, պիւուզ մոււպարեք ընը քի խամար, չէ, գմի ան կուրու ձեռնէն աղատըցըր:

Անիւնք էլ թուղ տուըն, էկըն Տիարպէքըր:

Պինաւչան էսաց.—Չընք էրթայ Տիարպէքըր:

Չանբալի էսաց.—Չէ, էրթանք ան տե, սպակուընը, նուր էրթանք:

Պինաւչան էսաց.—Գուրժ չուընիս խատ պսակուելու, կերթանք: Էսաց.—Չէ, իս անպսակ տուն չը՛մ էրթայ:

Էլան գեացըն մանչ քեաղքըն. Չանբալի էլ գինաց մատ մֆրըն: Էսաց.—Էզը տը պսակըս:

Մֆրը աչ ընկեաւ զկնըկ, խեղք գինաց, էսաց.

—Գէ, կայնը, էրթամ մատ դազըն, գեամ դձի պսակըմ:

Մֆրըն գինաց մա դազըն. դազըն էսաց—

—Կնըկմ, կայ կեօ մանչ քաղքըն. դիւ ան կնըկ պսակըս վարձը, իս խաղար կուռուտ տամ քի:

Էսաց.—Գինն, ան կնըկ աւը բի սղա. խիմ մեամ:

Մֆրին գինաց զկնըկ, զՉանբալըն առըց գինաց մա դազըն:

Ղազրն մուծբուն էսաց.— Դադրըս սգա. էրթամ մա գայմա-
գամ գեամ, պսակիմ վար քե:

Ղազրն գինաց մա գայմագամ, էսաց.

— Կնըկմ կեօ իկի մի տուն, դիւ ան կնըկ պսակըս վար ձը, իս
էրկու խազար կուռուց տամ քի,

Դայմագամ էսաց.— Դէ, գինս, առ բի սդա մնամ (տեսնիմ):

Ղազրն գինաց, առըց զկնըկ, զՋանբալի, մծբին էլ խիտ,
չուրսն էլ գեացըն մատ գայմագամ:

Դայմագամը աչ ինչ ընկեալ զկնըկ յիւշ գինաց. զղազրն,
մծբրն գիւս էրաւ. «զՋանբալըն էլ տարէք, բունէք, էսաց: Ձկնըկ
վերըն կաթ տարէք, գրէք յեօդեմ. գիւս փակեցէք վերէն էկէք:

Ջանբալըն տարան բունիցըն, Ահմատ աղան գիւս իդի վե-
րէն: Մնաց մինչիւ յիրիկուան, էսաց.— Իս ճըռմ խաղ չըսըմ, մինք
մէջ գեացընք:

Ոյ շա յը մընի, մը յը յը յուսիր. Վախ ինձ, ես ինչ արի ինձ հետ.
Մը գու: Ջամբալիյա մը չըջիսոյ բու Նա ասացի. իմ Ջամբալիս ինչ գործ
Տիյարեհր, ունի Տիգրանակերտ

Ջամբալի ըտարի բրաւ իտա դագի Ջամբալին ելաւ, հարցուց զաղի ու
մծբիյան կր: մֆթիներուն:

Մէկ մարդմ ան տե կայներ էր, էսաց.

— Ահմատ աղա, էրի աս տե, կնիկմ վերիւ խաղ կըսը. մարդու
կալը ականջ էնէ:

Ահմատ աղան իրի ան տե, Պինաւչան էսաց.

Նավե դափուճի Ահմէս աղա. Դունապանի անուն Ահմատ աղա
Ջանբալի, յիւ իս բարտ դըր մալի Ջամբալի, դու կինքդ աշխարքի
դիւնի մադեա. ապրանքին մի տար.

Խօ հափստ զնօսն դարը ըրդեա բառ- Դու կինքդ բանտէն դուրս ձգելու
օսն. աշխատէ.

Ահս կրտար շանը մը բը քեզմ: Ուխտ և խոստում ընկնի հոգուս
վրայ,

Բեշդա Ջանբալի եղի քիւ կեաս, Ջանբալիէն յետոյ և ոչ մէկը
Սընկ ու բարը մը ըսարանա Խոսե, Աստուծոյ թշուառիս սրտին ու
էղի բու նադեա: կուրծքին երբէք ձեռք չտայ,

Ջանբալի էսաց.— Ահմատ աղա, դիւ իմ կնըկ զինէ առըք. ըղի
ինչ էք բունը, գիւս բաց, գեամ գիւս չիղարեմ խմըմ, փշոււմ իմ
պիհն ընը, էլմ բունաւոր ընըմ:

Ահմատ աղէն գիւս իրաց, Ջանբալըն էկաւ գիւս, ձեռ իղար
ուր նրայ, լըմ ուսկը իլից Ահմատ աղը գիւք:

Ահմատ աղէն էսաց.— Ահս կրտար իմ խոգիւն ընը, իս ձի էր-
կուս խասըցիմ ձի մրազըն:

Առըց զՋանբալը, տարաւ, էրաւ արտաքնոց ինի, գիւս փա-
կից վերէն, թիւ ապեմ' առըց, գինաց վերիւ. գլեօդը գիւս էրաց.
Պինաւչան գիւս էխան, գլեօդի գիւս էլմ փակեց, թիւ ապեմ քի-
չից վար Պինաւչան խանուճը թիւքիրուն, նարդիվան վի առըց իրի
վե, արտաքնոցը գիւս իրաց, Ջանբալի էլ գիւս էխան, անիւնց
ձեռքն էլ իրի, էտու զանուճք. նամակմ գրից, էսաց.— Կափուճի,
ասա էրկու ձիաւոր սայա ին, աը գեան, էրթան Ըռնտվանայ եր-
կիր խարն ու խարան առնին, իրիկուն խասնըն ադ տեղ գիւս բա-
նաս, կէս գըշիրըն խասնըն էլմ գիւս բանաս: Նամակը էտու զՋան-
բալի:

Ջանբալի, Պինաւչան գուրինց ձիան խիծան, գեացըն դար-
կեայս կայնան, նամակ տուըն կափուճու ձեռ. կափուճին առըց,
կարգաց. իդի վար գլխին, զգիւս իրաց. Ջանբալի, Պինաւչան
քաղքից ընկեան գիւս:

Դառնանք վար գայմագամըն:
էսաց.— Ահմատ աղա, խաց մի բի, ուտիմ իս:
Ահմատ աղան խաց տարաւ. իդի յէնջի. Պինաւչանը խնդալիւց

խաց կիյա գայմագամը բիրտն:
էսաց.— Ահմատ աղա, խաց վիրուց:
Ահմատ աղան խաց վիրուց:

էսաց.— Ահմատ աղա, Ֆանար բի, իս էրթամ իմ տեղ:
Ահմատ աղէն Ֆանարը առըց իրի. ընցաւ յէնջիւ գայմա-
գամըն, տուը նեքըվանվի, գեացըն էլըն վերըն կար:

Ահմատ աղէն յեօդի գիւս էրաց, գայմագամ ըրըչից, տըսաւ
մարդ չկեայ յեօդէն, էսաց.

- Ահմատ աղա', հանիյա գարը, Ահմատ աղա, ուր է կինը.
- Էֆեհնըմ, հա'նիյա գարը. Տէրս, ուր է կինը.
- Ահմատ աղա', հանիյա գարը, Ահմատ աղա, ուր է կինը.
- Էֆեհնըմ, հա'նիյա գարը. Տէրս, ուր է կինը.
- Հայտե', սիքըր, Շուտ, գնա, կորսուէ.
- Էֆեհնըմ, սիքըր, սիքըր. Տէրս, կորսուէ, կորսուէ:

Դայմագամն էլ ան տե կսկծու բղգեաւ:
Դառնանք վար Ջանբալը:
էկըն Սղերտու մօտացան, Ջանբալի էսաց.

— Էրթանք Սղերտ, բաղար էնընք:
Պինաւչան էսաց.— Դուրծ չուճիս, աս Սղերտ ի, անպատիւ
մարդ կեցգեն պատիւ:

Ջանբալի էսաց.— Ձէ, չիւր իս քի խամար խալաւ չառնըմ, իս
Սղերտու չըմ էրթայ:
Պինաւչան էսաց.— Դիւ կառնըս, իս չըմ առնը.

Գեացըն Սղերտ. Չանբալին էսաց.

Ամբ հարն Սըյերտ սկար դարանի Մենք գնացինք պղերդ. գլուխ հանցինք:

Ամ չունն սախնն բեար դերի դրխանը Մենք գնացինք, կանգնեցանք խանութի առաջ.

Դե կազ քը բոքմ քը սաս անի. Տաս կանգուն կարեմ հարիւրանոց. Բիրոզ հարք անր քիւմրարէք քը բեար՝ Սօթ անգամ շնորհաւոր լինի Բիւնա Բինաշանը. նաւանի հասակին

Պինաւչան էսաց.—Դիւ կառնըս, իս չըմ առնը.

Ամի հարն Սըյերտ սկր դարանի. Մենք եկանք Սղերտի դռներու գլուխը

Ամ չունն սախնի բեար դրխանը Մենք գնացինք, կանգնեցանք դերքերդիշանը. ձակի խանութի առաջ

Դե կազ քը բոքմ դու սաս սխանը: Տաս կանգուն կը կտրեմ երկու հարիւր հասունոց

Սևուի, սըգեօլ Համգա Ղաւուչ, Մահմատ Շաւատու, Մահմատ Բուրգու էկըն ան տեղ, անունց աչ ընկեաւ Պինաւչա, դարձան գեացըն:

Գեացըն մատ անունց աղըն, ըսըն.—Աղան, էս տարը հօթ տարը կայ, դիւ կըսըս.—«Ախ կնըկ, ախ կնըկ», կնըկմ իկի քաղաք. ախշարքը մէջ անցկուն կնըկ չկայ:

Աղէն էսաց.—Դէ, գեացէք, բերէք սս տե, մնա տըննամ:

Գեացըն, վիրուցըն վար մատքիրուն գձանբալը, գկնըկ՝ չթըղըն անունց վուտքիր առնըր գեարն. տարըն, գրըն յէւջիւ աղըն:

Աղէն էսաց.—Դիւ գբիւ կնըկ չը՝ ծախիս, առնիմ:

էսաց.—Չէ, մարդ ուր կնըկ չծախը, օր իս ծախըմ:

Աղէն էսաց.—Խընգ խարքը կուռուտ տամ քի. էրկու խարըր կուռուտ խարնը, յիւրէշ կնըկմ ան, իրիք խարըրն էլ կը գնըս քիւծուց:

էսաց.—Չէ, մարդ չտեսի դիւր կնըկ ծախը:

էսաց.—Տնւ ձը, խաղար կուռուտ տամ քի:

էսաց.—Մարդ գիւր կնըկ չծախը.

էսաց.—Տնւ ձը, էրկու խաղար կուռուտ տամ:

Մահմատ Բուրգու, Համգա Ղաւուչու, Մահմատ Շաւատու աղա իրեքը ըսըցըն.—Թնւղ, էրթայ բընը խանգակ (սարի մի գլխու անուն), մի քիսայից Խնչ տէրթայ, փարամ բարութ տէրթայ մէկ կիւլիւլէ. գանինք, սպանինք, կնըկ առնըք բիրինք:

Չանբալը առըց գկնըկ ընկեաւ դիւս քեաղքէն. աղա իրիք քեան գձանբալի շուտ գեացըն իլան Խանգակը գլեօխ:

Չանբալի, Պինաւչան գեացըն, խանտակը մօտացան, տըսան ամին մէկ թփան մը տկէն էլան դիւս տարըցըն:

—Վոլանիւլ աղիմ, եան շիլիքու, եան դաթիլ բու:

Չանբալը Պինաւչանը էսաց.—Նա Խնչ կըսըն:

—Դիւ ժխտ լիգու չը՝ս խասկանայ, կըսըն «եան գբի քալնէ (մերկացիր), գի՛ սոգ տե, հան կըսըս, «չէ», գբի կսպանինք:

Չանբալի գձըն քշից վրէնքտէր, էգար գԱհմատուկ սպանից, մէկէլ էրկուս փախան, գեացըն մատ աղըն:

Աղէն էսաց.—Ուր է Ահմատուկ:

էսաց.—գԱհմատուկ սպանից, չգիցանք ճը՛ն էր, ճանալա՛ր էր, ինչ էր, մինք աննախ պրծանք:

Աղէն էսաց.—Ահմատուկ չսպանէր, անիւ գլեօխ ուտէր անիւ կնըկ:

Չանբալը, Պինաւչան էկըն գիտու բերան. մէկ աչքին քեյկուռան մի գետու բերանն էր, Չանբալի էլ իխան խարըրնուց ուսկմ իտու ձեռ, էսաց.—Ա՛ւ, դմի ջիւր ընցու:

Աղա քեալակուան էսաց.—Կը խնդրիմ քինէ աղա փախըր մի տու ըղի, սըւտակ փարայ տու ձը, աղա փախը մի տեղ չընցըն:

Պինաւչան էսաց.—Չանբալը, խան մեհիքիլիմ տու ձեռ, գմի կնըցի. աղատուընք:

Չանբալը մեհիքիլիմ իտու ձեռ. քեյկուռան գանիւնք իգի վար քեյկըն. տարաւ, ջիւր ընցուց:

Չանբալը, Պինաւչան գեացըն Հաղարու Ամիրը բերդ:

Նուր հօթ օր, հօթ գըշիր ուրինց խարսնըս գըրըն:

Անիւնք ան տե խասան իրանց մրազ, գիւ էլ սս տե:

9

ԳԱԼՈՒ ՀԱՄՁԱ

(Մովսէս Երեմիայի Տիմ գիւղի բարբառով) *

Թաքաւորմ կէր, Ասպած լաճմ տուեց էդա թաքաւորին. էդա լաճը զիշեր ցերեկ իւաց. իշ արին, չկրցան ինոր ձէն կտուէն: Թաքաւոր էլաւ, դալալ տուեց կանչել մըջ քաղքին.— Հէ, ասաց. ո՛վ իշ գեայ եմ աղի ձէն կտուի, ես ինոր պտի դնեմ կշեռք, ինոր կըշեռքով ոսկի տըտամ ինոր, ո՛վ իշ ինոր ձէն չկտուի, ինու վիզ տը դարկեմ:

Էդա լաւնով (առիթով) իլաւ էս սուրնի վիզ կտուեց, էն պատճառով օր չկրցան ձէն կտուէն:

Էդա թը մնայ դայ. մենք էրթանք Մարրայ թաքաւորից զըրուցք անհնք:

Մարրայ թաքաւոր ասաց ուր թուճարքերաց.— Գնացէք, ձեր մալ Ստամբուլ սաղցուցէք, զըրէք յետ:

Ինոնք կեամին հեօղ իսկին, տ'էհան. էլան իրեք մարդ գնացին:

Խացի թանգութեն ժամանակ գնացին. յեմալ սով էր մէկ խաց կտէր մէկ մեհիսի խացի տէր չիւր իտէր, ծնայ (այնպէս, այնչափ) սով ի:

Իլան, իշկացին պագրկրնի մարդեր, օղուլ-ուշախ մը դենը կգեայ, իրեք տղայ կեօ խետ, էրկըսի ձեռնէն բռնի, մէկ ֆօրփայ վըր ծծին հա կլայ, հա կգեայ:

Ասին մէմէկու.— Ասիւ մենք տը խարցնենք, ընչի կըլայ, պատճառ ինչ ի.— Քեօրիկ, դիւ ընչի կըլաս:

— Ես կըլամ, սով-սրածութեն ի. եմ իրիկ մեռէ, էսա մենք չորսն էլ տը մեռնենք, գատ-բան չկեայ մեր ձեռ:

Էդա մարդեր ասին.— Քեօրիկ, էդա ֆօրփեն սուր, մենք զընենք, ըմեն օր քե փարայ տանք, դիւ շահուես:

Ասաց.— Աղբէր, ո՛ր ուր ջկեար ծախեր ի:

* Պատմած է Պետրոս Վերտեան խօսրովեան:

— Որ դիւ ջկեար չիւ ծախի, պտի չորսն էլ տը մեռնէք. դիւ էն ֆօրփեն տոս մե, դիւ իրեքն էլ մեռնելիւց պտի փրթուէք, սրտի շախուէք:

Ասաց.— Աղէկ, տամ ձե, եմ լաճու գին ինչ ի: Ասին.— Դիւ գիտիս, քեօ տղէն ի, քեանիմ դիւ տուես, կտանք: Էրկու խարիւր մեհիսի տուին, էն լաճ գինին:

Ասին գնացին յետ դարձան Մարր: Քեամին գանեց, օլըրեց էդա կեամին, զըրըցուց, տարաւ գնաց էն թաքաւորի, իշ ինոր տղէն կըլայ, ինոր շայիրին մէջ իտուեց դիւս:

Էն գիշեր, ինչ էն պագրկեան էկաւ, շայիրին մէջ դիւս էկաւ, ֆօրփայ տղէն կեօ խետ: Էն իրկուն էլ մէկ օղուլ-ուշախ էկաւ.— Թաքաւոր, ասաց. ես տը գեամ, քեօ տղի ձէն կտուեմ:

Թաքաւոր ասաց ինոր.— Դիւ տղէկ օղուլ-ուշախ կերես, չես կընայ ձէն կտուի, քեօ վիզ կը գանեմ, քեօ մեղք կլինի եմ վիզ:

Ասաց.— Չէ, ես չեմ կընայ ձի շախի, ես տը գեամ, Աստըծու ձեռնով կտուեմ:

Էն գիշեր իլաւ գնաց ինոր լաճ պախեց, ինչ տըաւ, իշ շարաւ ձէն չկրցաւ կտուէր— չուճ գէմ լոս. գէմ լոս լաճ առեց, գնաց գէմ աղօթրնին.— Աստուած, ես եմ խողին առնիս, ես իդոր ձէն կտուեմ:

Էդա կնիկ իշկաց մալ, տաւար կեօ մըջ շայիրին, ասաց.— Ես էրթամ, ինոնց ասեմ, թըր թաքաւորի շայիրից էրթան, ինոնք չեն դիտի յիմար են, թաքաւոր ախախի, ինոնց վիզ գարկի, մեղք են:

Գնաց ասաց.— Աղբէրքեր, դիւ իշ մարդ քք:

Ասին.— Վալա, մենք Մարրայ պագրկեան ենք. մենք էկանք, դէհէնք Մարր, քեամին գանեց, օլըրեց, բերեց դայ:

Ասաց.— Էլէք, գնացէք, թաքաւորի շայիրն ի, ձե վիզ չգարկի: Թաքաւորի լաճ ինչ տըտաւ պագրկեանի դեմ շէր ֆօրփայ լաճ, կեօ նստած մօ պագրկեան. դինք թալից, գնաց մօ պագրկեանի լաճ, ձէն կտուեց:

Բեհմ մը մնաց դայ կնիկ, թաքաւորի լաճ ասեց, էմէլ էկաւ, էմէլ իլաց թաղաւորի լաճ. կանչ մը էրկինք, մէկ էլ գեաինք, չուճ բիրեց թաքաւորի սարի մօտ:

Թաքաւոր ախախ.— Հո՛ւ, ջալլա՛ս, ասաց. կանչէք, էսա օղուլ-ուշախի վիզ կտուէ:

Էդա կնիկ ասաց.— Ես մէկ խապար քե ասեմ, նոր եմ վիզ կտուի: Ասաց.— Առն:

Ասաց.— Ողջ երկիր որ թափին, քեօ լաճու ձէն չի կտուի. մէկ պագրկեան կեօ թալէ քեօ շայիրի մէջ, մէկ ֆօրփայ տղայ կեօ

էնտեղ. էն ֆորփէն քեօ լաճու ձէն կառի. չէ, քո՛ւ մարդ չկրնայ կառի:

Ասաց թաքաւոր. — Օղուլ-ուշախ բռնէք, էն ֆորփէն բերեմ, ըսկուն ի, էդա օղուլ-ուշախ շախեմ:

Խեա էդա խապրին պագրկեքեր էլան, մէկ լեկեմ օսկի լցին, չալրէն քեչին վրէն, էկան թաքաւորին տես. թաքաւորին դօխ տուին.—Թաքաւոր ապրած, մենք Մսրբայ պագրկեան, էկանք, տէ-հէնք Մսրբ, քեամին բերեց, քեօ չայիր խանեց դիւս, իկիր ենք քե տես: Ասաց.—Նս ձեր վիզ տը կտուիմ. ձեր մալ չխօ հմն ի. թի որ մէկ ֆորփայ տղայ ձե կայ, որ էն ֆորփէն բերիք, տուիր ձի, ես ձեր մալ չըմ առնի, ձեր վիզ չըմ գարկի:

—Թաքաւոր ապրած, մենք էն ֆորփան տուինք քե:

Գնացին բերին, դրին թաքաւորի լաճու կշտի խեա. ուր ձէն կառեց թաքաւորի լաճ:

Թաքաւոր իլաւ, էդա օղուլ-ուշախին ուր կշռանքով օսկի տուեց, պագրկեանին էլ դասուր տուեց, ասաց.—Իրեք օր կերէք, խմէք, նոր գնացէք:

Թաքաւորը էրկուս լէ սրաւ ուր լաճ. տարաւ գնաց կնունք. կնքեց, ուր լաճու անուն դրեց (Գալու Ահմէտ 1). պագրկերի լաճու անուն դրեց Գալու Համգաւ:

Էդա էրկու լաճեր ջոջացան. թաքաւոր տարաւ, դրեց ու-սուճարան:

Գալու Համգան խեղբով էր չըզ Գալու Ահմէտ.—Գնա, ասաց Գալու Համգէն Գալու Ահմէտին. թաքաւորին դօխ դիր, ասա-ւմենք մե ուսում առինք, առաւտուն մէմէկ ձի տաս մե, մենք մե ձիուն քեամկին բռնինք, ուսնինք ձիաւորութեն:

Իլաւ, գնաց դօխ դրեց, ասաց:

Խէր ասաց.—Աղէկ:

Առաւտուն իլան, մէմէկ ձի խեճան, մէմէկ ճանկմ օսկի ա-ռին, գնացին կան գեալ: Էրկու օր չէկան, վրբ իրեք աւուր էկան:

Գալու Համգէն էմէլ ասաց.—Գնա, դօխ դիր, ասա, թաքա-ւոր, մե ուսում առանք, մե ձիաւորութեն ուսանք. մենք կը խընդ-րենք, վաթսուն դիար պոզվրտից մե էրկու կեօրգ շինիս, առաւ-տուն մե կեօրգեր առնինք, էհանք, խաղանք:

Գալու Ահմէտ գնաց, ասաց:

Թագաւոր ասաց.—Գնացէք. քեէք: Գնացին, քեան:

1. Գալու կը նշանակէ նիոզ մե Գալիք եւ Մնեի մէջ գործածուած ծառ բառն, որի քեւ խկակամ նշանակութիւնն է յիմար, սակայն այստեղ կը նշանակէ ֆաջ, կտրիւն, համարակ, աներկիւղ եւլն:

Կանչեց դարբինքերաց ասաց.—Ձի պինայ վաթսուն դիար էր-կըթից էրկու կեօրգ շինէք իմ լաճերաց խըմակ:

Գնացին, չուճ առաւտուն շինին, պրծան:

Առաւտուն տարին, դրին մէյսընի գլօխ, մէկ գլօխ մէկ՝ մէկ գլօխ մէկ:

Խըլուսուն լաճեր իլան վեր քնուց, ինոնց իրես վայցին, ինոնց Ասպած կանչին. տըսան կեօրգեր մըջ մէյսընին:

Գնացին, ձեռ տուին, կեօրգեր վիրուցին:

Աստըճու խըմաճեքէն կեօրգեր վիրուցին, ինչ դիւ խեճոր վի-րուցիս, բռնիս քեօ ձեռ, վեր թալես:

Էդա կեօրգ Գալու Ահմէտ թալեց մօ Գալու Համգա, Գալու Համգէն ինոր կեօրգ բռնեց. Գալու Համգէն իլաւ, ուր կեօրգ թա-լեց մօ Գալու Ահմէտ. Գալու Ահմէտ ինոր կեօրգ բռնեց: Ինոնց խաղ իլաւ, նահան թալեց, նահան բռնեց, նահան թալեց, նահան բռնեց:

Մըջ մէյսընին ինոնց կեօրգեր յիւար կը դպնէր, կրակ կը թռնէր մէմէկից չըզ խաւի ձու. խորշակ Աստըճու էրկունց ու-րանց ոտքեր կը քեչեն, ինչ կրակ չգեայ ոտքեր իրիցի:

Թաքաւոր վանչարից ըրըչկաց դըխ լաճեր, ասաց.—Նս լա-ճեր ոճմ ինոնցմէնէ տը բռնին:

Էդա լաճերաց խէր խիւնդցաւ, զանչեց լաճերաց ասաց.— Եկէք սղայ, վոսիեարմ ձե տանեմ. եմ վոսիեար բռնէք ձեր ա-կանջ, չթողնէք դետին. չըմեն քեարին ձեր միտը մնայ, ամանար ձե, էսա էրկիր կեօ յըմեն ձեր ձեռն ի. պալի էնա Սե սարի քեա-մակ չէհէք:

Թաքաւոր վաղճանաւ, էլան թաղին. ինոր պատարագ արին, պրծան. սինօղքեր կանչին ասին.—Մե թաքաւոր վաղճանաւ, մե թաքաւոր դենեք:

Իլան, Գալու Ահմէտ, Գալու Համգէն կանչին. էկան էրկունս էլ: Գալու Համգէն ասաց.—Նս դիտեմ ձի ինչ սպով կանչըք: Սի-նօղքեր ասին.—Ի՛նչ սպով, դիւ խեղբով մարդմ ես, մե սպի ասես:

Ասաց.—Ձի պաի անէք թաքաւոր, դենէք եմ խօր տեղ. չէ, ես չըմ ըլի թաքաւոր, դիւ ձընէ հազ արիք, ես եմ աղբորմէ եմ հազ արե, ես եմ աղբէր անեմ թաքաւոր, դենեմ եմ խօր տեղ:

Սինօղքեր ասին.—Ձէ, դիւ խեղբով եօ, պաի դիւ ըլես:

Ասաց.—Նս խեղբով եմ, եմ աղբէր ջոջ ի, եմ աղբէր նսաի թաքաւոր, խապար տալ ձընէ ըլի:

Գալու Համգէն Գալու Ահմէտի ձեռ պագեց, դրեց վրբ գըլ-խին, ասաց.—Պտի էրթաս, նստես եմ խօր տեղ:

Արին թաքաւոր, դրին խօր տեղ:

Մէ ժամանակ մը մնաց թաքաւորութիւն. մէկ օր թաքաւոր էլաւ, ասաց.— Դալու Համզա, մե ձիանք քեչիք գիւս, էհանք կան գեալ սեհրանկեան տեղ, սեհր անեք:

Մէմէկի մէկ ճանթիկ օսկի առին, գնացին: Ասեմ, գնացին մէկ սահաքուան տեղ, թաքաւոր ասաց.— էհանք սե սարի քեամակր:

Դալու Համզան ասաց.— Մե խէր վոսիեար արե, մե խօր վոսիեար չի կուրիսինք, բունեք մե աղանջ:

— Չէ, ասաց. մե խէր մեուաւ, գնաց, մեք պտի էհանք: Ասաց.— Թաքաւոր, գիւ գիտեա:

Գնացին իլան Աե սարի քեամակ, իրեք, չուրս աղբուր տը սան. յաղբրի վրէն ծաղիկ, ծաղկունք էր, կանանչ, չիման էր:

Դալու Ամէտ ասաց.— Մե խէր ծնայ բեքաղդ էր, ծնայ աղբուր, կանանչ, ծաղկունք էս տեղն ի, չըր թոնի մեք գէնք էստեղ:

— Թաքաւոր աղբած, ասաց Դալու Համզա, մեք էկանք, ամա մեք փոսմանք:

Մէ վերու օխչար տըսան. ձիանքներ թողին խե, գնացին չում դաշտի կէս, բունին, բերին, մորթեցին, անեն ինոնց խմակ խորոված. ինոնց թուանքներաց դիրքը արեցին չիչ, խորոված գըրին վըր կըակին: Թաքաւոր ասաց.— Դալու Համզա, էհա ինչ ի կը պսպըղայ:

Ասաց.— Էն ծով ի: Ասաց.— Մեք տ'էհանք տըսանք, էն ինչ ծով ի դայ:

Էլան, գնացին, ասաց.— Դալու Համզա, գիտեմ, ծով ի, էն ինչ ի ծովու վրէն կգեայ:

— Էն կեամի ի, կեամին ընկե վըր ծովուն, ֆուրբունեն տուե վըրէն կգեայ:

Կեամին էկաւ, տեմուր թալնց կայնեցուց: Թաքաւոր ասաց.— Մեք տ'էրթանք կեամու մէջ, վըր ծովուն քէյֆ մը անեք, գեանք յիա, նոր էրթանք մեր խորովածքեր:

Ասաց.— Մի գէա, գիւ թաքաւոր իս, քե չլայելի: Ասաց.— Չէ, պտի մտնեք ինե:

Էլան գնացին, մտան ինե. կեամիչին կեամին թողեց, որ կեամին թողեց, քեամին զանեց, կեամին տարաւ, գնաց, զանեց մըջ ծովուն քեարին, կեամին պարմիտ արաւ. թաքաւոր, Դալու Համզա էրկուս մնացին մէկ տախտըկի վրէն: Աստուած օր չէր բիրե, մնացին մէկ տախտիկ վրէն:

Էգա տախտակ քեամին զանեց, տարաւ. զանեց մէկ քեարի, կէս տեղէն էն տախտակ ճղեց. թաքաւոր մնաց վըր մէկ քայի, Դալու Համզա վըր մէկ քայի:

Դալու Համզա ասաց.— Թաքաւոր, Աստուած մե մէմէկուց ջուկեց. բալի Աստուած ձի օր ազատեց, ես էկայ գիւս, մազէ չոր խազնեմ, քեօ խոե զրվեմ, կան գեամ, քե տըսամ:

Թաքաւոր ասաց.— Դալու Համզա, թի ծովուց ազատուայ, մազէ չոր խազնեմ, եզր աշխարհք կան գեամ, քե գտնեմ:

Թաքաւոր գնաց յարեալոց գիւս ընկեաւ: Դալու Համզան գնաց յարեամտոց գիւս ընկեաւ:

— Ինչխ գիւս ընկեան, ասա գիւս: Թողչին ձիւկ կը բունի եզր ծովուն, էգա բոռչու աչք ընկեաւ:

էգա մարդ, ասաց.— Ինոր չորեր խօրոտ ի, թը գեայ, ինոր սպանեմ, չորեր խազնեմ:

Որ էկաւ, չեմկել թալեց ծովուց քեչից գիւս: Դալու Համզա ծովուց դահա գիւս չիր իէ, աչք թալեց բոռչու մազէ չորեր, ասաց.— Բեր փոխեք:

Ասաց.— Չէ, ես չեմ փոխի, գիւ թաքաւորի տղայ ես: — Չէ, ասաց. պտի փոխեք:

Դալու Համզա չորեր վրայէն խանեց, խազաւ բոռչու մազէ չորեր, գնաց յարեմուտ մըջ մէ քաղաք:

Ինոր բնակարան խազեց մէ փակեալս, հա կեհայ մըջ քաղբին, կգեայ: Էն թըղ մնայ դայ, մեք դառնանք թաքաւորի վրէն:

Թաքաւոր գնաց, յարեալոց գիւս ընկեաւ: — Ինչխ գիւս ընկեաւ.— Քեամին կը տանի տախտակ, կը դանի մէ քար. գիրմ, երկուս զանեց քար: Աչքեր բացեց, իչկաց տախտակ վըր ջրուն կը զանէր քար, կը զըւէր յետ. մէկ գիր որ աչքեր բացեց, ասաց.— Սօթ անուան տէր, Սուրբ Կարապետ, ընձի ազատես էգա ջրուց: Դիր մէլ օր գարկեց, խասաւ քար բունեց, ոտքեր դրեց վըր քարերաց, ծովուց ազատուաւ. էլաւ գնաց, ընկեաւ մէկ քաղբի գիմաց, գնաց, մտաւ մըջ էգ քաղբին:

Գնաց, իչկաց նեա մարդ, նեա գաւս, Ադամորդի մըջ էգ քաղբին չկայ, որ դուքան գնաց, իչկաց, գա'ս չկայ. որ ֆօքեն գնաց, իչկաց, մարդ չկայ: Մէկ գիւս քարաչար շարեր էն, լանկեով գանեց, փուց, գնաց, մտաւ էն յօտի մէջ. տըսաւ տղի լայիւ ձէն կգեայ, գաւս էն լայիւ ձէն արայ, գնաց. գնաց, իչկաց մէ թաքաւորի աղջիկ դայ կլայ, ասաց.— Թաքաւորի աղջիկ, բարե քե:

Թաքաւորի աղջիկ իչկաց ինե, ասաց.— Թաքաւորի տղայ, գիւս սղայ իչ կանեա:

Ասաց.— Դիւ լացիր, ես քեօ ձընի խեա էկայ, ընչի կլաս:

Ասաց.— Մէ վիչաղ ուսեր ի, էսա քաղբի մախլուխ իչ կայ չկայ, յըմեն կերաւ. եւանդ եմ մէր կերաւ, յերեկ եմ խէր կերաւ, յըսօր եմ դօրն ի, սպա ես տը լամ, ինչխ անեմ:

Թաքաւոր ասաց.— Աղջի՛, ես սոխած եմ, խաց անը, ես ուտեմ, չունմ էն կրեայ. Աստուած պորմած ի՛

Խաց բերեց դրեց. կերաւ:

Տղէն ասաց.— Եմ քիւն կը տանի, քեօ ծուռնկ դիր, ես եմ դըլօխ դնեմ վրէն. որ կրեայ վիշապ, ընծի խանես վեր:

Քնաւ. որ քիւն տարաւ, աշխար զարգանդ բռնեց, դեռդ քաղաք բռնեց. քոզ, խապար քաղաք բռնեց, աղջկայ լեզուն փակուաւ, իրաց. ինոր արցունք ընկեաւ Թաքաւորի իրօին. Թաքաւոր ակխաւ, ասաց.— Ընչի՛ կըլլաս:

Ասաց.— Քեօ տուն աւերի, կեօ էկաւ, մե տը ուտի, իլի վեր, քեսպիր մը արա՛:

Թաքաւոր իլաւ վեր, Թուր կասեց վեր ուր, դնաց դիւս, իշկաց, կեօ, վիշապ կրեայ. Վիշապ իշկաց մարդ մը, կեօ, դայ ի, ուր պէնք քեշեց յեռջև ուր, Թաքաւոր խըտ Թըլն դնաց մտաւ վիշապ բիրան. Թուր ընկեաւ վիշապ բերան, Թաքաւոր զինք յեա ընկեաւ, Թուր վիշապ բերան կտուեց չունմ Թեքեր: Թաքաւոր զինք քեշից դիւս, զըվիշապ տուեց դէմ Թըլի, կտուեց վիշապ, սպանեց, էկաւ տուն:

Գաս Թաքաւորի աղջկան տրաց, էկաւ:

էկաւ որ Թաքաւորի աղջիկ հախու մեռեւ, փետացե, յիւշը ընցե, ընկե: Տղէն ջիւր Թալեց մըչ յերսին, ծծեր մածեց, իրի՛քիւ կծեց, աղջիկ խանեց վեր:

Ասաց.— Աղջիկ, քե ինչ իլաւ:

Ասաց.— Ասի՛ քե կերաւ, ձի էլ տ'ուտի:

— Վեր, հանք, քե լեօ շանց ասամ:

Գնացին զվիշապ տըսան, ինոր ջանդակ Թալե մէմէկու. ցընց մէ ամբոցի տեսակ:

էլաւ աղէն ու աղջիկ ձեռ Թալին, մէմէկու իրիւքեր պաքին, զըւռան, էկան յեա:

Աղջիկ ասաց.— Թաքաւորի լաճ, քաղաք Աստուած տուե մե չուն էն օր աշխար աւերի. մե խերիք ի՛:

Տղէն կը խնծեք ձին, կըհէր յըմեն օր նեչիւր. աղջիկ յառեջ կըհէր, ձեռ կը Թալէն իրար վիզ, կրեան:

Թագուհին շորեր խանեց, գնաց դիօխ լուաց, աղէն էլաւ, շորեր քճքճեց պտրտեց, պղտի բանլիս մը գտաւ. տարաւ, Թալեց զըւռներ, էսա դիւս չէ, նահան, նահան չէ, նահան՝ պտի զիւռմ բացեց, իշկաց մէկ ճրագ կեօ դայ յօտի մէջ կը կարնի. գնաց, իշկաց մէ շապիկ ի, ճրագի տեղ կը վառուի, ասաց.— Էսա շապիկ ասանեմ, կմ Թագուհին խաղնի: Բիրեց դիւս, զըւռաւ, դիւս չինեց: Սինամախաւք դարկեց, շապիկ տարաւ: Տղէն մուրթ էկաւ տուն: Աղջիկ

խարցնեց.— Իլու ընչի դամա՞ իս. չըս գնացե նեչիւր:

— Չէ, ես դամա չեմ. քեօ շորեր իշկացի բանլիս գտայ, շապիկ տըսայ, կեօ ճրագի պէս կը վառուէր, բիրի որ խաղնէր, սինամախաւք դարկեց, տարաւ:

Ասաց.— Ես քեօ ձեռնէն էկայ դիւս:

Ասաց.— Վիշապ եմ ձեռնէն չխանեց, մէկ Աստըծու խրիշտակ չըմ անե, մարդ չկընայ եմ ձեռնէն խանէ:

Սինամախաւք տարաւ, դրեց մէկ դարի դիօխ.

Նախընթին էլաւ, իշկաց սարի դիօխ, կեօ, արե գարկեր՝ կընկեան ասաց.— Խաց դի, կեօ արե գարկեր սարի դիօխ:

Կնիկ ասաց.— Կէս գիշեր ի.— Չէ, կէսօր ի, կս տ'էհամ:

Խաց դրեց, նախընթին նախիւր առեց, գնաց, խանեց դարի դիօխ, իշկաց մէ շապիկ կեօ դայ. շապիկ ինչ արեաւ տեղ կը վառուի. վիրուց, դրեց ապի տակ. էրկիր մթնաւ, ասաղեր էրևաց:

էլաւ վեր, էմէլ զըւռաւ, տաւար առեց, էկաւ տուն:

Տաւար լցեց մըչ գեօսին, գնաց շապիկ շանց առեց կնկեան, կնիկ ասաց.— Աղէկ ի, տանիս Թաքաւորին, Թաքաւոր մէկ աշխարք տայ քե, դիւ ուտես:

Նախընթին ձեռ տուեց փէտ, իսասաւ կնկեան. — Ես իշխ անեմ իլըտ ախըրին. տանեմ, տամ ըռէսին, որ ձընէ նախընթին շառնի. չուր հար-հար (մշտական): Շապիկ բիրեց ըռէսին:

— Ըռէս, արի դիւս, ձի գործ կայ խըտ քե: Իլու բացեց:

Նախընթին շապիկ շանց տուեց, ասաց.— Էսա շապիկ քե եմ բիրէ, որ դիւ նախընթին չղնէ շառնես, հա կնեայ ձի:

Ասաց.— Գնա՛, շու տղի տղին տղէն տուեր եմ քե:

Նախընթին զինք վեր-վեր Թալեց, գնաց տուն:

Առաւառն ըռէս իլաւ, շապիկ առաւ, տարաւ Չինաց Թաքաւորի խըմակ: Թաքաւոր մէ մէշոք օսկի տուեց ինոր:

Թաքաւոր ասաց.— Ո՛վ կայ էսա շապիկ տիրոջ սալըղ տուող, ես ինոր կշտանքով օսկի տըսամ ինոր:

Գնացին, կան էկան. էրկու պառաւ բերին էկան, ասաց.— Պառաւ, դիւ կաննք էսա շապիկ սալըղ տայ, վի՛րն ի, վի՛ր տեղացն ի:

— Չէ, ասին, մեք էրկու խարիւր տարեկան ինք, կեօ քաղքի էն քեօքն մէկ քեօ կայ մե իրեք խարիւր տարեկան ի. գնացեք, բիրեք:

Գնացին, բիրին. խարցնեց ինոր Թաքաւոր.— Իլու կաննա շապիկ տիրոջ սալըղ տաս.— Խո՛, ասաց:

— Որ կաննա բիրես, քիւ կշտանքով օսկի կտամ քե:

— Չի դիր մըչ մէ յօտի, օրը մէ ոխչար իս ուտեմ, ես գեամ վըր եմ դաշուան զախարընին. ես համ դէն շապիկ տեր բիրին:

Տարաւ գնաց յօտէն. օրը մէ սխչար կերաւ. էկաւ վըր դաշուանց հարախեարին:

Ասաց.— Ի՛է, գնան, ձի խըմայ մէկ ձըցում բն, մէկ սարեկ էլ բեր, մէ օձ էլ բեր:

Բերեց, էկաւ: Պառաւ խեծաւ ձըցում, սարեկ քեշեց վըր բերեցին, օձ բռնեց ուր ձեռ. օձու վիզ քեամեց, պոչ գանեց ձըցոյին, ծովու վրէն ձըցում գըռուալին հաւ գնաց. քեանի գանեց՝ գըժժաց ու գնաց. էլաւ էն տեղաց ծովու եզը, ուր սեռիկ պախեց մըչ աւղին. գնաց, ընկեաւ վըր թաքաւորի էն ճամբխին, ինչ թաքաւոր կեհայ նեչիր:

Թաքաւոր էկաւ սարից, ասաց.— Պառաւ, դիւ ըսդայ իչ կանես: Ասաց.— Հանըցեր էկան, գնացին հան. ձի բերին, թողին ըսդայ:

Ասաց.— Ի՛է, կը, կը, էհանք տուն:

Էլաւ, ոտ թալեց զանկուն, նստաւ քարի, գնացին:

Թաքաւորին էկաւ յառէջ, ասաց.— Էդա պառաւ թող, մի բեր, թալ, տփի գետին, մենք յըմենով վնաս կը քեշենք:

Ասաց.— Չէ, Գուխարայի. խուր Աստըծու խուրն է:

— Չէ, ասաց, չըմ ուզի. թալ:

Խապրով չարեց, առեց, գնաց տուն:

Յեվարին կեր կերակուր կերան, քնան:

Առաւտուն թաքաւոր էմէլ գնաց նեչիր. թաքուհին շիչ առեց, էկաւ բիւրը պառուուն: տես, գոր կը ցաւայ քե, պառաւ. ասա շիչ տփեց:

Պառաւ էմէլ գնաց, ընկեաւ վըր թաքաւորի ճամբխին:

Յեվարին էկաւ թաքաւոր, տըսաւ պառաւ կեօ դայ. ասաց.—

Պառաւ, դիւ ընչի՛ էկեր ես դայ:

Ասաց.— Մեռնեմ քե, թաքուհին ձի տփեր է:

Ասաց.— Ե՛լ, կը, քե տանեմ, ոտ թալ զանկուն:

Պառաւ իլաւ, ոտ իղիբ զանկուն, թաւ քեամակ:

Թաքուհին էկաւ յառէջ.— Թաքաւոր, թալ, մի բեր:

— Վնաս չկայ, խեղճ պառաւ է, քե ջիւր կը բիրի:

Ընցաւ մէ գետիս, ըսկուն լաւացան, էլան մէր ու քեօր:

Օրմ իլաւ, ասաց թաքուհուն.— Էն ինչ է, մըչ շարթուան թաքաւոր իրեք օր կը մեռնի, էմէլ կը յարի, ինչ ապով ըսկուն կըլնի, մէկ խարցնի թաքաւորին:

Յեվարին իչ էկաւ թաքաւոր, իաց ջիւր կերան, քնան:

Թաքուհին խարցնեց.— Էն իչ բախս է, դիւ շաքաթուան մէջ իրեք խես կը մեռնիս, էմէլ կաղխիս:

Ասաց.— Էն ս՛լ քե ասաց:— Ես լսեր եմ:

Ասաց.— ձրագ ընցու, շոր քեշենք վըր մե, պառաւ շգեայ, լսնայ. ես քե ասեմ:

Շոր քեշին ինոնց գլօխ, ճրագ ընցուցին: Պառաւ էլաւ վերեալա՛՞ց էկաւ, գլօխ իղիբ վըր ինոնց բարձին, լսաւ իչ որ թաքաւոր ասաց.— Իչ մարդ եմ թուր քեշի իրեք թիզ գիւս, ըսկուն թող ճի՛ ես տը մեռնիմ:

Պառաւ էլաւ, թուր քեշեց, իրեք թիզ խամբեց, գրեց դայ, իկաւ թաքաւորի, թաքուհու բիւրը, թաքաւորի գլօխ վիբուց, տըփեց գետին. ձեռ վիբուց, տփեց գետին. մախաթ առեց, գանեց ճաներ, թաքաւոր չակախի:

Էլաւ, շիչ առեց, էկաւ գեղս թաքուհին.— Եալլան, ասաց, իլե վեր, հանք:

Ասաց.— Պառաւ, ձի մի տփի. գնան, էնա տեղ նիսա, ես եմ լաւ շորեր խտընեմ, գետմ:

Գնաց, շորեր խաքեաւ, մըչ մէ թղթին գրեց.— Եհառսուն օր ձի վըր քե բռներ եմ. թի որ էկար, էկար, չէ, չէկար՝ ես քիւ ձեռնէն գնացի էն յօտէն ինչ գիւ զապիկ բիրբի իս, էն յօտէն կեօ էրկու դաւրէչ նստած է. քե թալես դաւրիչքերաց ձեռ ոտաց, դաւրիչքեր քե ճամբախ չանց կտան:

Թաքուհին էլաւ խը պառուուն գնաց, տարաւ, մըտուց մըչ սեռկին, սարեկ քեշեց վըր սեռկի բերնին. բերան բռնեց, խեծաւ ձըցում, թալեց վըր ծովուն, օձ բռնեց ձեռ. օձու պոչով գանեց վըր սեռկին, հա քեց, գնաց, տարաւ յարեամուտ խանեց գիւս:

Գնացին, ալինջկայ տունն, ասին.— Պառաւ կեօ էկաւ, քեօ թաքուհին բիրեց:

Տարաւ, գնաց, թաքուհին խանեց գիւս:

Թաքաւոր ասաց.— Ի՛լ խասար ընձիկ:

Ասաց.— Բեռսուն օր ընձիկ մօհուլ տը տաս:

Ասաց.— Ի՛լ եմ իս, քեռսուն չէ, խարիբ օր էլ քե մօհուլ կտամ:

Մենք ա՛հհանք վըր թաքաւորի տղին իչ մեռած է ալեալուս: Թաքաւորի լաճ իրեք օր ըսկուն կը մնայ մեռուկ, իրեք աւուր սօրա կըլնի վեր, կիշկայ, նե՛ա թաքուհի կայ, նե՛ա պառաւ կայ դայ. իլաց, գանեց մըչ ուր գլխուն:

Շորեր իշկաց, կեօ թուղթմ մըչ շորերաց, թուղթ կը կարդայ, կեհայ էն յօտէն իչ շապիկ միջէն բիրէ. էրկու դաւրիչ կեօ դայ, խէր ու լաճ:

Թաքաւորի տղէն իլաց, գինք թալեց ինոնց ձեռ, ոտաց.— Ամա՛ն, ասաց. ես արի, դիւ չանես:

Էդա դաւրիչի ըսիկ վեր էլաւ, լանկէմ գանեց թաքաւորի լա-

ճղան, ասաց. — Քեանքի պիր քե ասաց. «Եզա պառաւ մի բեր, մենք տնով կը վնասուենք».

Կիւ էդա պառաւ բիրիր, էկաք:

Եզա դաւրիչ մէկ մարդ տուեց թաքաւորին: — Տար, զնա, տոնը ծով, ասաց. մէկ խրեղէն ձի էն ծովուց կգեայ դիւս, դիւ խեծի, էն ձին քե կը տանի, թալի չորային էրկիր. էն ձին չտանես խե քե, թողնես գեայ մըչ ծովուն. դիւ գնա:

Թաքաւոր զնաց, մէկ ըռալի տըսաւ, ասաւ. — Տեհամ մօ ըռալիչին, մէկ ձի ձը խըմայ առնեմ:

Գնաց, ինոնք ասին. — Մէկ մարդ կգեայ, ինոր չորեր առնենք, խաքնենք:

Մէկը խելացի էր, ասաց. — Չընք սըպանէ, գեայ, մընէ ձի ուղի, էնու եան ձին է խատէ, եան փրթէ:

Գնաց մօ, ասաց. — Մէ ձի տուէք ընձիկ:

Գնացին, մէկ ձի, թաքաւորի ձին էր, բսկուն տասլոտ ձի էր, թաքաւոր զինք բխտ չըր կանայ խեծնէր, էլան, տուին ինոր:

Եզա խեծաւ, ասաց. — Թողէք, ես մեյտան մը տամ, գեամ, ձեր փարեհ տամ:

Ընքեան զինք թալեց քամակ, բսկուն մարդ մը էչ մը խեծնի, էչացաւ:

Էլաւ, ձին թողեց, զնաց, ասեմ էջմիածնայ չոււմ Հայթաղ. Հայթաղայ զըռոււ, էկաւ յետ:

Սահն. — Մե փարեհ տաւր, նոր գնա:

Սասց. — Չէ, մէկ զիր էլ էհամ, գեամ:

Դիրմ էլ գանեց զնաց. զնաց, հա զնաց:

Գնաց կնտեղ, արեւմտոց թաքաւորի քաղաք, իչ ինոր թաքուհին էր: Ասաց. — Չի, դիւ մեագ հասըլ ես, սրտեղ իչ զլօխ տուեցիր, ես սլտի իջնեմ էնտեղ:

Ձին զնաց պառուու դիւռ զլօխ տուեց, կայնաւ:

Պառաւ դիւռ բացեց, իչ, կեօ մարդմ իջե, առեց փէտ, էկաւ դըխ թաքաւորի ձին. — Ըստե պայա մէլի, զնա թաքաւորի դիւռ, վազերի դիւռ. փաշի դիւռ. ըռէսի դիւռ:

— Պառաւ, ասաց. աւ հա քե խինք խատ օսկի, եմ ձիուն տեղ պրա:

Պառաւ ասաց. — Վայ, մեռնեմ քիւ ձիուն, քիւ բաժին, ես չէր զիտէր դիւ իր:

Պառաւ զնաց, մտաւ տուն, ուր քեատէն զանեց վըր պուտկին, պուտուկ զանեց վըր ճլօրին, ճլօր զանեց վըր կթոցին, կթոց առեց, զանեց վըր սախին (լուացքի տաշտ). գգըլ զանեց վըր շեր-

փին, շարդեց, բիրուն խանեց դիւս, ինոր ձիու տեղ արաւ, ձին տարաւ, կապեց:

Թաքաւոր էլաւ, էրկու օսկի էլ տուեց. — Լխե, դաւակ քե մե խըմայ, ասաց:

Պառաւ օսկիմ տուեց տեղ, ջլի, օսկիմ դրեց սըր ջեք:

— Պառաւ, ասաց. առ, օսկիմ գնա, էրկու խուրձ եօննա բեր եմ ձիուն: Երկու խուրձ եօննա բերեց, մէկել փարեհ դրեց ծոց:

— Առա, գնա, էսա մէկ օսկին էլ, կեր. եմակ բեր, ասաց:

Բերեց, կերան, խման, կչտացան. պսաց. — Պառաւ, էսա իչ սագի ձէն ի, էսա իչ հալա հալայ ի կգեայ:

Սասց. — Մէ շապիկ բերին, տուին մե թաքաւորին, լոս մընէ կը կաթէր. զնաց, շապիկ տէր բերեց, էկաւ. թաքաւորի խաղ ու խաքնինս ի:

Սասց. — Պառաւ, էն աղջիկ եմ թաքուհին ի:

Մէկ դոս տուեց. — Գնա, ձի խնձոր բեր, ասաց:

Գնաց, բիրեց, ինոր մատնիք գրեց մըչ խնձորին, դրեց մըչ շաւրին, տուեց պառուուն. պառաւ ասաց. — Եթ գունապաս էն, եթ օսկի տը տանեմ, դեներ բանան, ես էրթամ:

Պառաւ էլաւ, էգ օսկին տարաւ, զնաց, տուեց դարկելանին. դարկելան էգա պառուուն լանկէմ զանեց, գրորեց, զնաց առուի տակ:

Պառաւ էլաւ, օսկին շանց տուեց, ասաց. — Տնաւեր չեղած, ընչի ընձի դարկիր, էսա օսկին քե, դիւռ բաց:

Սասց. — Պառաւ, տարին բմի թաքաւոր մէկ օսկի շտուի ընձի, դիւ էս փշուր գեախ մէկ օսկի տուիր, արի, գնա: Գնաց եթ գունապասին մէմէլ օսկի տուեց, ընցաւ, զնաց, զնաց, խառաւ:

Թաքուհին գիտցաւ մարդ էկաւ մօտ, կանչեց. — Դիւ սլ էք, ով իչ գեայ, ես ձի տըսպանեմ:

Պառաւ ասաց. — Ես եմ:

Սասց. — Ես պառուուց կիրեր եմ, մի գեայ:

— Չէ, ասաց. դիւ իչ էն եհասար կը սիրես մըչ քիւ սրտին, էն զասն էր, մօտացեր ի:

— Պառաւ, դիւ որ էն եհասարի բախս արիր, նստի:

Պառաւ զնաց, շաւրեն թալեց, զնաց մօտ, իչկաց, խնձորի մէջ ուր մատնիք տըսաւ, ճանցցաւ, ասաց. — Պառաւ, էսա մատնիքի տէր դոր ի:

Պառաւ ասաց. — Կեօ եմ տունն ի, կեօ կասի, ես իկեր եմ տանեմ. էնի ուր խապրի տէրն ի, կեօ ես կուով տանեմ:

Սասց. — Ահս ընի իմ շանին, յետ ինոր, որ էն չընի, ես ձի տըսպանեմ, բո՛ւ մարդու չըմ առնի, յիւրիչ բարձի գլօխ չընեմ:

Պառաւ զըռաւ, էկաւ տուն, խապար խառ:

Առաւտուն էլաւ թաքաւորի տղէն, ուր ձիուն ռուսնակ քիւ- մար իտու, Աստըծու անուն իտու. խեծաւ, գնաց մէյսան, ասաց. — Թաքաւորին ասէք, եան եմ թաքուհին, եան կուիւ, եան ես ինոր քաղքի մէկ կող տաւիրեմ:

Գնացին, խապար տուին. ծընայ փայլեկան իկե, ծընայ կասի: Թաքաւոր ասաց. — Սե դե խանէք, ինոր կուիւ անի:

Գնացին սե դե թողին: Էկաւ, կայնաւ խըտ կշտին, ասաց. — Հայ փայլեկան, դիւ ես, կուիւ կուղես: — Խո, ասաց:

Սե դե ասաց. — Իջի, մեր սիրտ զանենք յիրար. թի Աստուած տուեց ձի տուեց, թի քե՛ քե:

Թաքաւոր ասաց. — Չէ, դիւ քիւ ձեռ տու ձի, բարե մը տանք մէկմէկու, նո՛ր կիջնինք:

Սե դե ձեռ տուեց, թաքաւոր մէ քօփուզ զանեց ինոր վիզ, ինոր վիզ թուաւ, գնաց Իդիր կայնաւ:

Գնացին, խապար տարան թաքաւորին. էմէլ թաքաւոր ասաց. — Եան եմ թաքուհին, եան կուիւ կուղես, եան տը զանեմ, թաքաւորի քաղքի մէկ կող տաւիրեմ:

Ասաց. — Սիւտակ դե բիրէք կուիւ:

Սիւտակ դե առան, էկան:

Դե ջոջ էր ծնայ, ինչոր Սըսայ սար գնեն Մասըսայ ստրին. էկաւ մէյսան, ասաց. — Տղայ, դիւ ես, կուիւ կուղես:

Ասաց. — Խո:

— Իջի վեր, մե սիրտ տանք յիրար, եան Աստուած քե տուեց ...

— Չէ, քեո ձեռ տու, բարե տանք, նոր կիջնենք ...

Սիւտակ դե իջաւ ուր ձեռ տուեց ... Թաքաւոր մէկ ուր համսով զանեց, սիւտակ դիւու լեռ ընկեաւ դայ, դիւս գնաց յերեւոտն կայնաւ:

Ջուաբ գնաց թաքաւորին. — «Սիւտակ դեն էլ սպանեց»:

Թաքաւորի տղէն էլաւ, գնաց. առաւտուն էմէլ էկաւ, կայնաւ մէյսան, ասաց. — Չեր թաքաւորին ասէք, եան եմ թաքուհին, եան կուիւ, եան թաքաւորի քաղք տաւիրեմ:

Էլան, գնացին, թաքաւորին ասին:

Ասաց. — Կարմիր դե բիրէք ինոր կուիւ:

Գնացին, բիրին, կայնաւ խըտ կշտին, ասաց. — Դիւ ես, կուիւ կուղես: — Խո, ասաց:

— Իջի վեր, մե սիրտ տանք յիրար ...

Ասաց. — Չէ, ձեռ տուր, բարե տանք, նո՛ր:

Էլաւ, ձեռ տուեց. որ ձեռ տուեց՝ մէկ կետոզ զանեց կարմիր դեռ քեամակ, վիզ գնաց, Աշտարակ կայնաւ:

Գնացին, ասին թաքաւորին ըսկուն, ըսկուն:

Առաւտուն էկաւ, կայնաւ մէյսան, ասաց. — Եան եմ թաքուհին, եան կուիւ, եան թաքաւորի քաղք տաւիրեմ:

Ասաց. — Գնացէք, ասէք էն փայլեկանին, քառսուն օր ձի մօհլաք տայ, թի որ ես մէկ փայլեկան բիրիցի էկայ, չմօնացուց էնի, ես ինոր թաքուհին տը տամ:

— Խո, ասաց: Քառսուն օր մօհուլ տուեց, էկաւ, սլաուաւ տուն նստաւ:

Թաքաւոր էրկու-իրեք մարդ իսկեց կան տալ, որ փայլեկան մը բիրին, դեան: Մէկ ինոր մարդ ասաց. — Մարդ չկայ զէն մարդ դնի գետին, քաղքի մէջ մէկ մարդ կայ:

— Դո՛ր ի, ասաց. գնացէք, բիրէք:

Գնացին, բիրին թաքաւորի իրես. թաքաւոր ասաց. — Քիւ ա- նուն ի՛չ ի: — Եմ անուն Դալու Համգա ի, ասաց:

— Դիւ կաննա էսա փայլեկանին սպանես:

Ասաց. — Թաքաւոր ապրած, կանամ, ամա ընձի քառսուն օր մօհուլ տուր. ես ծնեմ անծի մէջ, օչլի մէջ, քառսուն օխչար զի- նիս ձը խըմայ, ուտեմ, գետեմ ես դաշուան հարաւեարին, որ ես ինոր յաղթեմ:

Քառսուն օր դրեց մըչ մէ յօդի, օրը մէկ օխչար մորթեց, կերաւ, էկաւ վըր ուր դաշուան հարաւեարին:

Քառսուն օր քրըմաւ, էկաւ, խեծաւ ուր ձին, գնաց մէյսան: Քաղք բիրուն կայնան քամաւա ինոնց:

Դալու Համգէն ասաց. — Ա՛յ մարդ, իջի ցած, ես, դիւ մեր սիրտ զանենք մէմէկու, եան Աստուած տայ ձի, եան քե:

Թաքաւորի տղէն ասաց. — Քեո ձեռ տու, ձի. բարե մը տանք մէմէկու:

Խեղով էր Դալու Համգէն:

— Չէ, ասաց. կուու մէջ մարդ բարե չտայ մէմէկու:

— Պա մենք ի՛նչիս կուիւ անենք:

— Վըր ձիու քեամկին մէմէկ կետոզով զանենք:

Էլան, չու յէվարին մէմէկի զանին. էն ինոր զանեց, էն ինոր- էն ինոր զանեց, էն ինոր: Չու յէվարին կուուան:

Ինոնց կետոզեր յիրար կը դպնը, կրակ մէջքերաց կը թունը մէմէկից, չըզ մէ խաւու ձու. կը թունը, դարի վեր կեհայ էրկինք- խրիչտակներ կասեն. — Կրակ չդպնը, մե ոտքեր իրիցի:

Էլաւ էկաւ վրէնքեր, էլան գնացին:

Դալու Համգէն գնաց թաքաւորին կօնախ. թաքաւոր պառ- ւու տուն:

Պառուուն ասաց. — Էս օր չուն շանորդիմ ընձի ըուաս էկաւ, էն եմ վիզ տը կուուէ, ես ինոր ճար չըմ տանի:

Պառաւ ասաց. — Թող, դճա՛, կնիկ աչխրէս կտուէ՛, քիւ վիզ տաս կտուել մէկ կնիկ ապո՛ր:

Ասաց. — Պառաւ, ես ահա եմ արե, յետ ինոր ես կնիկ չըմ բիրի. եմ գլօխ դնեմ ինոր ուղո՛ւր:

Ասաց. — Դիւ գիտես:

Առաւտուն էմէլ էրկուս խըտրաց էկան, կայնան մեյճան, ասաց. — Ի՞նչիս կուռինք:

Ասաց. — Էսոր իջնենք վեր, մե սիրտ տանք յիրար:

Իջան վեր, սրաքեր տուին յիրար:

Դալու Համգէն ինոր կը պեղի, կը տանի դեղ Դգդիր, Դալու Ահմէտ ինոր կը պեղի կը տանի չու Աչտարակ:

Կէսօրին Դալու Համգէն Դալու Ահմէտին վիրուց, ամեց գետին. որ ամեց դեռին՝ ուր չօք դանեց թաքաւորի սրտին. թաքաւոր ան արաւ, ասաց. — Ա՛խ Դալու Համգա, դիւ դ՞ո՛ր իս, էսա թաքաւոր եմ վիզ ար կտուի, քիւ երիս չտըսած ար մեռնիմ:

Ասաց. — Դիւ Դալու Համգէն ինչիս կը ճանչնաս:

Ասաց. — Ես, Դալու Համգէն մէկ թաքաւորի տղայ ենք:

Ուր չօք վիրուց, ասաց. — Ես Դալու Համգէն եմ. Ենտեղ յիրար ճանչցան, յիրարու պաշեցին:

Թաքաւոր կանչեց. — Դալու Համգա, ինոր վիզ մի կտուի, չու ես դեամ. աուց պուտ մի էրիւն խմեմ, որ եմ սիրտ խովնայ:

— Արե՛, ես վիզ չըմ կտուի:

Թաքաւոր կըռոււ, ձեռքեր բացեց, ասաց, — Զան որ եմ ձեռլցուի, որ ես էրիւն խմեմ:

Դալու Համգէն էլ շղանեց Դալու Ահմէտին, թրով դանեց, թաքաւորի գլօխ կտուեց:

Ուր աղբոր իրեքքեր պագեց, կայնեցուց:

Էդա խալիս յըմն փախան:

Դալու Համգէն կանչեց. — Մարդ, մի վախէք, մենք ձե ձեռք չընք խտայ:

Ասաց Դալու Ահմէտ. — Են պառաւ ձի շանց տուէք, ինչ թաքուհին բիրի:

Մէկ ասաց. — Կեօ, պառաւ իլէ դիզի գլօխ ձե քամաւա կանի:

Դալու Ահմէտ տուն մէ բեռ փէտ բիրեց, դրեց դիզի բեւոր, կրակ թողեց դեզ. պառաւ մըչ դիզին իրեցեց:

Գնաց ուր թաքուհին խանեց դիւս:

Մէկիւ թաքաւորի թաքուհին էլ խանեց, պաակեց վըր Դալու Համգին:

Ելան վեր, ինոնց թաքուհիք առան, յետ դարձան. դնացին

դըխ ինոնց խորովածքեր, իչ օր յանէջի օր գրած կրակի վրէն, մէկ կող էփած ի:

Ինոնց խորովածքեր շինին, կերան խման, խառան ինոնց մեւզին:

Աստուած քի անքայուցին տայ:

10 ԱՐԱԲԱԼԱՔ

Ոգմեցոց բարաւոյ քրդական վեպ *

Արարստանայ շէլամ՝ կեդի, էդ շէլը մէկ քեֆէ (հիւրատուն) կը շինէ խեւարի խամար: Առխանանուն, փոննուն կըսըն.

— Ինչ մարդ դեայ ըս տե, խաց ուտայ, մէկ օսկի էլ տաս անիւ: Թէ շամ՝ քիչ, Աստուած գինայ, մէկ աւուր մէկ դաւրէչմ կուգեայ, էդ տեղ խաց կտան ուտայ, մէկ օսկի էլ փարայ կտան:

Իրեք անգամ էրի, կերաւ, իրեք օսկը էլ փարայ առըց:

Վերջն էդ մարդն էսաց. — Դաւրէչ, չը՞ս ամչընաս:

Էսաց. — Ընչի՛:

Էսաց. — Օրական խարիր քե պէս կերթան. խարիր կուգեան, ամեն մէկ իրեք անգամ խաց ուտին, ամին մէկ իրեք՝ անգամ էլ ուսկը առնըն:

Էսաց. — Որ էնպէս ա, քու գլօխ ուտը քու խանցն էլ, քու ուսկըն էլ, ան, դիւ կասըս՝ Աբարալաքն էս:

Էսաց. — Աբարալաք ինչ անսակ մարդ մի:

— Էնպէս մարդի ի, ինչ մարդ անիւ տուն էրթայ, անիւ մրագն կը կատարի:

Ֆրննին էլաւ, գինաց շէխու մօտ, շէլըն էսաց.

— Դաւրէչմ՝ իրեք փաւրի, էկըր, իրեք դան խաց ի կերի, իրեք ուսկը առը, քի կասը՝ «Աստուած ուր տուն աւըրը, ուր խեյրարլաման դիւ կասըս Աբարալաքն ես»:

Էսաց. — Կեայէք, էն մարդ բունէք, բերէք, կայէք, թըլէք էդ կոնի տակ:

* Ասած է Յովսէփ Մհ. Յովհաննէսեան:

հոաց.—Շէխ, ընձը վի կը կապըս:

հոաց.—Անիւ խամար, մարդ քընց զի աղէկ կայ:

հոաց.—Ընչի՞ չկայ, քու աղէկութեն ինչ ի:

հոաց.—Անիւ աղէկութեն, փայ ուղիս, փայ կայ, ուչխար ուզըս՝ ուչխար կայ. ձը ուզըս, ձը տայ, քիւ լուութեն ինչ ի, էկերիս զքի մարդ կասըս:

—Դիւ էսատեղ կապած պտի մնաս, ես տի էրթամ էն մարդիւ մօտ, քննիմ թէ ըշտակ ի, դիւ կաղատուըս, թէ սութ էլար, քիւ վըզ կը կտրիմ:

Դուրէշ մնաց էն տեղ կապուած, զինք էլաւ, զինաց. թա օրմ, թա տաս օր էն մարդու տուն խասու. տեսու վուր ան մարդ, ուր կնըկ դառնապու վերէն նստած՝ էսաց շէխուն:

—Քարով էկար, նստի: Նստու:

հոաց.—Խաց բերէք էսա մարդուն:

հոաց.—Ոչ ես քիւ խաց կուտեմ, ոչ քիւ ջիւր կը լամեմ: Թէ դիւ իմ մեզ կատարեցըր, քիւ խացն էլ կուտեմ. ջիւրն էլ կը լամիմ, թա չկատարեցըր, ոչ քիւ խաց՝ ոչ քիւ ջիւր:

հոաց.—Քիւ մեզն ինչ ի:

—Իմ մեզ կամչնամ, չքմ կերի սուր:

հոաց.—Ընչի չիս կերի, շատ պտի ըսըս՝ քիւ կնըկ տու ըձը:

հոաց.—Իմ դարդն էլ էդա ի:

Կնկեան էսաց.—Կնը՛կ, զքի տուը ան մարդիւն:

Խաց կիրան. էրկուս խըտ իրարու խիծան, դեացըն.

Թա օրմ՝ թա տաս դեացըն. տուն խասան:

էսա մարդ դաւըշըն արձկեց, անիւ պախտիւն էլ անիւ քեճով տուեց, էսաց.—Դուրըշ բարձ, գնձ բարով, խաղար բարով:

էդա կնըկն էլ տարու, մէկ տան մէջ զրեց, էսաց.

—Դիւ իմ մէր, իմ քիւրն էս, նստի, քի խամար կի լամը, քեճ էրայ:

Մինք դառնանք Աբարալաքը վրէն:

Աբարալաք, ուր խրօխպէրնիւր կը կուուըն, կը զարկայ, տաս մարդ կապանայ, յետը կը միզը կասը.

—Բօտ ի, էսա խուղէն էրթամ:

Ձուր կիլեար կառնը. կը քեաշուը էդ խուղէն:

Ո՛ր տեղ որ գինաց, էկըն առջև, ասըն.

—Մի խուղից գինն, մինք իսարայ չինք էնը, դիւ ընչի էկըր:

—Ձանըմ, էսաց. իս ճանփուրթ մարդ իմ, կընցնիմ:

Տասնըխընդ օր էդ տեսակ գինաց. մէկ սարըմ ըռաս էկաւ. ոչ գեղ ի. ոչ շէկըլի ի, ոչ մալ կայ, ասըն.

—Մինք էսա տեղ կուանը մի բռնինը:

Իրիք օր էդա տեղ մնացըն, մարդ անիւնց վերէն խուսացող չէդան:

Դարձան ուրանը մեղեցըն, ասըցըն.

—էս սարը էս տեղ միզի տեղ էղնը. էրի, տաս խու ժողուինք տանըր էսա մարդիւն, կեղնը օր մեղի տեղ այց էս սարը:

էրան տասը խուն առըն, գիացըն Շէխը Աբարանը կօնը տակ: բարև տուեցըն, էն էլ բարև ասըց,

—Աբարալաք, էսաց, խեք ընը.

հոաց.—Սեք ի, էս սարը ես, իմ խրօխպէրնիւր կուուանը, քինէ հեշվը կինիմ, ըս տարը մէջ տեղմ տաս:

Շէխն էլ էսաց.—Քարով, խաղար բարով, սրտեղ կուզըս, տան:

հոաց.—Դիւ կամբին ի. սրտեղ դիւ ընդունիս, ես էն տեղ կը նայիմ:

Շէխու մարդիւր ասըն.—Չէ, քիւ կամբըն ի, մարդմ տու անիւ, որ տուեցիր, թուղ դեան յաղըրի մէկ եան անիւնք դնըն, մէկ եան էլ մինք ինք. դուսմըն աէր ի. էդու որ անիւ նայարեիր էկան անիւ վերէն կուը. մինքն էլ անիւնց արտու անինք:

Աբարալաք զինաց էն սարը գլխօխ, ուր կիեար բարձեց. էկաւ, յաղըրի մէկ եան կօնիւր դարկըցըն:

Շէխուն մէ տղայ կար. էդ տղէն էլ Շէխուն խեա կերթէր Աբարալաքը տուն. Աբարալաքն էլ տղըն չամիչ, ընկիւզ, թուզ, խորմա, կիտէր, տղէն էլ սուվուր էր, ամին դեախ կերթէր:

Շէխուն կայ օխտը աղջիկ, էն մէկ տղան ի:

Աբարալաքըն էլ կայ հօթ տղայ.

Մէկ ժամանակմ ընցաւ, յուուըր մէկ տղէն կերթայ էն տեղ, կը մթնը, կը բիրըն էդա տղըն Ծեկը (եմիչ) կուտան, տղէն կը մնա էն տեղ. Աբարալաքու ախպէր կէս զշիրըն կուղեայ. կերթայ ուր տեղաց վերէն, կը խի մէկ մարդ կայ էդ տեղ, մութ, քեաշէ խանչալ, կը զարկըյ, տղըն կապանայ: Աղիւ կնըկ կը յիմնայ, կասը.

—Տեսէր, էդա ինչ արեցըր, դու Շէխու տղէն սպանըցըր:

Կըսը.—Ինչ Շէխու տղայ:

Կըսը.—Շէխու տղէն էկաւ էս տեղ, եմիտ, բան տուեցընք, մութն էլիւր էր, չթուղըցընք, սարկաւ էս տեղ, մկայ լուսուն մինք անիւ խօր նուլար ար տանը, սր էն տեսակն ի, անիւ ջանդակ տանընք, կուրըցընք:

Աբարալաք էսաց.—Չէ, իս ունըմ հօթ տղայ, եօթն էլ կուտամ անիւ ուղուըն անիւ տղըն ջանդակ չիմ կուրըցընմ:

Մնաց լուսուն, Շէխն էսաց.—Նամա՛ն, իմ տղէն կուրիտեր տ:

Աբարալաք էսաց.—Միւր տուն ի:

—Իէ, էսաց. էրթանք բիրընը:

Էսաց.—Ինչ բիրընք, իմ ախպեր դարկէ, սպանէ.

Էսաց.—Սպաննէ, սպաննէ, բիրէք, իմ տղը ջանդակ տանըմ վերցըցիմ:

Տղը ջանցակ տարաւ, վերցըցեց:

Աբարալաք մեղեց.—Չանըմ, մինք ինչ կնինք, մարդիւ տղէն էլ սպանըցընք . . . մինք էսա տեղէն բառնանք, էլմէլ էրթանք էն սարը դիտիս, չըմքի դուռմնութեն ընկեաւ մի մէջ:

Մէ քեանըմ օր մնաց. Շէխի Աբարան ճանկից մատ Աբարալաք, էսաց.—Քիւ մեծ աղէն ճանկից գետայ, ես սպանիմ. իմ սըրտն էլ դրննանայ: Էլաւ մեծ աղէն ճանկից:

Շէխը Աբարան տարաւ միծ աղէն պսակից վըր ուր աղջկան:

Մէկ քեանը օր էլ մնաց, մէկէլ աղէն ուզըց, տըսպանը:

Էն էլ տարաւ, մէկէլ ախչիկ պսակըց վըր անիւ:

Եօթ տղայ էր, եօթն էլ ախչիկ, ախչիկներ պսակից եօթ տղէկներու վրէն, մէմէկ մէ տուն դրեց:

Համա Աբարալաք գիտը թէ աղէկներ կը տանը, կսպանը:

Աուուր մէկ Շէխու Աբարան էսաց.

—Թուղ Աբարալաքն էլ գետայ, իս սպանըմ, իմ սըրտ խուլնայ:

Աբարալաքն էլ գինաց, մտաւ անիւ կոնի տակ, բարե տուեց, բարե աուըց, Շէխը Աբարան էսաց.

—Աբարալաք, գիտիս, ընչի իմ ճամբիս դեխ քի:

Էսաց.—Ընչի ես ճամբիս:

Էսաց.—Քիւ եօթ տղէկներն էլ սպանիրիմ, գինա էսա տուն. մէկ քամաւա էրայ. արե, քիզի էլ կսպանըմ.

Էսաց.—Քիւ ջան սաղ մնայ, ընձի էլ սպանըս, ախպերս էլ սպանըս մինք քիւ աղիկութունից հալա դիւս չընք ի կե:

Գինաց էն տուն, տըսաւ.—Ինչ. ուր կնըկ. նուր քազասան յիրար ճանցցան, մէկ սանաք յետացան:

Շէխն էկաւ, էսաց.—Աբարալաք. արե, նստը էսա տեղ:

Նստան:

Շէխ էլաւ, խոլամ մը կանչից, էսաց.

—Ասիւ եօթ տղէկներ կը կանչիս թը գետն իմ աղջկներու խետ: Ամենըն բիրըց անտե, կայնան.

Էսաց.—Աբարալաք, էսի քիւ եօթ տղէկներ.

Էսաց.—Ին, էգի իմ տղէկներ:

Էսաց.—Աբարալաք, էսի իմ եօթ ախչիկներ, պսակ էըը վար քիւ տղէկներաց:

Էսաց.—Խն, էսի իմ խարսներ:

Էսաց.—Աբարալաք, էսի էլ քիւ կնըկ. կը ճանչնամ:

Էսաց.—Խն, էս էլ իմ կնըկ:

Էսաց.—Քիւ տղէկներ, քիւ խարսներ, քիւ կնըկ. առ, գինա. քի խամար խնդն, ուրախութուն էրայ:

Աբարալաք աուըց, գինաց, նոր քազասան էն տեղ էկան վեր իրարու, ուրախացան:

Մէկ ժամանակմ մնաց Աբարալաք, ուր խրօխպէրներ էկան թըխ յինք:

Աբարալաք կայնաւ կուր. քսան մարդ սպանից, տասն էլ ըընից կասըց:

Խրօխպէրներ լաւա արըցըն, սարըցըն.

—Աբարալաք, խնդրինք քիզի. գմի թուղ, էրթանք էրկըր:

Թուղ խուու, էլան գեացըն, ինչ օր տըսան, դսա արեցըն:

Նուր քազասան էկան թեխ Աբարալաք, սարըցըն.

—Գիւ մի մեծնիս, ինչքան մարդ միզնէ սպանըցըր, քիզի բախչեցընք, ինչքան քալան թուլան արըր, քի բախչեցընք. քինէ կաղաչինք, դիւ դետա, էրթանք մե էրկըր, էլի դիւ միծ, միք փոքը:

Էլան, բարձըն, գինացին ուրինց երկըր:

Աբարալաք էղու անիւնց աղէն:

11

Հ Ա Ս Ա Մ Ա Ղ Ա

Մական Գինեկաց գիւղի բարբառով *

Հասամ աղէն էլաւ իրի Աբարկերտու բիրդ. աղջիկ տըսաւ, ուր խամար ուզեց. գնաց: Բոշու կնիկն էլ էնու սիրողն էր, էգա Հասամ աղէն էդա կնիկան էսաց.—Իս գինացիր իմ Աբարկերտու բիրդ. աղջիկմ ան տեղ տըսիր իմ, ձը խամար ուզիրիմ. իկիրիմ, գնան ան տեղ, տեա, կը խաւնիս, չըս խաւնիս:

* Պատմած է Հասիկ Խէպոյեան եղբերէն:

Բօշու կնիկ իլաւ, գինաց, աղջիկ արտաւ Աղջկան դարգ էլ խօրեա ախշիկ չիկայ: Եդ կնիկն էլ մտածեց.— Հասամ աղէն էս աղջիկ տանէ, էլ իմ խեա չի խօսայ: Ելաւ, գինաց Հասամ աղի մօտ, էսաց.— Հասամ աղա, գիւ չամչըցար, գիւ գինացըր էն գէշ կնըկ քի խամար ուղիցիր:

Եսաց.— Ուղիւր իմ, որ ան տեսակն ի. էլ իս փօշման չըմ էդնը. աղբօրս խամար կը բիրիմ:

Հասամ աղէն էլաւ, դուր մարգիր ժողուից, գինաց Սբարկերտու բիրդ, աղջիկ տը բիրի աղբօր խամար:

Գշիւր մնացըն ան տե, առաւտուն զխարս առըն, ընկեան ճանրախ, գինացըն: Գինացըն խասան օվայ— գաշտ: Հասամ աղէն դրաւախ վրէն էր խիծէ, աղջիկն էլ Ջուանու վրէն: Հասամ աղէն ձին խաղցուց. Ջուվանին էլ իտե գինաց, քեամին իլաւ. դքեօզ տարաւ գեն: Հասամ աղէն գարձաւ, իրըչըց յետուց, արսաւ խարսի իրիւ բաց. սը տըսաւ, ծուաւ: Եոր փօշվնաւ թէ ընչի ուր խամար չի բիրից: Առից խաղ տանէ:

—Մը մըննարս, սեւս մըննարս ըծ- Ես երախտապարտ եմ հարիւր ե-
վի ըծի վի ըաշայե բախտապարտ այն քամիէն այն
փորձանքէն:

Բայե խըրար յեսայ ըիս փօշիյա Լէյ- Չարկից աւեր քամին գեղանի Լէյ-
շախանի դաշալ լախանի քօզքին.

Աւերը ըիս սըսար զիս աշայե, Չգեց (ձիու) թամքի կազմուածքի
վրան.

Չարե Հասամ աղայե դաշալ վե փար. Գեղեցիկ Հասամ աղայի աչը ընկաւ.
Գին ու սալսա ըիս փարը ըիս սեար Սիրահարեցաւ, իրի յիմար աշ-
դընկայի: խար ընկաւ:

Աղջիկ կը կարծէր թէ իրեն համար կը սանեն. երբոր
կը յիմարանայ, կը հասկանայ զնջուի ախշկան խարդախութիւնը
կասէ.

—Հասօ, դիս դիմի, աղբը սեարի —Հասօ, դու խենթ ես. գլուխդ
դեա ըիսննեա. խելք չկայ.

Գէշ կեայի մըրբարս ըիս դեասղըկայ Գու գնչուի աղջիկ—սիրեկանիդ
խա դըն շանիկի, շա խոզիկի ձեռքով կը ճանբես ինձի ուզող:
Ետի փրիս ըիս, չի խէշիյա կրան ա Հարսնեուր որ կերեայ, ինչ մի
ճանտը (մեծ) հարսնեուր է.

1 Վէպս ամբողջովին երգով կասուի. աստ արածուած է, ամեն ասող իրմէ մի բան կասէ. կուէյցնէ. որով երէ մամբամամուրեան մեքնեք. աս ընդարձակ կը լինի: Այնչափ գեղեցիկ եղանակով կերգեն որ ասերը կարասուէն:

Հարըն ա հաւաներն, Հրվան, Փրվան, Եկան հաւարուեցան, Հուան ու
Փրվան,

Բարսը ըիսն հար սե կուէսան: Յրուեցան երեք գիւղի վրայ:

Հասամ աղայի եղբայրը լսեց հարսանիքի խանդարուիլը, եկաւ. տեսաւ եղբայրը խենթացեր է.— Սղբայր. դու Լէյլախանի համար ինչու կը ծուխ. բերինք, թող քեզ լինի: Հասամ աղան ես կասէ.— Ի նախնեաց ով տեսած է փեսան հարսանիք գնացած լինի մեր օրէնքի մէջ:

Աղջիկն ես երբ տեսաւ Հասամ աղան, սիրահարեցաւ, սկսաւ
երգել:

—Ռմիխարս մըն Հասամ աղա եիս Ես կը կարծէի Հասամ աղէն նոր
գաւա ըիս սեար փարսիկա. փէսայ էր աթոռի վրայ,

Գանանի դը նեուր սարսարի խէշի- Այժմ կը նայիմ հարսնեուրեցու
չեանէ: դու ին է:

Հասն, դիս մա շա դընկաւ, ըսազ Հասն, դու մի ընկնիր աշխար.
կուշիկակ հարիւ. ծաղկազարդ բուրաստան մը ունիմ.

Թարդեա գուշ ու սե ա Ամբողջովին ծաղկուեք ու լանձոր է.
Ունաւ Սրայերդա դը սան, դիս դը Արի Սբարկերտ, քեզ կը յանձնեմ,

գանի շա ու ըծիս: դու գիտես վերջը:
—Ռազ կուշիկակ դիս դը ըծի հա- Այն ծաղկանց այդին որ դու կա-
րան երես ես մըն ես դիս. սէլը մինչև հիմայ իմը չէր.

Վորս մը ես կրի ըծ իտ ըծիս Ես օգուա չունեմ այս օրէն վերջ
կեսայ Սրայերդե. Սբարկերտու բերդէն.

Գիս ալս ըիս ըսազ ըսազ խոլս: Գու չէն մնաս ծառով, այդեստա-
նով մէկ տեղ.

—Եսվ չի դեօր ըիս դիս շանդը ըիս Այն ինչ անդին քար էր դէպի մեր
դարսեկ մալս կողմ ճամբեցիր:

—Գիս գուշ, գուշկ սորի բըշիլը — վի Գու վարդ մը. կարմիր վարդ մը,
նազը կայ դը ժօրի. բացուեցար վերի այդին

Հարան երես դիս փեամիլի ըմբիկս մըն Մինչև այն Հասունանաս կացնի
սեիյա կոսե շա դը բօրի: Աստուծոյ որբիս կեանքը:

Գիս գիւշ, գուշկ բըւմի. Գու վարդ ես, բացուած վարդ մը.
Ես գանըմ, դիս ասխարայի եսան Չգիտեմ, դու յայտնի թէ գաղտ-
նի (ես),

Գիս խուսընայ Հասամ աղայե դաշալ Գու գեղեցիկ Հասամ աղայի եշա-
րիս. նաճն ես:

Ես բարսե միս Երեմի: Միւր Երեմի յարմար չես:
—Բեամըկայ դեա դըրեմ ըսաննայ, Հասակդ կասեմ համեմ, մզկիթնե-
րու ասաջ (բուսած) համեմ,

—Բեամըկայ դեա դըրեմ ըսաննայ, Հասակդ կասեմ համեմ, մզկիթնե-
րու ասաջ (բուսած) համեմ,

Աճախիք զը միևեա զուշունկ օրտեման: Քո շորորալ կը նմանի կուսնկի ու
 բառերու.
 Դիւ խո հնարաւ կեամ բաշ կեշխանի Սրտովս կարգելեմ զեղեցիկ Աէյ-
 դաշաշ. լախանէն յետոյ.
 Ախաշ քըննա նաշ բու հարմարան: Ամենեկն կնիկներու մէջ չմտնեմ:
 — Բեամերկայ դեա զըքեմ զը միևեա — Հասակիկդ կասեմ, կը նմանի
 ըռահանեկի քեաւ սեռան. վանքերու առաջի համեմ (բոյսի) մը.
 Ավրոե դեա զը միևեա բըրնկ ու շերան Քո շարժում կը նմանի ընձի ու
 առիւծներու.
 Բաշ Հասան աղայի դաշաշ զըքիս հա- Գեղեցիկ Հասամ աղայէն յետոյ
 րան կեամ. սրտով կարգելեմ.
 Ախաւ նա շաւ բու մերան. Բնաւ մարդերու հետ չի խօսիմ.
 Դիւ գուշի դեա քեկն նակեամ. Գու վարդ (եա), քեզ չեմ հոտոտէր,
 Դիւ սեռի, դեամ ժե նակեամ. Դու լնձոր (եա), չեմ քաղեր (քեզ).
 Դիւ շեքերի, դեա դեամ նակեամ Գու շաքար ես, քո համ չեմ առ-
 ներ.
 Հագար դիւ զըքե աղիդե մըն քիւ Հագար դու իմ սրտի սիրածը լինիս,
 Էնդ բաւար նակեամ: Ես հաւատ չեմ ընծայելի:
 — Բեամերկայ դեա զըքեմ ըռահանա. — Հասակիկդ կասեմ համեմի.
 Ըռահանակե չե հեշիկն. Կանանչ համեմի մը.
 Հար սե քակե դեա հարմիրչեա. Քո երեք ծամ մետաքսէ.
 Բաժաւը Զին ու Մաշին քաղաքինէ. Զին ու Մաշին քաղաքինէ.
 Հա չի կեանի դեա քըռանիւսեա Սյն ինչ մարդ քեզ համբուրէ.
 Էդի բաւ մըրիւնալի քիւնիւնեա: Այլ ես երբէք նորա մահ չկայ:
 Բեամերկա դեա զըքեմ ըռահանա Հասակդ, կասեմ, համեմի (Էման).
 Ըռահանակի ալ դայի, Զրի մօտ ըռուած համեմի.
 Հար սե քակե դեա զը միևեա. Քո երեք ծամեր կը նմանի.
 Արմիրչե քաժառե Մըքրե քերքիի Մըքրայ քաղաքի կոկուած մե-
 դայի ասպրի.
 Կեայի, կուշ մաշ քարե. Աղջիկ, աւեր հօր տուն.
 Մը քամիւսանակի ըժդեա խօսիւ քիւ. Ես քեզմէ համբոյր մը ուզեցի.
 Դիւ հար նա դայի: Գու վերջապէս չտուիր:
 Բեամերկայ դեա, զըքեմ, ըռահանա. Քո հասակդ, կասեմ, համեմ է.
 Ըռահանակի շոտ քաւայի Փափու թուած սիրուն համեմի մը.
 Դեա սիւնի սիևեա զեռիևեա Քո սիրտ սակեայ սեղանի
 Մամրջ միևեանի ժանժիրի: Ստիքներդ յախճապակեայ բա-
 ժակի.
 Տու աղիւս սերի դայիա Նրկու յակիթ ծայրին հաստատ-
 ուած.
 Դըքրկա մըն աւօաշա խոե ալա Խեղճիս վախը Ատուծմէ այս է.

Դեռիչե խարիրան քը մըքրե, քը միևեա Օտար գուներ կը մեռնեմ, կը մնայ
 քաւ նա դայի անձեռ տալ:
 Հը քաղիւսիկ հարիւր քե քաղիւսեայ. Ինձ այգի մը կայ առանց այգեպանի
 Սըխերկա վի գուշը մեշվու կուի ըռա-
 հանա
 Հակեա դիւ դեռմանի շարայի զը քուի. Եթէ գու գիշերուան գեղը կը
 հարցնես.
 Խոնդակի ջորե շար մարկանա: Քո գոյգ քըդնած ծծերդ են:
 Մը քաղիւսիկ հարիւր նիւ ալա կեամ. Ինձ այգի մը կայ, նոր չէնցնեմ.
 Սըխերկան չեամ մեշվրկան չե սիւ աւ. Զեմարան կը զարնեմ, բարունակը
 կեամ. երկու տակ կանեմ.
 Բաշ քեամերկայ քըքե ալ վի գուն-
 դիկ մըքար նակեան
 Դիւ աւմիկի աւմիկեակ դարի.
 Դեա չե շափրե դըդան մըքարի: Քո չիթունը շաքար, առամը մար-
 գարիւ,
 Գուսե մըն սեաւ մաշ դե հարիւ. Իմ գիւղը հարիւր տուն կար,
 Մըն հալ սեաւ մաշան դեա քըքարու. Ես այդ հարիւր տնէն քեզ ինձ
 նի քըքարի: համար ընտրեցի
 Բեամերկա դեա, զըքեմ, ըռահանայ. Հասակդ, կըքեմ համեմ է, համեմ
 ըռահանակի դան մամա, մը գետի մօտ,
 Բա կու խըքար չեայ քիւ սըքար ու ժամով ու ժամանակով զարկեց
 դամա աւեր քամին.
 Կեայի, կուշ մաշ քարե, հազ քըք Աղջիկ, աւեր հօր տուն, ես փոքր
 քիւմ էի,
 Դեա մը կիւքսի քեաւ վի խամի. Գու գիւս ձգեցիր այս մտառան-
 ջութեան առաջ.
 Մըն դուսըկե հարիւ ժը խազայեկ սըքե, Ինձ սիրունի մը կար նման հա-
 մեադ եղեկին.
 Էժ քեամերկայ խո քաւամ ե. Իր հասակը չափաւոր է:
 Դե մարկայ խո սուգուշ ե Իր ծծերը վարդակարմիր,
 Դի քըքա շաւան քաւ շաւ քաւայի ե, Ամբողջ գիշեր աչքեր չեն տեսնիր,
 այլ ինչ օգուտ են,
 Ռաւիւսան դանիւքար դըքե: Համբոյրը սրտի բուականութիւն:
 Սըքիւս, սըքե նա քե, Առաւօտ է, առաւօտ չէ.
 Դըքու դեռի մարկան դեա ինքնեկ Ոսկիգոյն ծծերդ կախ ընկած են,
 մուքրա վանքի.
 Հուքայի, հուսափեաւ մըքրե, Վարպեա ու արհեստաւոր մեռած
 են.
 Եակրո նի չիւեր ոսրի Աչակերպը նոր ելած է (տեղը
 ընած).

Սրբեայ, մը յի բեամերկայ բըրնոյ Առաւօտ էր, էս տեսայ իր բարձր
 խո ղը խամրանոյ. հասակը, որ կը հազուէր,
 Լուսա փուշիյ դոր ֆուսա Միւսրիյի ղը Մուսուլի սե փուշին գտակի շուր-
 ժարը շանկ.
 ջը փաթաթած էր,
 Կեյի, կուշ մաշ բարե, սիւն ղադարե Աղջիկ, աւեր հօր տուն. յանցանքս
 մըն չի բիւ. ու վնասս ինչ էր.
 Դեա եարի նիս մըն շամբրանոյ. Դու այն սիրուհին էիր, որ ար-
 ձակեցիր.
 Սրբեայ չախա մասաշխարի, Առաւօտ է, գործի ժամանակ.
 Բեամերկայ բըրնոյ խամրի. Բարձր հասակը հազուեցաւ.
 Հիւրքի-հիւրքի մաշիյա խանիյե դա- Մանր-մանր շորորայ հանգիսա-
 վար է. տան.
 Դըրե մըն աւսալա խոսե գուշ գովան Աստուծոյ թշուառիս սիրտը խոր
 բիւ. խոց էր.
 Ակրտ խոսե նիւ վա կըրքը Աստուծոյ կրակը նոր բացուեցաւ,
 Բեամերկայ բըրնոյ բորի, Բարձր հասակը անցաւ.
 Սըլաւ սըլաւ ա խոսե բիւ նա դայի. Բարեն ու Աստուծոյ բարին չտուեց.
 Նա գանըն խիզան էս մը բիւ, էսմե Զգիտեմ, զիս աղքատ կարծեց,
 կըրա ֆուրարի: կամ հպարտութիւն արաւ:
 — Նա խիզանէ: ղեա դեա բիւ, նա մը կըրա Ոչ քու աղքատութիւնից էր, ոչ
 ֆուրարի. իմ հպարտութիւնից,
 Զաւե գունջի ալանան սեար մըն, Դեղալան համայնքին աչքը իմ ու
 սեար դեա բիւ. քո վրան էր.
 Սրբե ուարա ղը ղընա բեար ալի. Վաղ առաւօտ արի, գնանք ջըրի
 եղերքը,
 Սեարի խո ղընաւ ալա գուրալի: Բո գլուխ լուամ վարդեջըրոյ:
 Ռամիւսանակի դեա մեասայ բեհի վի Համբոյր մը չտանս այդ բարիի
 սըլալի. փոխարէն.
 Սուտակի. բեար դերիյե բեադդ ղոե- Զիւաւը մը նայից, անցաւ քո հօր
 նի, նը գանըն չի կեաւ ա. դռան առաջ, չգիտեմ ինչ մէկն էր,
 Դեա կըրաւ ֆրան ա, ղըրիւն աւսաւ: Դորա շաղիկ քթան՝ զպունը սըն-
 գուս էր:
 — Կեալի, կոշ մաշ բարե, ղիւ ու- Աղջիկ, աւեր հօր տուն. դու համ-
 միւսակի բեաւ մըն, բոյր մը տուր ինձ.
 Ըծվի ղընեայ է բեր ոչ բեաւ ա. Այս աշխարհիս մէջ հերիք ու բաւ է.
 Զեարիյե, սեարի խո երիկեաւ, Խեղճ ամաչկոտ, գլուխդ վերցուր,
 Բանկ, բոս չի դամա Նայէ, օրը ինչ ժամանակ է,
 Դեա սիկե ֆեադդ սիյիւս. Բո կուրծք թղթի պէս սպիտակ է.
 Մանրք խորեկ Բաղսայա Ծծերդ Բաղդատի արմաւ է.
 Ազանը մը դարաւ ա, սեար ղը կեաւը. Իմ լեզուս գրիչ է որ վրան կը
 շըլի,

Էազ բըրուկ բիւ, մը մեան կըրիւնեա. Ես փոքր եմ, զիս մի լայնեք,
 Սը բըրեա բըրեա կեադի ղերի- մաշ Զիս՝ տուր Ռակեծամի շալակ, տէ է
 ղը մաշ ղը կեառիկն ի տուն շըջեցնեն.
 Հակեար հաւանդի, ղոխս հաւանդի. Էթէ հաւանին. արդէն հաւանին.
 Հակեար հեմ հաւանդի մը բիւն փախ- Եթէ չհաւանեցան. զիս թող ձգեն
 ղի բիւկա սալի. մի տարուայ հարսի ծոցը,
 Բըրանե մըն ղը հաւա երեկ
 Էազ բըրուկ բիւ, նիւ ֆեալիյիւն Ես փոքր էի, նոր արբունքի հա-
 տայ.
 Շըրեք գուշի կէ բըրեարե կազ իա- Նման դարեան ծաղկի մը ես դար-
 միւրմայրն զմի միւրմ . . . դարուած եմ,
 Զիւկի խըրար շարխայ ղեդայ ղաւի- Բաղդը անիւն զարկեց իմ երի-
 նա խո շարբրիւ. տասարդութիւնս պտորաստեցի.
 Էվար ա, ղաշ էվարա մադարան Երեկոյ է, առաջի երեկոյ-արեմուտ.
 Դեա շաւ ղը ղաշն ղըրանի սրպեան Բո աչքեր սե . . .
 ղո խո սարաք ա . . .
 Դեա կոշըրկեմըն ալսալա խոսե խարը Դու իմ Աստուծոյ թշուառիս մախ-
 բիւ կը կերած ես,
 Հասիյե մըն մէ վարայ: Իմ ոսկորներն էլ թող տուր
 Բեամերկա դեա, ղըրիւն, ղընաւա Բո հասակ, կասեմ, համեմի (բոյս) է
 Ըսանակի դեա: Համեմի երկար (բոյս) է,
 Սըրան, կիւրան խընաւա դաւեմա, Առաւօտ երեկոյ զինք դէպի վեր
 կը ձգե, (կերկնայ).
 Կեալի, կուշ մաշ բարե, Բա աղջիկ, աւեր հօր տուն,
 Դիւ ղընալիւսանակը բըրաւայ, Դու համբոյր մը տուր ինձ.
 Բըսա մըն, բըրա կուտի ղիւար ղըրտա Տուր ինձ, թող դիւզ ղըրացիք ինչ
 բըրեմըն, կուզեն, ասեն.
 Զերիյա, ուարեա, բըրնո սեյրանեա Սիրելիս, նը, գնանք այցելութեան
 մամե մեան, մարդկանց մօտ.
 Հիւն խոսե կեան, խոսե ղը հարիւն. Դուք Աստուծուն էք, Աստուած
 կը սիրէք.
 Հիւն ղը ղըրըրն ուան ղեոան, ուան Դուք մտածեցէք այն ոսկուն ու
 ղըրիւն: շղթաներուն.
 Ըծ խըրըկայ խոսե ղոս Աստուծոյ չնորհիւ . . .
 Դեալի մը խաւ ա կերտանա ղը ֆեարա Իմ բերան ընկիւն իր խալ վի տակը
 Բըրանի կեալ, ալրի ղեհեհեմ բիւ մա- Թող դժոխոց կրակին մէջ զիս
 ղիւան ձգեն.
 Էազ ղը մըրըն ղիւ ուարա սեար մը, Ես կը մեռնեմ, դու արի իմ վրայ.
 Կեալի կըրասի խո ղը դարիւսա ղը- Բո հին շաղիկն հագիր, սուգով
 կեա բեար մըն, ընկիր առաջ.

Հարա զիշարարան ուարա ըսա ուս- Մինչև ուխտախայրը արի իմ հետ
 Ես չեմ գիտեր սայ կեալ մրն: Ուստի մեզի բան ասէ-բանբասէ,
 Հա չի կեալսի բե բոսիկեա Ուստի մեզի բան ասէ-բանբասէ,
 Բեժի սեւիա խոտ գրքիւ հախ բիւ: Ասա, «Աստուծոյ թշուառ որբը
 Էագ որ մըրըն բոսի չարանք: Ես կը մեռնեմ չորբորդ օրը (չո-
 ռեքչարթի),
 Մա հիմն սան սեար չորեկ դարան, Զիս զոյգ փայտի վրայ վերցուցէք-
 Հիւն խոտ գրքիւ հախ բիւ: Եթէ Աստուած կը սիրէք, Աստու-
 ծուն կը հաւատար: Պատուիրեցէք մեծ մօլլաներուն,
 Թանքի ը մըրս մեզիս որ կեան. Ղուացուելուս վրայ չխաղան:
 Աեար շուղընա մը նա շագիկե: Մինչև գան մեր վրայ զոյգ սիրա-
 Հարա դեմա սեար մե չորեկ կեալուս: Մինչև գան մեր վրայ զոյգ սիրա-
 Էագ որ մըրըն ոսոք շաշան. Ես կը մեռնեմ վեցերորդ օրը (ուր-
 բաթ),
 Մա հիւն սան սեար չորիկ լարգան Մեզ վերցնեն զոյգ մը դադաղի
 չիւն խոտ կեան խոտ գրքիւ հախ բիւ: Եթէ Աստուծուն էք, Աստուծուն
 հաւատար:
 Թանքի ը մեզիս մեզիս որ կեան. Պատուէր տուէք մեծ մօլլաներուն:
 Սեար շուղընա մը մն շագիկե: Թող իմ Ղուացուելուս վրայ չգրադին:
 Հարա դեմա, դեմա սեար մը չորեկ Մինչև թխաչիս զոյգ մը գան
 ըսա ուստի: իմ վրայ:
 Բեաժիկե դեա, դրեմ, ըստեանայ. Հասակդ, կասեմ, համեմի (բոյս).
 Ընտեանակե բեար բարեանի. Համեմ մը պարզալի առաջ (բուսած).
 Սրբոսի եփարան իմաւ ալիք բիւ Առաւօտ, երեկոյ զինք կը ձգեր
 իսպի կեալսանի: իսպի վրայ:
 Կեայի, դիւ ըստեանակի ըստեանի: Քա աղջիկ, դու համբոյր մը տուր
 ինձ:
 Բըրս մըն բարեժըն նաւ ալիք ըստեանի: Թող զիս ձգեն դժողբի կրակի մէջ-
 նակի:
 Զի դրեմա հալիւրն բեարանկազան Ի՞նչ ասեմ իմ չուառ վիճակիկս:
 Զարի ընտեանակի առաւօտ խոտ գրքիւ հախ բիւ: Նարնջագոյն, թխագոյն (սիրա-
 դրիկազան: կաններ) նստած են:
 Գրքիկե մը առաջա խոտ սիւ. Աստուծոյ թշուառ իս վախը այս է,
 Իեարդի խարիբան ըր մըրըն, նա Պանդխտութեան դունք մեռնե-
 կեան մա բու մեզիս: լով չհասնենք մեր փախաքին:
 Գրքիկե մը դարարա, ըստ շախան, Իմ դիւրը հարսանիք է, ուղարկած
 իստեանի, են քուն չգայ:

Գրքիկե գունն ու չիմար բարեանայն Վախեանի գիւղացիք ու դրացիք
 դարթնին:
 Մա բըրն բեար բեարայի: Մենք մենք վտանգի առաջ:

I2

ՃԱՅՊԱՐՑԻ ԱՆԻ ԱՂԱՅԻ ԵՒ ԵՂԻ ԳՕԲ ԱՂԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՍԸ

(Թարգմանութիւն գրական բարբառով)*

Այլի աղան պատուաւոր կերպով գնաց Քօք աղային տուն,
 որ նրա աղջիկ Զարիք խաթունը կնութեան ուղէ: Քօք աղան տունը
 չգտաւ, նա Վան էր, որով վերադարձաւ իւր տուն:
 Քօք աղայի եղբայրը Երեան էր, դարձաւ իւր տուն, լսեց որ
 Այլի աղան եկած է եղբոր աղջկան ուղնկան. չընդունեց, առաւ աղ-
 ջիկը 50 ձիաւորով որ տանէ Վան: Այլի աղան լսեց գոյս, մի հնար
 մտածեց, որ աղջիկը իւր հօրեղբոր ձեռքից խլէ: Նա հաւաքեց թո-
 ուղները (ցեղապետներ), ձեռքից թէ իւր թոռուն մի մեռած է,
 սխալի տանեն թաղելու: Հարիւր ձիաւոր իւր հետ առաւ, գնաց
 Բեկրի Քօք աղայի գիւղի միջով և նորա դուան դէմից անցնելու
 վերայ էր. անսնունցաւ ձիանք գարդարուած, մի ձիու վերայ ևս
 փաթաթուած թաղիք մի գրուած էր իբրև մեռած. այս միջոցին
 Քօք աղայի ընտանիք և կրկու աղջիկներ դուրս ելան, որ հանդի-
 սաանս լինին և լսեն թէ քրդեր ինչ եղանակով «Դիօ» կերդեն:
 Շարոյի Ալեման յանկարծ բռնութեամբ հանդիսականներու

*) Այս պատերազմի անցերն երգեց ամբողջապէս մի գեշու, որ հարե-
 ւանցի կերպով գրի առի, վերածելով հայերէնի: Եզդիներէ եւս լսած են, որ բո-
 լորովին ի նպաստ իրենց կը պատմեն. որոյ համաձայնութիւնը եւս այլ տեղ զետեղած են:

միջեց կը յափշտակէ Զարիֆ խաթունը. կառնէ ձեռ վերայ և քշին կերթան:

Քօք աղան տունը չէր, հաւար հասուցին, որ գայ, մի հնար մտածէ:

Քօք աղան եկաւ, «դէպիտ հաւարէ»-ն ասեց, 366 դիւղի եզրի ցեղակիցները խմբեց. նաև լուր յղեց Վանայ Ասատ փաշային, թէ ինքը գնալու է Հայդարցի Ալի աղայի վերայ պատերազմելու, փաշան ևս իւր բանակով օղնութեան գայ:

Ալի աղան ևս լուր յղեց Քօք աղային, ասաց.—Քո ասին ինչ է, մենք քո աղջկան օժիտը միլիօն տանք, արի թոյլ տուր պատրաստութիւնդ:

Քօք աղան չընդունեց, իսկ Ալի աղան խոստացաւ 13,000 ոչխար տալ, բայց դարձեալ չընդունեց.—Առիւս, կռիւ է, ասաց:

Դարձեալ Ալի աղան խոստացաւ թողըններու աղջիկներէն 3 աղջիկ տալ Զարիֆ խաթունի փոխարէն, բայց դարձեալ չընդունեց: Ասատ փաշան Ալի աղային լուր յղեց թէ Զարիֆ խաթունի փոխարէն իբրև աղային Գասըմ աղան տայ իրեն *):

Հայդարցի թողընները ասացին.—Մենք չենք ընդունիր այդպիսի անպատիւ բան, կնոջ փոխարէն կնիկ կտանք և ոչ մարդ:

Սկսան երկու կողմից պատերազմի պատրաստութիւն տեսնել:

Զօրաժողով արաւ Վանայ Ասատ փաշան ընդդէմ Ալի աղայի:

Լուր յղեց Հաքարցոց, Հարթալուց, ձէլօններուն, Պիթլիսցիներուն, Շերվանցիներուն, Համզա բէկ Իրպազ աղային, Շինու Շաբալցիներուն, Մախսոյի Շինոյին, Մարզըկցի Օմարին, Փութկեցուցցիկին, Հօզպահօզցիներուն, Սէտքրեսցիներուն, Տեարթուխուպցիներուն, Հաւըկցիներուն, Մուկուրցիներուն, Նգախիւանէներուն, Մկրանցիներուն, Ներինցիներուն, Լալիեարներուն, Զուլամբրիկցիներուն, Գուղէլդէրէցիներուն, Կարճկանցիներուն, Կաւաչցիներուն, Տութվանցիներուն, որք եկան հաւաքուեցան Ասատ փաշայի մօտ 12,000 ձիաւոր, զորս Ասատ փաշան առաւ եկաւ Գործոթ:

Ալի աղան ևս իւր ձիաւորներով Սովուզ-Բուլախէն արշաւեց Սիւլուկլու (մերձ ի Գարապիատին) հանգիստ առաւ, ուտի Պէպէճուկ, Մաչէթլու, Զպուբլու, Տիրէբլու, Թիմարայ գաշտը, Ալիքալայ, Ռէզիա Կէօնքէր, ուր հանդէպ Ասատ փաշի իւր վրանները կանգնեց:

Իւսուֆի Մամատ աղին թուղթ գնաց ի Մախաթ — մերձ ի Մակու:

*) Քրդեր կը ծաղրեն քիւրդերն, որք հասկցնել կուզեն քէ արուապէ եւ չիբր են օսմանցիք:

Նա ևս հաւաքեց իւր ձիաւորներն, էկաւ դաշտի մէջ իջեանեցաւ. ընկաւ ճանապարհ, իջեանեցաւ Նապի դիւղ, ապա Ալան, Կեօլ, Ռափօճին, Գըրիւբար, Սարըչիման, ապա դնաց միացաւ Ալիի բանակին: Նամակ գնաց Պաքիբի Հասան Զօրապետուն, նա ևս իւր խումբով գնաց Թուճի, ապա դաշտի կամուրջի վերայ, ուստի Կանթարայ դաշտի վերայ:

Ջալալցիներուն նամակ գնաց. Աղկիօլ Հասան բէկին, որ ելաւ իւր ձիաւորներով Հասարներ իջաւ, ուստի Այէ-պսկէ, ուստի Տօշուրման, Վալի կեօլ, Պալասօր (Ապաղայի մէջ), Կարմիր դար, ապա եկաւ Կարմիր ջուրը և Նաթը-Թաթունը բունեց — տեղաւորուեցաւ: Կաճ և Բնճարլու նամակ գնաց Իրզլաւ օղլի Մուսա աղային. նա ևս իւր ձիաւորներով ելաւ, Շահուար իջեանեցաւ, ուստի Կաչիբը և Սօրմուճան:

Ալի աղայի սլառաստութիւնը 3000 հոգու հասաւ, որք Խանայ քիսլը դաշտը բունեցին:

Լուր արուեցաւ Ասատ փաշին՝ թէ Ալի աղան պատրաստ է քո դէմ կռուելու:

Լոյսը դեռ չէր բացուած, օսմանեան բանակը յառաջացաւ. նորա հետեցաւ Շիկալցիներու, ապա Շիրվանայ, Պիթլիսի, ձիւտներու, Շիկաթի, Մարզըկցիներու խումբերն կարգ կարգ: Սրանցից 26 ձիաւոր յառաջացան:

Ասատ փաշան 12,000 ձիաւորով և 800 հրացանաւորով Պուխուրա-խանէի առջևը բունեցին: Ջալալցի քաջ Իւզըրաչին և Օսմանցի հարիւրապետ մի կանգնեցան դէմ առ դէմ կռուի. սորա հետեցան երկու կողմ կազմ, սլառաստ կանգնած բանակներն:

Պատերազմ սկսաւ շաշխանայով, ատրճանակով, թրով և վահանով. հրացաններու ճայթիւն, թրերու ու վահաններու շխրաոց բունած էր աշխարհ: ձիւտներ ամբացած էին քարերու և ծերպերու մէջ. հրացանի ծխից դաշտը մթնեցաւ, աշխարհի վերջ եկաւ: Ջալալցիք փախան բանակի առջևից և ձայն ձգեցին թէ Ատամցիք յօգնութիւն հասան. Ատամցիք ևս փախան: Առաջ անցաւ Ճանկղեռի (սսկիձեւ) Ալի աղան. ձայն ձգեց Չօրսայ գնդին, ասաց.—Մեռնել կայ, փախնել չկայ:

Առաջ եկան Շարօյի տնէն Ալէման, Բէտը, Նատը, Հաճի Միրզա աղաներն, Շէխ Սլօյի Ահմէն: Շամկեցու տնէն առաջ եկան Ամարինի Ալօն: Կրկին ձայն ձգեց Ալի աղան:

—Այսօր քաջ մարդերու օրն է:

Քաջը իրենց կրծքեր տուին գնդակներու դէմ. դարձեալ ծխից մութ պատեց աշխարհը, խաւար տիրեց, Մարբի թրերու շխրաոցի ձայնը սկանջ կը խրացնէր: Նազարի նիզակներու խշխշոցն բարձրա-

ցաւ, Մանակի նծոյգներու նւնըոոցը ելաւ, դաշտ լցուեցաւ:

Մեծ կռիւ մի տեղի ունեցաւ. ախանառես մկաններով, քաջ-քաջ մարդեր առիւծաբար վը մոնչեն. Սլէմանի աղան—Շարօյի ընկերը մոնչելով պատերազմի դաշտի վերայ կերթայ, կգայ, հարուած հարուածի վերայ կտայ, բայց ձինը չնեղացնէր. նա մի հարուածով երկու դրօշակիր օսմանցի սպանեց, շըջեց գետին:

Մշուշ ու մառախուղ է. չէշխաններու դնդակ զըժ-հաղըժ կգայ. Օսմանլուի զօրքից որը մեռաւ, որն ես զինք տուեց լինն, կորսուեցան: Ալի աղան նրանց կանչեց.—Հն գիդի, հն գիդի, լուր տարէք Ասատ փաշային, որ ծառաներուն թոշակ տալով կշտացնէ. Բերկըուայ սայլեր մինչև աշուն հաւաքեն այս գեղեցիկ պատանիներու գիտկներ և աղաներու սատկածներ կրեն:

Շիկակայ զօրքը փախած էր. նրանք դարձան իրենց աներ. երկրացիք մանր մունր կը հարցնէին.

—Ձեր տուն կրակ ընկնի, դուք կասէ՛ք, մենք կերթանք ոսկով ու կարմիր հագուստով կանայք կը բերենք, կարմիր ու սպիտակ ոչխար կը բերենք. այժմ ինչ մնաց Օսմանլուի, Շիկակցու ու ձէլօյի տուն. 12,000 դիակ Կէօտիւրմի ձոր բուդ ենք տուած. կը հաւատամս—չես հաւատար. Օսմանլուի երկիր 15 կարմրագլուխ հարս մնացեր է մի հատ ալեորի:

13

ՉՕՄԱՐ ԲԷԿ

(Մակաց Նարսուգայ Տիմ գիւղի բարբառով)*

Չօմար բէկ մէկ կորիճ քիւրդ է. ժամանակ մը նախըջի էր, գեղի ջոջի նախիր կը պախէր: Չօմար էն ջոջին՝ մօտ եօթ տարի նախըջութիւն արաց, հախ չառեց:

Չօմար մէկ օր նախիր տարած էր ծովու բիրան. տեհաւ մէկ

*) Պատմած է Պետրոս Վերտեան Խորովեան. ունի Բրդեէն բնդարձակ երգեր. Պետրոս միայն 1-2 տունը կը յիշէր: Առանկ պատմագրի 38.րդ գլխու Չօմար լինելու է այս:

խրեղէն ձի ծովուց քեչուաւ, էկաւ, թռաւ նախիրի մէջին մէկ մատկի վրէն:

Դորիս աղէն սասց.—Բեօ տարին քրմաւ. արի, քեօ հախ առ, որ մեր կաթ-կիթ մե խալալ ըլնի:

—Չէ, սասց. ես զա՛ս չըմ առնի. որ էդա մատակ ծնաւ՝ ինոր նուանին տաս ձիկ, ես եմ եօթ տարուան հախի տեղ դապուկ կանեմ:

էդա մատակ ծինաւ, բերեց բանրի (ծովային) քուռակ մը, անուն դրեց Սայլավի:

Չօմար Սայլավին առեց ուր հախի տեղ:

Սայլավին որ ջոջացաւ, էլաւ Չօմար խեծաւ, աւերութեն արաց. էսա տեղ զարկեց, էնա տեղ զարկեց, թալնեց բիրեց:

Որ անուն խանեց, դուսմկեր չատցան, էլաւ գնաց, զինք տուեց Մոկսայ Ամիրին, իլաւ ինոր մարդ:

Դորիս գնաց քալնեց Մըհամտանք, մարդ սպանեց, քալան առեց, տարաւ Մոկսայ ամիրին:

Վանից Իսախ փաշէն խրամանք տուեց. —Գնացէք, Չօմար բէկ բռնէք, բերէք: Թուղթ օրոգկեց Մոկսայ ամիրին.—Ընձիկ խըմայ բռնի, բիրի, ես ինոր կը խալաքեմ:

Չօմար բէկ ախաւ, գիտցաւ որ ամիրէն զինք պտի բռնէր. դորիս փախաւ, գնաց դէն: Գնաց Փիդան, մօ Հագարացոց բարոն: Էմէլ ուր աւիրութեն արաց, իդախ թալնեց դաշտի (Մուսուլ) դիխ, դաշտի դիխէն քալան-բուլան կը բիրէր Հագարացոց բարնի մօտ:

Մէկ բարոն էլ նստեր էր Խոշապայ բերդ. Չօմար տեհաւ էն զօռ է չըզ Հագարացոց ամիր, էկաւ Խոշապայ ամիրի մօտ:

էդտեղ դորիս աւիրութեն շատ արեց. Դիլիմանայ, Իրանայ կը զարկէր, քալան-քրաւ կանէր, կը բիրէր Խոշապայ բարնի մօտ:

Մարիֆար ու բին չէր, մարիֆար Սայլավուն էր:

Մէկ օր Չօմար բէկ էկաւ, ընկեաւ Ոստանայ դաշտ, որ Ոստանայ դաշտ ընկեաւ, էդա ամիրէք խեծել արեցին, ժողուան, ընկեան լտե, որ բռնեն, փաշի խըմակ ճամբխեն: Ոստանայ դաշտ էկաւ խարիր խազար խոքի, ինոնք տուին սարեր, որ չուրս բիւլոր բռնեն ու բռնեն:

Ի՛չ արին, չլըցան բռնեն. Չօմար բէկ խարիր խոքի սպանեց ու ընցաւ, դնաց:

Յըմեն գեախ կգէր, որ կազխէն վրէն՝ խարիր խոքի կսպանէր ու կեճէր:

Ոստանայ սար՝ քե տեսմ ինչխ ի.—Չոջ ի, ճամբախ չկայ, մէկ նեղ ճամբախ կընցնի: Էլան սղայ կապան չինին, որ ճար տանեն, բռնեն:

ձեռնարկով ինչ կապան շինեցին, սլրծան. Չօմար բէկ Կարճկանայ դէն էկաւ, արնցնէր Ոստան. կապան վրը ճամբիին էր, էկաւ արնցնէր, կապանայ դէմ սակըցաւ, չկրցաւ ընցնէր. խեծել ընտեղընտեղ էկան, օր ար բռնեն:

Չօմար բէկ ուր ճար կտրաւ, ձիու զլօխ արաց դեղ ծով, դընաց մըջ ծովուն, գնաց իլաւ Գատուանայ էն դեղ դիւս:

Խիծել օր տեհաւ գնաց մըջ ծովուն, սաին.— Գնաց, խեղդաւ, կուրիսաւ:

Մէմէկուց սլաւան, յըմեն գնաց ուր տեղ:

Օրմ էլ տեհան Չօմար էմէլ էկաւ ծովու մէջէն, ընկեաւ Ոստանայ դաշտ, դարկեց, քալնեց տարաւ:

էմէլ մէկ օր Չօմար էկաւ, գնաց, ձիով ընկեաւ մէկ հաւկի (ճահճային վայր) մէջ: Խիծել էկաւ ար բռնին, ուր ձին բահրի էր, զանկուն զարկեց, մէյսան մի տուեց, էդա հաւկից դիւս ընկեաւ. քսան, կուտուն մարդ սպանեց, էմէլ ուր իրես տուեց գելս ծով, գնաց, սլրծաւ:

Խիծել էկաւ, գնաց քեչուաւ զեղրանք. ինոնց տուին սարեւրաց փեռ—զեղրանեքաց մէջ:

Չօմար բէկ բեհիվի էլաւ, ասաց. — Միայ սլաւան, գնացին. ևս էհամ էմէլ:

Զինք դանեց ծով էկաւ:

Կեհէր Գատուանայ դիւս, կեհէր Կարճկան, բեհիւի կըլնէր, կգէր:

Մէկ օր ծով ընցաւ, էկաւ. էկաւ Շամիրանայ առուի կող, բեհիւի էլաւ, նստաւ:

Գեղութենով. էդա խիծել ժողվորան, խաղաւ արին մէմէկու, էկան դիւս Չօմար բէկ: Չօմար բէկ յընգեալս ակախաւ, տեհաւ բիւրս բռնին. չթողին էհէր մըջ ծովուն, յիտիւ կտուին: Շէխի բէկ Բժնկերտայ աղի լաճն էր, էն զարկեց, Չօմար բէկի ոտք կտարեց, Չօմար էլ չկրցաւ խեծնէր ձին, փախնէր. ինոր ուարպեքեր թըջուեր էր էդար, կրակ չըսնաւ. էկաւ Շէխի բէկ Չօմար բէկին բռնեց, ինոր ձին խեծաւ, զլօխն էլ տարաւ թաքաւորի խրմակ:

Չօմար բէկ օ կիգիմա,
Սուարե Սայլավիմա,
Լը Մուեկ սօպաւիմա:

ՄԻՐՉԱ ԱՂԵՆ, ԹԷԼԻ ԱՃԱՆ

(Մական Եւրօպայ Տիմ գիւղի բարբառով) *

Միրգա աղէն էլ մէ օպի ջոջ էր:

Էլաւ ուր մշակ օրօղկեց, գնաց ուր խըմակ կնիկ ճարի:

Էլաւ մշակ ուր քեալամչեն (Չութակ) առեց, գնաց Արարբստանայ ելի մէջ. մէկ լաւ աղջիկ մը տըսաւ, էկաւ յիտ, աղին ասաց. — Մէկ լաւ աղջիկ տեհեր եմ Թէլի Աշան անունով, գնա, գիւ չըզ ձի շատ սագ տրոզ ես. տըսի:

Միրգա աղէն էլաւ, ուր քեալամչեն առեց, խեծաւ, գնաց մըջ Արարանցոց ելին: Գնաց, ցըզ տներաց դէս մէկ յաղբուրմ տեհաւ, էրկու աղջիկ կիօ վրէն կայնած, ասաց. — Խո ես զիտէր, էդա էրկըսից սրն ի Թէլի Աշան:

Աղջիկներ սաին.— Այ ձիաւօր, գիւ ինչ կիչկաս վրը մե, մինք Թէլի Աշան չենք. Թէլի Աշան մէկ բամ բըրնդ ի, ինու աչքեր բալալի ի, ինու բակեր կանծի-մանծիկ են, ինու գնգներ արծըթէ են. որ գիւ ինոր տըսնա՛ ձիուց առնես գետին, խատնիս:

Դորիս Միրգա աղէն թողեց, գնաց մըջ գեղին: Գնաց Թէլի Աշանի խօր դիւս, տեհաւ Թէլի Աշան կօնի սլաւչիքքեր գետին կը տփէր. քեալամչեն առեց ձև, զարկեց, ասաց.

Ավր որնկես, որնկես,	Նայուածքը, տեսքը դոյնգոյն է,
Վի քալանի Մերդարի դնկես, դնկես,	Այն Մերդութի աւարի գմդմրոցն է,
Տըսըմ դեսսի քը վըրսի,	Կը վախենամ ձեռքէ քաց թողուի,
Պչիեր խըխալի հարդաւ շընկես.	Կոտորուի ապարանջան էրկու ոտի.
Թեղի Այիշան վե դիբն դաղի դըքեւգ-	Թէլի Աշանին որ տեսաւ ինչու կը
	վալէ,
Բե հայժ վարս եփի խասեղ:	Առանց ափսոսի մի պատուական
	կգոյ:

*) Պետրս Վերսայեան Խոսրովեան պատմած է:

—Տնքից ձէն կըլնի, ես վախենամ փրթընի ձեռքերաց, առնի ինու ստքերաց, խրխալքեր (տող) կոտորի:

Թէլի Աշան տնքից ձեռ թողեց, գնաց, մտաւ փարսի քեամակ: Միրգա աղէն ասաց. — Ընչի կը մտնես փարսի քեամակ, ես էկեր եմ, քե տեսնամ:

Թէլի Աշան ասաց մօր.— Իլի, եմ խօր կապուտ տնուր, մքրբայ տանի, էհայ ուր տուն:

Մքրբայ (գնչու) ասաց.— Ես չեմ իկե քիւ խօր կապուտ տանեմ ձի, ես էկեր եմ, քե տանեմ, ես մքրբայ չեմ:

Թէլի Աշան ասաց մօր.— Իլի վեր, Գիշմիչի քուրուց լից դալօն, յետի-յետի, ես գիւ յիւշիկ-յիւշիկ էհանք մօտ:

Իլաւ վեր, գնացին մօտը. մէր ասաց.— Էսա մքրբայ շա խապար իդայ, ինոր խապարքեր Թէլի Աշանին կը թալի, տփելու ի էն մքրբայ:

Դարը քամրուրէ դարէ դառաւ	Թամբուրի փէա թաց փէա է,
Ձի մքրբայ շաչ ու փառ ա,	Ինչ գնչուն վեց թեաւոր է,
Չաւան խապար դա վեհաւ	Ինչպէս խօսք կը ձգէ,
Նաւ դանիւսն խո Թէլի հարԱյրիանայ:	Իր անուանակիցներուն մէջ դարձնալ Թէլի Աշան:

Որ գնացին մօտ, մէմէկու աւկարայ իլան, մէմէկ էլ ճանչցան: Միրգա աղէն ասաց աղջկու մօր.— Ես Միրգա աղէն եմ, էկեր եմ քեօ աղջիկ ուզեմ:

—Աղջկայ խէր Մուսուլ գնացեր ի, թի դեայ տանք, ասաց: Աղջկայ խէր Մուսուլայ էկաւ: Միրգա աղէն էկաւ, ուզեց Թէլի Աշան:

Խէր ասաց.— Որ գիւ եմ աղջկան խաւներ ես, եմ աղջիկն էլ քե ի խաւներ. քիւ նաղդ տը կտրեմք:

Ասաց.— Դիւ քեանիմ խազ անես, քիւ նաղդ տամ:

Ասաց.— Թէլի Աշանի նաղդ քսան խինգ ոսկի ի:

Միրգա աղէն էրկու մարդ օրողկեց մըջ ուր էլին, գնացին քսան խինգ ջորի առին, էկան:

Ջորիքեր տուին աղջկայ խօր, աղջիկ առին, գնացին:

Միրգա աղէն խրտ ճամբիին ասաց.— Ես քեզ բիրեցի քամալիւրով, եմ մտոներ մտուցի քեօ խօր աչկերաց մէջ, եմ քամալիւրի զօռով առեցի էկայ:

Թէլի Աշան ասաց.— Էսա իրեք օր կայ, քե արեր եմ մքրբայ եմ խօր վրանի դիւ, գիւ ժածիկ կը սարաւիս մըջ քեօ ապի տիւրկին (տոպրակ):

Միրգա աղէն վըր էդա խօսաց՝ խարսնըսից ձեռ քեչեց. ուր ձին քեչեց, թողեց, գնաց:

Միրգա աղի մշակ ասաց.— Թէլի Աշան, մէ բանս թալի, ինոր սիրա գնի, որ գնաց, էլ չի գար:


Թէլի Աշան ասաց.—

Մաշն մագաչի, յիւ դարաչի, Մի գնար գերեղմաններ, սվ դու սիրուն,

Վարաւ ձեռ խո դանն հաւա դարձե Արի, մեր տեղ գնենք դաշտի մէջ, բարսա ռագեմ:

Չալլըմ քեկօ, դիւ մըն գովանա: Ճարպիկ բէկօ, իմ սիրա կցանկայ:

Միրգա աղէն զրուաւ, էկաւ յետ, խը մէմէկու գնացին ինոնց տուն:



ՔՈՒԼԼԸՔ ՈՒ ԿԵԱՌՕ

Քրդական բարբառէ ի հայ բարբառի վերածուած*

Թամանակով Արարատանի միբը կը լինի Արարաքէ Կէսի. սա իր ցեղին յատուկ վեց հազար կոնի վրանարնակներու վրայ կիչխէր: Ունէր ընդարձակ արօտավայրեր և մեծ հարստութիւն. անհաշիւ էին նորա հօտերը. նախիրն ու ձիերու ջուրները: Նա ունէր Արարական ձիերու ընտիր յատկութիւններով օժտուած մի նժոյգ-մատակ ձի, որ աշխարհի չորս ծայրերն հռչակ ստացած էր, ամեն կողմ այդ ձիու լաւ-լաւ յատկութիւններու վրայ կը խօսուէր:

*Վեպա տարածուած է Սուրմալուի Կուլաք հայ գիւղի մէջ. ամբողջովն երգ է եւ քրդերէն աս խոխոս կերպի. յած եմ աս անձերէ. բառ առ բառ գրի առնելու յարմարութիւն չեմ ունեցած. այլ միայն պարունակութիւնը այլ եւ այլ անձերէ հարցնելով լրացուցած եւ գրած եմ: Վեպա ունի աս հիւղեր. ներկայ վեպա յածնելուն մէջ ամենէ ընդարձակն է:

երջանիկ կը համարէին այդ ձիւ տէրն, որ այդ ձիւով կը փառաւորուէր. նաև շատերու մէջ նախանձ կը յարուցանէր. ամենն ևս կը փափաքէին ձեռք ձգել այդ ձին որպէս զի իրենք փառաւորուէին:

Արարակէ Կէս իր ջոլիբը յանձնած էր Սլիվի անունով մի մարդու. որ պահպանէ: Սլիվին լաւ հովիւ էր. ամեն խնամ կը տանէր. ջոլիբն լիւ, դաշտ և ձոր տանելով կարածեցնէր. գիշեր, ցերեկ հող կը տանէր, կը մտածէր, ուր որ լաւ մարդագետին կար, հետեւող օր այն տեղ էր իր ջոլիբով:

Սլիվին մի օր ջոլիբը տարած էր ծովեզրը, հետուն նստած ուշադրութեամբ կը դիտէր. տեսաւ յանկարծ-ինչ տեսնէ—ծովէն մի ծովաձի դուրս թաւաւ. այդ հրեղէն ձին մերձեցաւ Կէսի Ալէքսանի Բէջանին (այդպէս էր նորա նժոյգ ձիուն անունը). որ անմիջապէս յղացաւ: Սլիվին այս բան չը յայտնեց Կէսին, մտածեց որ յաջորդ տարին երբ հովիւ վարձուի՝ Ալէքսանի Բէջանէն ծնած քուռակը ստանայ իր վարձքի փոխարէն. այնպէս ևս արաւ. նա ամենայն հաւատարմութեամբ Կէսի ջոլիբը պահպանեց: Յաջորդ տարին Կէս ուղեց որ Սլիվին վարձեալ վարձէ. Սլիվին պահանջեց իր վարձուց փոխարէն Բէջանի քուռակն որ նոր պիտի ծնէր. թէև Կէս կրկին և եռադատիկ վարձք խօստացաւ միայն թէ քուռակն չուղէ. սակայն Սլիվին անդրդուելի մնաց. Կէս ևս անդէտ լինելով որ քուռակը հրեղէն ձիւն զոյացած է. նա մանաւանդ Սլիվու պէս հաւատարիմ հովիւ չպիտի գտնէր. խօստացաւ:

Սլիվին դայն (քուռակն) ստացաւ. խնամ տարաւ, մեծացուց. անուն Սոսըք դրաւ:

Վարժեցուց հեծնալ, արշաւել և ինչ որ կարեօրն էր, Սոսըքն ամեն կերպ վարժեցուց, կրթեց:

Սլիվին մի գեղեցկադէմ երիտասարդ էր. երբ Սոսըքի վերան կը նստէր, կը կարծէր թէ Սոսըքի հրեղէն ուժը իր վրայ եկաւ: Նա կը սիրէր ջոլիբի շուրջը ձիարշաւ տալ. առուի ու ժայռերու վրայէն զՍոսըք թռցնել, այնչափ սիրահարեցաւ ձիաւորութեան, որ շատ անգամ կը թողուր ջոլիբն անխնամ. որով ձիանք օր յօրի սկսան նիհարանալ, յետ գնալ. որով Կէս երբեմն հարցում կուղղէր.—Սլիվի, կերևայ դու հին հովիւը չես. այս ինչ պատահած է քեզ որ մեր ձիանք յետ կը մնան:

—Ազն, բան չկայ. լաւ կը պահեմ, կասէր. սակայն ուշ-միտքը վրան չէր. երբ ժամանակ կգար որ ջոլիբը ջուր պիտի խմէ. նա կը մտածէր թէ երբ Սոսըք հեծնամ ու աւարի գնամ. քանի մարդու կարող եմ գլխադրել:

Նա երբ Սոսըքի վրայ ոտք գնէր, ձին պիտի խրխնջար, որով ամբողջ իր ցեղի վեց հազար վրաններու բնակիչներն վրաններէն

դուրս պիտի թափէին դիտելու Սլիվու ձիաւորութիւնը: Սլիվուն հաճոյ թուեցաւ ձիաւոր կեանքը. մանաւանդ Սոսըքի յարմարութիւնները զինք ձիաւորութեան սիրահար արին, որով նա միշտ փարած ձիուն, նստած նորա վրան, կը չըջէր վեր ու վայր, լիւ, ձոր և դաշտ. այլ ևս թոյլ տուեց հովուութիւնը. սկսաւ աւարորութեամբ պարապիլ:

Սլիվին իր ցեղին մէջ տեսաւ Վորտէք անուն մի սիրուն աղջիկ, որ Հասոյի Տուտէի եօթ որդոց քոյրն էր. Սլիվին սիրահարեցաւ այս աղջկան ու իրեն կնութեան ուղեց: Հասոյի Տուտէի եօթ որդոց աչք վաղուց ընկած էր Սոսըքի վրայ. յարմար առիթ գտան, զալանի փոխարէն Սոսըք պահանջեցին Սլիվուց: Սլիվու համար այս խիստ ծանր պահանջ էր. նա որչափ Վորտէքի սիրահար, կրկնապատիկ սիրահար էր իր ձիուն. ձին իրեն համար կեանք էր, ձին էր, որով հուշակ պիտի ստանար: Նա մերժեց. «չեմ տար», ասաց: Սակայն սիրահարութեան բացը քանի դնաց, իր մէջ վառեցաւ. կը մտածէր մի կերպով Վորտէք ձեռք ձգել, փախցնէ. սակայն կրկիւզ կը կրէր Հասոյի Տուտէի եօթ որդիներէն, որք ամբողջ Արարտանի մէջ հուշակուած քաջ պատերազմողներ էին և միբի Արարանի դօրաց դիւաւորներն էին:

Սլիվին աւ երեսն խօստացաւ Սոսըք Վորտէքի համար զալան տալ. մի առ ժամանակ միամտեցուց Հասոյի Տուտէի եօթ որդիներն. մի օր յարմար միջոց գտաւ. Վորտէք աղբիւր եկած էր ջուր տանելու, հեծաւ Սոսըք. սղացաւ աղբիւրի վրայ, Վորտէքը քաշեց առաւ գաւակը. քշեց, ընկաւ Արարտանու դաշտը, մտաւ իր ծանօթ լիւններու ու կրճերու մէջ, անհետացաւ: Հասոյի Տուտէի եօթ որդիներն կատաղած դայլի պէս ընկած Սլիվու ետեէն, ամեն կողմ խուզարկեցին, չգտան:

Սլիվին Վորտէքի հետ մի առ ժամանակ մնաց այդ լիւններու մէջ իրեն ծանօթ դարանավայրեր. տեսաւ որ Վորտէքի եղբայրներն հաւաքած քաջ քաջ մարդիկ՝ զինքը կորսնէին. այլ ևս մտածեց որ այդ երկրի մէջ մնալ անկարելի է. որոց վրիժաւորութեան պիտի ենթարկուի, առաւ իր գլուխն և Վորտէք. Սոսըքի գլուխը ուղղեց դէպի Վանայ կողմերն: Նա Արարտանէն դուրս ելաւ. հանգիստ շունչ քաշեց. այլ ևս երկիւզ չունէր Հասոյի Տուտէի եօթ որդիներէն. եկաւ—եկաւ, հասաւ մի էլ աղասու (ցեղապետ)—Ամարի Մլի մօտ. ապաւինեցաւ նորա որ զինք իր հովանաւորութեան ներքե տանէ: Միլանցի Ամար տեսաւ որ Սլիվին լաւ ձիաւոր է, շատ սիրով ընդունեց. դրեց իր ցեղի վրայ: Սլիվին այդ ցեղին մէջ յատուկ տուն մի եղաւ:

Անցան քանի տարիներ, Սլիվին որդի մի ունեցաւ, անունը

Քուլլըբ դրաւ. ապա մի որդի եւ ծնաւ, անունը Կեառօ դրաւ: Ինքը դեռ երկտասարդ էր. հայրենիքի ու ազգականի սէրն զինք կը մղէին որ գնայ ծնած ու սնած երկիրը, տեսնէ հին յիշատակաբաններն, տեսնէ Սոսըբի գոյացած ծովափն: Սակայն Հասոյի Տուտէի որդոց երկիրդէն ու սարսափէն Արարատանու հողն ու քարը անգամ իրեն զէմ սխակալած էին:

Սլիվին մի բան մտածեց, գոգոսեց Ամարի մլին որ պատերազմ բանայ Կէսի վերայ, անուանի Բէջանը բերէ՝ որպէս զի ինքն եւ միջոց գտնէ, հայրենիք տեսնէ, իր վրէժը լուծէ Հասոյի Տուտէի որդիներէն. սակայն Ամարի Մըլ թէն կը ցանկար Բէջան ունենալ. բայց նա եւ երկիրը կրեց Տուտէի որդիներէն, որովհետեւ որոց քաջութեան համբաւը քամոցը աշխարհը բռնած էր:

Սլիվու ցանկութիւնը չյաջողիր. իր փափաքը իր փորուն մէջ կը մնայ. օր յաւուր կը մաշի հայրենիքի փափաքով, կը հիւժի. երբ կը տեսնէ դեռ երկտասարդ, մեռնելու վրայ է. իր մօտ կը կանչէ իր Քուլլըբ և Կեառըբ որդիներն, որոց կերպուրնցնէ, ու կը կտակէ որ իր վրէժն լուծեն իրենց քեռիներէն, եթէ թերանան յաւիտեան պարտաւոր մնան:

Սլիվին մեռաւ. Քուլլըբ ու Կեառօն մեծացան. նոքա քանի կը մեծանային, վրէժխնդրութեան ոգին եւ կը զօրանար իրենց մէջ. իրենց խօսակցութեան առարկան միշտ իրենց հօր կտակն էր. վասն զի իրենց համար մեծ անպատուութիւն էր, երբ մէկը վրէժ ունենայ անկողնոյ մէջ մեռնի. որպէս իրենց հայրը մեռած էր հակառակ քրդական սովորութեան:

Ուխտեցին անկողնի մէջ չմեռնիլ. սակայն դեռ փոքր էին. որով քանի տարի եւ ստիպուած էին իրենց փոքրիկ տունը կառաւարել ընդ հողացողութեամբ Ամարի Մլին. որ և իր բազմութիւն հօտը յանձնած էր սոցա. սոքա եւ իրենց հօր նման հովութեան արհեստին վարժ էին. իրենց պաշտօնը լաւ կառավարելուն սիրելի դարձան Ամարի Մլին, որով Ամարի Մըլ այդ ամն վրայ ունեցած հողացողութիւնը կրկնապատկեց:

Քուլլըբ ու Կեառըբ իրենց յարմար հասակին հասան. Քուլլըբ իրեն համար ունէր Սոսըբ ու լաւ զէնք. Կեառըբ չունէր. վերջինս խնդրեց Ամարի Մլին, որ իր վարձուց փոխարէն իրեն զէնք ու ձի տայ. Ամար սիրով յանձն առաւ, տուաւ նորա խնդրածը:

Սրկու եղբայրներ սկսան Բէջանի հռչակը տարածել, այլ և այլ առասպելներ կը յօրինէին նորա վրայ.— «Ծովէն դուրս եկած հրեզնէն ձի է, թեւր ունի, երկիրէն կը թռչի. եւ. եւ:

Ամբողջ հասարակութեան մէջ ուրիշ զրոյց չկար. միայն Բէջանի վրայ կը խօսուէր, ինչ մարդ որ կը ներկայանար Ամարի Մլի

ատեանը.— Բէջանը քեզ կը յարմարի, նա աշխարհի առաջին նժոյգն է. նրանից ծնածը հրեզնէն է ելն: Ամար ազան այս գովեստները լսելով Բէջանը ձեռք բերելու տենչով վառեցաւ. կը խորհէր ինչ հնարքով Բէջանը ձեռք բերէ. բայց Մըլի Ամար Միրի Արարանի վրայ չէր կարող պատերազմ գնալ ու յաղթել. վասն զի Մլի Արարան մեծ ցեղի վրայ կիշխէր. հարիւրապատիկ աւելի ձիաւորներ ունէր, նա մանաւանդ այդ անհաշիւ ձիաւորներու կառավարող Հասոյի Տուտէի եօթ որդոց երկիրդէն այդպիսի քայլ չէր կարող անել, այլ մի ուրիշ ել ճանապարհ կը խորհէր, կամ գողութեամբ և կամ մի այլ եղանակու փախցնել տալ Բէջանը:

Ամարի Մըլ ունէր Ռեհան անունով մի սիրուն աղջիկ, որ քրդական ամեն բարի յատկութիւններով օժտուած էր. նա ամուսնութեան հասակի մէջ էր. շատ անուանի ու հարուստ մարդիկ իրենց որդուց հարս բերելու համար Ամարի Մըլին դիմած՝ խնդրած էին Ռեհանը. սակայն նա չէր յօժարած. մինչև անգամ հազար ոչլար և հարիւր ձի դարան տուած էին. նա առ ոչինչ համարած էր: Մի օր Ամարի Մըլի կինը ստիպեց իր մարդուն.— Մինչև երբ պիտի սրահես Ռեհան. հասակը առած՝ ժամանակը անցնելու վրայ է. տուր թող էրթայ:

Ամարի Մըլի երկակայութեան մէջ կը դառնար Բէջան. յանկարծ մի բան յգացաւ իւր մտքի մէջ: Կուր յղեց. իր մօտ հաւաքեց իր ցեղի և առհմի երեւելի անձնաւորութիւններն. նորա հրաւերն անմիջապէս գործադրուեցաւ, նորա ատեանը ներկայացան աշիրաթի ճիւղաւորութիւններէն Բօղ ու Բարանան, Կիզան և Սարը Մշանի ցեղէն քաջ-քաջ մարդիկ. այն մարդիկ որ իւրաքանչիւր ազգի՝ զլիաւորներն էին և այն մարդիկ որ ամեն ցեղի մէջ իբրև քաջ հռչակուած էին: Առաջինները ատեանի մէջ բազմած՝ վերջինները բարեւ ըլլանձ՝ կանգնած էին:

Ամար ազան երբ տեսաւ ամեն իր ուզած մարդիկ պատրաստ են. նա մի դաւաթ օշորակ լեցուց իր ձեռքով և ատեանի մէջ դրուած եռտանու վրայ դրաւ. դարձաւ բազմութեան, սասց:

— Ո՛ր իմ պատուաւոր ու կտրիճ հպատակներս. Բօղ ու Բարանան, Կիզան ու Շիկազան և Սարը Մըլանցիք. ձեզ յայանի է որ ես տեսիմ մի աղջիկ Ռեհան անունով. զիտէք նաև որ շատ շատեր ուղեկան եկան, անհաշիւ զանձեր, ձիեր ու հօտեր խօստացան տալ Ռեհանի դարան. սակայն ես չյօժարեցայ. իսկ այս օր ձեզ հաւաքած եմ այստեղ, մի առաջարկութիւն պիտի անեմ, ձեզմէ ո՞վ որ քաջ է, ատեանի մէջ տեղ գայ. այս գաւաթ օշորակը խմէ. գնա Կէսի Բէջանը բերէ. Աստուածակոյս կողմանէ իմ աղջիկ Ռեհանը

առանց ունէ դալանի նորան պիտի տամ, ով որ իրեն կը վստահի, թող առաջ գայ:

Այդ տեղ հաւաքուած մարդիկ ընկան խոր խորհրդածութեան մէջ. մէկը իր տեղէն չչարմեցաւ, մէկը չհամարձակեցաւ մի բան ասել: Ամար աղան իր առաջարկութիւնը կրկնեց ու երեքնեց. սակայն ամենը նաև լուր ու մունջ մնացին: Ամենը ևս կը մտածէին միբի առաջարկութեան անկարելիութեան վրայ:

—Աղա, ասացին միաբան. ո՞վ կարող է միբի Արաբանի երկիրն ոտ դնել. Հասոյի Տուաէի որդոց երկիրէն քարերն անդամ կը սարսափին. Եթէ գլխանի վիշապն անգամ այդ երկիրը չհամարձակիր մտնել. հնար Աստուծոյ չէ մէկը գնա. քառասուն հազար անձ կողմող էլ ի՞նչ մը մէջէն Բէջանը վախցնէ:

Ամարի Մըլ ճանապարհ դրաւ երևելիներն ու քաջերը. լուր յղեց հասարակ ժողովրդեան, որ ժողովեցան միբի շուրջը, որոց ևս առաջարկեց նոյն խոստումը. անոնք ևս իրենց գլուխը կախեցին, մէկը չհամարձակեցաւ օշարակը վերցնել ու խմել:

Այդ միջոցին Քուլլը սարէն հօտը տուն բերաւ. տեսաւ ժողովրդեան բազմութիւնը, շատ դարմայաւ.—Ահառը՛ք, ասաց. այս ինչ բազմութիւն է:

—Մեր միրը, ասաց Ահառըք, ատեան հրաւիրեց իր էլի ամեն երևելի ու քաջ մարդիկ. նաև հասարակութիւնը, որոց առաջարկեց, որ մէկը գնայ. Բէջան բերելու լինի իր աղջիկը Ռէհան կնութեան պիտի տայ իրեն, բայց մէկը չհամարձակեցաւ եռոտանույն վրայ դրուած օշարակը վերցնել ու խմել: Եւ իր կշեռքով ևս ոսկի ստանար Ռէհանի հետ:

—Ահառը՛ք, ասաց Քուլլըք. չես ամաչէր, այդ խօսքերը անտարբերութեամբ կարտասանես. դու մեռնէիր, այդ խօսքերը չասէիր, ապտ մենք մեր կեանքը չէ՛ նորան պարտական եմք. այլ ևս որ աւուր համար մենք պէտք պիտի դանք նորան, նորա խօսքը գետին ձգելը, գայն սպանել տեսլ է. ևս կերթամ, Բէջան կը բերեմ: Ռէհանն ևս կառնեմ:

Քուլլըք միբի ատեանը շտապեց. բարե բոնեց, կանգնեցաւ.

—Հա, որդի, ասաց միրը, որպէս ամենուն ասած էր. կարո՞ղ ես այս գաւաթը խմել ու զնալ, Բէջան բերել:

Քուլլըք առանց ձայն հանելու վեր առաւ գաւաթն, օշարակը խմեց.—Միրս, ասաց. Աստուծոյ յաջողութեամբ պիտի դնամ, Բէջանը բերեմ:

Վարտէք լսեց Քուլլըքի բռնած դործը, ծնկները ծեծելով, մագիւրը փետելով և դառնաղին լալով հասաւ միբի առանը (վրան), երգելով ասաց.

Միրս, արդեօք այդպէս կը լինի՞,
Ո՛ր մեր ու մեր սան գլխուն կանես.
Չէ բօղ ու բարանան հաւաքեցիր,
Կիզան ու Շիկազան շուրջ ժողովեցիր.
Սարի Մլանի քաջերն ալ բերիր,
Որոց մէկն ալ Բէջան բերել չհամարձակեցան:
Չէ՛, անոնցմէ վերջ ժողովուրդը եկաւ,
Մէկն ալ այդ գործը յանձն չառաւ.
Արդեօք այդպէ՞ս է, որ մեր գլխուն կանես,
Չգիտես որ իմ որդին փոքր եւ անփորձ է,
Այդ տեսակ գործերու մէջ մտած՝ ելած չէ:
Չէ քաւ հովանու սակ մի փոքրիկ տուն ունեիմք,
Մեր տունը պիտի գլուխը, գայն չգիտեիմք.
Ալիվին մեռած ու մեր տուն քանդուած էր,
Ի՛նչ հարկ կար Ամար ազան մնացածն եւս քանդէր:

—Վարտէք, ասաց Ամար աղան. այս բռնի չէ. եթէ կարող է, թող գնայ, կատարէ. իմ աղջիկն ու իր կշեռքով ոսկի ևս առնէ, եթէ կարող չէ, թող չերթայ:

Քուլլըք մօր վրայ բարկանալով ասաց.—Մայր, ինչ անեմ, որ ինձ սպիտակ կաթ եւ տուած, եթէ ո՞չ հիմայ իմ ճգմայի նալչայի տակ գլուխդ պիտի ջախջախէի: Ենչ որ կանէ, Աստուած կանէ. մարդ կը մեռնի, անունը կը մնայ, եղբ կը մեռնի, կաշին կը մնայ. գաւաթուտան (որկրամուլ) կը մեռնի, սպասի կճուռը կը մնայ. ձին կը մեռնի ասպարէզը կը մնայ»: Աստուած եթէ ինձ կօզնէ, Սուրք եթէ տակս է, իմ գործ յաջող է, դուն ևս ուղախացիր. իսկ եթէ Աստուած ինձնէ երես դարձուց, Սուրքս տակէս առաւ, ևս արծիւի թևերու վրայ ալ նստեմ, իմ գործ անյաջող պիտի լինի:

Ահա մայր իմ, ես պիտի գնամ,
Աստուծոյ կամով պիտի վերադառնամ.
Ինձ հալալ արա քո սպիտակ կար,
Ուրախ պահե սիրոյ խանդակար:

—Որդի, ասաց մայրը, որ պիտի դնաս՝ Աստուած հետդ լինի. Կայ, քեզ մի քանի պատուէր տամ, որ չվտանգուիս. դու քո գնալիք ճանապարհներուն հմուտ չես և ապագայ վտանգներուն անփորձ ես: Քո ճանապարհն շատ երկար է, մինչև Արարստան քարքարուտ ճանապարհներէ պիտի անցնիս. տեղ կայ որ արծիւի պէս կարող գայախազի քարեր իրար վրայ կուտակուած են. Սուրք շատ զգոյշ քէ, որ իր ոտները չվնասէ. կրբ այդ վտանգաւոր քարքարուտներէ

անցար, կը մտնես Տարըքայ կիրճն ուր գողեր ու աւազակներ պա-
կաս չեն, զգոյշ կաց, որ Սոսըք ձեռքէդ չխլին: Տարըքայ կիրճն
չատ բարձր է, այն տեղէն կը տեսնուի Արարատանու ընդարձակ
դաշտը. այն դաշտը շատ շոք, անջուր, աւազոտ անապատ է. եթէ
տեղ տեղ բոյսեր կը տեսնուին, այն միայն եւաշան բոյսն է և բը-
նակիչներն ևս միայն այծեամենր են, որոնք կը բնակին եւաշանի
բուլբերու տակ և այդ բոյսով կը սնանին: Որդի, պատուէրս այս է.
ձեր ձիանք շատ մի քշէք. այծեամ բռնելու փափաքէ հեռի կացէք.
այդ անապատը լայն ու երկար է. դաշտի միջով հինգ օր պիտի
գնաք. այդ անապատին մէջ միակ մի հատ լիճ կայ, որ ձեր ճանա-
պարհի ձախ կողմը կընկնի. այդ լճի ջուրը չափազանց նեխած է,
մեծ մասամբ ուղտի և կրիայի մեղրածքէ կազմուած է. գորտերով
լիքն է, չորս կողմ գարշահոտութիւն կը բուրէ: Այդ լճի ջուրը լը-
մելը մնասակար է: Սոսըք այդ վայրերուն ծանօթ է. զգոյշ կաց որ-
դիս, որ Սոսըք այդ նեխած ջուրը չխմէ, եթէ լամէ, այլ ևս յոյսդ
կտրէ Սոսըքէն, նա անմիջապէս կուռի ու կը մեռնի:

Վորտէք դարձեալ երգով շարունակեց.—

Որդի՛ Բուլլբ, ձեր եօրբ ֆեռին միբի Արարանի մօտ են,
Անոնք միմիայն արաբերէն լեզուով կը խօսին.
Եօրն եւս բարձրահասակ եւ կարմիր դեմքեր ունին,
Եօրն ալ մեծ ու կապոյտ աչքեր ունին.
Եօրին ձիերն ալ մոխրագոյն ու պիսակաւոր են,
Արագաֆայլ, հսկայ եւ ուժեղ են.
Սիրուն, լայն եւ հաս կուրծքեր ունին,
Իսկ ետեւի կողմերին օրսի շան պէս բարակ են,
Ազդրները նապաստակի պէս կախ ընկած են,
Ականջներնին խարազանի պէս դիւրաւարժ են,
Բաւի եւ պոչի ծայրերն ասեղի նման ցցուած են,
Սմբակներն ալ բոյրակ կոսի պէս են:
Թամբերուն նայեցեք, Համասանու քամբ են.
Ձեր ֆեռիներու գլխու փաքոցը Անմէսի են,
Անմէսի վրայի կրկին փաքոցներ ունին, որ Հերաքի են,
Մեծամեծ դաշոյններ ունին, որոց բուռը սպիտակ են,
Դաշոյնի ծայրերը ձկան ասամի պէս կեռ են,
Ղալիօններու փայտը կարն ու կեռասնեղի են,
Իսկ դալիօններու ամեն մէկը մեկ բուրբ ծխախոտ կը պա-
րունակեն.

Կառնի միջոցին երբ դալիօնները կը ծխեն,
Եօր անօրի գայլերու պէս իրար ձեռքէ կը փախցնեն՝

Ամպի պէս կոյտ-կոյտ ծուխ կարձակեն իրենց բերնէն.
Ամբողջ երկիրը այդ ծուխէն կարծես մուրր պատած է:
Բէջանը որ կայ, միբի Արարանի ձիւն է,
Լաւ ուշադիր ելիք, նորս նշանն է այս.
Բէջանի աջ ֆիթն ու ականջը ծակած է,
Ծակերէն ոսկեայ շղթայ մի կախուած է:
Ձեր ֆեռիներ արաբերէն կը խօսին, ձեր լեզուն չգիտեն.
Երբ զանոնք կը տեսնէ կամ երբ կը պատահիք անոնց
«Մենք ձեր ֆրոջ որդիներն ենք, ասացեք.
Վորտէքի հարազատ որդիներն ենք, կրկնեցեք»:
Մի կերպով անոնց յայտնեցեք, որ վստահի մեզ չընկնէք.
Երբ մի նար նարակ անեն, ձեր ֆեռիներ պիտի անեն,
Կամ դրամով Բէջանը կը գնեն, կամ մի հնարով կը փախցնեն:

Վորտէք իր սրբոց խրատներ տալէն վերջը գաղտնի մի նա-
մակ գրեց իւր եղբայրներուն, տուաւ մի մօլլայի որ շուտ տանէ,
հասցնէ իր եղբայրներուն. որ դիտնան թէ իր քրոջ որդիներն, մնաս
չտան: Նամակի մէջ գրած էր.— «Հասոյի Տուտէի օճախի պատուոյ
համար, ձեր քուր Վորտէքի սիրուն: այդ կողմեր կզան Վորտէքի
երկու որդիք—Բուլլբ ու Կեառօն, մի հնար գտէք. դրամով, կամ
բռնի և կամ գողութեամբ Բէջանը ձեռք ձգեցէք, յանձնեցէք Բուլ-
լլբին, որ բնիք Ամարի Մլին, նորս աղջիկը կնութեան տանէ»:

Մօլլան նամակը առաւ, ճանապարհ ընկաւ:

Բուլլբ ու Կեառօն իրենց պատրաստութիւն տեսան:

Առին իրենց հետ երկու քաջ հայեր—Բուլլբի ֆլին (հայ Բաղ-
տասարը), Ղուկէի Լեզիօն նաև Տուքէթի հարսանը. հինգ հոգով
ճանապարհ ընկան. զինուած ու զրահաւորուած լաւ ձիերու վրայ
նստած քշեցին, գնացին: Հինգ օրէն հասան Վորտէքի սուրհանգա-
կին. սուրհանգակ մօլլան մեռել թողելու և դրամ շահելու գրա-
ղուած լինելուն ուշացած էր. Բուլլբ քննեց. իմացաւ որ մօր սուր-
հանգակն է, նամակը ձեռքէն առաւ, զինք յետ դարձուց:

Հինգ հոգիէ բազկացած փոքրիկ աւազակային խումբը իրենց
ճանապարհը շարունակեցին, անման քարքարուտ վայրերէ. սուր և
փտանգաւոր դայախազէ քարերու կոյտերու վրայէն անցան, բարձրա-
ցան Տաւըքայ կիրճը, զլիւրվրան գէպի Արարատանու դաշտն: Այդ տեղ
փոքր ինչ հանգստացան. հաց կերան, տկերով իրենց հետ բերած
ջրէն լամեցին. հեծան, քշեցին: Երբ անապատի մէջ շատ նեղուեցան.
չատ քիչ տեղեր եւաշանի քօլեր կերկային: Յանկարժ տեսան որ
մի եւաշանի քօլի տակէն մի այծեամ դուրս թաւաւ, փախաւ: Բուլ-
լլբ մօրը տուած խրատը մոռացաւ. յոգնած և քրտինքի մէջ կո-

բաժնի մասը որ արձակեցաւ այժեամբ ետեւէն, հա այստեղ, հա այն տեղ բռնեմ ասելով ձին արագ-արագ քշեց. երկու ժամու չափ հեռացաւ իր ընկերներէն. պատուախնդրութիւնը չտարաւ որ դատարկաձեռն յետ դառնայ. Սոսըքին ուժով ասպանդակեց, սնդեց այժեամբ ետեւէն. վերջապէս մի կերպով բռնեց, բերաւ եղբոր մօտ. ասաց.— Կեառօ, եթէ դու ինձ օգնէիր, կարող էիր այժեամբ շուտ բռնել. Սոսըք այդչափ չէր շարչարուէր:

— Սղբայր, ասաց Կեառօն. երբ դու այժեամբ ետեւէն ընկար, տեսայ այժեամբ և Սոսըքի փախչիլը. որ Սոսըք կէս աւելի կերթար այժեամբն բողբոստելով. խորհեցայ անուր քուկը լինի, դորա համար չօգնեցի:

Քուլլըք յոգնած էր. արգէն երեկոյ էր, պատուիրեց Կեառօ-յին որ այժեամբ մտէն խորոված չինէ. մինչև ինքը փոքր ինչ քնի ու դարթնի Պատուիրեց որ Սոսըքի վրան ևս հօկէ. Ինքը զօրութիւն վրան առաւ. ու քնեցաւ Կեառօն իր ընկերներով խորոված պատրաստելու հետ էր, ուշադրութիւն չի դարցուց Սոսըքին, որու սանձը թամբի յոնքը ձգած էր, ոտքերն ևս չիտարած: Անցաւ բաւական ժամանակ, Կեառօյի միտքը ընկաւ. դարձաւ Սոսըքին նայեցաւ, տեսաւ անյայտացած է. յանկարծակիի եկաւ. ընկերներն առնելով այս-այն կողմ սրտնեցին, չգտան: Չարթեցաւ Քուլլըք, իմացաւ եղածը, թոյլ առեց խորովածը, ընկերներով որոնեցին Սոսըքը. դտան Սոսըքի ոտից հետքերու ուղղութիւնը, որ կը նշմարուէր աւազի մէջ. բռնեցին հետքերու ուղղութիւնը ու գնացին. պարզ լուսնկայ էր. շատ քիչ գնացին, Աստուած գիտէ. տեսան Սոսըք մի լճակի եզրն կանգնած է, այս լճակը իրենց մօր ասած հեխած, գորտի, կրիայի և ուրտի մէկէ կաղմուած լիճ էր. տեսան Սոսըք սանձը կտրած, նետիսած ջուրը խմած, ուռած, փորքաչն ևս կտրած ու թամբը գետին ընկած էր. այլ ևս Սոսըք չարժեղութիւն միջոց չուներ:

Քուլլըք և Կեառըք երբ տեսան Սոսըքի վիճակը.

— Այ, մեզ, ասացին. իրենց գլխուն դարձելով. մենք ինչ պիտի անենք այս անապատի մէջ առանց Սոսըքի. Սոսըքով մեզ փառք ու պատիւ պիտի վաստակէինք, այժմ ամեն բան կորսուինք: Քուլլըք վազեց, Սոսըքի սանձէն բռնեց, քաշեց. սակայն նա չչարժիր, ետեւէն հրեց, խարաղանով հարուածներ տուեց. սակայն դարձեալ անշարժ էր. որպէս թէ դամուած լինէր գետին: Տեսաւ Սոսըքի փոր հետզհետէ կուռի, պայթելու վրայ է. վերջին ճիգ մը ևս արին, հրելով-հրելով ջրէն դուրս հանեցին. տակաւ առ տակաւ մինչև իջանք հասուցին: Քուլլըք Սոսըքի դժուարին դրութեան վրայ շուտուեցաւ, իր մահը աւելի քաղցր էր իրեն համար, քան Սոսըքի ցաւալի վիճակը. «Սոսըքով էր որ անուր պիտի հանէի, այժմ ինչ քար ձգեմ իմ գլխին,

այլ ևս ես մարդու երես չեմ կարող տեսնել. մէկ ձի ունէինք՝ դուրս տուեցինք. մնացինք մենք ու այն խօսքը որ մեր նախնիք ասած են. «Գնաց իր հօր վրէժը լուծելու, իր կարմիր աքիւնն ալ վրայ տուեց»:

Ընկերներով հոգ տարին, դեղ ու դարման արին. ճանապարհէ հեռու քաջուեցան մի առանձին վայր, որ միջոց մի մնան, մինչև Սոսըք լուանայ:

Չորս օր այդտեղ մնացին, դեղօրայք բաւական օգնեցին. Սոսըք կարող էր քայլերն փոխել. այդ տեղէն ևս բարձան, մի բարձր դարի կտակ իջանեցան, որ անցորդի աչքէ հեռու լինին: Այդտեղ ևս չորս օր մնացին, մէկ օր Քուլլըք ասաց.— «Ձիաւորուեցէք. տղայք. Սոսըք միշտ իր պատիւը պահած է. այս անգամ ալ յուսով եմ որ դիւ ամօթով պիտի չլծուր, ինչ որ արած է, Աստուած արած է»:

Հեծան, երկու օր, երկու գիշեր քշեցին, Սոսըք ճանապարհին լաւ չէր բանէր իր ընկերները թոյլ կը քշէին իրենց ձիանք, որ Սոսըք չվնասուի:

Հասան մի փոքր դար, ուր իջանեցան ու հանգստացան: Այս դարէն կը տեսնուէր Արարատանայ միրի էլաթը, որք վրաններ գալկած էին նոյն տեղէն անցնող գետի մը երկու ափերու վրայ. գետի այն կողմ, հաստատուած 3000 սև վրաններու մէջ կերեէր մի մեծ սպիտակ վրան, որ Արարատանայ միրին կը պատկանէր: Գետի այս ափի վրայ ևս սև վրաններ դետեղուած էին: Մեր խմբի իջանած վայրէն, մինչև այդ վրանները 15 ժամ հեռաւորութիւն ունէր:

Քուլլըք իր խմբով գիշերը նոյն դարի վրայ անցուց, հանգստացան, վեր ի վերայ իրենց անելիքը որոշեցին. դորժի պիտի սկսէին, բայց Սոսըքի վիճակը չէր ներեր. երեք օր ևս սպասել որոշեցին:

Որոշուած էր, ամեն գիշեր ընկերներէն մէկը պահպանութիւն պիտի անէր, այս գիշերուայ պահպանութիւնը Կեառըքի յանձնուած էր: Կեառըք այս անգամ զգոյշ էր, հեծած էր Սակլավին. խմբի շարքը ման կգար. Ման դարու ժամանակ հեռուէն մի ձայն լսեց. Սակլավին քշեց ձայնի կողմը, տեսաւ եօթ դաթար ուղտերու խումբ, ձայն տուեց.— Լճ, լճ, լճ. դուք ինչ մարդ էք — Մենք Արարատանայ էլիցն ենք.— Այդ ինչ բնու է կը տանիք:

— Մըրի աղջկայ օժիտը կը տանենք ետրտատեղ (հովտավայրը խումբ մը վրաններու դետեղուած տեղ). որ դառնանք, վաղը չէ. միւս օրը միքը ևս պիտի գնա ետրտատեղ:

Կեառօն Սակլավին քշեց ուղտապաններու վրայ մէկին մի սին-փայտի հարուածներ տուեց, շատերու գլխները ջարդեց, մնացած

մէկ քանին ալ փախան. ինքը ուղտերը իրենց բեռներով խառնեց իր առաջ, բերաւ իր խմբի շուրջը նստեցուց: Քուլլը զարթեցաւ, տեսաւ Կեառօյի արած քաջութիւն, մի հառաչանք արձակեց, ասաց.

—Այս ինչ է, Կեառօն ինձմէ աւելի քաջ գտնուեցաւ. քաջութեան համար ես եկած եմ, Կեառքը կը դործէ, ինձ համար մեծ ամօթ էր որ ես քնէի:

Խուսմբը մտածեց որ առաւօտ խուզարկուներ զիրենք կը փնտռեն, երբ իրենց պատահին առանց Բէջան ձեռք ձգելու կռուի պիտի բռնուին, աւելի լաւ համարեցին մի ապահով և գաղանի վայր քաշուիլ: Այն տեղէն տեղափոխուեցան մի անմատչելի սարի կող

Դեռ արշաւոյսը չէր բացուած.—Կեառօ, ասաց Քուլլը. ես: ևս զիս մի անգամ ցոյց պիտի տամ այն էլաթի մէջ, եթէ յաջողութեամբ եկայ, Աստուծուն փառք կտանք. իսկ եթէ վտանգուեցայ, վրէժս կը լուծէք. Սոռքս չէք թոյլ տար որ արարներու ձեռք անցնի, եթէ չի կարողացաք ազատել, սպանեցէք: Քուլլը զնաց: Երեկոյն մօտ էր, զնաց վրաններու մօտեցաւ, մտաւ զետի եզրը բուսած ցախերու մէջ պահուեցաւ, որպէս զի դիտէ թէ զետի հունը ուստի է, որ տեղէն մարդիկ անց ու դարձ կանէին: Կէս զիշեր մօտ էր, ձայն-ձուն դադարած էր, Քուլլը անցաւ ջուրը, վրանի մի անկիւնից ներս սողաց, ձեռքը դրաւ թուրի բուռի վրան, մի անգամ լքնաւ որ միրը սպանէ. յանկարծ աչքը ընկաւ միրի գլխուն, որ դրած էր իր կնոջ թևի վրան ու հանդարտ քնած. Քքնած մարդը սպանել տմարդութիւն է մտածեց: Քուլլը քանգեց կնոջ վզի մարդարտեայ շարանը, առաւ, ելաւ դուրս. որոն արեց Բէջանի վայրը, տեսաւ անկարելի է այն տեղէն դուրս հանել, հեռացաւ. ուրիշ մամանակի թողնելով այդ դործը դարձաւ իր խմբի մէջ:

Արդէն բոթ հասած էր միրին թէ իր ազգական օժիտն ու ուղտերը իրենց բեռներով տարած են: Միր «տէֆի հաւարէն» զարկեց, հաւաքուեցան երկու հազար ձիաւոր Հասոյի Տուտէի եօթ որդիք ձիաւորներու առաջ անցան, իրենց երկրի չորս կողմ խուզարկեցին, չգտան:

Հետեւեալ օր արշաւուսի հետ Քուլլը գետեզրը ցախերու մէջ դարձեալ ի սրահ մտած էր, եկած էր այս անգամ ու է մի հնարքով Բէջանը ձեռք ձգէ, որ հեռանան այդ վտանգաւոր վայրէ: Տեսաւ որ միր երկրորդ անգամ «տէֆի հաւարէն» զարկեց, ինքն ևս երկու հազար ձիաւորի գլուխ անցաւ, հաւաքեց, պատուիրեց որ զընալու են զողերը սրոնելու: Այս միջոցին Բէջանը դուրս հանեց մի քրդուհի, տարաւ ազրիւրի վրան որ ջուր խմցնէ ոսկի թատով: Քուլլը ջրի փքը երկցաւ, հարցուց թէ ջրի հունը որ տեղէն է: Աղջիկը ցոյց տուեց:

Քուլլը անցաւ այն կողմ, մօտեցաւ ձիուն, տեսաւ նշաններն, որ մայրն սասած էր, նա Բէջանն էր. կասկածի տեղի չկար:

—Աղջիկ, այդ ձին ում կը պատկանի, հարցուց:

—Ինչու, միթէ դու օտարական ես, որ կը հարցնես. չես ճանաչէր Բէջանն է, միրի Արարանի ձին է. «տէֆի հաւարէն» զարկած է, կը ջրեմ որ միրը հեծնի, գնայ:

Աղջիկը դեռ խօսելու հետ էր, Քուլլը յանկարծ յափշտակեց աղջկան ձեռքէն Բէջանի սանձը, թռաւ քամակը ու քշեց դէպի իր խմբի կողմ:

—Ո՞ւր կը տանես. դա Կէսի Բէջանն է, երկիւղ չունես միրէն. չէ քու կտորները երկինք կը հանէ, սլոռաց աղջիկը:

—Ես տմարդութեամբ չեմ տանէր. լուր տուր միրին, որ մենք այն դէմի սարի մօտ սըսըլէքներու մէջ ենք. մինչև ինձ անուն չթողում, չեմ գնար, թող չասես «Քուլլը տմարդութիւնով Բէջանը առաւ փախաւ»:

Միրը երբ այս լուրն ալ լսեց, կրկին և կրկին «տէֆի հաւարէն» զարկեց. իւրաքանչիւր տնէ մի մարդ հեծաւ, վեց հազար ձիաւոր կազմ և պատրաստ ձիաւորուած պատրաստ կանգնեցան միրի վրանի շուրջը. առաջնորդի կապասէին մեկնիլ:

Քուլլը դեռ իր խմբին չէր հասած, Կեառքը հեռուէն նայեցաւ, տեսաւ միրի վրանի դուռը սև ամպի կոյտի նման մի բան նշմարեց, այդ սևութիւնը ծովի ալիքներու նման կը ծփծփար. զգաց որ այս շարժումը աննշան շարժում չէ, մի մեծ դէպք պատահած լինելու է, կամ Քուլլը իրեն համար մի անուն արած է, կամ վտանգի մէջ ընկած կը լինի, ինչ և է. պէտք է պատրաստ կենալ մտածեց:

Ինք ու իր ընկերները ձիանք հեծան պատրաստ կանգնեցան, տեսան հեռուն մի անձ փոշիէ ամպի մէջ խառնուած կը գայ, ասոնք առաջին անգամ թշնամի կարծեցին. Քուլլըն էր այդ ամպի մէջէն դուրս թռաւ յաղթանակով, Բէջանի վրայ հեծած եկաւ, բարե տուեց իր ընկերներուն. քանի կարճ բաւով բացատրեց անցքն ու միրի պատրաստութիւնը:

—Մեր և թշնամեաց մէջ տեղ երկար ճանապարհ կայ, ասաց Կեառօն. մենք կարող ենք խոյս տալ և մի ապահով տեղ պահուիլ:

—Չէ, ասաց Քուլլը՝ այդ անկարելի բան է, ինձ անուն պիտի թողում. գողութեամբ, կամ փախցնելով տանիլ իմ պատուոյն ամօթ կը բերէ. եթէ փախչիմ, այլ ևս որ կտրիճի մօտ երես պիտի ունենամ:

Քուլլը ձիէն իջաւ, իր խմբին հրամայեց. անոնք ալ իջան.— Թշնամին դեռ հեռու է, ասաց նա. նախ պէտք է մտածենք թէ ինչ

անելու ենք, ապա կուռենք: Խորհուրդ կազմեցին որ նախ Քուլլը պիտի սկսէր կռիւր. Աեառօն եւ Քուլլըքին պիտի օգնէր. միւս երեք ընկերները իրենց հետ ունեցած կողոպուտը պիտի պահէին. ի հարկին անօնք ալ պիտի մասնակցէին կռուի:

Սուրբ կազմ, պատրաստ էր, Քուլլը Բէջանը յանձնեց ընկերնուն, ինքը թուաւ, Սուրբի վրայ:

—Բէջանը հեծիր, Սուրբ հիւանդ է, ասաց Աեառօն.

—Սյդ ինչ յիմար-յիմար կը խօսիս, ասաց Քուլլըք. Բէջան հեծնեմ որ ամբողջ Արարատանայ էլը ասէ թէ ամեր ձիով քաջութիւն արաւ»:

—Ուրեմն իմ եղբայր, արի իմ Սակաւիին հեծիր. Սուրբ հիւանդ է, քու գլուխ վառնդ կը բերէ.

—Սակաւիին ինձմէ աւելի քեզ պէտք է. Աեառօ. աւելի լաւ է մարդ իր սովորած ձիու վրայ մեռնի, քան թէ անսովոր ձիու վրայ նստի, յաղթող հանդիսանայ. ես կը ճանաչեմ իմ Սուրբ, նորա ամեն յատկութիւնները ինձ ծանօթ են. նա զիս հաղար վառնդներէ ազատած է. Սասիքս միշտ պահած է իմ և իր պատիւը. նա մի օր վատ անուն բերած չէ իր վրայ. կը յարդէ տէրը:

Միւրի Արարանի բանակը վեց հազար ձիաւոր էր կը բաղկանար, որք արաբական լաւ-լաւ նժոյգներու վրայ նստած կը խաղային յառաջ, դէպի Քուլլըքի խմբի վրայ, այդ բանակին կառավարողներն Հասոյի Տուտէի կօթ որդիք: Տուտէի կատարած որդիք ամեն կողմէ պաշարեցին. Քուլլըքի խումբը մնաց մէջ տեղ:

Երկու եղբայրներ, Քուլլըք ու Աեառօն սրացան հրապարակի մէջ տեղ. սկսան ուշադրութիւն դարձնել թէ որ կողմի հետ պիտի կռուին: Ըստ սովորութեան երկու կողմի զիսաւորներն պիտի սկսէին կռիւը. ապա հասարակ ձիաւորները: Քուլլըք ձին քշեց առաջ, մեծ քեռին իր ձին խաղցուց Քուլլըքի վրայ, ու յետ դարձաւ. ապա միւս քեռին Այսպէս ձիերն առաջ ու յետ խաղացնելով տաքցան:

Սյս կողմէն Քուլլըք ու Աեառօն. այն կողմէն կօթ քեռիները քանի անգամ քշեցին ու դարձան:

Առիւր տաքացաւ, վեց հազար ձիաւոր այն կողմէ. Աեառօն ու Քուլլըք այս կողմէ մեծ գոտոցով ու աղմուկով իրար վրայ յարձակեցան ուղղակի: Տուտէի կօթ որդիք ոչ լեզու գիտէին ոչ կարգ, աջ ձեռներուն բռնած էին մերկացած թրեր, իսկ ձախերնին վահան. ուսերէն կախ տուած էին երկար նիզակներ. զալիօնները որ ամեն մէկը մէկ և կէս թուղթ ծխախոտ կը պարունակէր, մի կողմէն կը ծխէին, միւս կողմէն կը կուռէին: Որ մէկին զալիօնը սպառած լինէր, անօթի դայլի պէս միւսին ձեռքէն կը փախցնէր, այնպէս որ ամբողջ բանակը որոց ծխախոտի ծուխի մէջ կորած էր:

Եօթն կորայրներ ծխախոտի ծխէն տաքացած՝ այն անգամ ուղղակի յարձակում գործեցին Քուլլըքի վրայ. սակայն Քուլլըք այնչափ արագաշարժ էր, եօթի թրերու հարուածը աննպատակ անցաւ. այս անգամ ի՞նք ընկաւ իր քեռիներու ետեւէն. բայց յանկարծ Սուրբ կանգնեցաւ այնտեղ, ուր Քուլլըք հարուած տալու վրայ էր: Սուրբի ոտքերն ընկուեցան: Քուլլըք որչափ ճիգ կը թափէր, կտտանդակէր. վտանգէ հեռանալ կը ջանար, հնար Աստուծոյ չէրու:

Չայս որ տեսան իր կօթ քեռիներն իրարու ետեւէն եկան, մի մի դարկս միեցին նորա սիրան ու կողերը: Քուլլըք ձիու վրայէն դուրեցաւ, ընկաւ գետին: Քուլլըքի ընկնիլը երբ տեսաւ Աեառօն, ձայն ձգեց իր ընկեր երկու հայերուն որ իրեն օգնեն.—Պուք ձիաւորներու առաջը կտրեցէք. մի թոյլ տաք փախնելու, ես Քուլլըքի վրէժը պիտի լուծեմ:

Բաղտէի Ֆլէն, Ղուկէի Լեղիօն ամբողջ բանակի առաջը բռնեցին. սկսան վեց հազար ձիաւորի հետ կռիւ. իսկ Աեառօյի նպատակն էր իր քեռիներէն վրէժ առնել, ընկաւ քեռիներու հետ կռիւ, իր սուր նիզակով վեց քեռին ալ սպանեց, հասաւ մնացած մէկին, նիզակը սպառատեց որ նորա սիրտը մխէ, վեհանձնութիւնը բռնեց.—Պե՛ն, ասաց. քեզ չեմ սպաներ, Ղորտէքի սպառու՛ն համար որ նորա հօր տուն աւեր չլառնայ: Քեռին քրդերէն չէր գիտէր, բան չհասկացաւ:

Աեառօն երբ իր քեռիները վերջացուց, կայծակի արագութեամբ յօգնութիւն հասաւ Բաղտէի Ֆլէին և Ղուկէի Լեղիօյին, երեքով սկսան ջարդել: Ձիաւորները երբ տեսան իրենց զլխաւորները սպանուած սկսան կուռի դաշտէ փախչիլ, կարծելով թէ երկինքէն դրող մը մտած է իրենց մէջ. բոլորն ևս պիտի վերջացնէ:

Սարսափը այնչափ մեծ և փախչողները այնչափ շատ էին, շատեր ձիաներու ոտից կրխան գարձան, մեռան:

Աեառօն դարձաւ Քուլլըքի մօտ, ձեռքէն բռնեց որ բարձրացնէ, ձիու վրայ նստեցնէ: Քուլլըք որ թէև մահուան ճգնաժամի մէջ՝ սակայն եղածը տեսնելով ուրախ-ուրախ ասաց.—Սուրբ բեր մօտս, ման ա՛ծե, մէկ անգամ ևս տեսնեմ, ուրախանամ:

Աեառօն բերաւ, ման ա՛ծելու միջոցին Քուլլըք մի թրի հարուած տուեց, Սուրբի երկու ոտները կտրեց:

—Մեղք չէք, այդ ինչ արիւր, տնայէն, ասաց Աեառօն.

—Աեառօ, ասաց Քուլլըք. դու չես գիտէր. Սուրբ չէ կարող քալիլ, որ հեռո՞ տանես. նա երբ այստեղ մնայ, Արարատանու էլը պիտի ասէ թէ Քուլլըքի ձին գերի բերինք. այս մէկ, երկրորդ՝ Սուրբի յարգը չգիտեն, տանին ջուր ու փայտ պիտի բառնան:

Քուլլըք սկսաւ հառաչել.

— Եղբայր, քեզ ինչ եղաւ, ասաց Կեառօն.

— Քո առն չաւիրի, ասաց. արի, տես, ինչ եղաւ:

Կեառօն տեսաւ զարկսը մխուած է սիրտը, դուրս քաշեց. դուրս քաշածին պէս ընկաւ, մեռաւ Քուլլըք:

Կեառօն եղբօրը դիակը բարձաւ ուղտերէ մէկուն վրայ. նոյն օրը ճանապարհ ընկաւ իրենց հայրենիք իրենց աւարով և ուղտերով:

Քուլլըքի դիակը ուղտի վրայ զետեղեցին այնպէս ինչպէս ողջ մարդը նստած լինի, ուղտի իւրաքանչիւր քայլուածքին Քուլլըքի ձեռքը յեա, առաջ կերթար, կգար:

Քիչ ու շատ դնացին, մօտեցան Ամարի Մլի երկրին: Կեառօն իբրև աւետաւոր, առաջ յղեց Բաղտէի Ֆլէին, որ դնա, աւետիս տայ միբին:

Աւետաւորը գնաց, միբի ատեանը կանգնեցաւ, ասաց.— Ակնջ-կլէս, աղա, փառք Աստուծոյ. յաղթանակաւ վերադարձանք. վաղ Կեառօն իր աւարով և Բէջանով կը վերադառնայ:

Բաղտէի Ֆլէին իբրև ակնջկլէս թանկագին ընծաներ տուեց միբ:

Վորտէք հետեւաւ օր իր բարեկամներով գնաց դիմաւորելու իր որդոց: Տեսաւ փոխանակ Քուլլըքի, աւարին կառաջնորդէր Կեառօն. համբուրեց Կեառօնին, հարցուց.— Կեառօ, որդիս. ուր է Քուլլըք, ձեր խմբի մէջ չերևար:

— Ետևի կարաւանի հետ կգայ, մայրիկ.

Մայրը անմիջապէս զգաց որ որդին սպանուած է. եթէ նա ողջ լինէր, աւարի կարաւանի առաջ ձի խաղցնով պիտի մանէր վարատեղին: Նա շտասկեց, արագաքայլ գնաց առաջ. ինչ տեսաւ. Քուլլըք նստած էր ուղտի վրայ, աջ ձեռքը կերթար ու կգար. ծնկներուն զարկեց. սկսաւ հեկեկալ, լալ ու երգել.

— Քուլլըք, մեռնեմ ձեռացդ որ կախեր ես,

եսեւ ու առաջ Եարծելով կը Բարոգես.

Աշխար այսպէս մի՞տ եղած է, կասես.

Այսպէս ալ պիտի անցնի ձեռքով նշան կանես:

Չկայ Սուրբ. որդի, ո՞ր էն Են գեներդ

Ինչու պիտի փակած ես վառուրտուն աչերդ.

Սուրբ ինչու բողիւ, ուղտի նստար,

Այս աշխարհէն ինչու այդպէս շուտ հեռացար: *

* Այլ եւ այլ ճիւղերով կը պատմուի այս վէպը. ունի շատ երգեր, Վարէկ եւ Ռէհան երբ կերթան դիմաւորելու, մեռած կը տեսնեն. երկուքն եւս փոխ առ փոխ կերգեն: Այս երգերն գրի չեմ առած:

Վորտէք եօթ օր եօթ գիշեր սուգ արաւ, սև կապեց, լացաւ ու ծնկներուն տիկեց:

Իսկ Ամարի Մլի երբ Բէջանը տեսաւ, մեծ ուրախութիւն արաւ, եօթն օր, եօթը գիշեր դօհուլ դուսանք ածել տուեց, հարսանիք արաւ. մխիթարեց Քուլլըքի մօր, իր Ռէհան աղջիկը պսակեց Կեառօյի վրայ:

ԻԾ

ՔՈՒԼԼԵՔ ՈՒ ԿԵԱՌՕ

(Արձեւու բարբառով) *

Կեղի չեղի, Կիկանցոց, Մլանցոց էլ աղասին Ամար անու-նով դովաբար քուրդ մի կեղի. Էդոր Փարիշան անունով շատ խո-րօտիկ աղջիկմ կեղի, անունով, նշանով, յերկէն բոկով, ջուր խմած տեղ բոկէն կերևէր: Ինչ կնտար դովաբար քուրդ կին Էդոր էլի մէջ, էկան Էդոր աղջկէն յուզնկան, մէկին էլ խոստ չէկաւ:

Մնաց օրմ, յինքն ուրին շատ մէկեց. ուր միգուածքով խոր-խուրդմ էրաց, յէլաւ ուր խորխուրդ ուր կնկան էլ աշկարա էրաց, ասաց.— Կնիկ, ես բամ մեմ մէկեր եմ:

Կնիկն ասաց.— Աստուած բարին կամենայ, խեբն էնայ քու միգուածք, ինչ ես խորխուրդ էրեր:

Մարդն վերուց, ասաց.— Էս կնտար աղա, իշխաններ մեր էլի միջէն օրական մեր աղջկէն յուզնկան էկան, մենք էլ մէ խեա շիշ-կուանք, չի տուեցինք. մկայ ես լսեր եմ Արարտանայ էլ աղասի Խղըր աղա— Բրայիմ աղա կան, էնդոնց մէկ խորօս ձիմ կայ, ա-

*) Իմ առաջարկութեամբ գրի առած է Ալաշկերտի Խասուր գիւղացի Խա-րայի Միքայէլի: Ինչպէս կերելի ասողը երգերն հայացուցած պատմած է, բայց քէ գրուածքի եւ քէ երգերու մէջ շատ քերտիւններ կային, կարգադրելու համար մեծ հոգ արած եմ, եւ կարգի դրած:

նուն Բէջան աւ Բերենք մէկ ծանար ազար-իքամ էնինք մեր ազա, իշխան մարդկանց, յետին դրուն էլ բերենք մէկ կթխեմ շարքար դնենք օսկի սանաւախի վրէն, բերենք դիվնի օրքալախ. ես վերեւանց կը բռնամ, կասեմ.— Ազա, իշխաններ, դուք յըմենքդ էլ էկաք իմ աղջկէն յուզնկան, ես մէկիդ էլ խօսք չտուեցի. յեսօր իմ աղջիկ Փարիչան խանրմ էկեր ա մայրնի օրքալախ, որ մէկիդ կուվար օր կը խասի, ձեր մտքով, ձեր խելքով որ մէկդ որ միտք ունիք իմ աղջիկն յուզելու, էդ կթխայ շարքար վերուցէք, խմէք, դնացէք Արարտանու Խդրը ազա, Բրայիմ աղի Բէջան անուսով ձին բերէք, ես իմ աղջիկ—Փարիչան խանրմ՝ բերող տղին առանց դալնի տամ:

Կնիկն էլ ասաց. — Աստուած խեղն էնա, աղէկ խորխուրդ ես էրեր, էդ բան օր էդլա էնիս, շատ աղէկ ա, բալի աղջիկ տանք իրկան, ուր կարդուելու վաղք էլ խասեր ա, մէկ օր մի եա մեր խովըուուն եա մեր մշկու խեա կը ձօջան (բանբասին), մեր նամուսին ամօթ ա, մեր պատիւ արտոս ա:

Էն մէկել օր Ամար աղէն յէլաւ, ձեռ էրաց, քասպիր տեսաւ, տուեց նաւարի, դուժը դարկեց, էլի մէջ աղքատ, դովարուր յըմեն գանչեց, բերեց տուն:

Գուժը գարկողից էկողները խարցուցին. — Ամար աղէն մղի ընչի ա խանչեր, Աստուած խեղն էնա, ինչ յապով ա:

Ասաց.— Ըսկի, էլման յեսօր ազար-իքամ պաի էնայ:

Գացին դիւան նստան. Ամար աղէն ասաց. — Ինչ օր քեռուց կտրիճ ա, ինչ օր յինք ջասարարով, ջնսով ա, սն մնացեր ա, սն չմնացեր, յըմեն խանչէք:

Մշկներ ասեցին.— Ազան, զըմեն խանչեցինք, մեր մէջի մհանիւ Սլէմանի էրկու Լամուկ—Քուլլըք ու Կեառօն միմակ չենք խանչեր:

Աղէն ասաց. — Գեացէք, էնոնց էլ ասէք, թօ դան, էնոնք էլ կտրիճ աղեկներմ կերևան:

Մշակներից մէկը գնաց էնոնց տուն, Կեառօն ու Քուլլըք բերելու, ներս մտաւ, բարև տուեց:

Կեառօն բարևն առաւ, ասաց.— Խե՞ր ա:

— Շուք, խեք ա, ասաց. յէլի էրթանք, աղէն քեզի ու քու աղբօր կը խանչայ ազար-իքամի:

Կեառօն ասաց. — Որ յըմալ ա, աղբէրս Քուլլըք հալա քնած ա, գնա, նստի յտոներու մօտ, յտոներ մածան:

Քուլլըք սորվեր էր, էդօր քնած տեղէն ձէն տալով չիմցուցին. պաի էնդոր ոտներ մածելով քնած տեղից վեր խանեն:

Մշակ գնաց, Քուլլըքի ոտներ մածեց, Քուլլըք յիմցաւ յէլաւ ասաց.— Խե՞ր ա ինչ կայ:

Ասաց.— Շուքը, խեք ա, Ամար աղէն ձեզի կը խանչայ:

Կեառօն ասաց.— Գուժան, ես ու Քուլլըք յեառանց կուզեանք: Մշակ յէլաւ, գնաց: Կեառօն յէլաւ, արվանին թալեց Քուլլըքի թեքու վրէն, յէլան էրկու աղբէր մէկտեղ դացին:

Կեառօն ասաց.— Գիտես, Ամար աղէն էս ծանար իքամ, ազար ընչի ա էրեր: Քուլլըքն ասաց.— Չէ, չի գիտեմ:

Ասաց.— Էսօր էլի միջի աղէք, իշխաններ օր էկան էսօր աղջրկան յուզնկան, օր չտուեց, էլ մարդ գինք վրէն չըչեց, տեսաւ որ աղջիկ պաի մնայ ուր վրէն. էս ազար ու իքամ որ էրեր ա, բալի մէկ կերպով տայ իրկայ:

Քուլլըք ասաց.— Ի՞մալ պաի տայ իրկան:

Կեառօն ասաց.— Իմ մէր ըստուց քեանիմ օր յառէջ դացեր ա Ամար աղի տուն, կնկանից ա լսեր Ամար աղէն էդ բան պաի էնայ:

Քուլլըքն ասաց.— Ի՞նչ բան պաի էնայ:

— Ամար աղէն ազար-իքամ պաի էնայ, յետին դրուն պաի բերայ կթխեմ շարքար օսկի սանաւախի վրէն դիվնի յօրքալախ, ասա.— Ազան, իշխաններ, դուք յըմենքդ էլ էկաք իմ աղջկէ յուզնկան: Էնոնք էլ պաի ասեն.— Խան, մենք էկանք, բալի դու չտուիր . . . :

Կեառօն էս ասաց, պրծաւ, դարձաւ Քուլլըքին ասաց. — Քուլլըք, մեռնիմ քեզի, չէզի յէլիս մէկ բանմ էնիս. մեղի ինչ լաղա կայ յէմալ բաներուց. մենք էրկու խտտ կարիպ-երում աղայ ինք, յընկեր ինք յԱրարտանու երկրից էստեղ, մեզի կապրինք:

Քուլլըքն վերցուց, ասաց. — Կեառօ, վաղա իմ մէր Որտէն քեզի իմ խօրից չի բռներ ա. տես, քեզի խովըվուց ա, նախորդից ա, յուցկա, յտնուց ա բռներ ա, օր դու յէմալ վախկոտ լա. դու յէմալ է իմ խեք Սլէմանի տղէն չէզիս. միտդ չի գայ. իմ խեք մեռնելու վախք օտեար էրաց, ասաց.— Էն բան օր խարիր մարդ չի կեառնայ էնայ՝ դուք էրէք, օր խըլդ ասեն.— Տեսէք, հարձներ խոչ ին ու խոչի էլ գաւաի Մկայ դու իմ գլխուն խուրհան կը կարգաս, կասես. չեղի մօտենաս. ապա ես չմօտենամ, էլ որ մօտենայ. հազը Փարիչան խանրմի պէս աղջիկ կառիմ:

Էրկու աղբէր էպա մուտարա էրին, գացին մտան Ամար աղի դիւան. բարև տուեցին հազրներուն, բարև առան:

Ամար աղէն վերեանց ասաց.— Տեղ տուէք էդ էրկու ջանիւներուն:

Խաց բերին, խաց կերան. յըմեն բան խըրսաւ, հարեհեծ ձեռ էրաց ուր խայլօն, հարգիլին չինել, ջղարա քաշի:

Տեսան օր Ամար աղի մշկու ձեռ օսկի սանաւախ, մէկ կըթխեմ շարքար էլ վրէն դրած բերեց դիվնի յօրքալախ գրեց, յետ քաշուաւ:

Էդ նստող աղէք ու իշխաններ ասեցին յուրենց մտքով.—

Չանքմ, լակեր, չայ-շարքար էր, յառջին դրուն էկաւ, դայճայ էր էլմէն, մենք խաց կերանք, պրծանք, էս ինչ պտի էղնի:

Մէկ էլ տեսան Ամար աղէն վերուց. — Աղա-իշխաններ, դուք յըմենդ էլ էկաք իմ աղջկէն յուզնկան, ես չտուեցի:

Ասեցին. — Խն, դու սաղ մնաս, դու չտուեցիր, մենք էլ գացինք ուրիշ տեղէ աղջիկ բերինք մեր տղին:

Ասաց. — Յէսօր ես յէ իմ աղջիկ պտի կարգիմ, քանպա էրէք, էդ կթխէն իմ Փարիշան աղջիկն ա էկե, մէյսան կայներ ա. որն որ ընձի խեա փափաք ունի բարեկամ դառնալու, պտի էդ կթխէն վերցու, խմայ, էրթայ Արարատանայ ելի մէջ Խորը աղա Բրայիմ աղի ձին — Բէջան բերէ ընձի, ես պտի իմ աղջիկ Փարիշան խանքմ առանց խալնի ջապա էնիմ էնոր տղին:

Էդա յեփոր ասաց, էդ աղա-իշխաններ մտածեցին օր Ամար աղի էդ ասած յառաջարկութեն իրենց կուվարից դուրս ա, մէկից ձէն չէլաւ:

Մէկ էլ Ամար աղէն բօռաց, ասաց. — Աղա-իշխաններ, ձեզի ինչ էղաւ, խօ ես աղու չի թալիր իմ էդ շարքարի մէջ, յընչի մարդութենէ յընկաք. թօ տաս մարդ, քսան մարդ ձեզի չեղի, յառէջ արէք . . . :

Էլման մէկից ձէն չէլաւ. վոր հասար իրէք խեա Ամար աղէն բօռաց, մէկից ձէն չէլաւ:

Քուլը տեսաւ մէկից ձէն չէլի, յինք մէկէնց մէկ յէլաւ, Աստուած խանչեց, զշարքար խմեց, կթխէն թալեց շվրի ջեպը:

Յեփօր տեսան աղա-իշխաններ, Քուլը ջաշարքար էրից, էդ կթխէն խմեց. յըմեն ամօթէն կարմրան, յէլան ու յետ յոռի քաշուան, ամեն մէկ զնաց ուր տուն:

Քուլը ու կեառօն ուրանց քալսիր տեսան օր էրթան դըխ Արարատան: Ամար աղից օղնութիւն յուզեցին. Ամար աղէն էլ յէլաւ, էդոնց խարնըլի տուեց, պղտիկ քարվան մի բռնեց. յետե Քուլը դարձաւ, Ամար աղին ըսեց. — Գիտես, քու էլից էլ մեզի խեա պտի զնես խինդ մարդ. մէկ մեր խօրօղէր Նամաթի Իսան, օր խալուոր ա, Արարատանու ճամբաներուն քալաս ա, մէկ էլ Հեսանէ Մուսօն, մէկ էլ Բդոյէ Փլայ, Լըքոյէ Բակգատայ, մէկ էլ Գարուրաշա Ըռօմէ:

Քուլը ու կեառօն էսա խինդ խոզին վերուցին, շիտկան դըխ Արարատան էրթըլու:

Յեփօր յէգոնք յէլան, խեծան յուրենց ձիանք, յուրենց բազրեկեան քչեցին. համա յանկսկըծի էգոնց մէր Որտէն փողնի մէջ էգոնց ըռար էկաւ, ասաց. — Նն, որդի, խե՞ր ա, էսա դ՞ր կերթաք:

Տղէկներ ասին. — Նանէ, փառք Ասու, խե՞ր ա, մենք ըսեցինք

գչերսի ջարտ պտի գայ Ամար աղի տան վրէն, կերթանք օր մուղար կենանք:

Որտէն ասաց. — Լաօ, յընչի, Ամար աղի տուն աւիրէր ա, չի կռնար ձեզի օրական էրկու դան խաց տայ օր դուք զէդա բեռ ու բազրկան խաց բառցեր էք: Էդի ես չըմ հաւատամ. արէք, իմ ծծի կաթ ձեզի խալալ էրէք, ընձի շիտակ ջուհապ մի տուէք:

Տղէկներու ճար կտրաւ, ասեցին.

— Նանէ, անդառնալի ճամբէմ յընկեր ինք, կերթանք:

— Յ՞նք կերթաք, լաօ: — Կերթանք Արարատան, Խորը աղա Բրայիմ աղի Բէջան ձին բերենք Ամար աղին, օր Փարիշան խանքմ առանց խալնի ջապա էնա Քուլըքին:

Յեփօր տղէք էսա ասեցին, կրակ էղաւ, ընկաւ մօր սիրտ վառաւ, ըսեց. — Լաօ, էդ մեռնելու կթխէն զ՞ն պտի խմէք: Էդ տեղ էդոր մէկ յեթմ էկաւ, յուրենց մէկ խաղմ ըսեց.

Ա՛խ, դե՛, էօ՛յ, էօ՛յ օ՛ օ՛ օ՛ օ՛ օ՛

Ամար աղէն ծուր ա, ծուր ա . . .

Դե՛, Կիխնցոց, Մլանցոց խոչն ու բուղին, վի վի . . .

Վըր յիրար ժողվեր ա վի՛ վի՛ վի՛ . . .

Յնննով շարքար վըր օսկի սանարախին վի՛ վի՛ վի՛ . . .

Դիվնի յօրթալախ դեր ա վի՛ վի՛ վի՛ . . .

Որն օր ուր զամարդուրենի մեջ վի՛ վի՛ վի՛

Ուր հախուածի, սիլայի մեջ օր բերայ, վի՛ . . .

Էն երթայ Խորը աղի Բրայիմ աղի Բէջան

Արարատանու երկրի միջէն վի՛ վի՛ վի՛.

Մեջ խաղար եօր խարիք սնէն վի՛ . . .

Էն Ասուձոյ իզինով վի՛ . . .

Մարգարէի խօսով վի՛ . . .

Էն Փարիշան խանքմ ընձնէ առնի վի՛ . . .

Որտէն էս խաղն որ ասաց, Քուլը վըր մօրն ընըքաւ, ասաց. — Ամօթ չէ՛, դու քու խաղով Ամար աղի պատուին քիտար:

Ամար աղէն էլ էն դիխէն յէլաւ, բօռաց, ասաց. — Որտէ՛, յընչի ես կայներ տղէկներու ճամբաու վերէն, օղուսուզի պէս բէյուսուրթեն կենես. թո՞ղ թօ էրթան, Աստուծով բան չիկայ, սաղ կերթան, սալամար կուզեան:

Ամար աղի էդ խօսքի վերէն Որտէի սիրտ յէլաւ, էլմէն անէճքով խաղ մի ասեց. —

Դե՛ է՞օ է՞օ . . .

Ամար աղէն խե՛ր չսեսնի, չսեսնի, վի՛ . . .

Քո իրեք զէն մեռնի, մէկ սալսրկի վլացես,

Իմ երկու երում տղեկներ խարիպ երկրներ չհամբխես. հա՛յ վի՛...
 Եփօր Որտէն էս խաղ ասաց, Քուլլըքի հերսն յէլաւ, ասաց.
 —Նանէ, որ էն սիւտակ կաթի խամար չեղէր, ես պտի մզալիս մի
 դանի քօ սլտին օր քօ քամկէն դուս յէլնէր. մինք կայներ ինք
 օղաւրի վըրէն, տեղ կերթանք, դուս էլ էկեր իս, կայներ իս ջասաւ-
 քաւ պառաւի պէս բէյոււմութեն կէնիս:

Էս խօսքի վերէն Քուլլըքի հերս յէլաւ, մէկ զանկուն դարկեց,
 ուր խեծած էեանիկ ձիւս—Սոսըքի կողերուն. քչեցին ուրենց բեռ
 ու բարխանէն, բռնեցին Արարատանու ճանրէն ու գացին:

Էնդոնք որ դոսցին զըլս Արարատան, Որտէի սիրտ դարեան
 յէլման գետերու պէս բղտորաւ, կատրած արչու պէս գուտալով
 դարձաւ դէմի տուն էկաւ. լաց-լաց, նստաւ ու ուրին-ուրին դու-
 ռուրմիւր էղաւ, ասաց.—Վայ լըմըն, էս իմալ բան էր էրեցի, ես մէկ
 խեռ իմ տղէկներու հերսն խանեցի, էնդոնք էլ ընկան ճանրախ
 գացին. նա՛ ճամբխըններու սալըխ էդոնց էրեցի, նա յուրենց քե-
 ուկըններու սալըխ. էս իմալ բան էր էղաւ ու էկաւ վըր իմ գլխուն:

Սիրտ տայանմիւր չէղաւ, դուրս յէլաւ փողնի մէջ մօլիմ ըռասք
 էկաւ. ասաց.—Մօլա, գարի ես էլ մէկ մարդուս կը սլտտաի, օր
 ճամբխի տղէկներու յեանէն:

Մօլէն ասաց.—Ի՞նչ յագով կը ճամբխես:
 Որտէն ասաց.—Ձին խեծուցեմ, էրթաս, խասիս տղէկներուն.
 ես քեզի իմալ քարիձ կէնիմ, դու էլ յէմալ քարիձ էնես:

—Ի՞նչ քարիձ, ասաց մօլէն:
 Որտէն ասաց.—Կը խասիս տղէկներուն, կասես. ձեր մէրն
 կասէր. «ընկայ խըտ խալմախալին, չկրցայ յուրենց ճամբխըններու
 քարիձ էնէնք. թըխ մուղաք կենան. տաջի օր կերթան, Արարատ-
 տան, յուրենց յառջի, ճամբխու վերէն Չախմբխու սար կայ, էդոր
 մէջ պզտիկ քօլեր կան, էդ քօլերու տկից խազալներ կը փախին.
 չէղի ջանիւթեն էնին, յուրենց խեծած ձիաններով յետևից յըն-
 կին. համա օր յընկան, փշում տեղ դացին, ձիաններու յտներու
 նալեր կրակ տալով կը մաշի, ձիաններն էլ կը յոտմշին, էլ չեն կըռ-
 նար յուրինք, գուրինք դուււմնի յառջիէն սլըրծուն. մէկ էլ էնտեղ
 Հառայի դաշտ կայ, օր սասա աւազ ա, ջուր չիկայ, խըտ յուրինց
 ջուր վերցուն, օր յուրինք յուրինք ձիեր ծարաւ չմնան, հաբի չորս
 օր գչեր, ցերեկ էրթան աննալիս աւզոտ տեղից դուրս գան. յեփօր
 էլ դուրս էկան, ես գիտեմ, պտի յընկին կանանչ տեղ, յուրինց ձիեր
 պտի թողն արծըլու. Խըրպէ-դարան դաշտն ա, խոտած ջրի գօլեր
 շատ կան, մուղաք կենան, յուրենց ձիեր չի թօրկեն անտէր, օր
 էրթան էդ խոտած ջրեր խմեն, համա խմեցին՝ ունուտէ գընկին,
 էլ կուվի դաշտի մէջ վիղ ուրանց ծուռ կը մնայ դուււմնի յառջի,

յուրենց օսկի անուն փուշ կը դարձուցեն: Մէկ էլ կասես.— Խդըր
 աղա Բրայիմ աղին եօթ քախպուր ասկաւ կայ, կօթնի էլ գլխներ
 իմ ախպրտանքն ին, կօթն էլ սալանի ձագ են, մօրուց, մանկուց
 յուրենց ձեռներ մարդու արունով են լուացեր, յուրենց ծարաւ
 դուււմնի արուն խմելով են կոտրեր: Հարի մկայ իմ տղէկներուն
 յուրենց քեռէքներուն քարիձ չէրեր ի: Մօլա, հանդա քղի ասեցի,
 օր դու էրթաս, իմ ասածներ իմ տղէկներուն ասես. բան է, թէ որ
 շատ նեղ կընդին, իմ ախպրտոց ձեռաց մէջ թըխ եազալք մի յայտ-
 նեն, օր յուրենց խարգէքն ին, բալի Աստուած կամենայ սաղ էր-
 թան, սալանաք գան:

Մօլէն յէլաւ, խեծաւ ձին, քանիմ դուրուէ էլ յուր հախն ա-
 ռաւ ու դնաց:

Գնաց, ճամբխում վերէն մէկ քրդում գեղի ըռասք էկաւ. տե-
 սաւ օր էդ գեղէն քուրդ մի խատեր ա, մօլա չկայ օր տանի, գույս
 էդ գեղի քրդեր օր դմօլէն տեսան, դացին, ձիու դիզկին բռնեցին,
 ասեցին.— Ձաքի մինք մօլի մի ժուռ գուկինք օր դէսա խատած
 տանէք գրուէք, աքի, գրուա՛:

—Ես բան ունիմ, վազ կերթամ, ասաց մօլէն:
 Քրդեր սսին.—Քեզի գրուէն հախ շատ կուտանք, խատածի
 շորեր կուտանք: Եղլա օր սսին, մօլէն տեսաւ օր էդտեղ հախ շատ
 կաւի, յիջաւ էդտեղ, խատած գրուէք:

Մօլէն էդտեղ խատած կը գրուէք, Որտէն կայներ էր ճամբխուն
 վերէն, կաշքէր օր մօլէն գիկայ, յուրին բարի ջուխապմ բերայ:

Մէկ էլ տեսաւ ճամբխուց մէկ պայեմ էկաւ, Որտէն դնաց
 յառէջ, խարցուց.—Աղբէր, դու յուստի գուկեսա:

Էն էլ ասաց.—Ես Արարատանայ ճամբխուց գուկեամ,
 —Իմ տղէկներ տեսմը, մօլէն խասեր էր թէ չէ:

Քու տղէկներ տեսայ, կերթէն յուրենց ճամբխով, հըմա մօլէն
 տեսայ Ֆլան գեղ, մեռել կը գրուէք: Պայի էսա խօսքի վերէն Որ-
 տէն շատ դուււմնիւր էղաւ, ասաց.—Կայ, չկայ, մօլէն աղա՛ մարդմ
 էր, գնացի, խատածի ա ըռասք էկի, իմ ասածներ չգնացի, չխասի,
 իմ տղէկներուն շասի. էրթամ խէձնիմ, յընկիմ յետևներ:

Էկաւ, ձին խեծաւ ու դնաց. օր մի չուրի յիբկուն խառ-
 տուէք, դնաց մօտխաս էղաւ տղէկներուն: Կեառօն դարձաւ յե-
 տևից, աչքեց տեսաւ, ձիաւոր մի գուկեսայ, օր քօզ ու դուււմն յու-
 րին փաթեր ա: Կեառօն քախմին էրեց օր էս դալող ուրենց մէրն
 ա. դարձաւ Քուլլըքին ասեց.— Քուլլըք, էս յետևից դալող մեր
 Որտէն կը մնի:

Քուլլըք դարձաւ աչքեց ու Կեառօյի վերէն հերստաւ, ասաց.
 —Մեր մէրը ինչ բան ունի մեր խեռ, օր յէլի, ընկի մեր յետևից.

ևս մէկ հաղ ասեր եմ. եղու իմ խօր խալալ վաստակ չես, օր գործիմ մէջ մտիս, վասվասութեն կէնես»:

Էրկու աղբէր էսլան կը դրուցին, մէկ էլ աչքին յուրենց մէր — Որտէն էկաւ, իասաւ:

Քուլլըք ասաց. — Նանէ, խե՛ր ա, յընչի՛ կս յընկեր մեր յետեւէն, գուկեաս:

Որտէն ասաց. — Որդի՛, ախր ես ձեզի քաղցը կաթ եմ տուեր, ին ամիս իմ փորն եմ պախեր, քաղցը քուն եմ խրտեցուցեր, կեզի՛ օր ես մէնկենց մէկ մոռանամ:

Ինչ օր յառջի դրուն մօլին ասեր էր, մէկիկ-մէկիկ աղէկենբուն ասեց ու դարձաւ խաղով ուր աղբրտոց քարիձն էրեց յուր աղէկենբուն. —

Գե՛, եօ՛, եօ՛

Կեաւօ՛, լաօ, քու ետիկներ նեաններու ինչ ու ինչ են. վի՛ վի՛

Քո ետիկն օր կան, Հասոյէ Դուսեյի տղեկներն են, վի՛ վի՛ վի՛.

Կարիք են, յաչքեր ուրենց կապուտ են, յերեսները քնած, վի՛ . . .

Ձիեր յուրենց սպիտակ են, Արաքսանու են, վի՛ վի՛ վի՛

Մեզքեր յուրենց բարակ սածի են, վի՛

Յանկջներ ուրենց խրտ են, պոչեր ուրենց խամչի են, վի՛

Սադիք աղվրսու են, պնդներ կօսի խսր են, վի՛

Թամբեր ուրենց յԱնրափու են, գեամեր Դիարբաբու են, վի՛

Դիզգին ու սարեալեն Համասու են, վի՛

Ջանկուներ Հանիփոյին են, վի՛

Մըզբխներ յուրենց դեղին են, վի՛

Մըզբխներու գլուխ խամի պէս են, վի՛

Շորեր յուրենց Ջազայի են, վի՛

Թեւերու ապիւ սիւտակ են, Բաղդրսու են, վի՛

Շարվրներ կանանչ են ու նախուն են, վի՛

Մեզքի գօսիք քիւման են, վի՛

Գլխներու փուշիք սեւ են, բոլոր նխուն են, վի՛

Քօլզբներ յուրենց դեղի բրդից են, վի՛

Ջիզմեք յուրենց Ֆանարի են, վի՛

Նալչեք յուրենց բարակ են, վի՛

Բեդեր յուրենց սեւ ու դեղին են, վի՛

Էնդանց բեղերու յառչի մագեր օսկու պէս են, վի՛

Թրեր ուրենց Մըսրու են, վի՛

Խարաքիներ յուրենց Ֆարգի են, վի՛

Չախմխարեր կարիք են, վի՛

Դամանչեք ապրեւումով, արծրով զարդարած են, վի՛

Խայլուն ուրենց մեծ են, վի՛

Խայլոն ու չպուխներ ներկած են, վի՛

Խայլոնի գլխներ Թօխարի են, վի՛

Մեկ հաղ լցնելիս բուրբ ու կես բուրբ կը վերցնեն, վի՛

Էն վախք օր կուռի մայսան կը մսնեն, վի՛

Կասղած գիլու պէս շինած խայլոն յիւրու՛քելի վերելից կիտխցնեն,

Ա՛յ, կոնց երկու աղբեր չարխրնի են, վի՛

Խինգ աղբեր ուրենց մայսրնի օրբալախ կը կայնեն, վի՛

Էրկու աղբրսանք դուււրնի վերեն կը քեն, վի՛

Մարդ կըսպանեն ջուխք-ջուխք, վի՛

Թալան յուրենց աղբրսոց վերեն կը դարձուցեն, վի՛

Որտէն օր էս խաղն ասաց, Քուլլըքի խուսում կոտրաւ, ուր մօրն ասաց. — Նանէ, խոզի դու շուտով էդ բաներ մեզի ասած էղիր, մենք մեր տեղից ճամբախ չէլինք, ու մընչ էդ հաշարարին գարբարն չի վերուցինք, չի խմինք. մկայ թորկենք, ճամբխուց յիտ դառնանք, մեր նամուսին մենծ պակասութեն ա:

Որտէն տեսաւ օր աղէկենբու սիրա թուլցաւ, դարձաւ սիրտ տուեց, ասաց. — Լեօ, մարդ մի յառջև պոի դուււրմիւք էղի, բանմ չէնայ, օր էրեց՝ պրծաւ, էլ յետեից պոի չընկի:

Գեացէք, Աստղած ձեր խեան էղի, որձ գաւ մօրթելու համար ա, ձեր մախ ձեր յաչքի առջև առէք, զձեր նամուս պախէք:

Տղէկներ խանչեցին դուրենց Աստղած ու յընկեան ճամբախ, դացին դրխ Արաբստան. Որտէն էլ էդտեղից դարձաւ դէմի ուրենց առն:

Գացին-դացին, շատ ու քիչ Աստղած գինայ, մէկ օր էլ խառան Չախմխու սարը: Չախմխու սարը քելած վաղբը մէկ էլ տեսան մէկ խաղալմ հաււրնի քօլի տկէն յելաւ, փախաւ Եփօր Քուլլըք տեսաւ, Սոսըքի դիզիկն թողեց, յընկաւ յետեին:

Կեաւօն յետեին բօռաց. — Յուր կերթա, Քուլլըք, Աստղած քո տուն ախօլա, ախր մեր մէր Որտէն մեր յետեին էկաւ, բանմ քամբէխ էրաւ, միտղի չէ: Քուլլըք Կեաւօ խօսքին ախանջ չէրաց. ուրենք էլ բօռացին. — Քուլլըք, յընչի՛ կընդիս հայլըններու մեղք ու արընքի տակ, էդոնց ահուզար քեզի չի մնայ, յետ դարձի:

Քուլլըք էդոնց էլ ախանջ չէրաց. մէկ խեա ձին քչեց: Քչելու վաղբ էդոնք տեսան օր Քուլլըքի ձիու օտներու տկից յէմալ կրակ կը ցիւի, օր Ֆրոֆրոսցի ձէն յուրենց կը խափ, նալի կոտրենք յերկնուց յերեսէն կուզէր, կը թափէր: Էդոնք էլ յուրենց ձիեր ու բազրկեան քչեցին, Քուլլըքի յետեին գացին:

Քուլլըք լարեց էդ խաղալն տարաւ Հառայի դաշտ, Հառայի դաշտից էլ խանեց Խրպէ-դարան. էդտեղ դէմ տուեց ծառի մի քօքին, արծըթէ կօփալ թալից, բօկից բունեց, քաչեց, խանեց ձիու

վերէն, ուր առջև դրեց, առաւ, էկաւ ճամբխու վերէն կայնաւ, օր չուրմ բազրկեան դայ. խասի:

Քուլլըքն օր յընկաւ խազալի յետեէն, Կեառօն ու ուրենց յընկերներ կը մոռնան, ջուր չի վերցին յուրենց խաւ, էդլա ծառաւ յուրենք ու յիրենց ձիանք Արարատանու շոքի դէմ վառելով կուզին: Յեփօր Հառայի դաշտից դուս էլաւ, էկաւ Թրաք-դարան, էդտեղ խասան Քուլլըքին, օր խազալ ըռներ ա, ճամբխուն վերէն կայներ ա, յուրենց կաչքայ, օր գան, խասին:

Եդտեղ նոր հարեհօ ձիանքներուց յիջան, բազրկեան թափեցին. յըմեն էլ քնախատ ին, յընկեան ու քնան:

Քուլլըք դարձաւ, Կեառօյին ասաց.— Կեառօ, մեք կը քնենք, դու յիմաց մացի, ձիանքներուն մուխար կեցի. օր չի քաշուեն, էրթան խոտած գօլերու ջուր խմեն. խազալն մորթն, կրակ էրն, թալ վր կրակին էփն, չուրի մենք քնուց յէլինք, ուտենք, նոր դու քընի:

Եդտեղ քնան, Կեառօն բերեց, խազալն մորթեց, քերթեց, միս թալեց կրակի վերէն, էփաւ. խեա կերաւ, խեան էլ քուն տարաւ, ննջաց, խեան էլ կը խրտէր, ձիանքներուն կաչքէր, օր չէդի միամրտի, քնի, ձիանք էրթան, խոտած գօլերու ջուր խմեն: Մէկ էլ յանկրակի ջուն յիրան տարեր էր. մէկ էլ դարթաւ որ ձիանք չիկան. յինք վր յուրին հերտտաւ, ասաց.— Ասպած իմ տուն աւիրայ. հալամ ես վր էտնց պախնորդ ի, քներ իմ, ձիանքն դեացած: Յելաւ, դէմի ձոր վազեց, տեսաւ որ յուրենց ձիանքն են, խամարեց, տեսաւ, տեսաւ օր քամամ ին, մնակ Սոսըք մըջ չիկայ. էտտիս, էնտիս իրիչեց, չիկայ, իրիչեց դատանց ջրիմ գօլ կերեայ. տեսաւ օր գօլի ափ մէկ խառարթում կերեայ, վազեց, գնաց դըլն էդ խառարթուն, տեսաւ Սոսըքն ա:— Չանմ, ասաց, մեր Սոսըք ճերմակ էր, մկայ յորին սեցեր ա:

Ինաց, տեսաւ որ խոտած ջուր խմի, յէմալ ա ուսի, որ եօթ տեղով խօլան կտուեր ա, թամք վրեջէն յընկեր ա, յինք լէ յամալ սե քրտինք տուեր ա վերէն օր մարդ բռնայ, խասի տանայ սե ներկայ: Նոր Կեառօն փոր-փոսման ձեռ թալեց էդոր դիզկին բըռնեց, առաւ, էկաւ մըս յուր յընկերասնք. գնաց բազրկնի մէկել ձիանքն էլ բերեց, դարձաւ, նստաւ: Էլմէն կրակի վրեջէն միս վերուց, կերաւ Աչքեց, տեսաւ օր Սոսըք ուտեր ա, քիչ կը մնայ օր պատուի: Եդտեղ սիրա մըսմըուաց, խաղմ ասաց.—

Ա՛խ, դե՛ Կօ՛ ...

Ա՛յ Ասուծոյ շինած սիրս, կը կտրի, կտրի, վի՛ ...

Ա՛յ եդ ի՛նչ սեւ բայրաղ ա, իմ խօր դուռ սնկաւի, վի՛ ...

Ա՛խ, Քուլլըքի Սլեմինից, Կեառօ աղբօրից, վի՛ ...

Մէկմ ծամ կտրած Որեհի խամաւ չպըծնի. հայ վի՛ ...

Եդտեղ էս խաղի ձէն յընկաւ Քուլլըքի յականջ, յիմնարու պէս էլաւ, քնած տեղ ըսեց.— Են, Կեառօն խաղ կըսայ, տալ կըսայ, էդ ինչ բէյաւմութեն կէնայ. մէկ էլ քուն տարաւ, քնաւ:

Կեառօն էլման աչքեց, տեսաւ օր Սոսըք ուտեր ա, քիչ կը մնայ օր պատուի. սիրա մըսմըուաց, էլմէն խաղմ ասեց.

Ա՛խ, դե՛ Կօ՛ ...

Ի՛ե՛, անձեւ ու երակը չըսըուաց, ա՛խ չըսըուաց, վի՛ ...

Ա՛խ, Չախմբխու սարի Խրպե-դարի վերէն էլ խախրեաց, վի՛ ...

Վա՛յ Քուլլըքի Սլեմինից, Կեառօ աղբօրից, վի՛ ...

Մէկմ ծամ կտրած Որեհին չի մնաց, հայ վի՛ ...

Էս խաղն որ ասաց, Քուլլըքն էլ, յընկերակըն էլ Կեառօյի ձէն տան, յէլան: Քուլլըքն ասաց.— Կեառօ, յընչի էդլա բէյաւմութեն կենես, կուլաս, խէր ա, ինչ ա էդեր ա: Կեառօն ասաց.— Ասպած քո տուն աւիրն, յէլի, աէս, ինչ ա էդեր ա, ինչ սե էկեր ա Սոսըքի վերէն: Եդտեղ յընկերներով յէլան, աչքեցին, տեսան օր Սոսըք ուտեր ա, քիչ կը մնայ օր պատուի:

Եդտեղ, էդ սապապուն մէկ աղէկ օեմի էրեցին:

Քուլլըք էդտեղ սիրա տուեց յուր ընկերտեքաց, ասաց.

— Մի՛էք, իմ օղորմած խէր կասէր. լես Սոսըքի քամի վերէն եօթն օր, եօթ դիչեր կուլ կէնի: մկայ թըլն չորս օր էրթըցած էղի, իրեք օր էլմէն կը մնայ. ասաց, յէլէք, մէ թամքէք, ես գլխիմ էրթամ, դեամ, տեսիմ Սոսըք իմալ կեզի:

Բոտոյէ Ֆլան էլաւ Սոսըք թամքեց, տեսաւ Սոսըք յէմալ ուտեր օր ուր խին խօլան չխասաւ փորու տակից, բերեց, մէկ խօլանմ էլ կցեց խեա, նոր խասաւ: Քուլլըք յէլաւ խեծաւ, գլուխիմ գնաց էկաւ, Սոսըք չոքերու վերէն չոքրտաւ, բերան չքաւ աւազի մէջ, էդտեղ Քուլլըքն յիջաւ, ասեց.— Աղբէր, վախքմ կը թորկիմ, էս իմ խառախ արծայ, բալի աղէկնայ: Եդտեղ քանիմ օր մնացին: Քուլլըքն ասաց.— Կեառօ, խօ մենք չեկանք էտտեղ նստելու, մեդի բան կայ, մենք բանի յապով ինք էկեր, մըկայ մեր էրկիր, մեր բարեկամներ մեր ճամբխու կաչքին: Եդտեղ Կեառօն ասաց.— Յէսօք ես ձիանքներից մէկ պտի սագիմ, էրթամ, բալի Ասպած կամենայ, մէկ բալափուսմ գանիմ, բերիմ: Յիրիկուն որ էղաւ Կեառօն խեծաւ, գնաց: Ինաց մէկ բազրկընիմ ճամբխու վերէն կայնաւ, յինքն թալեց ուր մզըլիս փէտի վերէն, դուտուրի էղաւ, տեսաւ որ ծանր-ծանր բազրկընիմ ձէն դուկեայ. քչեց, բազրկնի առջև կտրեց, յինքն ու բազրկեան-բաւին կուտան, բազրկեան-բաւուն յաղթեց, որուն սղանեց, որուն էլ փախցուց:

Առաւ զբազրկեան ընտով, բարձով էկաւ, բերեց, յընկերտի-
քոց բոլոր հաււ էրեց, բեռներ թափեց, յընկերներ քնած տեղէն
խսկի չի գարթան. լուսու դէմ որ էղաւ, դեմքներու բառնալու
վաղր էկաւ, դավէք ուրենց վաղր իմցան, մէկ ուրենց ժամ տուե-
ցին, էդոնց զանգուլկներու ձէն յընկաւ Քուլլըքի, յընկերներու
ականջ, քնուկ տեղէն իմցան:

Քուլլըքն ասաց.— Կեառօ, էսա ինչ դեմա բերեր իս, մեր բո-
լոր հաււ ես էրեր:

Կեառօն ասաց.— Գնացի գիշերս բազրկեան թալնեցի, բերի,
հալա դուք քնած էք:

Աղէկմ լուսցաւ. Քուլլըք էլաւ, դեմքներու մէջ ժուռ էկաւ,
տեսաւ որ դեմք աղէկ չին. որի քամակն ա բրինդար, որը պա-
ռաւ ա. չի խաւնաւ, դարձաւ, Կեառօյին ասաց.— Էս բրինդար
դեմք յճուտ ես բերեր, տնր, թորկ էնտեղ Մեք էսոնք որ տա-
րանք մեր էրկիր, խալխ պտի ասեն.— Տէսէք, Սլէմանի տղէկներ
գացին ուրենց ջոջոյի ոլէս սախան տարեկան դեմա բերին, նամուս
էրեցին, պտի ծիծղան մեր վրէն:

Քուլլըքն որ Կեառօ բերած քալնին չխաւնաւ, Կեառօն էլ
յրմին դեմք բարձաւ, տարաւ թորկեց էնտեղ յուստ որ բերեր էր
ու դարձաւ, էկաւ: Էն մէկէ որ Քուլլըք ասաց.— Իմ ձին խազէք
յէսօր ես պտի էրթամ, քալնիմ:

Իրիկուան դէմ ձին բերեցին, Քուլլըքն խեծաւ, գնաց:

Գնաց, բազրկնի ճամբխուն վերէն էլմէն կայնաւ. զինք թա-
լեց վըր մզըրխի լիփեաին, տեսաւ որ ծանտր բազրկնիմ ձէն գու-
կեայ, քէց, յառէջ կտրեց, ասաց.— Էս ինչ բազրկան ա:

— Ախմախ, յօրք դու մեր էրկրէն չես, չես գիտեր ինչ բազր-
կան ա, ասաց Քուլլըքին:

— Յընչի՞ ըռըբար:

— Ես չըռըբիմ, մն ըռըբի, դու չես գիտեր, էսի Արաքստանայ
տէր Խղըր աղա Բրայիմ աղի տղի խարսնիքի քասպիրն ա կը տա-
նենք, մեր դեմքներու բեռ յըմին շաքար ու ըրինձ ա:

Բազրկան բաշին որ էղլա ասաց, Քուլլըք բեճեց, ասաց.—
Լէբբ, ապա յօրին կըռըբիր իմ խարցուցելուց. էդի աննախ իմ
խարսնիքի քասպիրն ա տեսըր լք, որ ես տանեմ Սլիվանայ էրկիր,
Քուլլըքի ու Փարիշան խանըմի խարսնիք էնիմ:

— Քուլլըքի խէրն էլ անիծած, Փարիշան խանըմին էլ խեռ, ասաց:

Բազրկան բաշու էդ խօսքի վերէն՝ Քուլլըք գուրգ մը գարկեց
բազրկան բաշու քամկին, նետը սրագողէն դուրս տուեց: Բազրկան
բաշին յընկաւ գետին, մէկէլ մշկըներ թորկին փախան:

Քուլլըք քէց, զբազրկան առաւ, էկաւ, բերեց ընկերներու

մօտ բեռներ թափեց, դեմքն էլ բոլոր հաււ էրեց. յընկերներ քը-
նած տեղից չիմցան: Խըլուսուն յէլան, տեսան որ խարիը խատ սև
դօս դեմա Քուլլըք բերեր ա, որ մէկ խատ կածի խարիը օսկի:

Քանիմ որ յընցաւ, Կեառօն ասաց.— Քուլլըք, մենք չուրի յնժի
քալան-բուտ էնինք, ախր մենք բանի ենք էկեր, մեզնից մէկ էր-
թայ քասպիրն էնայ, տեսի թէ Խղըր աղա Բրայիմ աղի էլ սրտեղն ա
դրեր ա, էրթանք, բալխի քալուրմ Բէջան պրծուք բերինք:

Էն մէկէլ որ Կեառօն էլաւ գնաց բարձր դարի վերէն կայնաւ.
աչքեց, տեսաւ որ Խղըր աղա Բրայիմ աղի էլ էկի, մեծ գետով էն
դեմա դրեր ա, յէմալ որ կօն ա գարկեր էրկնուց աստղին խեսապ
կայ, էդ կօնեքուն չկայ: Տեսաւ որ էդ էլի միջից մէկ պայեմ ձին
եռլըրից բռներ ա, դէմ գետ կը բերայ ջրելու. էդ ձին էդ պայի
ձեռաց մէջ յէմալ կը խաղայ՝ որ վերիի ապրեմէ շալիկ Ֆուլամի
կեղի, համա էն կնդար խաղալու մէջ, էն կնդար խէննս պայէր որ,
եռլար ձեռաց մէջ խսկի չի գրեր: Կեառօն որ էսլա տեսաւ, էկաւ
Քուլլըքին ասեց: Քուլլըքն ասաց.— Կայ, չկայ, էդի Բէջան ա.
խըլուսուն ես իմ ձին պտի սագիմ, էրթամ, Ասպած կամեայ բալ-
խի բերիմ:

Էն մէկէլ որ խըլուսուն շուտ Քուլլըքն էլաւ, առաւ զուր նեռ
ու անեղ, խեծաւ զուր ձին, խանչեց զուր Ասպած, գնաց:

Արև նոր ծաղկեր էր, խասաւ էն դարի գլուխ կայնաւ, որ ուր
աղբէր կայներ էր. մէկ էլ տեսաւ Կեառօ ասածի պէս մէկ պայեմ
էլի միջէն ձին քաշելով բերեց դեռ ջրելու: Քուլլըք գնաց դեռի
ափ կայնաւ, ասաց ձին բերողին.— Աղբէր ջան, բրիօն (ջրի անցք)
սր մէկն ա: Էն էլ ասաց.— Դու մեր էրկրից չես, չես գիտեր բիօն
սր մէկն ա, ընձն էլ խարցուս:

Քուլլըք ասաց.— Աղբէր, յէսօր էրկու որ ա, որ ես Խղըր աղա
Բրայիմ աղի քալան տարած դեմքներու էտն եմ ընկեր, գշեր,
ցերեկ չեմ քներ, խեղքս գլուխս չէ, դուց բիօն քինէ կը խարցում:
Էդ ձին ջրող պայեմ նշանց տուեց բիօն:

Գնաց Քուլլըք, գետն ընցաւ, էկաւ էդ ձի ջրողի մօտ կայ-
նաւ, խարցուց.— Աղբէր, էդ ինչ ձի ա:— Աղբէր, վախենամ դու էս
էրկրից չես. դու չես ճանչնաս, էսի Խղըր աղա Բրայիմ աղի ձին ա:

— Աղբէր, ես քե յառջի դրուն ափ թէ քնագոխ իմ, խեղքի
վրէս չէ. էդ Խղըր աղա Բրայիմ աղի սր մէկ ձին ա:

Բէջան ա, դու չես ճանչնար:

— Հալա տեսնիմ, էդոր դիզկին տուր ընձի.— Ձիու դիզկին յընչի՞
տամ քո ձեռ.— Տնր, կասեմ, շան որդի:

— Շան որդի դու ես:

Քուլլըք մէկ շափալեխամ էզարկ ակնջկոթին, ձին ձեռնէն ա-

առաւ, ասաց.— Կերթաս, հաւար կը տանես, կասես. «Քուլլըքէ Սլէմին էկաւ, զարկեց, Բէջան առաւ, գնաց»:

Քուլլըք առաւ Բէջան, փախաւ: Ձի ջրոզն դարձաւ. հաւար թալեց էլի մէջ, սոսց.— Հայ հաւար, «Քուլլըքէ Սլէմին էկաւ դարկեց, զԲէջան տարաւ»:

Միօր Խզըր ադա Բրայիմ աղէն բեցին ուրենց սայիս կը բռնայ. խանչին, հերսոտան, ասին.— Մի բեր, «Քուլլըքէ Սլէմին ձին տարաւ», որ էզլա բուս, էլ էնդոր քեռիք էտեէն չէրթան. էդ շան որդիք մեր էլից, մեր էրկրից լարեցին, էս քանի տարի կէր հանգիտ էնք, էդ օձու ձագեր էլմէն էս տեղեր փայտայ էզան:

Եզանդ դաճե-հաւարեն զարկեցին, էլ յըմեն ժողովան վըր յիբար, Քուլլըքէ Սլէմինի քեռիք — Հասէ Գուտէ աղէկներ եօթն էլ խեծան, առան ուրինց խեա խազար եօթ խարիբ ձիաւոր, ընկան զարսի էտեէն. եօթ տեղով օղոլ բռնեցին, եօթ ճամբիու գրուխ կտրեցին: Քուլլըք ինչ էրեց.— Բէջան տարաւ, խանուց յուրենց բազրկընի մօտ, դիզկին տուեց իր բարերի ձեռ. ասաց.— Բարեր, էս Բէջանի դիզկին տուեցի քեզի, դուն էլ տնր, սուր Ամար աղին, մեր մարգարէի օրհնութիւնով Փարիշան խանըմ առ, բեր ընձի: Եզանդից Կեառօն ու Քուլլըք բազրկան բարձան, ճամբիու դրեցին: Քուլլըք բերեց Սոսըք թամբեց որ խեծէր, Կեառօն ու յընկերալիք ասեցին.— Քուլլըք, էդ ձին մի խեծի, էդի խոտած գօլի ջուր խմեր ա զաւալու ա, քեզի չկոնայ քու դուռնի աւջեէն պըրծու. արի, որ մեզի ախանջ կենիս՝ զԲէջան խեծի: Քուլլըք խեռտաւ վըր Կեառօնի ու մէկել յընկերաւորոց, ասաց.— Իմ օղորմած խէր վըր Սոսըքի քամկին կուի էրեր ա, էս էլ կէնիմ. էս Բէջան խեծիմ, օր ուրիշներ ասեն «Թէ որ Բէջանի քամկին չեղէր՝ էն կուտնր կուի էնէր», էս էդ նամուսըգութեն կը բերեմ իմ վրէն:

Յընկերներ տեսան որ Քուլլըք զուր ձին չի փոխեր, ասին.

— Բէջան չի խեծիր՝ մեր ձիանքներուց թող խեծի:

Քուլլըք էլման չի խեծաւ, ուր ձին Սոսըք խեծաւ, Կեառօն էլ ուր ձին: Բազրկան ճամբիու դրին դըրս տուն:

Ուրենք էրկու աղբրով գացին կայնան ճամբիու վըրէն. շատ աչքեցին, տեսան օր Խզըր ադա Բրայիմ աղի ասկար չէկաւ, ուրենց չի գտաւ: Քուլլըք ասեց.— Կեառօն, արի, մենք քչեք յառէջ, էրթանք օր չէլի էզոնք բուն թէ.— Եկան, ձին փախցուցին, գացին մէկ տեղմ տափան: Բչեցին, գացին ասկրի յառէջ կտրեցին: Տեսան օր եօթ քաղուր ասկար էլ էկե, ջամ էդէ վըր իրուր գուկեայ. տեսաւ որ ուրենց մօր աալրիսի պէս ուրենց եօթ քեռիք ընկած են ասկրի յառէջ. կօտի խար խալլօն քուրուց լցեր են. եօթն էլ իրարու թիկ վերեւէն յիրար ձեռնէն էդ մէկ խալլօն կը

խին, մէկ մէկ խուլաղ կը դարկեն, կուտան յիրար. մուկն ու դուլման բուներ ա էզոնց վըրէն ու դուկեան: Եզանդ Կեառօն ասաց.— Քուլլըք, մենք ճանչորութեն չիտանք մեր քեռեցներուն: Քուլլըքն ասաց.— Տնւր:

Եզանդ Կեառօն խաղով խասկայուց ուր քեռեցներուն թէ մենք ձեր խարգեքն ինք.—

Ռե, եօ ...

Ա՛յ, հակառակուից-հակառակուից, վի՛ վի՛ ...
Ա՛խ, յեսօր յիրար դեմ յեւած՝ Բեռիք, խարգեք կուի կենից, վի՛ ...
Քուլլըք Սլէմին անվախ առիւծ չի մեցի Բեռեքերու մայցնից վի՛ ...
Թըլս իմ Բեռիք դուրս գեան վի՛ վի՛ ...
Խազար Եօր խարիբ մարդու խեց կուի կենիմ, հայ վի՛ ...:

Էս խաղն օր էզլա ասաց Կեառօն խասկըցուց ուր քեռեքներուն. էզոնց ջոջ քեռին ուր աղբրաբըոց դարձաւ, ասաց.

— Սղբ ալք, լեցիք, էդ ձիաւոր ինչ ասեց ու խասկըցուց մեզի ուր խաղով. էսոնք մեր խարգեքն ին, քիչ մնաց որ մենք մէկ ձիու խամար մեր ձեռներ մեր խարգեքներու տրուենով լուայինք. արէք, յես դառնանք, թօ էզոնք էլ առին ձին, էրթան:

Պզտիկ աղբէրն ասաց.— Սղբ տանք, էօ օր մեռնիմ, էզլա բան չեմ էնիր. էս իմ նամուս կուտամ խարգին, իմ աղի ձին կը թորկեմ տանեն. էս էզաւ խարիբ տարի, իմ պապու վաղրից չուրի մկայ մենք խալլալ աչքեր ենք մեր աղբներուն. մեր խէր Հասէ Գուտէ օրից չուրի մկայ դըռ մեզէն բան տարու չեղի. մկայ օր թողնք էդ ձին տանեն, ուրիշներ էլ չեն ասի թէ ուրենց խարգեքներուն խարք էրին. սրի տան. «Խէրերն անիծած, վախեցան, չճօտեցան: Իմ մեռնելու օրը յեսօր ա, որձ դառը դանակի խամար ա», բսեց ու արօ էրեց. քչեց Քուլլըքէ Սլէմանի վրէն, մէկել աղբրիք տուեցին էտեէն: Էդ վաղը Կեառօն Քուլլըքին ասաց.— Քուլլըք, արէք, փուշուս տեղ փախինք մեր քեռիքներու առջեէն:

Քուլլըք ասաց.— Փախինք:

Եզոնք որ փախան՝ ճգտուան, չորս քեռիք ընկան Կեառօնի էտեէն, իրեքն էլ Քուլլըքին Փշուս տեղ որ փախան, խրեշտակ Ամենակալին իջաւ Քուլլըքի առջև ու ասաց.— Քուլլըք, գու կասիր. «էս խազար եօթ խարիբ ձիաւորից չեմ փախիր, մկայ իրեք ձիաւորից կը փախես»: Քուլլըք էզանդ դարձաւ քեռեքներու վըրէն: Կեառօն տեսաւ օր Քուլլըք դարձաւ, յինք լէ դարձաւ, դօս տուեցին քեռեքներուն ու ասկրին, քչեցին: Իմալ օր էրկու գէլ ընկին մըջ օչխրին ջարդայ, աջ թեկն՝ աջ ջարդեցին, ձախ՝ ձախ ջարդեցին, ու լարեցին, խելի տեղ տարան:

Քուլլըքի ձին—Սոսըք, չէ օր գասալու էր. էլ չկրցաւ էտենե-
րէն խասցուցեր. էգտեղ մէկ ջոջ խեղեղի խանտակ ընկաւ էգոնց
ձիանքներու առջև, քեռէքներու ձիանքը թռան ընցան. Քուլլըքին
թռաւ, յառջի օտներ կախ մնաց խանտակի փէշի վըրէն, յետի օտ-
ներ մնաց խանտակի մէջ: Էգտեղ քեռիք զարձան Քուլլըքի վերէն,
ամեն մէկ իրեք խառ նետ ու անեղի շիշ զարկին Քուլլըքին, ինն
տեղով բրինձար էրեցին:

Էգ կուռու մէջ Կեառօյի աչք Քուլլըքի վերէն էր. տեսաւ օր
քեռիք զարկին Քուլլըքին բրինձար էրեցին, ինքն էլ զարկեց զուր
քեռէցներու զերկուսն սպանեց, քշեց, խասաւ ուր աղբօր մօտ.

—Քու հալ ինչ ա, ասաց Կեառօն:

Քուլլըք ուր ջանի միջի շիշեր ինչ օր էլաւ, Կեառօյից գող-
տուկ քաշեց, խանեց. ինչ օր էլ չէլաւ՝ կոտորեց, ջանի մէջ մնաց,
օր Կեառօն չի տեսնէր, չի վախենէր:—Աղէկ իմ, Կեառօ ջան, ա-
սաց. ես ձիու վրեջէն ընկայ, դուխս քիսաւ քարին, խեղքս կեր-
թայ. դու կուռի, առուծի պէս ջարդէ, խափլանի պէս արուն
լափէ, էլ կայնելու ժամանակ չէ:

Կեառօն գիտէր օր Քուլլըք ինը տեղով բրինձար ա, համա
ուրնից կը պախայ, չըմբի զարկելու վաղրը տեսաւ:

Կեառօն էգտեղ մտաւ ասկրբի մէջ, ջարդեց, զարկեց զուր
մէկ քեռին էլ սպանեց:

Էգտեղ էգոնք կը կուռէն, Քուլլըքի բազկերնի խեռ էրթըցող
ընկերտիք տեսան օր Քուլլըքն ու Կեառօն յանդըցան չէկան. Բըդ-
դօյի Ֆլան զարձաւ Քուլլըքի բարեր—Նամաթի Իսին ասաց.—Մեր
յընկերներ յանդըցան, արէք, մեզնէ էրկու խողի դառնանք էգոնց
քասալին, մէկելոնք թող քարվան քշեն: Էգտեղ Բըդդօյի Ֆլան,
Նամաթի Իսան զարձան էգոնց հաւարին: Էկան, Խըպէյի-դարան
խասան. Կեառօյին տեսան օր քրտնփչեր ա, կուռ կէնայ, խար-
ցուցին. —Քուլլըքն յո՛ւր ա: Կեառօն էլ չըսեց թէ բրինձար ա, օր
չի վախենէ. էգտեղ խաղով խասկըցուց ուր բարօր ու Բըդդօյի Ֆլային.

—Դե, եօ ...

Խըպէ-դարան կը պսոսայ, կը պսոսայ, վի՛ ...

Քուլլըքի Ալեմիճի նեներ կող առուծին խաչուփառ ա, վի՛ ...

Հակեար դու Քուլլըքի Ալեմիճ կը խարցուս, վի՛ ...

Իմ ձիաւոր վեց կրակի սեռ, հայ վի՛ ...

Չախմըխու սարի յեճու եօք խազար եօք խարի կրակով կը
վառայ, հայ վի՛ ...

Էս խաղն օր ասաց, էգոնց բարէր զարձաւ Բըդդօյի Ֆլային

ասաց. — Կեառօն օր էս կանսար մարդ սպաներ ա, մկայ Քուլլըք
զըմնու ֆօֆ բերեց:

Էգտեղ Կեառօյի խեռ մէկտեղ մտան կուռի մայսան, ու
կուռան. Բըդդօյի Ֆլան էլ զարկեց Քուլլըքի մէկ քեռին սպանեց:
Ասկար տեսան օր ուրենց զխաւորները սպանուան, թորկին փա-
խան: Էգ իրեք խողին յընկան էտեներէն, չուր մի գետի բերան
լարեցին:

Որը թափաւ գետ, խեղդաւ, որը սպանեցին. Նամաթէ Իսան
զարկեց Կեառօյի էրկու քեռին էլ սպանեց, մնաց ջոջ քեռին. քը-
շեց յետեէն, մզախ պըտի զարկէր քամկին՝ Կեառօն Նամաթէ
Իսին ձեռ բռնեց, ասաց.—Էգ մէկն էլ բաշխա իմ ծամկտրած մօր
խարբին, մի սպաներ:

Կեառօն տեսաւ իր քեռիք վեցն էլ սպանած՝ սիրտ մռմռաց.
Էստեղ ուր քեռէքներու վերէն խաղ մը ասաց.

—Դե, եօ ...

Ա՛խ, խըպէ-դարան մեկ բարակ համբախ կեր, վի՛ ...

Քեռուս ասկար ծանց եր, վի՛ ...

Չամբախ բռներ եր, մեր վերեճ գիկեր, վի՛ ...

Ա՛յ, իմ վեց ֆեռիփ սպաներ եմ, վի՛ ...

Իմ ծամկտրած մօր խարբին իմ մեծ ֆեռին բաշխեր եմ վի՛ ...

Կեառօն օր էս խաղն ասաց, պըծաւ, բարեր Կեառօյին ա-
սաց.—Քէլա՛, էրթանք զըլս Քուլլըք, Քուլլըք մկայ էն մէկել մնա-
ցածներու ֆօֆ բերեց:

Բարօր էս խօսքի վրէն Կեառօյի սիրտ մռմռաց. Քուլլըքի
վրէն մէկ խաղմ ասաց.

—Դե՛, եօ՛ ...

Դե Խըպէ-դարան անճառի մեջն եր, մեջն եր, վի՛ ...

Քեռուս ասկար ծանց եր, դարից գիջներ, վի՛ ...

Հակեր դու Քուլլըքի Ալեմիճ կուռող առուծ կը խարցուս, վի՛ ...

Դե՛, Խըպէ-դարան ինը տեղով բրինձար գբի մեջն եր, վի՛ ...:

Կեառօն օր էս խաղն ասաց, ինչօր ջուր մաղես բարօր ու
Բըդդօյի Ֆլայի վերէն. ասին. — Վայ, լըմըն, մեկեր Քուլլըք զար-
կուներ ա, Կեառօն մեղնից կը պախէր:

Նոր էգտեղ փէտ ժողվեցին, տարան Քուլլըքին մօտ օր քա-
պուր շինեն, դնեն վերէն, տանին Գացին, Քուլլըքի վերէն կայնան:
Կեառօն խարցուց.—Քուլլըք, քո խալն ինչ ա:

Ասաց.—Ասպած քո սուն աւիրա՛, աղէկ վըր ընձի կը խար-
ցուցէք, ես ծառաւ մեռայ. կունմք ընձի փշուս ջուր խասուցէք:

Նոր մտան, դրից Քուլլըքին շարկին, խանին, ձին էլ քային, դուրս խանին: Քուլլըք էլմէն ասաց.— Ես ծառաւ մեռայ, Կեառօ:

Կեառօն ասաց.— Աղբէր ջան, էս մօտիկ տեղեր ջուր չկայ, թէ ջուր էլ էղի, աման չկայ օր լցում, բերեմ:

Քուլլըք ասաց.— Իմ գիզմի քայ իմ օտնէն քաշն, խանն, տար գետից ջուր բեր, էս խանն:

Կեառօն օր էկաւ օտաց մօտեցաւ, գիզմէն քաշելու խամար, տեսաւ օր գիզմի մէջ լիք արուն էր լցուեր. քաշեց չքաշեց՝ էլ դուրս չէկաւ. յետին դրուն մէկել օտաց գիզմէն քաշեց խանեց, գնաց. բերեց ջուր տուեց Քուլլըքին, խմեց:

Էդ տեղէն Քուլլըքին դրեցին քապուտի վերէն, բերին խասուցին բազրկրնին, մէկ ժիր դեվիմ վերէն բարձին Քուլլըքի քապուտ:

Քուլլըք ասաց.— Իմ ձեռ քապուտից դուրս բաց թողէք, թող էրթայ դայ, օրօրուի. օր կը նշանակէ ախշար էսլա գիկայ, էսլա կերթայ. ձեռքով էկայ, դաբտակ ձեռքով կերթամ: Մէկ էլ ասաց.— Ես էս բեներուց չմեռնիմ, հարի իմ մէր Որտէի ձէն իմ յականջ չընկի:

Էն տեղէն յընկան նամբախ, էկան խասան շառայի դաշտ. Քուլլըք տեսաւ քապուտից օր Սոսըք կը քէլայ, համա օտներ կը չքուի մըջ աւղին, էլ չկունայ խանայ. ասաց.— Կեառօ, մեռնիմ քեղի, իմ թուր քաշն բեր, անը իմ ձեռ: Կեառօն թուր քաշեց, բերեց տուեց ձեռ:

— Կեառօ, ասաց, դէ, գնն, Սոսըք բեր, իմ թրի տակով ընցու, հալա էս իմ ձեռ խողցում, տեսիմ Սոսըք առջեայ պէս կը խաղայ թէ չէ:

Կեառօն գնաց Սոսըք բերեց, իմալ օր թրի տակով լընցուց՝ Քուլլըք թուրմ գարկեց. վիզ կտրեց: Կեառօն ասաց.— Տնաւեր, յընչի փիցուցիւր ձիուն: Քուլլըք ասաց.— Չը՞ տեսիր, մնացել էր:

— Ե՛, թա չիգէր, կը թորկէնք էստեղ սաղ, կերթէնք:

Ասաց.— Ես չուտով ըսեր եմ, կեղի օր իմ մէր Որտէն քե իմ խօրից չի բռներ ա. ախր իմալ սաղ թորկիլ տաս, օր վաղուան օր Արաբտանայ կիւար գառնէր, էստեղ գտէր Սոսըքին տանէր, ապէր.— Բա տիրու խէրն անիծած, քենով էկաւ, կուիւ էրաց, քե էլ թողեց դասի ու գնաց: Տանին Սոսըքն էնին բէրի ձի, կաթ բառնան, բերին գեղ:

Էգտեղից բազրկան քշեցին, էկան խասան յուրեց քաւըքնին մօտ: Գեղի գառնարած տեսաւ, հեռեվանց օր Քուլլըքի քաւըքն էկաւ, վազեց գեղ գնաց, յակընճկըլայ տարաւ Որտէին թէ.— Քուտղէկներ էկան:

Որտէն էլ Սոսըքից մէկ խարախ քուռակմ կէր, տուեց բառ-

խէս յակընճկըլայ բերողին, օր կածէր խարիւր խատ գեղին օսկի: Գառնարած քուռակու վերէն ուրախացաւ, տարաւ:

Որտէն էլ խանքախուր յէլաւ, վաղեց աղէկներու յառջև. յեփօր մօտխաս էղաւ բազրկրնին, խամբրեց, տեսաւ օր Քուլլըքն ու Սոսըք չերան, դիտցաւ օր սպանուեր են. էգտեղ սիրտ մըռմուաց խաղմ ըսեց.—

Դե՛, եօ՛ ...

Ասձու սեղծամ սիրսի մրնեց ու ասպեց, վի՛ ...

Այքերու գեմ էկաւ մըծ ու դուման բռնեք, վի՛ ...

Ես յաչխի ձիաւորներու մէջ գըրցուցի, վի՛ ...

Քուլլըքն ու Սոսըք մեջներ չեբեց, հայ վի՛ ...:

Որտէն օր էս խաղն ասաց, ձէն քապուտի մէջ լընկաւ Քուլլըքի յականջ. էգտեղ Քուլլըք զխողին տուեց:

Կեառօն Քուլլըքի խողին տալն օր յիմցաւ, էնդոր լալն էլ էկաւ. սիրտ մըռմուաց, մէկ խաղմ ասաց.—

Դե՛ եօ՛ ...

Խրպե-դարան կը պսքեք, կը պսքեք, վի՛ ...

Քեռուս ծանր ասկար վը մեզի գուկեք, գուկեք, վի՛ ...

Հակեք դու կը խարցուս Քուլլըքի Սլեմին, վի՛ ...

Կուղ առուձ, վեց կրակի սեք, վի՛ ...

Սպանուած ջանգակ վը բեռներուն գուեր ա, վի՛ ...

Սոսըքն էլ Հառայի գուտս մընջ աւղին մնացեք ա, հայ վի՛ ...:

Կեառօն օր էս խաղն ասաց, Որտէի խեք գնաց. խասան պորտ օլըրեցին, խեք էկաւ գուլա, յէլաւ, խաղով Կեառօյին բեպատիւ էրաց.—

Դե՛, եօ՛ ...

Խրպե դարան փեք ու փեքով, փեք ու փեքով, վի՛ ...

Ա՛յ են վաղը օր քա եքուիք, հայ վի՛ ...

Կրնկէն մայսան գլխաբաց, բոբիկ օտով, հայ վի՛ ...

Եաման, յըմեն հալ, յըմեն հալ, հայ վի՛ ...

Մարդ կապանեն, նանցըցուած են անուն, վի՛ ...:

Մէրն օր էղաւ ասաց, կեառօյին քիսաւ, եանի թէ դուք ձեք քեռէքներու խեռ չկունէք կուիւ էնէք, յընչու գնացիք: Կեառօյի խեռն էլաւ, մէկ խաղմ ասաց.—

Դե՛ եօ՛ ...

Դիսկի են Խրպե-դարայի փեքեք, վի՛ ...

Քեռուս ասկար ծանր ծանր մեր վերէն գուկեք, վի՛ ...

Ա՛խ իմ վեց էքուիք քամամ սպանեք եմ, հայ վի՛ ...

Մեծ հեռիս ծամ կհրած Որսեի խաբրին բաշխե եմ, վի՛ ...:

Կեառօն օր էս խաղն ասաց, Որտէն զարկեց վըր չոքերուն, ասաց. — Վայ լըմըն, համ իմ աղբրտիք սպանած, համ իմ տղէն, համ էլ Սոսըբ:

Եդտեղ խեղք էլմէն յընցաւ, ջուր բերին, ցանին յերեսին, խեղքն յէկաւ զուխ:

Յէլաւ, տեսաւ օր խալիւոր Նամաթէ Իսան—Քուլլըբի բարէր բերեր ա Բէջանի դիզկին կիտայ Ամար աղի ձեռ, կըսայ. — Դճւ էրթըցած օր խոսա էկար, թէ որն օր Բէջանի դիզկին ուր ձեռով բերայ, տայ իմ ձեռ, ես Փարիշան խանըմ էնդոր կուտամ:

Ամար աղէն ասաց.— Խն, յէմալ ա, ես խոսա էկայ:

— Օր յէմալ ա, հանդա ես դիզկին տուեցի քո ձեռ, դու պէտք Փարիշան խանըմ տաս ընձի:

Եդ Նամաթէ Իսի խօսքի վերէն փշում Ամար աղէն փշամզաւ, ուր մտքի մէջ ասաց. — Ջանըմ, ես իմալ մէկ ձին յապով յէլիմ, իմ լուսու պէս աղջիկ տամ էսա խարիր տարեկան խալիւորին:

Եդտեղ Ամար աղէն Կեառօյի խաբրին էս խաղով քիսաւ.—

Դե՛ կօ՛ կօ՛ ...

Կեառօ՛, որդի, ես խօսեմ գեռ ին, գեռ ին, վի՛ ...

Իմալ օր անգին քար յընկի քիսի քրկեմ, վի՛ ...

Եդ երած կսրեճուրեմ ոչ քոն ա վի ...

Կսրեճուրեմ ես խալիւոր բարօրն ա, հայ վի՛ ...:

Ամար աղէն էս խաղն օր ասաց, Կեառօն դարձաւ ուր մօր խարցուց.— Նանէ, էս Ամար աղէն ծուէր ա, յորին զիս բեպատիւ էրաց:

Մէրն ասաց.— Որդի, յընչի՛ ծուեր ա, չըս անսի, քո խալիւոր բարէր ձիու դիզկին բերե, տուեր ա Ամար աղի ձեռ, կըսայ. «Եդած կտըրճուրեմ իմն ա, պէտք ա դու Փարիշան խանըմ տաս ընձի»:

Մէրն օր էդրա ասաց, Կեառօյի յաչքեր թուա դադաթ. Որտէն էլ չի թորկեց օր Կեառօն բան ըսէր. յինք էդտեղ Ամար աղին մէկ խաղմ ասաց.

Դե՛, կօ՛ ...

Խրպե-դարան ձմերուկ կայ, ձմերուկ կայ, վի՛ ...

Ամար աղեմ խիլի խեռ չի տեսայ, վի՛ ...

Կորցուցե եմ բիրուլն ու ծաղիկ, վի՛ ...

Դօլ ու զուռնեմ բերեմ, հայ վի՛ ...

Կուտոյ առուծ Քուլլըբէ Սլեմին քաղեմ, վի՛ ...

Նոր գանգ Կեառօյի խառնիմ, հայ վի՛ ...

Փարիշան խանըմի խեռ բռնիմ, վի՛ ...:

Որտէն օր էս խաղն ասաց պըծաւ, Ամար աղէն ասաց.

— Որտէ, ես իմ խօսքի տէրն եմ, որն օր ձիու դիզկին բերի, տուեր ա իմ ձեռ, ես էնդոր կուտամ Փարիշան խանըմ:

Ամար աղէն ու Որտէն իրարու խեռ զրուցալու վաղք Փարիշան խանըմ խանչեց Կեառօյի մնացած յընկերտիք, դողտու խարցուց.— «Թէ էս նամուս սրն ա էրեր ա:

Եդտեղ էլ ըսին.— Կեառօն:

Փարիշան խանըմ օր սալըղ էրաց, դուս էկաւ, տեսաւ օր Կեառօն յէմալ ա հերտտի օր քիչ մնացեր ա համ զարկայ ուր բարէր սպանայ, համ էլ զուր խէր ու համ էլ Փարիշան խանըմի սիրա չըր յուզէր զէն խարիր տարեկան խալիւոր օր մեռլի խոտ բերնից գուկէր: Եդտեղ յառէջ էկաւ, խաղմ ըսեց.—

Դե՛, կօ՛ ...

Խրպե-դարան կեռ ու մեռ ա, վի՛ ...

Քուլլըբէ Սլեմին կուտոյ առուծի երաց, անուն խանեց, վի՛ ...

Խրպե-դարան խաղար եօր խարիր մարդու խեռ կուտեւ ա, վի՛ ...

Դե՛, քրիս եկոր տեղ սաղ մնայ Կեառօ, վի՛ ...:]

Աղջիկն օր էս խաղն ասաց, Ամար աղի խեղք նոր էկաւ դըլուխ, ասաց.— Ջանըմ, ես իմ աղջիկ յընչի՛ տամ էս խարիր տարեկան խալիւորին. կուտամ Կեառօյին, օր ջանիկ եմ. յիրար հուռն-հուռնի եմ:

Տարան Քուլլըբին խորեցին:

Քառսուն յընցաւ, նոր բերին եօթ ձեռք դիօլ զուռնա դարկին, Կեառօն ու Փարիշան խանըմ խասան յիրար մուրմարին:

լեց: Միրախառ կեօ թամաշա կանի: Սիյամանտ պիթուն ձիանքներաց
տակ աւլեց. յարդ տուեց. զըմենքն էլ եմ կախեց, ինոնց եմ կերան,
պրծան:

Սիյամանտ ջիւր քիշեց խորից, յըմենն էլ ջրեց, յըմենն էլ
քիմրեց, էլ մշկներաց բան չթողեց:

Սիյամանտ ին արեց, յըմեն ձիանուն քեամկին մէմէկ ձեռ
դրեց, կան տուեց, վար ձիու քեամկին ձեռ դրեց, փոր խասուց
գետին, ըսկուն թափով կը դներ, յըմենն էլ փոր կը խասուցեն գե-
տին:

Մէկ շէյ ձի, թառի տակ կապած էր, գնաց, ուր ձեռ դրեց
վըր էն ձիու քեամկին, էն ձին մէշըր ըսկուն վեր թալեց, Սիյա-
մանտի ձեռ տարու, կպուց առիք: Չըլուա Սիյամանտ, ձիու էրես
պագեց:

Սիյամանտ էն ձիուն լաւ ականջ արաց:

Էկաւ, ճրագներ ընցոց, քնաւ:

Մէկէլ մշակներ քնած էն, էլ մարդ չակխաւ. քընան չուժ
լուցցաւ: Մշակներ ակխան, ասին. Աստուած քեօ տուն աւրի,
լոս ի, էսա ի՞նչ գեախ ի:

Գնացին որ Սիյամանտ ափին, ասին.—Մենք թողինք քիւ հի-
ւին, էդա ի՞նչ գեախ ի:

Միրախառ կանչեց.—Ձեր քեառսունի գլօխ դուրբան կանեմ
Սիյամանտի զլուուն:

Մնաց ամիսմ, էրկու. եօլա գնացին մէմէկու:

Մէկ օր մէկ բագրկեան բիւրեց, դրեց ինոնց գեղի քեմակ,
Միրէլափանի չայրի մէջ: Միրէլափան յըմեն օր ուր խեծել կորող-
կէր, կասէր.—Գնացէք, եմ բան մընէն առէք. չտէք, չալէք, առէք,
էկէք: Խիծեղ կըհեր դայ, բագրկեան բաշին կը թողէր խեղբեր,
կսպանէր. զըմեն կը ճանճըխեր, զըմենն կը փախնէն, կզէն յետ:

Միրէլափան էրկու օր ուր խիծեղ էն լաւնով օրողկեց, ճար
չտարին:

Մէկ օր Սիյամանտ կընի, կայնի, կեօղուով կեօն կը տանի.
կուռակ կը տըսնայ խիծեղ գէն կեօ կզեայ. յետ պլաւան, էկան
կտորած խիծի նման:

Գորիս Սիյամանտ էն մէկ մարդու մընէ խարցում արաց:—
Էսա ի՞նչ ի, դիւ կեհեք, կգէք՝ ձի էլ ասէք:

Էսա մարդիւ ըսըկիւր Սիյամանտից էլաւ.—Դիւ մէկ մշակ
մարդ էս, քի ի՞նչ կայ խըտ խարցման. գնան, քեօ մշկութենով նիստ
ու ել:

Սիյամանտ ասաց.—Դիւ որ ձի չասես, ես իմ կեօղի կապ
թալեմ քեօ վիզ, քե քեհեմ, չուժ ներքին սլարխեր, (արտ) տանեմ,

Ի 7

ՍԻՅԱՄԱՆՏ

(Նորագայ Տիմ գիւղի բարբառով) *

Սիյամանտ Սիլվանցիի, դաշտի (Մուսուլ) երկիր կեօ:

Էլաւ էկաւ մէ մարդու մօտ իլաւ մշակ:

Սիյամանտ տեհաւ, որ ասես ինոր աղին կը տփէր:

Էն մէկ օր ասաց.—Ահիս ընի, մօ մէ ըսկուն մարդմ ըլնեմ ցօ-
փար, մարդ չըգէն զախմ չըլնի. մարդ չըգէն խաց տուող չըլնի, մըջ
ըմենի զլուուն էն աղէն դանի:

Գնաց մօ Միրէլափան, գնաց էլաւ մշակ էն տեղ:

Միրէլափանին կէր քառսուն մշակ. գնաց մօ քառսուն մշակ.
ասաց.—Ես մօ ձե ըլնեմ մշակ:

Էդա մշակներ ասին.—Մե միրախառ (ախոռսպիտ) կայ. գնա մօ
միրախառ. քե բանի,

Գնաց մօ միրախառ, միրախառ ասաց.—Քեօ անուն ի՞նչի:—Եմ
անուն Սիյամանտ ի, ասաց:

Ասաց.—Դիւ կըլնի մշակ: Ասաց.—Խան, կըլնեմ:

Ասաց.—Արե, քանեմ, էրթամ մօ Միրէլափան քե բանի:

Տարաւ գնաց մօ Միրէլափան, ասաց.—Աղան, էսա լաւ մարդ ի,
պտի բանեք մշակ.—Դիւ գիտես, գնան, բանի, ասաց:

Տարաւ յեփարին մօ մշակներ, մշակներ ասին.—Դիւ օտար
մարդ էս, գիշեր քեօ քիւն չտանի, մե չոտ խանես վեր, մենք ըլ-
նենք դեխ մեր լան:

Մշակներ ընկեան պեհիւի քընան: Սիյամանտ չխանեց վեր,
էրկու սահար վրէն ընցաւ. զինք էլաւ վեր. ուր ճրագ կպուց.
քառսուն ճրագ էր. քառսուն էլ կպուց. ուր ձիանքներաց տեղ աւ-

* Ասած է Պետրոս Վերտեան:

Վէպիս ոմանք Սիյաքեցի, ոմանք Սիյա Անմասի, ոմանք Սիյամանտ,
ոմանք եւս Սիյաքեցի ելն. կասեն: Սորա մի արքեր օրինակը հրատարակեց
յիւստակի արձանի Սուլաննեանց Գարեգին եպիսկոպոս իւր «Համով-Հոսով»-ի
մէջ, Սիյամանտ եւ կնէ Չարէ վերնագրով. սակայն աւելի համառօտ է հան
ցերկայ երկու նիւղեր:

Ասաց.—Կեօ մէկ բազրկեան դրե էնա մեր գեղի քեաւշանի մէջ, մենք կեհանք ինե որ շախնք, բիրենք, մե կը ափի, մե կըս պանի. մենք ճար չընք տանի. մեկը բիրի դայ:

Ասաց Սիյամանտ.—Գնա քեօ հալին, ձընէ ընչի կը քրթէր:

Սիյամանտ ուր կեօղով չլկեց, էկաւ. էկաւ սկուն ծուռ մարդու պէս, գնաց մօ միւրախոռ. միւրախոռի դէմ ուր կույի կեօղով ափեց դետին, ուր հրսից կայիմ ափեց, ասաց.—Սա ասի տեհամ, սկուն մօ մէ մարդ մը որ նա մարդ չընգէն զախմ ըլնի, նա մարդ չըն գէն խաց տուող ըլնի. էսա մէկ բազրկեանի իկե, չկանայ վրէն. խօզի, ասաց. ես չէի իկե մօ սկուն մարդ, մկայ Միրէլաւան ընձի դասուր տէր, ես էհե ինե:

էդա միւրախոռ գնաց Միրէլաւանին մօտ, ասաց.—էն մշակ իչ նոր բռնեղէնք, ձի ծնայ կասէր. կանչի, բերը, խարցում արա մընէն, ըլկայ, իչ մարդ ի:

Ղանչեց, արաւ ուր իրես, ասաց.—Գիւ ծնայ կասես:

Ասաց.—Խն, էլաւ ուր Խապրի տէր:

Ասաց.—էն շէյ օլախ տաս ձիկ, էն նագարե ուրմ տաս ձիկ, ես տեհամ ինե:

Ասաց.—Գնա, ես տուերէմ քե:

Համա զանեց, ծուռ ցեղ առեց ուրմ, գնաց:

Գնացին զըմեն քնան. մէկ սահար գիչեր գնաց. Սիյամանտ էլաւ վեր, ուր շորեր խաքեաւ, ինոր շէյ օլախ քեչեց, բերեց, էկաւ դիւս մըջ հաւչին. դարկեաւան խանեց վե.—Մէկ քաս պաղ ջիւր բն ձիկ, ասաց:

Քաս պաղ ջիւր խմեց, տարաւ ուր օլխու աչք, իրես, բժիկ լուաց, մէկ քիմարմ տուեց, ինոր թամք վերուց դրեց վըր քեամկին, թամքի դայիւքեր պինդ դըքեց, իլաւ ոտ դրեց ըռքեպ, Աստըծու անուն տուեց, խեծաւ թամքի մէջ. օլախ լաղաւեց. օլխու ճլաւ բռնեց, յետի-յետի գնաց, դարկեալանին ասաց.—Մարդիւ շասես Սիյամանտ գնաց. նստես դուան ետե չոււմ ես իգեամ: Գարկեն տուեց յետ, դիւս ընկեաւ գնաց:

Գնաց, բազրկեանին զանչեց.—Գիւ քար արն, կեօ ես էկայ:

Բազրկեան ուր ընկերտեքաց ասաց,—էն իչ մարդ ի, էսա գիչերով իկե, գինք վըր Աստըծու զազապին բռնեղ ի:

Բազրկեան բաւին վախեցաւ. ինոր մօր խիթ իչ կերեր էր, ինոր ատմի տակ դողաց:

Սիյամանտ էլաւ, քըչեց, գնաց վրէնքեր:

Չանեց, բազրկեան բաւին սպանեց, ինոնց բազրկեան մէմէկուց ըռըկով բժըգեց, ասա խօքի սպանեց, ասաց.—էկէք խը ձիկ, էսա բազրկեան բառնանք:

էկեան, բազրկեան զըմեն բարձին:

Որ բարձին սլրծան, զըմենի դասուր տուեց, ասաց.—Գնացէք, էն իչ սպաներ իմ, սպաներիմ, մնացած գնացէք:

Բազրկեան բերեց էկաւ. դարկեալանին ասաց.—Գիւս բաց:

Գարկեալան էլաւ, դիւս բացեց ինոր, դաւէք քեչեց մըջ հաւեին, «նըխ» տուեց ջորեքերաց բեռներ զըմեն առեց վեր յինի, դարկեալան մնակ, ձիանքերաց բեռներ առեց վեր, թալեց վը մէմէկու. էդա հաւս յըմեն լցեց, գնաց, դաւալ յօղի պատ:

Չիանքերաց լաղասքեր առեց, դրեց մէ շրտի վրէն, կապեց. էդա լաղասքեր. յըմեն տուեց դարկեալանի քեամակ, տարաւ մըջ փայնին սլախեց, ասաց.—Մարդիւ շասես, գնա, քընի:

Իլաւ ուր գլօխ դրեց էդա լաղաւքերաց, փայնի վրէն քնու: Մնաց առաւտուն Միրէլաւան էլաւ վեր, որ տեհայ ուր նըվեթ. իչկաց չընկընկոց ընկե մըջ հաւեին: Միրէլաւան փախաւ էլաւ տանիս, ասաց.—Բազրկեան կեօ իկե, բռնէ վըր գեղին. յըմեն սպանե, ես իմ մնացի, ձի էլ տըսպանի: Բեռներ որ տըսաւ մըջ հաւեին, ասաց.—Իչկանք ով ի սկուն արե, կըլնի էն մարգնի արե:

էկաւ, գնաց յօղէն նստաւ, զանչեց գեղական.—էկէք, իչկանք, ասաց. սվ է արե էսա նամուս, ինոր իչ սլախ, ես տամ: Գեղական էկան, ասին.—Մենք էնք արե, Պօղոս ասաց, «ես իմ արե», Պետրոս ասաց. «ես իմ արե». էն մէկէլ ասաց, «ես իմ արե»:

Միրէլաւան ասաց.—Ձե մի գեօվացէք, սվ իչ արե, ինոր նշան կայ:

—Ինու նշան իչ ի, ասին:

Ասաց.—Ինու լաղաւ կայ. լաղաւքեր ով բերեց, էնի արե:

Մարդ չբիրեց լաղաւքեր:

Միւրախոռ ասաց.—Աղն, յեվարուան մշակ իչ քեօ ուրմ տարաւ. էն մարդ կանչի գեայ, կըլնի էն մարգնի արե:

էրկու խօլամ օրողկեց. Գեային, ասին.—Սիյամանտ, Սիյամանտ, ասաց.—Իչ ի:

Ասին.—Իլի վեր, Միրէլաւան քե կը կանչի:

Ասաց.—Ձեյնըմէք. գնացէք, չըմ իգեայ:

Գնացին, ասին.—Աղն, չգեայ, մէ տապլոտ մարդ մի, մէ յիչունց կայ:

Ասաց.—Չորս խօքի գնացէք, չափունէք, առէք, էկէք:

Գնացին լաւա ընկեան.—Սիյամանտ, Միրէլաւան քե կը կանչի. ծուռթեն մի գնի վեր քե, արի:

էլաւ վեր, էդա լաղաւքեր թափ տուեց. տուեց մշկու քեամակ, առեց, գնաց. տարաւ տըփեց մըջ յօղին, ասաց.—Առ քե:

Ասաց Միրէլաւան.—Աճարմ քե խըմայ, Սիյամանտ:

Էմէլ դարձաւ, ասաց. — Սիյամանտ, դիւ տնայտկել էս Ասաց. — Խն:

Ասաց. — Արի՛, կայնի դիւռ, ես քանցիլ անիմ. դեղակնի աղջիկներ, պատկուած խարաներ, կնկտիք, որբեվէրիք, չում հա պառււրներ, յըմեն դեան, քիւ դէմէն յընցնին. դիւ մաս թըլս սն պարգես, ես էն բիրեմ, պատկեմ վեր քե. դիւ տը կենաս մօ ձիկ:

Էդա չու պառււրներ ինոնց աչքեր դեղին. ինոնց պակըներ թողին, ասին. — Սիյամանտ մե առնի: Էկան, Սիյամանտի դէմէն ընցան. մէկ դապուլ չարաց, ասաց. — Մէկդէլ ձի չպիտայ:

Միրէլաւին ասաց. — Դիւ քիւ չէյ ուլախ տաս ձիկ, նազարի որմ տաս ձիկ՝ ես համ, եմ կնիկ տըսնամ:

— Սիյամանտ, ես յէվարին տուերէմ քե, քենէ չըմ առնի. պիլի որ կեհաս քիւ կնիկ տըսնաս. դեաս մօ ձիկ. ես էհամ քիւ կնիկ բիրեմ:

Էլաւ դնաց, մէ թըքեայ ոսկի լցեց ուր նեպ, դնաց թըլս ուր կնիկ: Գնաց չոլ չոլսան, պառիմ ու պառսսան. — կան էկաւ, դնաց վըր մէկ աղբրին կայնաւ, ասաց. — Եմ ուլախ պեճմ մը տայ, ջիւր մը խմեմ, էհամ:

Էլաւ դիւլպիմ տուեց յէսջև ուր աչից, դե մէկ սև վրան մը տըսաւ մըջ դաշտին: Գաստ էն վրանին արաւ, խեծաւ դնաց: Գնաց դնաց մօ էն վրան, էն վրանի դիւռ էջաւ վեր, տեհաւ կեօ էն վրանի դիւռ մէկ կնիկ կայ. բարև տուեց, էն կնիկ բարև առեց. կնիկ վազաւ ինոր ձիու դոլս ընեց, ձին տարաւ, կապեց. տեղ թալեց, էն դնաց նստաւ վըր տեղաց:

Մէ պեճմ մնաց, ջիւր ուղեց մօտէն, ասաց. — Խողի ես դիտէ թէ էն կնիկ ի, թի աղջիկ: Ես ջիւր ուղեմ մընէն, եմ մատնիք թալեմ ինէ, որ կնիկ ի, եմ մատնիք չվիրուցի, որ աղջիկ ի, եմ մատնիք կը վիրուցի:

Չուր տուեց Սիյամանտի ձեռ, Սիյամանտ խմաւ, մատնիք թալեց մըջ ջրուն տուեց քաս ձեռ, աղջիկ առաւ դնաց: Գնաց, ուր մատնիք փոխեց, Սիյամանտի մատնիք մտուց ուր մատ, ուր մատնիք թալեց մըջ ջրուն, բիրեց, տուեց էմէլ Սիյամանտին: Սիյամանտ մատնիք առեց, մտուց ուր մատ, ասաց. — Էսա իչ վրանի. իչ ապով էկերիք սղայ, որ կիլից էք, դիւ մնակ ընչի էք էկե սղայ:

Ասաց. — Վեց աղբէր ձի կայ, ես վեց աղբօր քիօրնեմ:

Ասաց. — Քեօ աղբբեր յո՛ւր են:

Ասաց. — Գնացած նեջիւր, մենք Արարատանայ էլի ջոջի տենն էնք մի կե: մէկ քալամ մենք էնք, մէկ Արարատանայ չէին ի, չէ-խին լամուկ ընձիկ կուզէր, եմ աղբբեր ձիկ չտուին, ձի առին, էկան էսա տեղ:

Մնաց յէվարին, աղբբեր էկան, գատամանց իչկացին, կեօ մէկ ուլախ մըջ վրանին. վախեցան, չէկան: Մէկ էն աղբբերաց դեօղութենով էկաւ, խասաւ վրանին. քեօրը տեհաւ, խարցնեց. — Էսա իչ մարդ ի:

Ասաց. — Աւերութենի մարդ չի, էկէք:

Աղբէր դնաց յետ, ձեռնով արաց, էկան:

Էկան բարև տուին, բարև առեց:

Սիյամանտին խարցնին. — Դիւ իչ մարդ էս:

Ասաց. — Ես էլ մարդմեմ, ես գաստ Աստըծուն, ձե արիւրէմ, էկերէմ ձեր վրայ. դիւ ձեր քեօր ընչի կը թողնէք անտէր դայ, որ ես ձեր քեօր տանի, դիւ իչ դիտէք:

Ասին. — Վալախ, քիւ խապարն ի:

Խարցուցին. — Քեօ անուն իչ ի. — Եմ անուն Սիյամանտ ի:

Ասին. — Մենք վեց աղբէր ինք, դիւ էլար մի ջոջ աղբէր:

Առաւտուն էլան, դնացին նեջիւր, ասին. — Սիյամանտ խուր ի,

թողինք սղայ:

Սիյամանտ թողին մօ խաճէն, դնացին:

Սիյամանտ ու խաճէն կեր կերակուր չինին, կերան, իլան էէյնն անել:

Էրկու ձեռ լիս դօռակ չու յիվարին կարտին:

Յիվարին աղբբեր էկան, նստան. Խաճա գերին ասաց.

— Աղբբեր, դիւ ախր տըտէք մէկ մարդիւմ, ձի էսա մարդ պիտայ:

Չոջ աղբէր ասաց. — Սիյամանտ, քե պիտա մեր քեօր. տանք քե: Ասաց. — Խն:

— Էնտօ, մե վեց աղբօր նաղդ բիրես, տանք քե:

Ասաց. — Դիւ տէք ձի, սութ չասէք, ես կեհամ կը բիրեմ:

Սիյամանտ խեծաւ ուր ուլախ ուր ուրմ գրեց ուլխու մըջ էր-կու տկանջ, թողեց, դնաց թըլս պանա Խաճա գերին:

Գնաց, պառին էր, դնաց մէկ աղբրիմ վըէն պայա իլաւ. ուր խաց կերաւ, ուր ձին դալեց. նստաւ, խաց կերաւ. տեհաւ կեօ մէկ բազրկան մը դեն կգեայ, էրկու սև ջորի բարցուկ, տուե յառ-ջև բազրկեանին, կեօ կգեայ, ասաց. — Վալախ, Աստուած տուեց.

Խաճա գերին նաղդ: Գնաց ուր ուլախ Ուսուճեանի քիմար մը գանեց, կեամ գանեց բիրան. սո դրեց թամբի ըրքեպ. էլաւ, խե-ծաւ. Աստըծու անուն տուեց: դնաց թըլս բազրկեան, կանչմ տուեց, ասաց. — Էք բարահու էրկու ջորին տաս ձիկ:

Ասաց. — Դիւ մէկ մարդ, ես էդա բարահու ընչի տամ քե, ես ընձի կտամ սպանել, չըմ իտայ:

Էն տեղէն դանչեց բազրկրնի վըէն. դնաց, գանեց, սպանեց. էրկու ջորին տուեց, էկաւ:

Չորիք առեց, գնաց մօ Խաճա գերին:

Մէմ մարդ եմ ցեղ դէմ առեց ինոր, Սիյամանտ խարցնեց.—

Դիւ դորէն կգեաս, ախշար իշ կայ, իշ չկայ:

Էդա մարդ ասաց.—Վալա, մէկ տուն Արաբստանայ էլից սըլ իլաւ, գնաց պառսանի մէջ դրեց:

—Ընչի դրեց, պատճառը ինչ էր:

—Արաբստանայ շխի լաճ ինոր քեօր կուզէր, չին իտար. առին ինոնց քեօր, փախան գնացին դայ. մըկայ մէ Մարդ-անուն Սիյամանտ, էկաւ ինոնց քեօր կուզէր, տուին Սիյամանտին. Սիյամանտ գնաց ինոնց նաղդ, Արաբստանցոց էլի լաճ քսան ձիաւոր առեց, էկաւ թըխ Խաճա գերին. որ տանին. մահրեն վըէն. Խաճա գերինի ջոջ աղբէր չըր իտայ, գանեց էն ջոջ աղբէր սպանեց. Խաճա գերին առին, գնացին:

Սիյամանտ ըռըկվեր իլաւ, մէկ սիլով գանեց էն պայիմ, իրեք քախլ գլորաւ. գնաց, ասաց.—Սիյամանտ ես էմ, դիւ ընչի էն ակնջկըլէն տուիր ձիկ:

Էն մարդ գլորուաւ, դե գատն ընկեաւ:

Սիյամանտ ասաց.—Արի, արի, էսա մէկ բեռ ջորին տուի քե:

Պայէն ասաց.—Խոզի մէկ սիլով էր տէր ձի, էն մէկէլ ջորին էլ տէր:—Գնա, ասաց. խէրիք ի:

Մէկէլ ջորին տուեց յէռջև ուր, գնաց վրանի թեխ. գնաց, տըսաւ վրանի էն կշտէն նալոց մը կգէր կը տքէր. էդա քար քոէն տուեց յետ, էդա աղբէր խանեց դիւս, զըեց վըր ջուրուն, կքեց, առեց, գնաց, մօ նեխիմ, ասաց.—Էսա մարդ ժըբըբես, էսա ջորին բեռնով տուերէմ քեօ հախին:

Ուր բաժին փարէն առեց, մըկէլ քապիմ հախիմ արեց:

Գնաց ընկեաւ պառսան, մըջ Արաբստանայ էլին. էլի դիմաց ընկեաւ, վրան վրանի զարկած, քանաւ վըր քանաւի զարկած, խէյ-վար վըր խէյվարի զարկած. էրկնուց աստղին ճապ կայ, խէյվար ու շասըրին չկայ, ըսկուն խաթապանս արած՝ լու չկրնայ եռայ մէշքեր:

Ձիուն ասաց.—Դիւ մեազ հասըլ ձի, դիւ դոր կայնես, ես դայ պտի պայա ըլնեմ:

Էդա ձին, էդա վրանքեր յըմեն շինքեց, գնաց մէ պառուու դիւս կայնաւ. Սիյամանտ դայ պայա իլաւ:

Պառաւ ինոր դասը արաւ, տարաւ նստըցուց:

Պառուու իրեք լաճ ինոնց ակիքքերնէն, իշ օր կայ, չկայ. ինոնց հայեմ, նայեք ինոնք էն:

Սիյամանտ էրկու ոսկի տուեց պառուուն, օղորկեց, կեր-եմակ էշ որ պինայ բիրեց:

Յէվարին պառուու լաճեր էկան:

Ուր ծծեր բունեց պառաւ, տարաւ ուր լաճերաց շանց տուեց, ասաց.—Էսա մարդիւ պէտըլ անէք եմ ծծի կաթ ձե խաւամ ըլնի:

—Չէ, մարէ, ասին. դիւ ընչիս անես, սկուն անենք:

Էկան բարև տուին մէմէկու, նստան:

Ասին.—Դիւ մեր ջոջ աղբէր, չմենք պատիկ աղբէր, մեր մեր սկուն ասաց. մե մօր սիյամաք կը բունենք. ինչիս դիւ հազ անես, մենք անենք:

Ասաց.—Մենք իլանք աղբէր. էսա Խաճին եմ նշանածն ի, պտի բիրիմ ընձի խըմայ,

Ասին.—Խաճէն մեր պամամու խըմար ի. չըմփի դիւ էլար մե աղբէր, ինչիս դիւ հազ անես, անենք:

Ինոնք էլան գնացին խարսնիս, չուս լուսուն մնացին:

Սիյամանտ մնաց դայ, դանչեց պառուուն, ասաց.

—Դիւ կանան խառնես մօ Խաճա գերին:

Ասաց.—Հո՛ւ, ինչիս դիւ հազ անես, սկունեմ:

Սիյամանտ ուր մատնիք տուեց, օրողկեց մօ Խաճա գերին:

Պառաւ գնաց որ մտեր ինե, շթողին. տուեց մէկ ոսկի դըւ-պախին, ըսկուն գուաց, ասաց.—Թող, ես էհամ, եմ կալօ խարս տըսնամ:

Խաճէն ասաց.—Թու մարդ չգեայ եմ մօտ, որ իկաւ, ես ձը տըսպանեմ:

Պառաւ ասաց - Էն իշ քեօ բեասար կը սիրիս, ես գեամ:

Ի թող գնաց մօ Խաճա գերին, մատնիք տուեց:

Ասաց.—Պառաւ, էսա մատնիքի տէր դոր ի:

—Վեօ, եմ տունն ի, ասաց. ձի լաճ արերէմ:

Պառաւ դորիս էկաւ մօ Սիյամանտ, Սիյամանտ խարցում արաց պառուու մօտէն, խանեց, իրեք ոսկի տուեց:

Պառաւ էմէ էլաւ ժաժիկ մաժիկ դըբեց վըր խացին, փշոււմ մատեց. պութիկ մութիկ, տափիկ մափիկ, գնաց մօ Խաճէն:

Խաճէն ասաց.—Իշ լաւնով ձի պի տանի:

—Դիւ գիտես, իշ ըւրզա տըսնաս, ասաց. էն կայնուկի:

—Առաւտուն ես քանայի տնեմ էլին, լէն իշ ջոջ, պատիկ, էն իշ դինք կանայ իշու քեամկին էլ բունի, գեան եմ վրանի դիւս մէյսան տան, եմ ֆէյթ բացուի, էհամ ստակա:

Պառաւ զըւրաւ յետ, ասաց.—Ասաց Սիյամանտն էլ գեայ մէյ-սան ֆէյթ խոռութեն:

Սիյամանտն էլ խեծաւ ուր շէյ ուլախ, գնաց:

Արաբստանցոց էլն ի, որ հօթ-ութ փէտ առեց ձեւ, որ շատ առեց, Խաճե կայնե քամաւա- Էդա փեսէն, իշ Խաճէն տը պըսակեն

մըչ մէյսնին: Սիյամանա լընկ իտու ինե. փէտով տուեց վզի տող. քիթ բերանով խակեց մըջ խողին: Սիյամանա թողեց, գնաց, ուր կօնախի դիւս պայա իլաւ:

Մարդ չգիտցաւ ո՛վ զարկեց. դաս մը կըսէն, խրիչտակն էր, դաս մը կըսէն ազրայիլն ի:

Խաճէն ասաց.— Էս օր գիշեր գօմի մէջ անեմք խարսնիս, քեյֆ, խոշութեն. լուսուն էհանք պտակ:

Յիվարին իշ արե մտաւ. սազ զարկին, գնացին խարսնիս: Սիյամանա իլաւ, քիւսար մը տուեց ուր օլլաուն. մէկ ճանկ սակի տուեց պառուուն, ասաց.— Էստ էլի էկիր քիւ լաճերնէն՝ որ քիւ լաճեր եմ պէտր չանեն. չու մարդ չգետխնայ թըխ ընձիկ:

Էլաւ, խեծաւ ուր ձին, գնաց Խաճն վրանի փերեք ճղեց, տուեց յետ. Խաճէն բիրեց. էկաւ. խիծուց ուր քեամակ, մէշկապ թալից ուր քեամակ, Խաճէին կառեց յիրար, իլաւ, գնաց մըջ խարսնըսին. մէկ ճանկ սակի տուեց սազ արող բեօշիւն, ասաց.— Սրա շապաւ. ես գեաղտիկ մարդ չըմ տանի, կուտ լը տանեմ:

— Լայ շապաւ՛, մալի ապաւ՛. Սիյամանա Խաճա գերին տարաւ, ճանկ մը սակի իտուր մըղըրպիւն:

Որ ասաց. «Խաճէն տարան, չըմն տուին մըջ զլիսուն. ես տուի մըջ զլիսուն, դիւ տուիր մըջ զլիսուն, ասին:

— Չէն մի տուր, սութ ի. Սրարանցոց էլի լամուկ լանայ, քե կսպանի:

Ասաց.— Աստուած ձեր տուն ախրի, տարաւ գնաց, ես ի՛շ ասեմ:

Սիյամանա Խաճէն բիրեց, էկաւ պառին, խըցուց, էկաւ Սարհասի սինոս, (արեկեան հիւսիս),

Որ լոսցաւ, հաւար ընկեաւ իսե. ջոջ, պտտիկ ընկեան իսե. պառու լաճերն էլ էկան, գնացին, խասան Սիյամանտին:

Ասեմ, պառու լաճեր խիծիլի պառահիլ բունած չըն թողնի մարդ էհայ, փիսկն մընակ կեհայ:

Ասեմ Սիյամանա գասնի, Խաճէն կեօ դրե, նտտե

Փեսէն գնաց, մօտացաւ, գետին է խասնին մօ մէմէկ:

Սիյամանա իլաւ, դասըմալ տուեց Խաճէ ձեռ, ասաց.— Սղայ գիւ խաղայ, ես տեհամ ինոր յառաջ:

Գնաց ինոր յառաջ: Էգա պառու լաճեր խիծիլի պառահիլ բունած չըն թողնի մարդ գեայ, կասին.— Խաճէն էրկըսից մէկ տառնի. մենք առնող չընք, մի գնացէք:

Էրկուս խասան թըխ մէ մէկէլ. մէմէկաւ բիւրր իլան պտտ. Սիյամանա քեամակ մընէն տուեց, մէկ քօփուզ գանեց մըջ զլիսուն. ճանճղեց, բիրեց տակ. պայա արեց գետին:

Խաճային գանչեց.— Արի սղայ, քիւ պամամու դլօս դիր վըր քիւ չոքին. քեասար չմնայ մըջ սրտին. չու էնոր խոքին թռնի:

Իկաւ, դրեց ուր չոքին, չու խոքին տուեց: Խաճէն խեծաւ գէնու պամամու ձին, զինք խեծաւ ուր ձին.

քլին, գնացին: Խիծեկ էկաւ էն սպանուկին. տուին ինոնց մարդ, գնացին. Սիյամանա տուեց Խաճէն, էկաւ:

Գնաց Սիւփանայ քեամակ դաշտմ կայ. գնաց, նստաւ: Ասաց.— Քեօ չոք դիր, Խաճէ. ես գլօս գնեմ վրէն քընիմ:

Գլօս դրեց, քիւն տարաւ: Մէկ վերու կով էկաւ, խի՛ք վեց ցլուր իտե կովուն էր, մէկ

մընէ դոշախ էր, կով մէկկեանցմէ խիւր էր. Խաճէն ծծղաց, ասաց.— Էստ հարի Սիյամանան ի, կով զըմեկեանցմէ խիւ, կառնէ կեհայ:

Որ ծծղաց, Սիյամանա ախիւսաւ, ասաց.— Պեկաւի էկաւ վըր ձիկ որ դիւ կը ծծղաս:

Ասաց.— Չէ.— Պա ի՛շ իլաւ որ դիւ կը ծծղաս: — Մէկ վերու ցլուր էկաւ, գնաց. մէկ վերու զըմեհացմէ զկով

խիւր էր, ասի. «Էստ եմ Սիյամանա կը մանի»:

Ասաց.— Ահս ընի եմ խոքիւն, եան ես սաղ մնամ, եան էն, չումու դիւ ասիւր Սիյամանտի ցեղն ի:

Ասաց.— Սիյամանա, ես հիւի կանեմ, մի գնա, ես կուրպան եմ քեօ դիրկեվանին, մի գնա:

Ասաց.— Չէ, ես պտի էհամ: Էլաւ դիրկեվան կապեց վըր ուր, գնաց:

Գնաց վերու եղ կեօ գնացե, խասե Սիւփանայ դլօս, կովն էլ կեօ կշտին. մէկ դիրկեվան թալեց ինե. գանեց, վերու եղ սպանեց:

Գնաց, ոտ տուեց կօշին, որ աը զինէր. գանակ թալեց, վիզ կարեց. էն ուր դլօս թափ իտուր, կօշօ գանեց Սիյամանտիտաց

տակ, թալեց: Սիյամանա գնաց, ընկեաւ Սիւփանայ տակ:

Ընկեաւ վըր մէկ պալալիւկի կոճին, վըր ուր քեամիին: Կոճ մէկ թիզ ինոր սրտից տուեց դիւս, սպանեց, պրծաւ:

Խաճէն իլաւ խը շոփին գնաց. գնաց իլաւ Սիւփանայ դլօս, ի՛շ վերու եղ դայ մըւսրիւ. իշկաց գատ, մարդ տեղ չըտեհաւ. իշկաց

մէկ նալոց էկաւ, գնաց քարի գլիսուց իշկաց Սիյամանան ի, ընկի, կը աքեայ:

Խաճէն իլաց: Գարիս խաղ ասին իրարու: Խաճէն ուրին խակեց ցած:

Մկայ էրկուս էլոմ ի ծառ:

ՄԻՅԱՐԷՆՏՈ ԵՒ ԽԱՃԷ ԶԵՌԻՆ

(Սոլարայ բարբառով) *

Սլիվանայ էրկիր Սլիվանցիմ կեղև. էդոր մէկ տղայ կեղի, տղի անուն լէ Սիյարէնտի կեղի. շատ աղքատ կեղին: Մէկ օր կելլին ինքն ու ուր խէր խորթեր կը տանին, արծան: Խորթեր կը բերեն, խէր կասայ.—Գնա, գեղէն խաց ժողովս բի:

Սիյարէնտոն կերթայ մըջ գեղին, խաց կը ժողվայ, կելնի օր տուն բերայ, ճծեր կը ժողվին վրէն ձեռնէն կառնեն: Սիյարէնտոն էսմալ ինչ խար խաց կը ժողվայ, գեղի ճծեր կը կըլին մօտէն, էնի գարտակ կը թորկայ կերթայ մըտ խէր: Լուսուն լէ էլման զնաց, ժողվեց, էլման ճծեր առան մօտէն: Մէկ օր լէ զնաց մըջ գեղին, տեսաւ օր, հեռի լսողաց մօտէն, մէկ ջանդակմ կէր, շներ թափած էն վըր ջանդրկին, կուտին. իշկեց պոտիկ բօճիմ էկաւ, զէդ շներ գէն լարեց, գէն լարեց, ջանդակն ինքն գաւրեց:—Վայ, էսոր խող իմ գլխուն էղի, ասաց Սիյարէնտի Սլիվին, ես ինչ խար խաց կը ժողվեմ, կուգեան ընձնէ կը խլին, ես ձէն չըմ խայ:

Սիյարէնտոն էլման զնաց խաց ժողվեց, ճծեր էլման թափան վերէն. Սիյարէնտոն ա, դարձաւ վըր ճծերուն, ամէկին դրբ մը էզար, էնտեղ լարեց, էնտեղ, առաւ խաց, զնաց խօր կուչտ:—Սիյարէնտօ, ասաց խէր, ամեն օր խաց չըր բերէր, լալելին գեղէր, յէսօր իմալ էղաւ:

Ասաց.—Ափօ, յէսօր գացի, զաղար մի խմլա էրեց, ե լէ իշկեցի զաղարին, զարկեցի ճծերուն, լարեցի, խաց առայ, էկայ:

Սիյարէնտոն մէկ ամիս մնաց խօր կուչտ, մէկ օր ասաց.— Սլիվանայ խաց ընձի խարամ ա կեցի, ես թորկիմ, էրթամ ուրիշ երկիր: Թորկեց էկաւ էլ-աղասու մը խող, տեսաւ ութ խողի մարդ

*) Պատմած է Տափալանք գիւղացի Պողոսեան Սառաս: Վ.Էպիս Երկերը Եւս Են, ունի ընդարձակ երգեր:

Ներկայ Սիյամանի սոյն երկրորդ հիւղը ունի երգեր որ այլ եւ այլ բարցե եղանակով կերգուին:

նտած էն դրաա կէնին. փշում կայնաւ, իշկեց էնոնց բերան: Կանչեցին էդ մարդիկ.—Սրի էստեղ:

Սիյարէնտոն զնաց էզոնց մօտ, էդոնք ասին.—Գեացէք, խաց բերէր, թը ուտայ:

Խաց բերին, ասին.—Քու անուն ինչ ա:— Իմ անուն Սիյարէնտօ ա, ասաց:

—Ո՞րտեղացի ես—Սլիվանայ երկրէն եմ:

—Դու ինչ արով կը պտտես:—Կը պտտում իմ ապրուստի խամար:

Սիյարէնտոյին մշակ բռնեցին. թառի տակի ձին տուեցին ասին.—էդ ձին աղէկ կը տիրես, կը շախես:

Սիյարէնտոն պղինձ մի ջուր լցեց, դրեց թորուան վերէն, զէդ էրկու ձին խանեց դուս, րդի սապօնով լուաց. ինչ որ ուրիշ ձիանքներու եմ կուտէն, գողնէր, կը բերէր էդ էրկու ձիու առէջ կը լըլէր: Մշկըներ էկան, մտան քալին, իշկեցին օր ձիանք էրկու օխսայով կապեն, չգաւրուիր. իմ աղբօր ասեմ, տասուերկու խողի էկան, էրկու-էրկու մանրիքիս տուեցին Սիյարանտոյին:

Օրերուց մէկ օր էլ-աղասին էկաւ, մաաւ ձիանքներու մէջ, տեսաւ ձիանք էզած ա Բեանիլ ձիու պէս հաւարի. կանչեց մըջկըներ էբեր, ասաց.—Էսա ձիանք ինչ ձի են:—Թառի տըկի ձիանքն են, ասին մշկըներ:

—Էս ո՞րն ա տիրեր, կանչէք թը իզայ:

Սիյարէնտոն էկաւ. էլ-աղասին խարցուց.—Անունդ ինչ ա:

—Իմ անուն Սիյարէնտօ ա. ես Սլիվանայ երկրէն եմ:

Ասաց.—Իմ տկի ձին տուէք, թը տիրէ:

Սիյարէնտոն էր, զէդոր ձին իմալ տիրեց, քու հաւնածի պէս, որ խեծնէր, ինչ որ խաւքու կը թուներ: Էդ օրեր էլ-աղասու խող քեառսուն խատ խարամի ընկեան. դալացող քալնեցին, էրթըցող քալնեցին, ձէն զնաց, խասաւ էդ էլ-աղասու թագաւորին: Թագաւոր գիր գրեց.—Դու չկեառնաս քու երկիր զաւրեր, օր գողութեն չէղնի:

Էլ-աղասին կանչեց, բերեց էրկու խարիր խատ մշակ, ասաց.—Կերթաք, գէն գողեր կը բերէք, օր չի բերէք, կը մլմ գուս:

Սիյարէնտոն, իմ աղին ասեմ, էկաւ, տեսաւ մշկըներ դրաա կենէն, ասաց.—էդ ինչ դրաա կենէք, ինչ դաւի ա: Ասին.— էլ-աղասին մըղի կանչեր ա գողերու արով, մենք կը վախենանք, իմալ էրթանք, չընք կարայ ընդոնց վերէն:

Ասաց Սիյարէնտոն.—Գէ, գացէք, ձեր էլ-աղասու տէք. Սիյարէնտոն կասայ.— էլ-աղասին ուր արկի ձին թը տայ, ուր նակեր թը տայ, որ ես էրթամ, բռնիմ, բերիմ:

Էն մարգոց մէկ մէկ չափալիս էզարկ Սիյարէնտոյի էրես. էն

մէկել ասաց.—Յորին զարկիր, ախոսս չէր Սիյարէնտօն: Սիյարէնտօն ասաց.—Կը զանի, զանի, զարար չունի:

Ասաց էն չափալեխ զարկող.—Ըպա մենք էրկու խարիր խողի ենք, մենք յորին չլրնանք էրթար, էսի մնակ կերթամ:

Ասաց Սիյարէնտօն.—Ես Աստուծոյ խրամանքով կերթամ:

Էն ութ խողին զացին էլ-աղասու մօտ, ասին.— էլ-աղասին անուշ մնայ, Սիյարէնտօն կասայ.—Ուր տըկի ձին տայ ձի, ես մընակ էրթամ, բունիմ բերիմ:—Դէ, շուտ կանչէք թը գայ, ասաց:

Կանչեցին էկաւ.—Դո՛ւ իս «հարամիք կը բռնիմ, բերիմ» կասես: —Աստուծոյ խրամանքով կը բերիմ, ասաց:

էլ-աղասու ձին բերին, ճակեր կապեց վերէն, էնտեղ «թառլան գլօ» մի կանչեց Սիյարէնտօն.

էարի, յօ՛ յօ՛ յօ՛. էլ-աղասը, էազ . . . Ես քեզ մատազ, ըր դորքան:

էազի ըր դովարա խոսկ հետարմ. Ես Աստուծոյ ուժով կերթամ. Դողեր կը բռնեմ, բերիմ էլ-աղասուն:

էլ-աղասու ձին խեծաւ Սիյարէնտօն, զնաց. Աստուծոյ խրամանքով տեսաւ քեանսուն, զող սարի գլօխ, ասաց.—

Դեաշի առարան, ռարի հասպակ առար ըրքըն, Այ, ձիաւորներ, ելէք, ձիանքը հեծէք:

Նարկ ըրքեմ Սիյարէնտօն քերախօսի ճար ու մա զըրք. Չլինի ասէք Սիյարէնտօն ապերախտութեամբ եկաւ, բռնեց.

Դէ, ռարա, զին ու հասպե խո լեխն, շերա խոսկ ըրքըն: Դէ, ելի, քու ձիու թամբը չինէ, Աստուծոյ օրէնքով արէք:

Դողեր ասին.—

Սիյարէնտօ, դիւ ու կեպան, զեւ Սիյարէնտօ, նեւ ու աղեղ, ոսկի, արծաթ, մարդով մինակ ես.

Դիւ չմովան մեա ըրքըրի, ընրմ չը մարքմ ըն: Դու ինչպէս մեզ կը բռնես—քառասուն մարդու:

Ըր դովարա խոսկ էազի ո ըրքըրմ: Աստուծոյ ուժով ես ձեզ կը բռնեմ:

Դողեր տուեցին վերէն, կուր էրեցին. քեանսուն լէ Աստուծոյ խրամանքով բռնեց, զոտներ կապեց ձիու փորու տակ ու, իմ ազըօր ասեմ, ձեռներ կապեց, առաւ էկաւ էլ-աղասու մօտ.

էարի, թի ռարա, էլ-աղասի, դէ, Դու ելիր, էլ-աղասի, դէ, դու թի ռարա ըրքեմ:

Սիյարէնտօ չի կըր, հեյ վույի, հեյ վույի. Սիյարէնտօն ինչ ըրաւ, հեյ վույ.

էլ-աղասի, դէ, թի ռարա մեզա էլ-աղասի, դէ, դու ելիր մտա ըրքեմ, ըր դովարա խոսկ. ձէ, Աստուծոյ ուժով.

Սիյարէնտօ ըջտաւ չի անիյեա.— Սիյարէնտօն քեզ համար ինչ է չըր դըզ մը ըջտաւ անի: բերեր.—քառասուն զող ես քեզ համար բերի:

էլ-աղասին ասաց.—Բռնէք Սիյարէնտօյի ձիու գլօխ:

Սիյարէնտօն ձիուց թռաւ տակ, զնաց ձեռ էտուր էլ-աղասու ձեւ. էլ-աղասին բռնեց ճակատ սղաղեց. կանչեց, էրկու խարիր խաա մշակ էկան. էլ-աղասին ասաց.—Սիյարէնտօն ձեր էրկու խարիրին ջոջն ա. էնի իմ ջոջ աղէն ա, չըլլի Սիյարէնտի խօսաց էլլեք:

էլաւ, զողդեր ճանփեց, զնաց թագաւորին: Սիյարէնտօն էկաւ, նստաւ էլ-աղասու կշարին, սխ քեաշեց: էլ-աղասին ասաց.— Սիյարէնտօ, դու յորին սխ քեաշիր: Ասաց.— Իմ խէր, իմ մէր Սլիվանայ երկիրն ին: Ասաց.— Դը յիլիր, լուսուն խուրճի մի օսկի կը լցեմ, կառնիս կերթաս քու խօրն ու մօր կը բերես. օր չէկան՝ օսկին թը ուտին մեռնելու ժամանակ:

Սիյարէնտօն լուսուն ընկաւ ճանփախ, զնաց զնաց Միր Արարու ելին ըռասը էկաւ. տեսաւ խաղար կօն մէկ քարաձ ա, մէկ կօն մէկ քարաձ ա. ասաց.—Ես սլտի էրթամ, իմանամ, էդօր էութեն ինչ ա. օր գատանց դրեր ա: Գնաց կօնի մօտ, տեսաւ աղջիկ մի կօնէն էլաւ: Սիյարէնտօն ձիէն թռաւ տակ: Աղջկայ տըք առաւ Սիյարէնտօյին, խեղք զնաց. իչկեց, Սիյարէնտօն շատ խօրոտ ա, աշխրքի մէջ չի գանուիր:

Սիյարէնտօն ասաց.—Բու անուն ինչ ա:—Խաճա Զէուին:

Ասաց.—Բեզի խէր ու մէր, պամամ, ինչ ունես:

Ասաց.—Եօթն աղբէր ունեմ:—Ըպա քու անուն ինչ ա:

Ասաց.—Իմ անուն Սիյարէնտօ Սլիվի ա:

Խաճէ Զէուին անկ ու ըարձ էրեր, մըջ կօնին դեց. կօն էլ էն դպար ջոջ ա, եօթ սուն ա:

—Բու աղբրտիք դմր ա գացած. ասաց Սիյարէնտօն:

Ասաց.— Իմ աղբրտիք գացած ընձի արով Կոնէ Միր Արարու խեւ կուր: Ասաց.—Յորին ա գացած:

Ասաց.—Ես Կոնէ Միր Արարու խօրոզօր աղջիկն իմ:

Ասաց.—Բու աղբրտիք յորին չի տան Կոնէ Միր Արարուն:

—Իմ աղբրտիք կուտան, կասեն. «Գնա՛, մէկ անէ եօթ խոտ աղջիկ ըի՛ մըրի, որ մեր քուր տանք. էն էլ չէրթայ. բերայ:

—Է, ասաց, յեսօր քու աղբրտիք կըզան:—Խա՛, ասաց, Յիրկուն էկան. տեսան մէկ խուրճիկ խրեղէն մարդ մի շատ նստեր ա: Բարե տուին:—Ասալծու բարին ձեզի ասաց:

Խաճէ Ձէսին ջուլ բերեց, աղբրաց տակ դրեց, նստան:

— Աղբրտիք, դու գոր իք դացէ, ասաց Սիյարէնտօն:

Ասին.— Գեացեր էնք, կռիւ կենէնք Կոնէ Միր Արարու խետ. չէ էսա Խաճէ Ձէսին մեր քուրն ա. Կոնէ Միր Արարու տղէն էկեր, մեր քուր կուզայ, մենք լէ մէկ տնէ կօթ քուր կուզենք, որ մեր քուր տանք. էն լէ խօսք տուեց, մրկայ փոսմընէր ա, չտար, կասայ. «Նս չկարամ». մենք լէ մեր քուր չտանք:

Լուսացաւ. Սիյարէնտօն էլաւ, ձին խեծաւ. էլաւ որ պախ էրթայ Սիւվան, աչքը ընկաւ Խաճէ Ձէսին, ուր էրթալ փօսմընաւ: Զոջ աղբէր էն պզտիկ աղբոր ասաց. — Գնա, էն ձիաւոր զանչա թը գայ:

Էկաւ ասաց.— Զի ընչի կանչեցիր: Ասին.— Մենք կօթ աղբէր ենք, մենք մեր խօսքեր էրեցինք մէկ. մէկ էլ դու կեղիս՝ կեղինք ութ. մենք մեր խօսքեր էրեցինք մէկ, որ Խաճէ Ձէսին տանք քե: Ասաց.— Դու որ ձեր քուր տուեցիր, ես էլ կերթամ մէկ արնէ կօթ աղջիկ իմ փարսով, իմ դալնով բերեմ ձեզի. յըմա բերէք. Աստըծու յառէջ վաղդա էրէք, օր չի փօսմընէք. ասա, թը ձեր քուր բերայ, մտանիք փոխեմք:

Էն օր մնաց էնտեղ. լուսուն էլաւ, դարձաւ գնաց դըխ Էլ-ա-դասին, չղնաց Սիւվան: Գեացին, Էլ-աղասուն ասին.— Աչքդ ի լուս, Սիյարէնտօն էկաւ: Էլ-աղասին կանչեց, խարցուց. — Դու յորին չգացիր Սիւվան:

Ասաց. — Ես դացի կօթ աղբոր ըռասք էկայ, Խաճէ Ձէսին տուին ձի. մէկ տնէ կօթ աղջիկ պըտի տանիմ էնոնց իմ փարսով, իմ դալնով: Ասաց Էլ-աղասին.— Ընձի աղբէր մի կայ, էնոր կօթ աղջիկ կայ:

Էլաւ խարիր յիսուն դեվարեա մալ բռնեց, խազար ձիաւորով խեծաւ, առաւ Սիյարէնտօն ու գնաց ուր աղբոր մօտ. էն մէկել աղբէր էկաւ յառէջ, տարաւ տուն, ձիաւորները ցրվրեց. իրեք օր մնաց, ասաց.— Աղբէր, էս քնչ բիւ ա:

— Ես էկեր եմ, քեօ կօթ աղջիկ կուզեմ, տանեմ Կոնէ Միր Արարու աղբոր տղէկներուն. էսա յիսուն բիւն էլ քու աղջիկներու դալան:

Աղբէր ուր աղջիկներ տուեց. էլաւ աղջիկներու խետ խարիր բեռ ջրեկ էդիր: Էլ-աղասին առաւ, էկաւ ուր տուն իջուց աղջիկներու: Օր մը մնաց, խըլուսուն խեծան, էրկու խարիր ձիաւորով դեացին. դեացին տեսան օր կօն, մարդ չկայ. տեսան օր կօթ մարդ էնտեղ էկան. ասաց Սիյարէնտօն.— Դու քնչ մարդ էք: Ասին.— Կոնէ Միր Արարու մարդիկն ինք:

— Յնը ա էսա կօնի տէր: — Կոնէ Միր Արարու տղէք էկան, կռիւ էրեցին, Խաճէ Ձէսին տարան:

— Ասկեա՛ր, ասաց Սիյարէնտօն, դու առէք աղջիկներ դարձէք:

Ասաց.— Ընչի տարան: — Սիյարէնտօ Սիւվի կէք, էդոնց քուր սուգեց. էդոնք էլ կօթ աղջիկ սուգեցին. էլան բէբախսութեն էրին. թէ «մեր քուր չիք իտայ էլօղլուն, կուտանք մեր խօրողբօր տղին»:

Սիյարէնտօն մինակ խեծաւ, գնաց իջաւ Կոնէ Միր Արարու էլին մէջ. գնաց իջաւ կօթ սուն կօնի մի գուռ: տեսաւ մէկ խանըմ մի նստեր, դալլօն կը քաշայ. խարսին ասաց. — Զուլ բեր, դի, իմ տղէն թը նստի:

Տեսաւ շատ խօրտաիկ տղէմ ա, ասաց.— Նսախ, որդի. իմ տըղին խաց բերէք, թը ուտայ: Որ կերաւ, խանըմ ասաց. — Դու օր էրկընէն ես: Ասաց.— Ես խարիր էրկընէ եմ:

— Խանըմ, էդ քնչ խարսնիս ա: — Խաճէ Ձէսինի խարսնիս ա:

— Զէ, ուրիշ մարդ էր ուզի: — Որդի, ասաց. դիւնեմ բէբախս ա. Սիյարէնտին պըտի աէն, մրկայ Կոնէ Միր Արարու տղէք տուած ա ուրանց խօրողբօր տղին, ընդոր խարսնիս ա բռնած: — Մարէ, Սիյարէնտօն ես եմ, ասաց:

Խանըմ ասաց. — Ես կօթ տղայ ունիմ. վաղդա դար էդի, իմ կօթ տղէն դնեմ քու ուղու:

Կանչեց գողկներ էրեր, ասաց.— Իմ ծծի կաթ ձըղի խարամ էղի, օր, էսի Սիյարէնտօն ա. կերթայ Խաճէ Ձէսին կառնի, Կոնէ Միր Արարու տղէք որ կընկնին էսոր էտե, դարկէք:

Գնաց Սիյարէնտօն Խաճէ Ձէսինի կօնի գուռ կայնաւ, ասաց.

— Խաճէ Ձէսին, արէ:

Ձեա թախեց ձեռ, քաշեց ձիւ քարկ, էկաւ գովընդի օքրալաղ կայնաւ: — Իրնօլի, գուռնաչի, ասաց. արէք էտեղ. «Շարաւ մալի աքաւ», Սիյարէնտօ ու Խաճէ Ձէսինի դիսուն. ասաց ու օսկի մի էտուր: Մէկ լէ էտուր, ասաց. — Էսա օսկին լէ էս խաղցողներուն գլխուն «Շարաւ» էրա: Մէկ օսկի լէ էտուր, ասաց. — Էսա օսկին լէ «Շարաւ մալի աքաւ, Սիյարէնտօն առաւ դժաճէ Ձէսին, գնաց» բալաւ (առանց դալանի):

Բօշէն չուրի Շարաւ կանչեց, քըմընց, յըմեն դիաց չըլուած կիչէին Սիյարէնտօյին: Սիյարէնտօն գանկուն զարկեց ձիուն ու քըշեց ասկընէն էլաւ դուս ու սահարէն մի ձանփայ տարաւ դժաճէ Ձէսին, իջուց, ասաց.— Խաճէ Ձէսին, էրկու խատ լալլուխ կառնիս քու ձեռ, էտեղ կը խաղաս:

Կոնէ Միր Արարու տղէն ասաց. — Ձեր ձիանք խեծէք, նակեր կուպէք. Սիյարէնտօն միջան կէնէ, ուր ձին կը խաղցուցայ. Խաճէ Ձէսին լէ էրկու խատ լալլուխ առեր, էնտեղ էլ էն կը խաղայ:

Սիյարէնտօն դարձաւ զըր ասկըրին. էն եօթ աղբէր ընկած էն Կոնէ Միր Արաբու աղի էտե. Սիյարէնտօն նեա ու անեղմ էզար սպանեց զԿոնէ Միր Արաբու աղէն:

Ասկեար քչեցին զըր Սիյարէնտօնին. էն եօթ աղբէր տսին. — Կայնէք, ինչո՞ւ անաստուածութեն կենէք, մարդ էկաւ, դուր կնիկ տարաւ. յորին կը քչէք զըր էդա մարդուն. շատ աղէկ մարդ ա, օ սպանեց զԿոնէ Միր Արաբուն. աղէն մեղի զարար չէրաց. թը Կոնէ Միր Արաբու աղէն գէնի զարկէր սպանէր, կնիկ էն առնէր, դարձէք, էրթանք:

Էնոնք դարձան. Էդի Սիյարէնտօն առաւ զԽաճէ Զէռին, էկաւ, էլաւ Սիփանայ գլօխ, ասաց. — Խաճէ Զէռին, իջիւ ձիուց: Իջաւ. Սիյարէնտօն ասաց, — Նստի, իմ գլուխ դնեմ քո չոբի վերէն:

Սիյարէնտօն գլօխ դրեց զըր չոբին, պառկաւ. Խաճէ Զէռին իշկեց Սիփանայ սար, տեսաւ վէրու կովեր ու բուղէք էկան: Խաճէ Զէռին իշկեց, որ մէկ սլաքի աջառ մի գաննեց բէդ-բէդ եղներուն, կովը ինքը զարեց: Խաճէ Զէռին դժարացաւ, էլաց. արցունք պըր-ծաւ, ընկեաւ Սիյարէնտօնի յերսին: Սիյարէնտօն խնայաւ, ասաց. — Խաճէ Զէռին, յորին լացիր դու: Ասաց. — Բանի չէր. — Սուա մաներ, տղաւ պաի տաս: — Վէրու մէկ կով էրկու-իրեք խառ ցլոր էտե էկան. էն մէկ սլաքի զարկեց էն մէկել չորսին. ես էլ դժարացայ, լացի թէ ճեսա աջառ կը մանի իմ Սիյարէնտօն, օ Կոնէ Միր Արաբու աղէն ու ասկեար գմնն սպանեց, զիսի առաւ. էն աբով լացի. ասի «զալլում սա շարան ... »:

— Խաճէ Զէռի, ասաց, դու էտեղ նստի, ես էրթամ, գէնի լաբեմ, տանեմ սպանեմ, էնոր միս բերեմ, էնիմ քըզի բեալալալ. ու տանք ու յէլենք, էրթանք:

— Սիյարէնտօ. ասաց. արե՛, մի էրթար. ես կը խնդրեմ քըզէ, էն էլ քե սէս զըր մուրազի ա, դու ալե՛ խըա ձի էրթանք, էն լէ խըա ուր էրթայ:

Սիյարէնտօն էլաւ լարեց, լարեց, լարեց ձեռ թալեց յետին ոտ բունեց, բերեց դրեց զըր զընարին. վիզ կօրեց, դրեց զըր չոբին, օր պաի կըտըրէ՛ վէրու աչառ ցոնցաց, կօտոշ առաւ Սիյարէնտօնի դօժ, քարէն շարտաւ ու ընկեաւ տակ. Էնտեղն էլ բանձր էր, ընկեաւ զըր փետէ դալմին. սրտէն ծակեց, մէջբէն էտուր դուս:

Խաճէն յէլաւ, ժուռ էկաւ, տեսաւ Սիյարէնտօն չկայ. էկաւ, իշկեց օր վէրու աչըռու վիզ կտրուկ. իշկեց ցածր, պառեկ ընկի զըր բըլարկի թփի դալմին, սրտէն տուեր ա դուս. տեսաւ Սիյարէնտօնին. — Վայ, իմ արեուն, ասաց. դնաց Սիյարէնտօնի մօտ կայնաւ, ասաց. — Սիյարէնտօ, չէ՛ ես քե ասի մի էրթար, դու ընչի՛ իմ տուն ալիբեցիր, իմ աչք ֆօնցուցիր:

Խաճէ Զէռինի էրկու աղբէր էկան, ասին. — Խաճէ Զէռին, արե՛, էրթանք:

Ասաց. — Բեւէք էրթանք, մեռաւ, էլ ես ինչ կնիմ: Էրկու սանաքէն ճանփախ գեացին. ասաց. — Կայնէք դա, չուր ես գեամ, բան մոռցեր եմ, առնեմ գեամ: Էկաւ խառա Սիյարէնտօնին, չոբերուն էզար, ասաց. —

Սեարե Սիփանեկ խաշարե բըլաղի ա, Խլաթայ Սիփանի գլուխ մա- ցառոտ է,

Թալանե բուղայե ֆուլի պայիգա, Յափշտակութիւնը վայրենի ցու- լի աշունքը,

Տա լի անի սեար զաւա, յիսֆա, Դու ինչ բերբը փետի ու հարսի վրայ,

Տա լի անի սեար մեր ու ժընա: Դու ինչ բերեցիր մարդ ու կըն- կան վրայ:

Սեարե Սիփանեկ մըժ, մուրան ա, Սիփանայ գլուխ մառախլապատ է Յափշտակութիւնը վայրենի ցու- լի այս աշնան գլուխը

Ղուշի սեարե մա փուրանի, Սեւը որ բերեց մեր գլխին, Նանիշս աւ կահանեկ մըրազի: Չթողեց մեք հասնէինք բաղդի:

Սեարե Սիփանեկ խաշարե շազ ա, Սիյարէնտի նեա ու աղեղը քա- ճիր կեալանի Սիյամանի լինեց գազա: նի կանգուն է.

Թալանե բուղայե ֆուլի սեար եա- Վայրենի ցուլի աւարը աշնան լի անի սեար զաւա յիսֆա բազա: գլուխ,

Սեարե Սիփանեկ խաշարե գեղուկ ա, Ինչ արեց խեղճ ու անտէր: Մը կըրս կաշիմ պայիզի. Սիյարէնտի հասակը մի ճիւղ Ռասան է:

Թալանե բուղայե ֆուլի սեար եա- Վայրենի ցուլի աւարը աշնան լի անի սեար զաւա յիսֆա բազա: գլուխ,

Մը կըրսայ թե խոյ, թե խոսանան: Ես վերցուցի անտէր, անտիրա- կան:

Սեարե Սիփանեկ խաշարե դըրեկ գոչա, Սիփանի գլուխը կասեմ լի՛ է. Մը կըրս եղսիր, ինչ արեց դերլ ու ձգեց անա- րատի մէջ:

Բահեկ Վանի բահեկ ֆուր ա, Վանայ ծովը շատ խոր ծով է. Տե դըգետըն մասիյե հուր ա. Մէջ ման կգան մանր ձկներ: Խաճէ Զէռի, գնա՛ քո հօր տունը, Ես քեղ տուած եմ իրաւունք:

Մը ղոճեա զայս դիւստուրա:

Խաճա Ձեռի, կազ քր դորան,
 Նալանալ քարիյէ սեա:
 Ժր սխար հեւտըր ժր ճալկա մըն,
 Բրիսօ-քրիսօ սե խոտա:
 Սիյարեհնօ, թիւ ուտա քընըտա,
 Գա քուլի քրոա, հառա քոխոքոա:
 Գա քուլի ղրգեառըն, քեվախք ա,
 Էալ ժի վոքա սեա քաղղ ա,
 Տիւ ուտա քը մընա:
 Սեարե Սիփանե քը քախս ա,
 Գա քուլի ղր գեառըն, քե վախք ա,
 Էալ ժի միլեկա սեա սեար քը քաղղա:
 Վոչի՛ դեալի՛, վոչի՛ զամանի,
 Բէ ղիրիյա
 Նեչի, նեչի՛վան քրիւթա,
 Էալ ժի քաղղ ու տալան քոմառայա:
 Բնիյե Սիփան քը քախս ա,
 Գա քուլի ղրգեառըն քեվախք ա,
 Գա քուլի սօրուկ ա քըլաչիս ա:
 Սեարե Սիփանե Խալարե ղրքեմ քը-
 մեչա,
 Բընե Սիփանե Խալարե ղրքեմ քը-
 մեչա,
 Խաճա Ձեռի, թիւ կեաղիյէ խո քը-
 սեա վոտիս ա,
 Բալեմա մըլ ժօր քը իեչա:
 —Ձեկա դարե սպիկդարան դիժ ա,
 Էաղե սխար սեար Սիյարեհնօ կոռե
 Սըլիվի,
 Կեազ գոչիկ սպալիս Խալեմա:

Խաճէ Ձեռի, կա քըլ մատաղ.
 Հեժկրանք ընկեր է քու մէջ.
 Արտասուք աչքերէս կը թափի-
 ցածր,
 Ինքն իրեն կըդայ ցածր.
 Սիյարեհնօ, դու արի ինձ հա-
 մար,
 Վայրենի ցուլն ալ երթայ իր հա-
 մար:
 Վայրենի եղներ ման կըդան ան-
 ժամանակ.
 Այն ալ քըլ սէս բաղղի վրայ է.
 Դու արի ինձ համար:
 Սիփանի գլուխը գահ է,
 Վայրենի եղներ ման կըգտն ան-
 ժամանակ,
 Այն ալ քու նման բաղղի վրայ է,
 Վայ դարեր, վայ ժամանակ, ո՛վ
 տեսած է,
 Որքը որսկանին սպաննէ.
 Այն ալ իմ բաղղի դիտուած էն է:
 Սիփանայ ստորտը գահ է.
 Վայրենի եղներ ման կըգտն ան-
 ժամանակ.
 Վայրենու եղջիւրը ձիւղաւոր է:
 Սիփանայ գլուխ կասեմ անտա-
 ոտ է,
 Սիփանայ տակը կասեմ անտա-
 ոտ է.
 Խաճէ Ձեռի, դու քու ծամերդ
 հիւսէ չուան,
 Ձգէ մէջքս, վերե քաշէ:
 Բարտի ծառի ճիւղերը երկար է,
 Ես կըգամ ներքե Սիլվու տղայ
 Սիյարեհնօյի վրայ.
 Չասեն ծամ կտրած խեղճ անտէր:

Սիյամանաի մի այլ ճիւղի վերջը կը պատմուի թէ Խաճէ Ձեռու
 եզրայրեներն ես կընկնեն Սիյարեհնօի հոտէն. կը պատերազմեն փե-
 սայի հետ միացած. իսկ երբ փեսան կը մեռնի, կանգ կառնեն, ապա
 կը հետևեն Սիյարեհնօյին, որ սպանեն, իրենց քոյրը վերադարձնեն:
 Կերթան, կը տեսնեն որ Սիյարեհնօն քարին ընկած կը հեժկրայ,
 կառնեն իրենց քոյրը կը դարձնեն: Խաճէ Ձեռին ճանապարհին կը

տեսնէ իրենց եզրօր մէջ փափսուկ ընկած է: Երկու եզրայրենի կու-
 ղեն սպանել իրենց քոյրը, իսկ փոքրը կասէ թէ.—Այս անմարդա-
 բնակ տեղը չեմ սպաներ, պիտի գնամ իմ ցեղի մէջ սպանեմ, որ վաղը
 չասին թէ ճառատ կասէ. չեն կարողացած վերադարձնել, ամօթու
 կասին թէ սպանած ենք»: Այս խորհուրդը կըզայ Խաճէն, կասէ.
 —Ապարանջաններս մոռացած եմ ետեր, գնամ, բերեմ: Կերթայ,
 վերե յիշուած երգերը կասէ. ու զի՛ք կը ձգէ Սիյարեհնօի վերան,
 ցիցը սրտէն կը մտնէ, կառնակէն կտայ դուրս. որով սիրտ սրտի կտան,
 կը մեռնեն:



ԻԾ
 ՌՕՇՔ, ԱՊԸԶԵԹԻ ԺԸ ԱՊԸԶԵԹԱՆ

Ոգմեցոց բարբառով*

Սօլթան Հասէն ու Ռօշք աղբէր ին, Սօլթան Հասէն մեծ
 աղբէր է, Ռօշք սղախիկ:
 Ռօշք իր հասակին խառաւ, Սօլթան հասէն տուաց,
 —Կնիկմ կը բերեմ իմ աղբօր:
 Դնաց Շէրեֆի Մէքէ կայ, էնոր աղջիկ ուր աղբօր խամար ուղեց:
 Մէկ քեանի օր կմնայ, կերթայ բերելու:
 Օր գնաց բերելու, էնոնց սովորութքն ա, մէկ մարդ խարը-
 նաղբէր կզայ, մէ տարի կը մնայ. չուր աղջիկ ուր ազգական, ուր
 դերդաստան կը ճանչնայ, մարդ նոր կերթայ:
 Բերին փսակին, մնաց տարիմ քմաւ, Ռօշքին տղէմ էլաւ:
 Էզոնց սովորութք էնպէս էր, էրկրի մէջ ինչ տղայ էլնէր, կը
 տանէն, գնէն Սօլթան Հասէնի առաջ. ղիլինի մէջ, անուն կը դնէր:

* Սոյն վէպը ասած է Ոգմեցի Յովսէփ Մն. Յովհաննէսեան, արհեստով
 գգրար. Տիգրանակէր, Մուս, Պալանիս, Խնուս, Պարսկաստան, Թիֆլիս քղաժ է,
 նաեւ 3 տարի է Էջմիածնայ գաւառին մէջ ման կզայ. 40 տարեկան, սիրուց է,
 լեզուն շատ խառնափնտր եւ անհոռի, մինչդեռ վէպը խիստկան քղաժ կեանքի
 պատկերն է: Սղերսի կողմերն այս ճեփաքր կասեն, ընդհանրապէս սոյն ճեփաքրի
 պատկերներն են Ոգմեցի, Մոկացի եւ Սղերցի հայեր. քղեր էս հայ աստղնե-
 ռէն սովորած են, կասէ: Սոյն անձն է նաեւ «Արաբալափ» աստղն:

Սօլթան Հասէն որ էն գախ անուն սրտի զնէր, ասաց:

—Շատ կոչախ ա, պէջֆեկի ժե կեօճվայա (փոքր ինչ թուխ):

Որ էնպէս ասաց. աղբօր սիրա պղտորաւ. եանի թէ իրնից չէ, մշկներուց—խարսնախալորից ա: (1) Ապուզէթի բին կը զնեն անուն:

Ռօշք ասաց.—Կը տանէք, էսա կնիկ, ուր աղէն չօլի մէջ կսպանէք. էդ կնիկ էդոց մօտէն աղաչեց, թէ-ընչի ընծի կսպանէք, ես Շէրէֆի Մէքեյու աղջիկնեմ, իմ արունը ձեզնէ կուզեն:

Էնոնք էլ ասին.—Մենք քեզի չսպանենք, մեր աղէն մեր վրէն կուքի- էդ էլ ասեց.—Ընծի մի սպանէք, օր կը հարցնէ, կասէք, «սպանեցինք, թողինք էկանք»:

Չեն սպաներ. կնիկ կառնէ զուր աղէն, կերթայ, կերթայ, կը մօտի սազլըղի մէջ, մէկ սահաբմ, էրկու սահաբ կը մնայ, մէկ մարդմ կուզեայ, կը տանայ, ձէն կուզեայ էդ սազլըղի միջէն կասայ.—Դու ինչ մարդ իս:

Էդա տեղ կասայ.—Ես քու աղջիկն իմ:

Էդի կը մեղէ, կասայ.—Ես էլ քու խէրն իմ:

Էկաւ, տեսաւ մէկ կնիկ, մէկ էրեխայ. տուաւ, տարաւ ուրան տուն թէ.—Դու իմ աղջիկ, ես էլ քու խէր:

Մէկ խինդ-վեց տարի էդ աղէն կմնայ տան մէջ, կերթայ աղեկներու մէջ խաղ կը խաղայ, որ կը զարկայ, որին վիզ կը քեթրէ, որին թե կը կոտրէ, էկան էդ մարդու մօտ, ասին:

—Կաղաչենք, մեզ տղայ չմնաց:

Էդ մարդ ասաց.—Ընծի էրկու էրախայ կայ, կերթան կարգու, թո էդ էլ էրթայ:

Որ կերթան, մէ քնիմ օր կը կարդան, էդ մարդու աղէն ուր դաս կը կալտընի, էդ մօլէն էլ սիլեմ' էդ Ապուզէթին կը զարկայ, Ապուզէթն էլ կասի.—Մօլա, իս իմ դաս չիմ կալտընի, ընչի ընծի կը զարկիս. իմ քեռու աղէն կը կալտընի, ընծի կը զարկիս:

Մօլէն կասայ.—Շան տղա, իս քեզի չզարկեմ էնի մեծ մարդու աղայա, էնու ընչի սրտի զարկեմ:

Ապուզէթ կասայ.—Էդա աջ ձեռն էր թէ ձախ, էն ձեռ սրտի կառիմ:

Ապուզէթի եօթ տարին կը բըլմայ, էդոր խրօխպէր Սօլթան Հասէն կուզեայ էդ Հալայոց (2) օխտը տարուան խաբն առնէ:

Էն ժամանակ որ էկան խաբն ժողուելու, աղեկներու քեռին

1 Կասեն, սորա վերայ խարսնաղբօր մի արի մնալը արգելուեցաւ:
2) Այդ ցեղին պատկանող 4000 տուն բնամեկի. 4000 տուն բնախալի, 4000 տուն բնեւթի 4000 տուն բնալազի Սուլթան հասէնի ձեռաց տակ էին:

սովրցուց.—Ապուզէթ տարէք նեջիր, չըմֆի Սօլթան Հասէն կուզեայ, էսի չար տղայա. մեզի վնասմ կտայ:

Կերթան ուրենց խամար նեջիր, օրմ' չում յիրիկուն կան կուզեան: Ապուզէթ կասայ.—Յէս օր մեր ձեռ բան չընկեաւ:

Կասեն.—Վնաս չկայ, աղբէր, դիչերս կը մնանք, լուսուն կերթանք, լուս օր բացուաւ, էլմ կերթանք նեջիր:

Կը մնայ յիրիկուն, կասի,—Ես կերթամ տուն:

Էդոր քեռու աղէք կասին.—Էս օր մերթայ, վաղ անպատճառ կերթանք:

Ապուզէթ կասի.—Դուք դար էլ կերթամ, չգար էլ կերթամ, չըմ կայնը:

Իրեք խըտ իրարու էլան, էկան տուն:

Գեզի կուչտ յարսան, ինչ տանան,—Ինչ կանցար մալ—սաւար, ոչխար կայ, տուած յաւաջ, կը տանին: Ասաց.—Տղէք, էնա մէկ ձին իմ ձին ա կը տանեն:

Քեռու աղեկներ ասին.—Էնի դարիպ մարդ ին, քիւ ձին մեր տունն ա:

Ասաց.—Էն իմ ձին ա, ես կը ճանչնամ:

Էն մարդիբու ասաց.—Աղբէր, էդա ձին իմ ձին ա, ինչի կը տանիք:

Էն մէկն էլ ասաց.—Դէ, կորի՛ր դէն, դու ինչ էս, էկեր ձի կուզես:

Էն մէկէլ ասաց.—Մէկ ձի է, տուէք, թո տանը, ուր դասէն ուր զլոխ: Էնոր ձին տուեցին:

Աչքեց, մէկ պառու ձի էլ ճանչցաւ՝ ասաց.—Աղբէր, էս մեր զրկեցի ձին ա, մեր պառու ձին ա, դ՛որ կը տանիք: Ապուզէթի վրէն բըխան:

—Տօ, ասին, շան տղա, քիւ ձին տուեցին, միայ պառու ձիու դաւի՛ կէնիս, գնացէք, խիցէք ուր ձին էլ ուր մօտէն, ասին:

Ապուզէթ մէկ ձեռ թալեց մէկին, էն մէկ ձեռ թալեց մէկէլին, էրկու զարկեց յիրուր, սպանեց. էն մէկէլ բռնեց, էդոր ատմներ քակեց. քաչեց ճակատ զարկեց, ասաց.

—Դէ, գնա՛, հո քզի լէ սրտի սպանի, յըմա գնա՛, քիւ բեկին խաւ էրայ, թո էնի դեայ:

Գնաց. Սօլթան Հասէն արտու, մէկ մարդ ծծողայ, կուզեայ:

Ասաց.—Ի՞նչ էլի:

Ասաց.—Ի՞նչ իլի, մեր վերկին մի ձեռնէն առաւ. մզի լէ խայտառակ արեցին:

Ապուզէթն էլ գնաց տուն, քեռին ասաց.

—Տնաւէր, էդ ինչ արեցիր, լուսուն Սօլթան Հասէն կուզեայ. մեր ծծի էրեկէն էլ կը կտրայ:

Ասաց,—Գեռի, դիւ մի վախենայ. առ քիւ ժողովուրդ, զնա՛ մէ կրաղ կայնի. ես կերթամ կռիւ, ան ժամանակ ընձի սպանեցին, դիւ գիտես:

Սօլթան Հասէն էլաւ ուր փահլիվաններ ճամբեց էգոր կռիւ խարիր փահլիվան Սօլթան Հասէնից սպանեց. խապար տուեցին Սօլթան Հասէնին.—Էլ մեր կարողութեն էս մարդուն չխասնի, պտի աղբէր Ռօշք գեայ:

Ռօշքն էկաւ տղի կռիւ, մէրն ասաց.

—Ապուղէթ, որդի, էս օր մէկ փահլիվան տը գեայ քիւ կռիւ, համա իմ ծծի կաթ քղի խարամ էղնը թէ դիւ ան մարդ սպանըս, տը բունըս բիրես:

Ապուղէթ գնաց կռիւ, չու՛մ յիրիկուն ինչ էրաւ, չկեարցաւ առանց զրբայ զարնելու բունէր, էն օր չկեարցաւ զխէր բունէր, մէկէլ օր գնաց, զխէր բունեց, բերեց:

Ճուաբ տարան Սօլթան Հասէնին.—Աղբէրդ էլ բունից, սպանից չենք գիտէր. բունից չենք գիտեր:

Սօլթան Հասէն ասաց.—Հայ վախ, աղբերն էլ տարաւ, մենք էգոր ձեռ պարմի՞ս կեղնինք:

Ապուղէթ մէկէլ օր էլմէլ գնաց կռիւ:

Էնի թո էրթայ կռիւ, մենք դառնանք Ռօշքին:

Կնիկ ասաց.—Ռոշք, ընձի կը ճանչնաս:

Ապուղէթ գլխ տարաւ, բերեց:

Կնիկ ասաց.—Ես Մէկայու Շէրեֆի աղջիկն իմ:

Յիրիկուն Ապուղէթ էկաւ, տեսաւ էդ բունած մարդ, լաւ չորբեր խաղուցեր ա էգոր ուր մէր, պապիրոզ չիննը՝ դրեր ա էգոր ձեռ, ասաց.—Կաննի, էսի քու սիրածն ա, էրեկ անձաղ բունեցի. էնի մարամ էր ընձի սպանէր:

Էգի դողղըք քեչեց, պտի զխէրն սպանէր, մէրն ասաց.

—Որդի մի սպանիր, քիւ խէրն ի:

—Աղէկ, օր իմ խէրն ի, հարի մկայ դորն էր, չկար:

Մէրն էլ նստաւ, էնու խամար դսա էրաւ:

—Ձեն ժամանակ որ դիւ էղար, տարայ, դրը դիւանի մէջ, քիւ խորոխպէր անուն գրեց, ասաց,—խօս վերխալը պըչեկի ժը կեօր վայա նավիլի Ապուղարայ:

Էգու խամար քեօ խէր բունեց քեղի էլ, ընձի էլ դիւս թալից:

Էդա տեղ որ Ռօշք խասկըցաւ, աղբօր թուղթմ գրեց, ասաց.—

Էս կոչախ տղէն օր կայ, մեր տղէն, Ապուղէթն ա:

Սօլթան Հասէն լսաւ, ասաց. Աստըժուն փառք, մզի խարիր փահլիվանն սպաներ ա, ամա զարար չկայ. գնացէք իմ աղբէր, ուր տղէն, ուր կնիկ առօք. փառօք առէք, էկէք ըս տե:

Էն դախ որ կերթան, Ապուղէթ ձին կը խեծնայ, կերթայ մօլի գռան վերէն կասայ.—Մօլմ, սր մէկ ձեռնով ընձի զարկեցիր. էն ձեռ բեր, տեսնանք:

Մօլի էն մէկ ձեռ կը կտրայ, կը դառնայ, կերթայ տուն:

Մէկ ժամանակ կը մնայ. Սօլթան Հասէնին մէկ աղջիկմ կայ, կը կանչին Ապուղէթ ու աղջիկն, կը բերին մէկ տեղ, պտակեն:

Տղէն առջի զլխուց կուգեայ, կը պառկի:

Աղջիկն էլ կուգեայ, խօր պէս կեասի:

—Լաւ կտրի՞ս փահլիվան ի, ամա քիչմ սե ի:

Գնացին կէս ճանփան, Բէքիր ասաց.—Միր, քիչ առաջ գեա, կս էրթամ ջրուածք, գեամ, խասիմ քեզ:

Ինոնք գնացին, էնի յետ դարձաւ, էկաւ փեցչարի դէմ կայնաւ, աղանջ դրեց Մամէին, Ձինէին, տեսաւ Ձինէն Մամէյի Գարաջի տըկէն էլաւ դուս, մէկ բուխարկի ոտք Ձինէն նստաւ, մէկ Մամէն նստաւ: Ձինէն առեց խաղ սահլ:

—Ս, կարե, Ձինէ կօ.
Մամօ կուչ մարե դս սիր.
Էափկ ասըզասայ յի կըր, յիմա կըր.
Սրե Մամօ, մայ իրար, դայ սիր.
Հարայ ճնա սրնէ լըմա թար թահր.
Սալ զաղայ լազըմ յեղայ լը հա կըր:

. . Ձինէն կասէ.—
Մամօ, տնուէր. դու տեսար,
Հալալ կաթնակերներ ինչ արին,
ինչ չարին.
Սյ Մամէ տնուէր, դու տեսար.
Մինչև հիմայ աշխարհ մեր առաջ
ծով էր
Հալալ այն կաթնակերներ ական
բացին չորցուցին:

Էն տեղ էլան, գնացին մէ բուչով, էն գնաց մէկ բուչով, էն գնաց մէ բուչով. ուրենց տեղ էլի:

Բէքիր գնաց դեխ Միր Սևտին, ասաց.—Միր Սևտին, տեսար Ձինէն Մամօյի Գարաջի տակին էր:

Ասաց.—Ինչ անեմ որ մեր ձեռնէն գնաց, սլըծաւ. Ղարաթաթտին, ձաքօն Արֆաւի տուն տեղ յըմեն վառուաւ, բան չի մնաց. մէկ լած՝ իրեք ձին խանեցին:

Բէքիր, ասաց.—Միր Սևտին, իսոնց տուն տեղ վառուաւ. ինչխ անենք, ինչխ չանենք:

Բերեցին, ընկեան գեղի մէջ. մէկից էրկու ոսկի, մէկից մէկ սակի առեցին, լցեցին լալուղի մէջ, տարան առին Ղարաթաթտինին, ասին:—Առ քե, առըր տուն-տեղ շինել. նստի ինե:

Տուեցին մէկ ֆօզիւ սարեմ շինել. քան տառուան էլ խօրտա, նստան ինե:

Շատ-քիչ Աստուած գիտի, քեանի օր մնաց. քարաւները էկան Ղարաթաթտինի իտե. ասին.—Թագաւոր ձեզի կուզի որ գեաք ապկեար:

Էն տեղէն Բէքիր ինան Միր Սևտին լսան, Բէքիր ասաց.—Միր Սևտին. քարաւներ էկած էն Ղարաթաթտին, ձագօն, Արֆանին էտեւ, որ տանին ասկեար, ինչպէս անենք. մարդ չի կայ մեզի ջօղութեն անի. էրթանք. ինզրենք մի ազրէր թօղին ըստեզ:

Գնացին, ասեցին.—Իրիքով էլ էրթաք չընի, ձեր մէկ ազրէր մնայ ըստեզ:

Ասին—Չընի, իրեքիս էլ ուզեր ա թագաւոր. Մամօն էլ պտի տանինք իտա մեզի: Շատ խնդրուան մօտէն:

—Որ դու կերթաք, ասին. Մամօն մնայ, մեզի աղութեն անի. չուր դուք գեաք:

Ասին.—Մենք կերթանք, Մամօն կը թողենք. կուգեանք, որ Մամօյին բան տուր էք, ձեզի տնով, տեղով կ'ըրեցենք:

Եզոնք իրեքով գնացին. Մամօն թողին:
Մամօն տարան—գնացին Միր Սևտինի դիւան:

Տաս-աստուերկու օր մնաց. մէկ օր Բէքիր էլաւ, գնաց գեզբանք, որ սուա խանի ուրնից, գեա. ասի:

Գնաց. էկաւ ասաց.—Միր Սևտին, նէ դու ընիս, նէ քու բեկութեն, նէ քու միւռութեն ընի:

—Ընչի, Բէքիր, դիւահարար-կատար, էնչ իլե:
Ի՛նչ իլե, գնացի ինա գեղ. ամեն մարդ ուր խամար կը կանչի, կասի. «Ձինէն Մամօյի եան ի»:

Բէքիր, ինչխ անենք, չենք կանա Մամօյի դէմ բան ասե. մենք Աստուծոյ դէմ դրար ենք արե:

Ասաց.—Դու իկէք էրկուով սարիճ խաղցէք, կս ինչ կը խանեմ, կը խանեմ ինոր գլօխ:

Մամօ, ասաց Միր Սևտին, արի, կս դու սարիճ խաղանք, դու որ ընձնից տարար, կս Ձինէն տամ քեզի. որ կս քեզնից տարայ՝ ինչ խանեմ քու գլօխ, կը խանեմ:

Մամէն ուրին կը մտածի,—Ինչ պտի անի, իմ ձին ընձնէ պտի առնի, թո առնի:

Կը գնեն սարիճ, կը խաղան, էրկու անգամ Մամօն կը տանի մօտէն, կը մնայ մէկ օյին որ տանի մօտէն:

Բէքիր ասաց.—Սյ հօ. Ձինէն տարաւ Մամօն, ինչ պէտա անեմ.

Ձինէն բերեմ, կայնեցնեմ ըստե. բալի աչք իցքի Ձինէին. տարուի:

Էլաւ գնաց թիխ Ձինէն, ասաց.—Ձինէ, Միր Սևտին ինան Մամօն վէր քեզի սարիճ կը խաղան, էրկու օյին տարեր ա. մնացեր ա մէկ օյին որ քեզի տանի. որ դու հազր ընիս. կը թալի ձեա. կը տանի քեզի:

Տանի, կայնըցուցի Մամօյի քամակ ինե, ինք խաղ կատի.
Բեխր կօր.—Հուն կանա հարսու Միր
ըն բեկըն, կտով միւռ ու բեկ էք.

Մեր խասն սարն ձիա հառա վախօ
կաւ մարդ էք, ելէք, տեղաւնք
կոխէք:

Էն կերթայ ինոր տեղ կը նստի, էն ինոր տեղ. տեղ կը փոչ:

խեն. Մամօն Ձինէն որ կտխնայ, խելը գլխից կէրթայ. ինչքան քար կը դնի, էնի կը տանի, չի գինայ ինչ կը խաղայ: Իրեք օյին կը դնի, իրեքն էլ կը տանի:

Բէքիր կուգեայ ձեռքեր իտեւանց կը կապի, կասի.— Իմ բըւ-
ճաւորն էս: Էն տեղ էլի Մամօն խաղ կասի:

Մամէն կասի.— Ես քեզ կտանէի,
Յա կը տանէի:
Մա՞նկ սր քե.— Տիւ որ քոյի հար որ
բըռի մըն.

Մըն ծիւ մարի զնու ասն կըրի: Ես կը կոխէի հրէայի տունը:

Էնտեղ ձեռք ոտք, կը բռնեն թալին բանտ, մէ քսան օր, հո-
տուն օր կը մնայ մըջ բանտին:

Ձինէն կըլնի ինչ կանի, լաղամչի կը բերի որ լաղամ գարկի,
փող կուտայ, կասի. կանաք լաղամ գարկէք իմ օրդից տանէք չու՞մ
Մամօյի մօտ:

Կասեն.— Կը գարկենք. ընչի չենք գարկի:

Բիրեց լաղմ գարկեց, ուր օրսից չու՞մ գնաց բռնատան մէջ:

Գիշեր կէթէր մօտ, էլի ցէրէկ կուգեր ուր տեղ:

Ձինէն էգոր խալաւ-մալաւ կը լուար, լու կը պախէր:

— Բէքիր ասաց.— Միր Սևտին, էսօր էղեր ի քսան օր Մամէն
թալերենք բռնատուն. մէ էրթաս, իշկաս, ինչ էլեր ի, մենք վաղ
չենք կանա աղբերներաց ջուղաք տայ:

Բաքօն էլաւ գնաց հէրտիսի վրէն. ասաց.— Մամօ, իշկայ ընձի,
ես էկեր իմ, քեզի թողիմ:

Մամօն սխալտու էր, իշկաց վիրն. Բէքիր իշկաց վրէն, ուր
գլօխ կընտուկ, ուր չորեր լուացուկ քամիգ ի:

Ասաց.— Մարդ բռնաւոր բռնի, ախր ուրին բօզմիս պտի ընի.
էս ինչ պէտս է:

Դարձաւ էկաւ, Միր Սևտինն ասաց.— Մարդ որ բռնաւոր բռնի
ուրին պտի բօզմիս էղնի, թէ վրա գլօխ քամիգ քեֆով կեղնի:

— Բռնաւոր մարդ կեղտոտ ոճրոտ խիւանդ կեղնի:

— Ես գնացի էմ. Մամօն տէսեր եմ, կասես Մամօն նոր գնացե
բարբարխանեն. գլօխ կընտե, լուացե. քամիգ էկե նստե Ասաց.

— Էթանք, խըտրաց տեսանք:

Գնացին վէր յերգսին, Միր Սևտին ասաց.— Մամօ, իշկայ. ես
էկեր եմ, քե թողնեմ:

Մամօն իշկաց վիրն, տեսաւ ինչպէս որ Բէքիր ասեր էր էնպէս ի:

Ասաց.— Էս բռնատնից խանէք, տարէք քցէք քարէ բռնատուն.

Տարան, քցին, քարէ բռնատուն:

Ձինէն ինչ ճար արաց, չէլաւ. էլ լաղմ գարկել չէլաւ:

Մնաց մէ ամիս, էրկու ամիս բռնատան մէջ, խեղճ շատ խի-
ւանդացաւ, շատ ընկաւ:

Մէկ օր դուրէշ մի էկաւ. Ձինէն տեսաւ դուրէշին, ասաց.
— Դուրէշ, դոր կերթաս:

Ասաց.— Կերթամ քաղքենի պտտեկու—ման գալու:

Ասաց.— Որ կերթաս, կեղնի Արֆօն, ճագօն Ղարաթաժ-
տին տեսնաս:

Ասաց.— Ես կերթամ որ տեսնամ:

— Որ կերթաս, առ իմ ոսկիք, իմ շորեր, ինչ ուզես կուտամ.
քախան գիր մի գրեմ. տանես տաս Ղարաթաժտինի ձեռ:

Դուրէշ աչք իցկեց ինե. ասաց.— Ես մէկ բան չեմ ուզե. մի
պաք կուգեմ որ մէ պաք տուեցիր, քու թուղթ տանեմ, կուտամ:

— Դուրէշ, ասաց. քու լաղեն ինչ է պաքի խետ, արի, անասո-
ուածու՞թեն մի անի. մալ դամիճա կուտամ:

Ասաց.— Ձէ, չեմ գինայ, մի պաք կուգեմ:

Ճար վրէն կտրաւ, չի կըցաւ ճար խանէր ուրին. ուր լայլօխ
արաց չորս տակ, տուից ուր էրեսին, ասաց.— Դուրէշ, դու ընիս
քու Աստուած, արի, պաքի:

Դուրէշ էտոր էրես պագեց:

Ձինէն թուղթ գրեց գեաղտիկ տեղ, զինք-զինք. «Ղարաթաժ-
տին. Միր Սևտին Մամօյին բռնեց, հալ հեֆիար էսպէտ, ես դաւ-
րիչին ինչ արի, թուղթ չը բերեց քեզ խամար, ինչքան իմ վրէքի-
ոսկիք՝ մալ դամիճա տուի, չի բիրեց. ասաց. «պաք պտի տաս»,
իմ ճար կտրուեց, պաք տուեր եմ, նոր թուղթ բէրեց. կըլնի Մ-
մօն մեռնի, չի խասնէք, ալբեալ էկէք, չի դաղրէք»:

Թուղթ տուեց դուրէշտարաւ, քաղքենի շատ պտտեց, տարաւ
տուեց Ղարաթաժտինի ձեռ:

Ղարաթաժտին թուղթ առեց, կարդաց, ասաց.— Սյ հն, աղ-
պէրներ, Մամօն բռնած էն. կըլնի որ չի խասնէք: Ձինէն ինչ արե-
չարե, դուրէշ թուղթ չի բերեր, ճար կտրուեր ի, պաք տուեր ի,
նոր բերեր ա:

Դարձան դուրէշին.— Դուրէշ, Աստուած քու տուն աւիրայ,
էնքան մալ տուեր ա, ոսկի տուեր ա, դու պաք չառնէր էն դար-
տի մէջ, չէր ընի:

Թուր թալիցին, դուրիչի վիզ կտրեցին. իրեք ախպէրով դար-
ձան էկան դեխ տուն:

Ձինէն ինան Արթին սև խաքան Մամօյի վրէն:

Ձէն գնաց Միր Սևտինին. Արֆօն, ճագօն, Ղարաթաժտին
իրեքով էլ դարձած՝ էկած՝ մօտացած էն:

Միր Սևտին կանչեց Բաքօյին. ասաց.— Գնա, Մամօյին իշկայ,
տես ինչպէս ա. Արֆօն, ճագօն Ղարաթաժտին էկած էն, գնայ
իշկայ էթանք թողնէք: Որ էկան, մեզի անով տեղով կը վնասեն:

Բէքիր գնաց վեր յերգսին, ասաց.—Մամօ. իշկայ ընձի. ևս էկեր ևմ, քեզի թողեմ:

Մամօն նուազուկ, չի կարցաւ գլօխ վերցրցէր դարի վէր:

Բէքիր դարձաւ, էկաւ միր Սևտինի ասաց.—Մամօն ձեռաց գոցեր ա:

Ասաց.—Բա ինչպէստ անենք:

—Օրողկենք Ձինէն առնի քեռասուն հարիւն, էրթայ, թողի:

Միր Սևտին ասաց.—Ձինէ. Մամօն տուի քե, գնա, թող:

Ձինէն վերուց ուր քառասուն հարիւն, գնաց ուրախ-ուրախ որ թողու. սաֆի գինայ սաղի:

Բէքիրի քոր մէջն էր. անուն Ձինէ, ասաց.—Ձինէ մենք չէ- թանք, չարխիճարակ կայ, օրողկենք. խանենք, որ մենք էթանք, աչք կը դիպնի մեզի. կը մեռնի բռնաստան մէջ:

Ձինէն Բաքոյի քուրոջ ամիսց.—Գու էլ Բաքոյի քուրն էս. կու- ղես որ Մամօն թողնեմ, բռնաստան մէջ մեռնի:

Ականջ չարաց, գնաց վէր յերգսին կայնաւ, ասաց.—Մամօ, ևս Ձինէն էմ, իշկայ ընձի, էկեր էմ, քե թողեմ:

Մամօն Ձինէի ձէն լսաւ, իշկաց, ասաց.—Ձինէ, դու չես իկե ընձի թողես. էկէրես իմ խոզին առնես. նոր—քաղա ևս կը պըր- ծենեմ էս տեղից:

Ձինէն շրիս կախեց տակ, ասաց.—Մամօ, կապի մէջքդ, ևս քեաչեմ, խանեմ:

Մամօն արաց որ կայնէր, ստքերաց դուզում կտարեր էր. էրակներ կտուեր էր, շատ մայիճցեր էր. քեաչին, խանեցին:

Մամօն ասաց.—Ձինէ, քու չոք դիր, ևս գլօխ գնեմ, պառկեմ:

Աստուա խրամանքով էն էր, մեռաւ:

Ձինէն առեց խոզ տակ:

Կեալա քաւե մընի կեալրա.

Խոսե խրարիկա սարի հարս քրնիյա.

Քե տիրիյա կըրրիա հառա քառ-
այ ժընայ.

Իմ հօր բռնաստուն քար է,

Աստուած աւեր դարձնէ զըլ-
խանց մինչև էրթայ տակը.

Որն է տեսեր որ բռնաւորին
կնիկ էրթայ թողէ:

Չուղաք կերթայ Միր Սևտինին, Բաքոյին.—Ձինէն Մամօն թողեց. ամա մեռաւ:

Տարան Մամօն խորեցին:

էն օր շատ անձրև էկաւ, Ձինէն կերթէր ուր փէշերով խող կը բերէր, լցէր Մամօյի գերեզմնի վրէն,

Բէքիրի աչք կար վըր Ձինէի. խոզ ասայ:

Ձինէ քաւաւիւն է, դու կնիկ:

Ձինէ, բաւաւիւն է, դու կնիկ:

քաւաւ ու ուան մտքանայ.

Ս.ըր սորա հոշակե ջանքով քաշայ,

Տու դարսա մեռան մեր խաւաւ հի-
րթխոռայ.

—Չարե Բեքիր, քրչայ հայ հոք:
Բշա Բեքիր միր Սևտին քա ղիր ու
քարհաշ քե.

Բշա Մամե Ալան քաւր մարտկան
ու քե:

բաւաւիւն է այդ կախարդու-
թիւն անես.

Առ աւետուն ևս հրապարակի
մէջ ձի թող կտամ:

Գու ուժով, լաւ մարդ վերցուր
քեզ համար.

—Այ Բէքիր, թող այդպէս լինի.
Թող Բէքիր ու միր Սևտին աշ-
խարհի մէջ ողջ աւողջ ման դաք,
Թող Մամէի Ալան հողի մէջ
սևանայ:

Ձինէն դառնա, խողով ուրին կանիծի.

—Մընէ հաւարա խօ կեհիշտանդ շախ-
ուք քաւածա

Մամօ մրի սանէ հաւ ոտ ա.

Ձինէն հաւ կեաժա դանէ հա կվարա:
Մեկ հաւարա խօ կեհիշտանի շախ-
ուք կգար ա:

Մամօ մրի դանի կվարա.

Ձինէն հա կեաժա դանէ հաւ ոտա:

Սա իմ ձայն ձգած եմ արեղի ի
զօրութեան,

Մամօն մեռաւ կէս օրին,

Ձինէն չի հասնի մինչև ևրեկոյ:

Իմ հաւար ձգած եմ նազարնե-
րու զօրութեան:

Մամօն մեռաւ երեկոյին,

Ձինէն չի հասնի մինչև կէս օր:

Ձինէն էն տեղ շատ խիւանդացաւ, առին գնացին. առնը
անկեզու ընկեաւ. չուր իրիկուն չի քաշեց, մեռաւ:

էն էլ տարան խորիցին մօ Մամօն:

Սըրունս ջուար էկաւ. առեցին Արֆան ձագօն Ղարաթաժ-
աին էկան:

Սըթին Ձինէի քորն էր, ուր շորեր, ուր ֆօզու սարէն բի-
րասի սև ա քեաչե,

Բէքիր ասաց.—Միր Սևտին. ևս լսեր էմ. էս օր Արֆան, ձա-
գօն ու Ղարաթաժաին կուգեան. էլէք էրթանք դէմներ, քեանի

Սըթին չի գեացե. խոսվըցուցե ինոնց:

Արֆան, ձագօն, Ղարաթաժաին մօտացան ուրենց աներ:

Ղարաթաժաին դուրբիցս դրեց աչիչ, ասաց.—Ախպէրներ, մեր
տուն բիրասի սև ին քաշած, եա Մամօն ա մեռե, եա իմ լաճ

Գուրկին ա մեռե:

Սըթին էլաւ, գնաց յառջևներ ամենից շուտ. իգոնց հաւա-
լութեն ասաց. ինչ էկե գլխներ:

Միր Սևտին ինան Բէքիր գնացին որ էթան դէմներ. տեսան
Սըթին քեանք ինոնք շուտ ա գեացե. փախան պախուսան քեաղքի

մէջ, ասին.—Կուգեան, մե կտղանեն, հար չիկայ էլ:

Ղարաթափտին ախպէրներաց ասաց.— Թրեր չըլտէք, ընկնենք քեաղքի մէջ, ման դեանք. միր Սևտին, Բէքիր տեսնանք, սպանենք. մեր սիրա թող խովանայ:

Թրեր չըլտին ընկեան քաղքին մէջ. էնքան կան էկան քեաղքի մէջ, չի կարցան գանին. զնացին ուրենց տուն իջան. ասաց Ղարաթափտին.— Զարար չիկայ. որ դու մարդ էք, էսօր չէլաւ, առաւօտուն կիկնի մեր ձեռք:

Դնացին թէ լացին թէ ինչ արեցին:

Բէքիր ասաց.— Միր Սևտին, բա մենք ինչ անենք, ճար չըկայ էն քաճրներ մեզի տնով-տեղով կը վառեն:

Աստըծով իլան մը կանեմ. մեզի բան էլ չառեն:

— Ինչ իլան պտի անես, Բէքիր ասաց, միր Սևտին:

Էթանք բազար, ամենը մէ քօփ կտաւ առնենք մեզի, մեր թրեր թալինք մեր վիզ. քօփ կտաւ դարենք մեր հունթ. էթանք Ղարաթափտին տուն ճրաքի դէմ, ինոր տղի օրօրոցի դէմ ասենք. «էսա մեր վիզ, էս էլ մեր թուր. էս էլ մեր պատանք. կսպանես, ինչ կանես, էլի, արա»:

Էնպէս որ արեցին, առեցին զնացին Ղարաթափտին տուն, օրօրոցի դէմ կաղնեցին, էնպէս ասեցին:

Արժան, ձագօն, էլսն կայնան որ սպանեն:

Ղարաթափտին չի թողեց, ասաց.— Մարդ արունք մէջ ուր տան չանի, որ դու մարդ ըլնէք, շատ տեղ կայ:

Ազատեցին:

Էլան ուրախ ուրախ տնէն դնացին:

Բէքիր ասաց.— Միր Սևտին, տեսար: Ես ինչիս արեցի. բան չարեցին:

Բէքիր մի քանի օր մնաց. մէկ օր դնաց վէր ինոնց գերեզմանին. ծակից քամաւ արաց, տիսաւ քի Ձինէն ինան Մամօն ձեռ թալած են իրար վզով, նստած՝ ուրախութեն կանեն:

Գարձաւ էկաւ, ուրախ ուրախ Միր Սևտինին ասաց.

— Միր Սևտին. Ձինէն էլ, Մամօն էլ սաղ նստած, ուրանց գերեզմանի մէջ ուրախութեն կանեն:

— Բէքիր. էլի, էթանք, տիսնանք, որ սաղ էն, առնենք գետնք:

Էլաւ միր Սևտին գեաղտիկ թուր կապեց մէջք, ուր Ֆարաջի տակով. զնաց Բէքիրի խեան գերեզմանի վրէն:

— Բէքիր, իչկայ խինք. որտեղ կերևան, ասաց:

— Միր Սևտին, անա, նստած ա. կուզես դու էլ արի, քամաւ արա, սաղ նստած ա:

Միր Սևտին իչկաց որ սուտ ա, աչքի դէմ դատ չէրկայ:

Բէքիր ասաց.— Ուրա. ես դատ չեմ տիսնայ:

Բէքիր էկաւ. էլի քամաւ արեց:

Միր Սևտին մի թուր տուեց էդոր վըզին, կտուց:

Արուն թաւ երկինք:

Միր Սևտին ասաց.— Իմ Ֆարաջեն բռնեմ արունի դէմ. թօ

չի կաթի վըր գերեզմանին:

Արուն կաթաց էրկըսի գերեզմանի արանք:

Մկայ էն արուն էլի մեծի ծառ:

Ամեն տարի էդ ծառ կը կտուեն, էլի կը բուսնի:

21

ՄԱՍԱԶԻՆ*

Էն ժամանակներու մէջ մի քաղցր գիշեր, Մամէի Ալան իւր սենեկին մէջ կը քնէր. Նոյնպէս քնած էր նազիլի խաթուն Ձին, Ընդհանուր աշխարհի դեղեցկուհին:

Երեք քոյր աղաւնի միտսին երկինքէն իջան,

Խաթուն Ձինի լուսամուտի վերան նստան.

Փոքրը ասաց.— «տեսած էք սիրունատես,

Աշխարհի մէջ՝ խաթուն Ձինէի պէս»:

— Այո, ասաց մեծ քոյրը, Ալիաշայի տնէն,

Բաջանց թաղաւորի որդին— կարի՞ Մամէն

Առաւել ևս դեղեցիկ է քան Ձինէն.

Արդեօք կայն հնար, որ իրար առնեն:

* Մամ-Ձին կամ Մամազին եւ կամ Մամազին քրդական վեպը քրդերն պատմած է ճանկասանցի եզգի—Օնպաւի Մհոն. որ Վանայ կողմերէն էր, մի ժամանակ Պայազիս ոստիկան, ապա Բագրեւանդայ առաջնորդի մօտ քուսնէն էր, եւ քանի տարիներ ի վեր եւս Միսեկայ լեռներու մէջ (առեսաց սահման) Ասլանյաւ եզգիներու զիտը կը բնակի: Սա լաւ հայերէն գիտէր, որոյ եւ Գիսակ Նալպանտեանի օգնութեամբ վեպս հայերէնի վերածած եմ. ապա փորձ արած եմ քրդերէնի նման ոսանաւորի վերածել՝ հետեւելով իւրաքանչիւր նախադասութեան, սակայն հարկ եղածին չափ չեմ յաջողած: Որով այլ եւս չազգեցի փոփոխել յղկեցի. արձակ ոսանաւորի վերածելով՝ անփոփոխ պահելով քրդական իւրաքանչիւր նախադասութեան իմաստը. վասն զի այնպիսի բառեր կային որ հազիւ քանի նախադասութիւններով կարող էի հասկացնել:

—Արդեօք չէ կարելի սրանք իրար կապել:
 Օրերէն մէկ օր իրենց փափաքին հասցնել,
 Ասաց զորք քոյրերնին խիտ յուզուած,
 Մամ Զինի երջանկութեան յուսով լցուած:

—Այն, ասաց մեծն, Աստուած որ յաջողէ,
 Մամէն ու Զին իրար կապել զիւրին է.
 Շիփ շիտակ Խաթուն Զինի կառաջնորդէր,
 Մուխր Զեմին—Մամէի մօտը կը տանենք:
 Երեքն իրենց բազուկները պարզեցին,
 Միտսին առ Աստուած խնդրեցին.
 «Ո՛վ Աստուած, ասացին, դու յաջողես,
 Մի աղաւնու մորթ ցած իջեցնես»:

Ասոնց աղօթքը Աստուած բարին լսեց,
 Աղաւնու մորթը երկնքէն իջեցրեց.
 Խաթուն զին գարթեցաւ, տեսաւ.
 Շատսկեց, զայն վեր առաւ, հագաւ
 Խաթուն Զին եղաւ աղաւնի, թե առաւ,
 Երեք աղաւնիներու հետ, ուրախ թռաւ.
 Եղան չորս աղաւնի, շատ երկար թռան,
 Մամէի լուսամուտի վերան թառեցան:

Մամէն ի խոր քնոյ մէջ էր ընկզմած,
 Աչքերը բացաւ, տեսաւ Զինը զարմացած.
 Զին որ ոչ միայն գեղեցիկ իրրե լուսին կը փայլէր,
 Այլ խելքի, հեղութեան, համեստութեան միացումն էր,
 Մամէն յափշտակուեցաւ գեղեցիկուհոյ սիրոյն,
 Երեք օր, երեք զիշեր ոչ բուն էր, ոչ արթուն.
 Աչքերն ինա յառած՝ լեզուն կապուած,
 Կարծէր միայն սոսկ երազ է իր տեսած:
 Քոյր աղաւնիք, Խաթուն Զին ևս իրենց հետ՝
 Ֆը՛ռ, թռան, գնացին կորան աչքից անհետ.
 Չորրորդ գիշեր կրկին վերադարձան, եկան.
 Մամէն նոյն յափշտակուած զլճակի մէջ տեսան:

Մամէն զգաստացաւ. ու շողիք զիտեց Զինէն,
 Մտածեց—ինչպէս անէ, որ չհանէ իր ձեռնէն.
 Ակնապիշ նայեց նրա կերպարանքին, զմայլեցաւ,
 Միմիայն մի խօսք արտասանել հազիւ կարողացաւ:
 —Գեղեցիկուհիդ հուրի՛, դու գարձեալ հօրս քաղաքը.
 —Գեղեցիկազոյնդ կարի՛ճ, դու եկար հօրս աշխարհը.

* Սոյն նախադասութիւնը երբեք մի բառով կատարի:

—Ոչ, ասաց Մամէն. եթէ հօրդ աշխարհը ես եկած եմ,
 Քանի մի՛նարայ կայ այս քաղաքը, ասա որ համբմա՛:
 —Հօրս քաղաքը հարիւր վաթսուէն և վեց կայ,
 Իսկ ասա՛, քո հօր քաղաքը սրչափ կըլայ:
 —Հօրս քաղաքն երեք հարիւր վաթսուէն և վեց,
 Կուզես բարձրանանք տանիս—, համարեմ, տես
 Պայման կապեցին, ի տանիս բարձրացան.
 Մի առ մի մի՛նարեները համարեցին, տեսան.
 Մամէն արգար էր, յաղթանակը տարաւ.
 Զինէն խոստումը կատարել յօժարեցաւ:
 Մատանիներ փոխանց հետ փոխեցին.
 Իրենց աշխարհ, ազգ ու անուն յայտնեցին.
 Զին ասաց.—Ես Զին եմ, Խաթուն Զին,
 Գուտարն եմ ձղիր ու Բողանի թագաւորին:
 Եթէ հայրս հարցնես—է Միր Աւարն.
 Հօրեկբօրս որդու անուն ևս Միր Թաժաին.
 Քաջհրու սերունդ է. քաջատունիկ մարդ,
 Մեծ քաղաքէ, սիրուն աշխարհքէ:
 Ահա վերջինն է դալս, կտրիճ Մամէս.
 Այլ զիս հօրդ աշխարհը պիտի չտեսնես.
 Գու կը կարծես, քեզ տեսնելով յանցաւոր եմ ես.
 Այնպէս անեմ որ զիս որոնելով հազիւ գտնես:
 Մամէն զգաստացաւ, Զինէի ձեռք բռնեց.
 Ձեռքը իւր ձեռաց մէջ առաւ, պինդ սեղմեց.
 —Թոյլ չեմ տար, ասաց, դու այս տեղէն զնստ.
 Մի գուցէ երթաս, այլ ևս չվերադառնաս:
 Սակայն Խաթուն Զինի գնալու ժամը հասաւ.
 Շատսկեց, քնոյ ուլիւքը Մամէի սկանջը դրաւ.
 Մամէն էր, երբ ի խոր քուն ընկըլմեցաւ.
 Խաթուն Զինն էր, փը՛ռու արաւ, թռաւ:
 Չէ որ Մամէն իւր հուժկու բազուկն էր ձգած,
 Խաթուն Զինի փափկասուն ձեռքը բռնած.
 Չարթեցաւ. աչքերն մտփելով ելաւ, նստաւ.
 Աչքերն այս այն կողմ յառեց, ոչինչ չտեսաւ:
 Յափշտակուած էր, սկսաւ իրմէ դուրս տեսլ.
 —Ա՛խ, ինչպէս մի աղջիկ չկարողացայ բռնել,
 Այլ ևս նա հեռու գնաց, չեմ կարող գտնել.
 Նորա քաղցր նայուածքը, գեղեցիկ դէմքը տեսնել:
 Ո՛վ Աստուած իմ, այս տեսիլն ինչ էր,

Նա հուրիններից աւելի գեղեցիկ էր.¹
 Մամէն դարձեալ ի խոր մտածման մէջ ընկաւ,
 Իւր յուզեալ սրտին համբերութիւն տուաւ:
 — Կարելի է, ասաց, նա մի օր մօտս գայ,
 Իմ բոցավառ սրտիս մխիթարութիւն տայ,
 Սակայն անընդհատ սպասեց տաս-քսան օր,
 Չերեաց գեղեցկատեսիլ օրիորդն փառաւոր:

* * *

Նա իւր դառն վիճակին մէջ վառուեցաւ.
 Օրերն հեծեծանօք, հառաչանօք անցաւ.
 Օր յաւուր, հիւժեցաւ, մաշեցաւ, մնաց,
 Երեսի գոյնը, անդամներու կորովը զնաց,
 Մամէի մայրը զաւակին վիճակը կը տեսնէ,
 Խղճահարուելով իւր ամուսնուն կը յայտնէ.
 — Այ մարդ, շեռ գիտեր Մամէդ ինչ վիճակի մէջ է,
 Նա շատ ցաւ ունի. կենաց վերջի շունչը կը շնչէ:
 Մամէի հայրն երբ կը լսէ, որդւոյն մօտ կը վազէ,
 Ցաւելով կասէ. — Սիրելի որդիս, քո վիճակն ինչ է.
 Հառաչանօք կը խնդրեմ, ինձ արդարն ասես,
 Թէ չէ խելքս ու կեանքս կը կորսնցունեմ ես:
 — Ո՛հ ինչ ասեմ, սիրելի և բարեբար հայրս,
 Անճար հիւանդ եմ, թուլցած են անդամներս.
 — Որդեակ իմ Մամէ, ինչ է պատահած, ինձ պահ.
 Աստուած յաջողէ, դարման կը գնեմ քո ցաւի վերայ,
 Եթէ ամուսնանալ կը ցանկաս, դորա ճարը կը գտնեմ.
 Քեզի Ստամբուլայ թագաւորի զուտորը կը բերեմ:
 — Հայրիկս, ինչ ասեմ, ուշաթափուած եմ, ընկած,
 Միմիայն այս գիտեմ, անճար եմ ու պառկած,
 Մամէի հայրը վերագարձաւ տուն մտամուրը.
 Տխուր զնաց իւր դատարան հասաւ սգաւոր.
 Տեսաւ դասին ու դատաւորներ են բազմած,
 Մամէի մայրն ու ժողովականք հաւաքուած:
 Որդու վիճակի վերայ դառն հեկեկաց,
 Բաղմականաց առջև մի երգ ասաց:
 — Ո՛վ պատուաւոր բաղմականներ,
 Մամէս հիւանդ է կարեկէր,
 Կարի տկար է ամբողջ մարմնով.
 Գլուխն կարող չէ գնել մի բարձով.

1 Սոյն երկու տողերը երգեւէն մի բառով կաւտի:

Անդամները կը դողդողան բնի վերայ,
 Գլուխը իրանի վերայ կերերայ:
 Բաղմականք որ զայս լսեցին,
 Խառն ի խուռն օտի կանգնեցին,
 Խիտ մեծ աղմուկ մ'էր բարձրացաւ.
 Մամէն զնալ, տեսնել որոշուեցաւ:
 Մամէի մայրը շտապեց, առաջ անցաւ.
 Հառաչելով զնաց, բնակարանի դուռը բացաւ.
 Տեսաւ զուռը փակ. — Մամէ, բնաց, ասաց.
 Տեսնեմ ինչ է վիճակդ, քեզ ինչ է պատահած:
 Տեսաւ որդին հիւժեալ, ալ տատուեց.
 Նորա վզին փարելով արտասանեց,
 — Որդիս, դու որ կը սիրես այն Աստուածը,
 Դու որ կը սիրես այն Աստուծոյ մարդը,¹
 Անհրաժեշտ է ինձ ասես շիտակը,
 Գիտնամ ինչ է արդեօք քո դարձը:
 — Ախ մայրիկ, հիւանդ եմ, ինչ ասեմ.
 Աստուծոյ կամքն է, միայն այն գիտեմ:
 — Ի՞նչ իսկաթը քեզ հալալ² լինի, Մամէ,
 Քո ցաւը ներսէն է, քեզ կը տանջէ,
 Սակայն երբ կը տեսնեմ քո երեսի գոյն
 Չեմ նշմարեր վերադ հիւանդութիւն:
 — Ես այլ ինչ ասեմ, մայրիկ բարեբար.
 Կասեմ—չասեմ, ինձ չէք հաւատար,
 Հաւատացէք խօսքիս, որ է արդար.
 Մանր հիւանդ եմ և խիտ դժար:
 Ժողովականք որ այն տեղ եկած,
 Մամէի շուրջն էին բոլորած նստած,
 Մի խոսեմ մարդ որոց մէջէ՛:
 Մամէի մօր դառնայ, կասէ:
 — Դու որ այն Աստուածը կը սիրես,
 Այն Աստուծոյ մարդը որ կը յարդես,
 Մամէի շունչը ինչո՞ւ կարգիլես.

1 Եզրիներ «Աստուծոյ մարդը» սոյն վեպի մէջ քանի տեղ գործածած են:
 Հեաւրէիք եղայ քէ ում համար կասեմ. քէ եւ ումնք առ երեսս Քրիստոսի հա-
 մար է, կասեմ, երբ հայեաւ մօտ են. իսկ երբ երդեաւ մօտ են, Մանուէիք կը վե-
 րադրեն. սակայն աւելի հաւանականը այն է որ մեղէի բավուզին (աղայեյ)
 կասեն. վասն զի աղէն հորա յարգանք կը մասնուանեն:
 2 Հայալ բառը կը նշանակէ ծանր եւ աստուծոյ հաւատարմաց քակ գեղուող
 մէկուն ներք. անուշ անի ելլն. Հայերէն չլինելուն հալալ բառը գործածեցի:

Թող առէք, առանձին խօսիմ ես,
 Ունիմ երկու խօսք նորա ասելու,
 Որոյ զխաւորութիւն հասկանալու:
 Մամէն ու այն մարդ առանձնացան,
 Իրարու հետ յուշիկ—յուշիկ խօսեցան:
 —Մամէ, ասաց. դու որ Աստուած կը սիրես,
 Որդիս, դու որ Աստուծոյ մարդը կը պատուես,
 Եթէ դու քո հօրդ ասել կամայես,
 Ի սէր Աստուծոյ, կողաչեմ, ինձ ասես:
 —Դու որ Աստուած և նորա մարդը կը յիշես.
 Ինչ ևս լինի, պարտաւոր եմ ասել քեզ:
 —Դէ, քաջդ Մամէ, ասա քո ցաւը,
 Թերևս դանեմ դարսիդ դարմանը:
 —Խաթուն Ձինն է իմ ցաւը,
 Մամէն ասաց ու արտասուեց,
 «Խաթուն Ձինն է ցաւս», դարձեալ կրկնեց.
 Մի կողմէն ևս հառաչանքներ արձակեց:
 —Մամէի Ալան, Խաթուն Ձին որ կասես,
 Նորա ազգը, տունը, աշխարհը զիտես.
 Ունի հայր ու մայր, լուս ասեմ է,
 Նորա հայրը քո հօր հաւասար է:
 —Ձինէս ձգիր ու Բօղան աշխարհէն է
 Նա նոյն երկրի թագաւորին դուտորն է,
 Հայրն է հօգօր իշխան Միր Սեօին,
 Ձինէս աշխարհիս գեղեցկուհին:
 Այս մարդը դարձաւ միրի ասեանը.
 Տեղն ու տեղը պատմեց լսած բանը:
 Միրը երբ լսեց, երկար բարակ մտածեց.
 —Երբէք ասածներդ չգիտեմ, մրմնջեց,
 ձգիր ու Բօղան երկրիս սր կողմն է.
 Միր Սեօին արդեօք ինչ թագաւոր է:
 Խնդրեմ, ժողովականք, շտապեցէք,
 Յղէք երկու աշխարհապետ մարդ բերէք,
 Հարց ու փորձ անենք, նայենք, գիտեն.
 ձգիր ու Բօղան ասած ինչ քաղաքներ են:
 Երկու ձերտնի աշխարհապետներ եկան,
 Միրի ասեանը բարեւ բունեցին, կանգնան.
 Միրը յուզուած սրտով մէկին ասաց.
 —Դու ձգիր-Բօղան տեսած ես, կամ լսած:
 —Չէ, ասաց, երբէք չեմ տեսած և ոչ լսած,

Իմ հաւերս անգամ այդ անուններ չեն յիշած:
 Միրը յափշտակուած միտին հարցուց.
 —Դու ձգիր-Բօղան սր կողմն է, տեսած եմ,
 Ինչ ձեռաց վերայ կընկնի, արդեօք զիտես:
 —Այո, գիտեմ ես, աղնիւ միրս ու տէրս:
 —Դու քանի տարեկան ես ձերտնի աշխարհապետ,
 —Հարիւր երեսուն տարեկան կը լինիմ ես:
 —Սերտնի, արդեօք կարճդ ես ձի նստիլ,
 Որդւոյս հետ ձգիր ու Բօղան մեկնիլ:
 —Շատ ձերացած եմ, կը զողոթան անդամներս,
 Ես զիս ձիու վերայ չեմ կարող բռնել, միրս:
 —Մի մեծ պատգարակով չգեմ, գնա,
 Որդւոյս ցաւին մի դարման արա:
 —Անդամներս բոլորովին են քայքայուած,
 Շարժելու կարողութենէ եմ զրկուած:
 Միրը երկար, բարակ հարցուց, փորձեց.
 Մի հնար չգտաւ, գլխուն ու չոքին տփեց,
 —Հայ վնաս-հայ վնաս, ինչ պտի լինի որդիս,
 Հիւժեցաւ, այլ ևս ձեռքէս դնաց սիրելիս:
 Լուր հասաւ, գնաց Մամէի Ալանի,
 —Քեզ համար մի ճար, հնար չլինի,
 Չկայ մէկը ծանօթ ձգիր ու Բօղանին,
 Որ Մամէդ չթողեր կարօտ Խաթուն Ձինին:
 Մամէն երբ այդ լուր լսեց, շատ յուզուեցաւ
 Յմիշտ իւր վիճակին մէջ վառեցաւ,
 Կեանքը ևս օր օրի վրայ դառնացաւ.
 Խելքթափ այս, այն տեղ դեղերիլ սկսաւ:
 Մի օր մտածեց-մտածեց, ապա որոշեց.
 Իւր խանդակաթ մօր մի մարդ գրկեց,
 Ասաց.—Մայր իմ սիրելի և խանդակաթ,
 Ինձ հալալ արա՞ քս ծծի անուշ կաթ:
 Ասաց.—Հայր իմ յարգելի և պատուական,
 Ինձ հալալ արա՞ խնամքդ հայրական.
 Մնաք բարեաւ, հայր և մայր գթոտ,
 Թերևս մի օր դառնամ, գամ ձեր սա:
 —Որդիս, հալալ լինի. իսկ ասա մեզ դու.
 Ինչո՞ւ շտապեցար, շուտ բնկար ճանիւտ:
 Դէպի սէր կը գնաս, դէպ սէմ դուռ,
 Գուցէ-անծանօթ վայր կորսուիս ի վաւր:
 —Վճռած եմ գնալ, ո՞վ հայրիկ բարձր,

Վշտերուն դարման գտնել, մայրիկ քաղցր.
 Միր տեսաւ Մամէն չհամողուիր,
 Որոշած նստակէն յետ չկանգնիր.
 Ինչ որ պէտք էր, պատրաստեց,
 Եօթ-ութ ձիաւոր հետը դրեց: 1

* *

Ընկան ճանապարհ, շատ-քիչ գնացին,
 Մի ընդարձակ մարդիմ քով կանդ առին.
 Այն տեղ աղբիւր մի կար, գուլալ ու յտակ,
 Նստան աղբիւրի մօտ բուսած ծառի տակ:
 Ջուր խմեցին, հաց կերան, հանգստացան,
 Վեր բարձրացան, ձիանք հեծնին, դնան.
 Մամէն էր, իւր ուղեկիցներուն նայեցաւ,
 Որոց դէմքը սաստիկ տխուր տեսաւ:
 — Ծառայք և ընկերք, ասաց, ինչո՞ւ էք տխուր:
 Ասացէք, խնդրեմ, ես ձեզ կը բանամ մի դուռ:
 — Եթէ մենք պահել ուզենք քեզնէ.
 Ինչ կարող ենք պահել Աստուծո՞ւնէ.
 Չէ, մենք ընտանիք ու զաւակ ունենք,
 Տուն ու տեղ կեր-թորակուր չունենք,
 Մենք չենք համարձակիր մի բան խօսել,
 Կը խնդրեմք, շնորհ անէք մեզ արձակելու:
 — Յանուն Աստուծոյ կերդնում, ձեզ հրաման է.
 Գացէք ձեր տուն, ինչպէս ձեր, իմ կամքն է.
 Ես երբէք պատճառ չեմ լինիր զձեզ պահել
 Ձեր ընտանեաց անէ՞ծք վիզս փաթութիւլ.
 — Մամէ, դու Աստուծով յաջողիս, ասացին.
 Ուրախ գուրախ միտքերան օրհնեցին:
 — Գնացէք, համայն ծառայք սիրելի,
 Կրկնեց—արտօնութիւն տուած եմ ձեզի:
 — Քո հօր երկիւղէն տուն դնալ կարելի չէ,
 Չհաւատար մեզ.—Մամէն կորուսած էք. կասէ.

1 Մամէի օճևն մեկնելը քանի տեսակ կը պատճեն. որպէս թէ միւր հրաման կարճակէ աշխարհի գեղեցկութիւններն կը հաւատէ. Մամէն որոց մէջ կը յղէ, որ մին հաւանի. վազիրի ու վաթիի աղջիկներուն եւս կը պատուիրէ որ իրենց քաղցր երգերով Մամէի սիրտն զրաւեն. ամեն կողմէն քնդարձակ երգեր կերգուին. Մամէն որոց վերայ չնայիր: Երե՛մ անգամ կը կրկնուի: Մամէն Բօրի վերայ կը նստի, կերթայ: Մի այլ նուրի մէջ եւս որպէս թէ հայրն պարսպի դռներն կը փակէ, Բօրի ոտնն եւս փակած կը գտնէ. նա ձին նստելով ձիու ոտներն այնպէս փակածով պարսպէն կը քաշի, կերթայ:

Քեզնէ կը խնդրենք, շնորհ անես, գիր մի գրես.
 Միրի պատիժը մեր ընտանեաց վերայ չբերես:
 Մամէն նստաւ, նամակ մի գրեց,
 Ձիաւորներուն յանձնեց, իր հօր դրկեց.
 Ասաց.—Գնացէք, ինձ համար աղօթեցէք:
 Ծառաներն օրհնեցին, ձիանք հեծան,
 Ուրախ-ուրախ տներնին վերադարձան:
 Մամէն շուարեցաւ, անելիքը մոռացաւ.
 Բորը հեծաւ, ասպանդակեց ու քշեց.
 Երեք օր, երեք գիշեր սար ու ձոր անցաւ,
 Ձին սաստիկ կը կաղար, ինչ բան է, չմտածեց:
 Յաւը Բորին հոգւոյն որ հասաւ.
 Երգով իւր վիճակը յայտնեց—բասււ.
 —Վայ Մամէս, իմ անխոհեմ Մամէս.
 Ինչ երախտայական խեղք ունես:
 Այդ շարունակ զիս կը հարուածես,
 Երեք օր է անընդհատ կը քշես.
 Այ աւաղ, մոռացկոտ Մամէս.
 Ձիաւորը կզարած՝ ոտս թողած ես:
 Ձեռ ասեր՝ չիտարը Բորիս ձեռքն է կտրած,
 Յաւն ու մրմուռը նորա սիրտը հասուցած.
 Ա՛խ անխոհեմ, երախտայամիտ Մամէս.
 Ինչու այդպէս չոր գլուխ կը քայլես:
 Իսկի մտքէդ չես անցներ ու ասեր.
 Ձիաւորը Բորիս ձեռքն 1) է զարկեր, կերեր.
 Միայն սակորն է մնացեր ետքալու.
 Այլ ես կարող չէ մի քայլ-առնելու:
 Տեղ որ զարիվայր է, տեղ որ կող.
 Ձեռ նայեր ոչ խոր և ոչ ասնկող.
 Ժայռ, սար ու ձոր և առու, առուակ,
 Առջևդ կարծես դարձած՝ են տափարակ:
 Բնաւ չես ասեր չիտարն է զարկիլ.
 Բորիս սիրուն ձեռները վիրաւորեր:
 Մամէն կըր զայս լսեց, զզաստացաւ.
 Մի ակնթարթի մէջ թռաւ, ցած իջաւ.
 Հուժկու բազկով քաշեց սուր թուրը.
 Մի հարուածով կարեց փակուած չիտարը:
 Տեսաւ Բորի խառուտիկ աչքերէն,

1 Ձիու առաջի ոտներուն «ձեռն» կասեն քրդեր:

Պատու-պատուզ արտասուք կը հոսեն.
 Սիրաբը ցաւեցաւ, խիստ յուզուեցաւ,
 Աւշաթափ Բորի առաջ ընկաւ, լաց եղաւ:
 Ատայ.— ոչ ես լինէի և ոչ այսպէս վիճակ,
 Մնացի այս տեղ շուար, խեղճ ու կրակ,
 Ով տէր, լսէ աղաչանքս, ինձ մի ճար արա,
 Մի դուռ բաց, սպեղանի գիր վերքիս վերայ:
 Նդուկ ինձ՝ որ կարի մոռացկոտ եմ,
 Ափսոս ինձ՝ անզգոյ՝ կորած եմ.
 Վայ ինձ՝ որ անփորձ ու մոլորեալ եմ,
 Զիտարն Բորիս ձեռքերն կերեր, ոսկորը մնացել:
 Հազար վայ ինձ՝ որ մնացի վիզս օգոր.
 Իմ սիրական Բորն է եղած վերաւոր,
 Ո՛վ տէր, դարման արա դու զօրաւոր.
 Մի թողուր Մամէ ծառադ ստաւոր:
 Մամէն գետին ընկած՝ կը մտածէ, կը մտածէ.
 — ձգիր ու Բօդան ինչ ձեռաց վերայ է, կըսէ.
 Աջ թէ ձախ թիկ՝ հիւսիս թէ հարաւ.
 Նոյատակիս կարող եմ համարիլ, ըսաւ:
 Երեք քոյր աղանձի դարձեալ յերկնից իջան.
 Մամէի գլխու ծառի ճիւղի վերան թառեցան.
 Մամէի վիճակի վերան ցաւեցան.
 Իրարու հետ խօսիլ սկսան:
 Մին ասաց.— Մամէն եթէ լինի զգաստ,
 Նորա վիճակը կը լինի լաւ և հաստատ.
 Երբ մենք թռչինք, դնանք այս տեղէն,
 Մի փետուր կընկնի մեր թիկ վրայէն:
 Մամէն եթէ զարթուն-զգոյ՝ մնայ,
 Փետուրն առնէ, քիչ ինչ ցած դնայ,
 Այն տեղ աղբիւր մի կայ քաղցր-համեղ.
 Որի ջուրըն պիտի լինի Բորի ստաց դեղ:
 Փետուրն երբ ջրին դարկէ, ստաց քսէ,
 Երեք ժամէն անհրաժեշտ առողջ է:
 Մամէն իսկոյն ելաւ շտիպուեց, նստեց.
 Փետուրը ջուրը թաթխեց, Բորի ստաց քսեց.
 Բորը տեսաւ Մամէի չարչարանք,
 Տեսաւ դառնաղէտ հեծեծանք,
 Նորա վերան գլխաց, քաջալերեց.
 Երգեց ու իր անելիքը յայտնեց:
 — Քաջ Մամէս, իսկի հոգ չքաշիս.

Երկու ձեռներս թաշկինակով կապեա,
 Ես քեզի քառասուն (աւուր) մէկի վերան՝
 Կը հասցնեմ երկիրը՝ ձգիր ու Բօդան.
 Գեղեցիկ սեռին մէջ կը շրջագայիս,
 Սիրունատես երկարավիզներով կըբաղուիս:
 Քաջ Մամէս, դու իսկի հոգ մի քաշիր.
 Զիս արձակէ թոյլ տուր լաւ-լաւ մարդեր,
 Զքեզ քո բաղդին կը տիրացնեմ,
 ձգիր ու Բօդան աշխարհը կը հասցնեմ:
 Կը տեսնես սիրուններ անգնահատելի,
 Գեղեցիկ հասակաւորներ զմայելի:
 Զրէ զիս գուլալ աղբիւրներու տկից,
 Ինձ աղատէ երկաթեայ կապանքից,
 Որ քառասուն և մէկ աւուր վերան,
 Աւղակի հասցնեմ ձգիր ու Բօդան:

* *

Մամէն հեծաւ, գիշեր-ցերեկ անընդհատ քչեց,
 Քառասուն օր անբեր դաշտեր անցաւ,
 Քառասուն մէկ երրորդին բերրի երկիր մտաւ:
 Ճանապարհի վերան լծքուոր մի տեսաւ,
 Գիմեց նորա մօտ բարե տուեց,
 Վաղուց փակուած լեզուն բացուաւ,
 Քաղցրալուր երգ մի առաւ, երգեց.
 — Այ լծքուոր, լծքուոր, քեզ բարի օր,
 Խնդրեմ, ինձ ասես, Աստուած որ սիրես,
 Այդ ինչ երկրի լուծք է փառաւոր.
 Գու ո՞ր երկրի թագաւորի ժողովուրդ ես:
 — Աստուծոյ բարին գլխիս աչքիս վերան,
 Գու բարի հիւր մ'ես պատուական,
 Մաթաղ քեզ, ինձ ուղիղն ասես,
 Գու որ այն Աստուածը կը սիրես.
 Կերևի շատ հեռու երկրէն եկած ես,
 Լուծքն ու այս աշխարհը կը հարցնես.
 — Այո՛, ժիր լծքուոր, մարդ պատուական,
 Անապատներ անցայ, ես եմ օտարական:
 — Աւրիմն այս ձգիրն, ասաց լծքուոր,
 Յոյց տալով նաև Բօդան փառաւոր.
 ձգիր, Բօդան մեծ քաղաք անմահ՝
 Բարձր տներ, սիրունատեսներ հսն կան,

Կամարակապ ու սև ունքեր ունին,
 Իբրև թագուհի գուներու առջև . .
 Այնտեղ երեկոյին երբ մութը վրայ հասաւ,
 Տեսար յանկարծ մեծ դուռը փակուեցաւ,
 Եղբայրն եղբօր երեսն անգամ չնայիր,
 Նաև ոչ մի խնամ կամ հոգ վրան տանիր:
 Ճանապարհը շատ երկար, հազիւ կերևէր,
 Մամէն ձին քշեց. քշեց քաղաք հասաւ,
 Քաղաքի մօտ մի առատ աղբիւր կը վաղէր,
 Աղբիւրի վերան մի սիրուն նստած տեսաւ:
 — Բարի օր, ասաց, ո՞վ սև ու տգեղ խաթուն,
 Աղբիւրի վերան ինչ կանգնած ես այս մութունս:
 — Աստուծոյ բարին, գլխի, աչքի վերան՝
 Քաջատոնմիկ, կտրիճ Մամէգ Ալանեան:
 — Դու Աստուած, Աստուծոյ մարդը կը սիրես,
 Արդեօք կարելի չէ ինձ ճշմարիտն ասես,
 Ի՞նչ գիտես, որ ես եմ Ալանեան տո՞մից,
 Քաջ և զօրաւոր թագաւորներու տնից:
 — Այո՛, քաջ գիտեմ, դու ես Մամէն,
 Անուանի Ալ փաշայի սերունդէն.
 Մուխլը դէմին աշխարհէն ես ելած,
 Քառասուն մէկի վերան հոս հասած:
 Եկած ես այս Ձինէիս սև աչքերուն,
 Կամարակապ ու գեղեցիկ ունքերուն,
 Գիտեմ, վառուած ես ու սիրահարուած,
 Դորա համար այսչափ լեռ, ձոր չափած:
 — Եթէ արգարև, ասաց, դու այն Ձինէն ես,
 Մի յիշատակ ունեմ մօտդ, այն գիտես:
 — Քո նշանն էր մատանի մի սիրուն,
 Անդին քարերով գեղեցիկ զարդարուն.
 Քառասուն օր է, նստած եմ այստեղ,
 Միշտ կսպասէի ճանապարհիդ անչեղ:
 Մատանին հանեցի մատէս, գրի գոգս,
 Որ վերան նայեմ, քեզնից առնեմ կարօտս.
 Իսկ երբ քեզ տեսայ, ուրախացայ,
 Թռչնոյ պէս վեր թռայ, մատանին մօռացայ.
 Մատանին գլորեցաւ, գնաց դէպի ջուր,
 Շատ որոնեցի, գնաց ընկաւ չգիտեմ ո՞ւր:
 Մամէն աղբիւրին վերայ կանգ առաւ,
 Աջ և ձախ, ետև և առաջ նայեցաւ:

Ինքն իրին խոր-խոր կը մտածէր,
 — Այս եմ տեսած սիրուն Ձինէն չէ, կասէր:
 Եթէ երազի մէջ տեսած Ձինէն է,
 Ուրեմն այլ ես իմ շարչարանքս դուր է.
 Ձին ասպանդակեց, գնաց ու եկաւ յուղեալ.
 Յուսահատ մտածեց, յետ դառնալ, գնալ,
 Հասկացաւ Բոր Մամէի մօտտանջութիւնը,
 Ուզեց մի երգով յայտնել նորա յիմարութիւնը:
 — «Մամէ, գլուխս դարձուր՝ զիս . .
 Ինչու անխոհեմ ընթացք բռնած ես,
 Ի դուր քո սիրան ու հոգին կը մաշես:
 Բաւական է այսչափ անփորձ մնաս,
 Դատարկ խօսքերու դու ականջ տաս.
 Այս աղբիւրին վերան որ կը տեսնես,
 Դու խաթուն Ձինէն է կը կարծես:
 Այս ալ է Բաքոյի աղջիկը Ձին,
 Հմուտ է կախարդութեան արհեստին՝¹⁾
 Եղած-չեղածը օր օրին կը դուշակէր.
 Ճանապարհներու դուխը կանգնած կսպասէր.
 Արարածներու դործերը կը խանդարէր:
 Շուտ արս, զիս ասպանդակէ, Մամէ,
 Այս տեղ ձգիր ու Բօզան քաղաքն է,
 Երբ իրիկուն հասնի, մութը պատէ.
 Եղբայր եղբօր անպատասպար կը թողնէ:
 Մամէ, զիս սանձարձակ թոյլ տուր,
 Որ քեզ տանեմ մի քոտ, սարի դուռ:
 Զգաստ ձին առաւ զՄամէն, տարաւ.
 Ղարա Թաժտինի դուռ կանգ առաւ.
 Դուրս եկաւ Խաթուն Գիւլ փերին,
 Զմայլեցաւ նայելով հիւրի երեսին:
 Իջաւ ցած. առաջ վազեց, ձին բռնեց.
 Տարաւ ներս, շատ սիրով հիւրընկալեց:
 Երկու եղբայր ունէր Ղարաթաժտին,
 Որոց անուաները ձագան, Աֆան էր միւսին,
 Երեքն ևս եղբօրորդեքներ էին Միրին,
 Երեքն միտսին Միրի ատեանը կը բազմէին:
 Խաթուն Գիւլ Փէրին նրանց մարդ յղեց,

1) Ոմանք կասեն քէ Աւանի Բաբայի աղջիկը կախարդութեամբ ամեն բան կը գուցակէր. ոմանք եւս կասեն քէ Բաբան ինքը կախարդութիւն կանէր, իւր աղջկան կը յայտնէր զաղօմիքը:

— Մեր տուն փառաւոր հիւր եկած է, յայտնեց, ինչ կանէք, շուտ արէք, տուն դարձէք, ինչ որ արժան է, այնպէս հիւրասիրեցէք:

Երեք եղբայր շուտ տուն վերադարձան, Տեսան, յարգեցին փառաւոր հիւրին:

Երեք օր Միրի ատեանը չներկայացան:

Միրը մարդ յղեց Ղարաթաժտինին, Ղարաթաժտին, յարգելի բազմականս, Քանի օր է ինչու չես դար ատեանս:

— Պատուաւոր հիւր ունիմ, Միր, Չեմ կարող քո ատեանն գտնուիր: Միր դարձեալ լուր յղեց Ղարաթաժտինին, Հիւրն ևս իրենց հետ առնեն, ամին: Խաթուն Գիւլ Փէրին ձեռք ձգեց ունելուն, Սաստիկ հարուած մի տուեց կանչողի գլխուն: — Խաթուն Փէրի, ինչու այդպէս զարկեցիր, Գլուխս արիւնլուայ վիրաւորեցիր:

— Կորիր, գնա, խալամ, քո Միրին խօսէ, Եօթ ձեռք նուագածուններ թող հանէ, Իւր դռնէն իմ դուռ խալիչա փռէ, Ատեանն ևս որպէս վայել է, զարգարէ, Որ իմ հիւրը դայ նագելով, օրօրուելով, Միրի ատեանը բարձրանայ գրօսնելով: Գու ինչ ևս որ իմ հիւրը առնես, ամնես, Այդպէս անվայելուչ Միրի երես հանես: Ծառան շտապաւ դարձաւ Միրի դիւան, Միր ասաց. — Ո՛ւր է Թաժտին, ձագան, Արփան, Նաև հիւր մը ունէին պատուաւոր, Ո՛ւր են, ինչու չեկան նորա այսօր: — Միրս, քո քոյր գլուխս վիրաւորեց, Խեղճիս արիւնի մէջ շաղտեց:

— Քոյրս յիման թէ դիւահարած էր, Պատճառ ինչ էր որ քո գլուխը կտորէր: — Ասաց. «Թող փռէ խալի ու խալիչայ, Իմ հիւրը վերան օրօրուի ու դայ»: Միր ասաց. — Հոգ մի քաշիք, աղան, Անմիջապէս բժշկէն դարման կտանանս: Միր կանչեց, հրաման արձակեց, Մինչև Թաժտինի դուռ գորգ փռեց, Գուրս հանեցին պատուաւոր հիւրին:

Այս օրն էր զի Էմինան իր ամուսնու ընկերակցութեամբ իր քրոջ հետ մտնում էր Երևան:

Գրգանն լիքն էր արծաթն ու սօկին: Որչափ մարդ կար ձգիր ու Բօղան, Առ հասարակ ելան, բաւաւաւ եկան: Ոսկին ցանկով, սիրելով կերթար Մամէն, Ղարաթաժտին ևս կը դնար առջեւ: Մամէն չհասած Թաժտին մտաւ ներս, Միրի հետ իօսեցան երես առ երես: — Որչափ ծանր հիւր ունիս, Թաժտին, ասաց Միր, Հազիւ լուրերով ատեանս երկացիր: — Հիւրս շատ ծանր է ու պատուաւոր, Նորա կերպարանքն է շատ փառաւոր, Երբ նա ներկայանայ ատեանը Միրիս, Գու պէտք է նորա առջեւ կանգնիս: — Ասա ինձ դու, ո՞վ Ղարաթաժտին, Եղած — չեղածը ինչ է քո հիւրին, Որ ստիպուիմ նորա առաջ կանգնել, Իւր չափէն ու պատուէն աւելի յարգել: — Այժմ չգիտեմ թէ ինչ պիտի անես, Յայտնի կանէ երբ դռնէն մտաւ ներս: Միր երբ տեսաւ Մամէի դէմքը, հիացաւ, Աճապարեց, բարձրացաւ, բարե առաւ, Բռնեց ձեռքէն, դէպի աջ կողմը սարաւ: Միրը երբ յանկարծ վեր էր բարձրացած, Մամէի ձեռքն էր ձեռաց մէջ պինդ բռնած, Ղարաթաժտին մի հնար մտածեց, Իւր թաշկինակը միրի տակը ձգեց: Միր Մամէի տեսքին յափշտակուեցաւ, Երեք օր, երեք գիշեր նորա հետ խօսեցաւ: Խաթուն Գիւլ Փէրի խանութ եկաւ, Բարկացած միրի ատեանը կանգնեցաւ: — Միրս, ասաց, այս ինչ ընթացք է, Երեք օր է հիւրս գրկեցիք հացէ, ջրէ, Միրի այս տեղ հիւրս բաճառարկուած, Չեր անկարգ հանցքին է գոհուած: Միրին դարու այս ծանր խօսքը, Գարձաւ, խօժոռելով ասաց ջրով:

1 Մամէն կանգնեալ զեղեցիկ էր, որս ալ նորա տունը, կզմայր նորա վերան: երեք օր երեք գիշեր տեսնողը յախեստիւած անօրի ծառաւ, անհուն կանցներ:

— Եթէ բազուկս հասնէր, դիտե՛ս, ես
 Դաշոյնովս կը վերջացնէի զքեզ:
 Միրը ժողովականաց ասաց.— արէ՛ք,
 Արդեօք կարելի չէ ինձ ճիշտն ասէք,
 Չէ այս օր այս տեղ նոր եկած եմք,
 Միմեանց հեռ խօսք ու զրոյքը կանենք:
 Ասաց Գիւլ Փերին.— Ժողովականք, ասէք,
 Այս երեք օր չէ, դուք նստած կը խօսէք:
 — Այ՛ս, ասացին, Գիւլ Փերի, քո խօսքն է,
 Մեր կարողութենէ այդ զրոյքը դուրս է.
 Մենք չենք կարող միբիւն սուտ հանել.
 Նորա առաջ դիտողութիւն անել:
 Միրը յանկարծ զգաստացաւ.
 Իւր արած սխալը հասկացաւ.
 Ասաց.— Աստուած վկայ, կը կարծէի,
 Երեք ժամ է նստած՝ կը խօսէի:
 Ծառաներուն հրաման արձակեց միրը.
 Քաշեցին, պարզեցին հացն ու կերակուրը.
 Մամէն նստաւ, կերաւ, կշտացաւ.
 Միրէն հրաման առաւ, տուն գարձաւ:
 Մամէն երբ դնաց, ասաց միրը.— Թաժտին,
 Չէ ասիր, «տալի կանգնես հիւրի առջին»:
 — Այ՛ս, դու կանգնեցար. ձեռքէն բռնեցիր.
 Հիւրասիրելով քո աջ կողմդ նստեցուցիր.
 Եթէ չես հաւատար, վեր կանգնէ, տես.
 Թաշկինակս քո տակ ձգուած կը գտնես:
 Միրը բարձրացաւ, տակը նայեցաւ.
 Իրաւ, թաշկինակը տակը ձգուած տեսաւ.¹
 — Աստուած վկայ, ասաց, ես չի դիտցայ.
 Թէ ինչ ժամանակ ելայ, կանգնեցայ:
 Թաժտին հրաման առաւ ու մեկնեցաւ.
 Երեք օր դարձեալ ատեանը չերևեցաւ:
 Միրը այս անգամ եւ լուր չդեց.
 Թաժտին իւր ատեանը բերել տուեց.
 Մի քանի խօսք հարցուց Մամէի վերայ.
 — Ինչ երկրէն է, նորա հայր և մայր կայ:
 — Չգիտեմ, ասաց, նորա վերան բան չխօսեց.

1 Թաշկինակը տակը ձգեց որպէս զի երբ ուրանայ կանգնիր, Թաժտին քաշկինակով հաստակ քէ կանգնեցաւ:

Լուր չդեց միր, զՄամէն բերել տուեց:
 Միրը ասաց.— Մամէ, ինձ պէտք է ասես.
 Ո՛ր թագաւորի, ո՛ր վազիրի աղան ես.
 — Միրս. ինչ է, ձեր ասածները չգիտեմ.
 Այլ հասարակ մի խեղճ մարդ եմ:
 Այս տեղ Միրը բարկացաւ, Թաժտինին կատապէր,
 — չիւրդ լաւ չանէր, ճիշդն չասէր, կըսէր,¹
 Չայն առ, տար, լաւ տեղեկութիւն քաղէ.
 Առաւօտեան վաղ արի, ինձ յայտնէ:
 Երեք եղբայրներ, Մամէն եւ միասին՝
 Գնացին դէպի ապարանքն Շահնաշին.
 Իրենց հայրենական մեծ քօչքն:
 Շահնաշին էր մի ապարանք փառաւոր,²
 Չորս կողմն ունէր այդեւտան յարմարաւոր.
 Շահնաշինն էր խիստ բարձր շինութիւն,
 Շուրջն ունէր քաղաք, դիւղ, բնակութիւն:
 Ղարաթաժտին և իւր եղբայրներ,
 Մամէի Ալան և իրենց հետներ.
 Շահնաշի տանիս բարձրացան,
 Գորգերու վերան բաղմեցան:
 Սաթրիճ դրին մէջ տեղ, խաղացին.
 Մինչև կէս օր ժամանակ անցուցին:
 Մամէն ու Թաժտին այդ տեղ թող խաղան.
 Մենք գառնանք Խաթուն Չինի վերան:

* *

— Չինէ, ո՛վ Չինէ, կասէ Խաթուն Չինէ.
 Համայն ծառաներս, աղախիններս հաւարէ,
 Տաս-քսան ձի ու ջորի առնեն, դան.
 Ինչ որ տան մէջ կան-կարասիք կան.
 Բառնան, զընկզընկոցով աղբիւրը դնան:
 Աղախինները շտապեցան, բարձան.
 Խաթուն Չին առին, ճանապարհ ընկան՝
 Կարաւանը սիրուններու խմբով նազելով անցաւ.
 Աղբիւրի վերան բեռներ արձակեց իջաւ:

1 Մամէի դէմքն կը գուռակէին որ նա ազնուական սերունդ է, իսկ երբ նա ուրացաւ, մի բարկացաւ:

2 Շահնաշին այդ ցեղի հնաւանդ ապարանքն էր. կասեն քէ եղբայր եղբորդիք բաժանուելու միջոցին, երկու բաժին արած են. միտաբիւր մի բաժին եւ ապարանք մի բաժին. Թաժտին Շահնաշին բաժին վերուցած է:

Մամէն բարձրէն դէպ ի ցած նայեցաւ.
 Օրիորդաց սիրուն կարաւանը տեսաւ,
 Գեղեցկուհին Ձին էր կարաւանապետը.
 Օրիորդաց սիգածեմ առաջնորդը:
 Մամէն Խաթուն Ձին երբ տեսաւ,
 Ուշաթափ եղաւ, դեռին զլորեցաւ:
 Երեք եղբայրներ երբ զայս տեսան.
 —Այս ինչ օյիւն, ասացին, եկաւ քո վերանէ:
 Մամէն զգաստացաւ երգեց սիրուն,
 —Ահա կարաւան մի յոյժ զարդարուն,
 Կարաւանապետ մի գեղեցկուհի.
 Ընդհանուր աշխարհի տիրուհի:
 Քաջ մարդ պէտք է առաջը գնայ.
 Հարկ ու գրաւ ստանայ, գայ:
 Ձինէն նշանուած էր ձագանին,
 Ուշադրութեամբ կը լսէր Մամէին,
 Նորա երգէն շատ ու շատ զայրացաւ.
 Որ նշանածին համար խօսք բացաւ:
 Ղարաթաժտին երբ զայս զգաց,
 Նշքօր զայրոյթ երգով մի մեղմացոյց:
 —Մամէս, ինչ է կտաս բերնէդ դուրս,
 Կու իմ բարի ու յարգելի հիւրս.
 Այն որ կը տեսնես չէ կարաւան,
 Ոչ ոք չէ կարող պահանջիլ գրաւական:
 Ոչ ոք չէ կարող նորա առաջ կարել,
 Գրաւական ու հարկ ստանալ.
 Այն կարաւանապետն է Խաթուն Ձինը,
 Է Միւր Սեփինի չքնաղ սղջիկը.
 Միւր Թաժտինի համեստափայլ քոյրը,
 ձսդան եղբորս սիրուն նշանածը:
 —Երեք եղբայրներ, ամեն մարդ կերթայ,
 Քրդու կարաւանէն հարկ կառնէ, կգայ.
 Իսկ ըուն կարեւոր պայմանն այն է,
 Մարդ միքէ ու իշխանէ գրաւ առնէ:
 Լսող եղբայրներ, գրաւ կը դնեմ,
 Երթամ, գրաւական առնեմ, բերեմ:
 Երեք եղբայրներ կը պնդեն—չէ կարելի,
 Այդ անհնարին է և անգործադրելի:

1 Ձինն Թաժտինի եղբոր նշանած էր. միքէ մի ուրիշ Ձինէն վերայ խօսելու, մինչեւ անգամ մտրտապանութիւն կը ծուգէր այս թիակ պահանջուաւ:

Մամէն պայման կը դնէ, վեր կը թռնի.
 Բորի անխնամ վիճակը միտքը կընկնի.
 Կը մտածէ.—Երկու տարին վերջացաւ.
 Չեմ գիտեր Բորիս վիճակն ինչ եղաւ:
 Այժմ Մամէն զգաց ձիու պէտքը.
 Նոր միտքը ձգեց նորա կեանքը:
 Յուզուեցաւ, երգեց ինքը-Մամէ.
 —Մամէիս վիճակն միշտ այսպէս է,
 Ես իմ Բորս պէտք է դուրս հանեմ,
 Ոսկեգօծեալ թամբը վերան զարնեմ.
 Մինչև աղբիւրի գլուխը հասնեմ.
 Խաթուն Ձինէն հարկ ու գրաւ առնեմ:
 Մամէն գարձաւ ու գնաց ձիանոց.
 Ձին, տեսաւ, խառնուած է աղբանոց,
 Կեղա ու ժպուի մէջ անհետ կորած.
 Կերակուր բերանը բնաւ չէ մտած.
 —Մամէ, ասաց ձին. դու ես ինչ մարդ,
 Անխոհեմ երախայ՝ ու ապերախա
 Երբ որ պէտք եղայ, մօտս կը վաղես,
 «Հեծնամ ու զործիս գնամ», կասես:
 Մամէն հառաչելով աչքերը կը սրբէր.
 —Բարի Բորս ինձնէ գանդատ մանէր, կասէր.
 Սիրահարութեան կրակն եմ բնկիր.
 Մի ճար՝ ճարակ չեմ կարող գտնէր:
 Չգուշութիւն ինչ է ես մտացայ.
 Բորիս պէտքերը հոգալ չկրցայ:
 Մամէն Բորը թխմաւեց ու սրբեց.
 Աչքերն ու ամբակները համբուրեց,
 —Իմաստուն Բորս, ասաց, ես արի, դու մի անէր,
 Ձիս մի ձգէր, բոցերու մէջ ու վառէր.
 Երգեց ձին.—Արի, իմ կտրիճ Մամէս.
 Ուր որ կը ցանկաս, տանեմ քեզ:
 Մամէն սոք ձգեց աստղանդակը.
 Յաթքեց, ելաւ Բորին կռնակը,
 Արշաւեց, աղբիւրի վերան գնաց,
 Ձին կանգնեցուց, երգեց ու ասաց.
 —Ես Մամէն եմ, Ալփաշայի աղան.

Թաժտին զգուշացուց զՄամէն որ եղբայրն չգրգուռի. սակայն Մամէն իրենց հիւրն էր, ներելի էր նորան. հիւրս մարդու կինն եւս խնդրէ, (բէւ. չպահանջուաւ): չափի մեծն քս հնաւանդ սովորութեան:

Արչաւեցի, եկայ աղբիւրի վրան.
 Աստուած սիրող՝ ինձ մի ջուր տուէք.
 Լսող զեղեցկուհիք, խօսքերուս ականջ զրէք:
 Խաթուն Ձին Մամէն որ տեսաւ,
 Աղախիններու ձեռնէ բաժուկը առաւ.
 Շտապաւ կղեցաւ, ջուր մի լեցուց,
 Բարձրացաւ, Մամէի երկարացուց:
 — Խաթուն Ձին, ս'ի խաթուն Ձին,
 Ասաց Մամէն յոյժ սրտազին,
 Կարող ես գլըմսագիւնին՝ ինձ յանձնել.
 Ձիս աշխարհի մէջ բաղգաւորեցնել:
 Ձին երբ գայս լսեց, ձեռ ձկեց,
 Վզի շարանի մէջ տեղի սակին կարեց.
 Ձրի բաժակի մէջ զըրնկ դցեց.
 Առաւ, ձեռ սլարդեց, Մամէին տուեց:
 Մամէն էր, փափաքով ջուրը խմեց,
 Ետ դարձաւ, Բորը ասպանդակեց,
 Գնաց, հասաւ իւր եղբայրներու մօտ,
 Ոսկին ձգեց Ղարաթաժախի ոտ:
 Մամէն ձին առաւ, դնաց ձիանոց,
 Բարձրացաւ տանեաց վերայ—հովանոց:
 Ղարաթաժախն երբ գայս տեսաւ,
 Մամէի վիճակին հասու եղաւ:
 Իւր եղբարց դարձաւ, ուչիւ՝ հայեց,
 Մամէի վիճակին վերայ այսպէս երգեց:
 — Ինձ լսող եղբայրներ, մենք ենք չորս,
 Մեր բոզ ձիանքն ես են չորս,
 Ժամանակ մի ձգիր ու Բօղան չըջնէք,
 Մամէն իւր սրտի փափաքին հասցնենք:
 Բերինք զայն որ աչքը խայտ, սիրուն է,
 Ունքը թուխ աղեղնաձև ու կամար է,
 Վիզն ու հասակը երկար և բարակ է,
 Նորա տեսքը յարմար ու շնորհաւոր է:
 Ճազան տեղէն վիր թուաւ բարկացած,
 Թաժախին մի երգ ասաց, դայրացած:
 — Այդ խօսքդ ինձ մեծ ցաւ տուեց,

1 «Գլըմսագիւնին» կը նշանակէ քիւղուած ոսկի, որ է վզի շարանի միջի մեծ ոսկին. երբ Ձիմէն գայն տար, այլ եւս քիւղուած վերջացած էր Ձիմի եւ Մամէի գործը այլ եւս յույսերին պիտի կրտէին Թաժախն եւ նորա եղբայրներ Ձիմէն:

Սիրտս կտոր—կտոր արաւ ու փոքրեց,
 Իմ նշանածը որուն դու կը կամենաս,
 Ինչու եղբայրական սէրը կը մոռանաս.
 — Մամէն մեր հիւրն է փառաւոր,
 Նա մեր եղբայրն է արժանաւոր:
 Աֆան երգեց.— Թաժախն, մեծ եղբայր,
 Մինչև ցարգ եղած ես մեզ սրպէս հայր.
 Այնպէս կարգադրէ, ինչպէս կուզես,
 Մամէն իւր սրտի փափաքին հասցնես:
 Ճագան երգեց.— Համայն եղբայրներ,
 Երեք են մեր կարմիր ձիաններ.
 Մի աւ ժամանակ չըջնէք, որոններ,
 Մամէ եղբոր սրտի ուզածը բերենք,
 Այն որ ինքը կը սիրէ և կուզէ,
 Այն որ աշխարհիս զեղեցկուհին է:
 Աֆան երգեց.— Համայն եղբայրներ,
 Չորս են մեր սև ձիաններ,
 Միջոց մի չարաչար տանջուենք,
 Մինչև Ձինը Մամէ եղբոր բերենք.
 Այն որ աչքն ու ունքըն է սիրուն,
 Անուն հոչակուած ի մէջ թագաւորներուն:
 Երեք եղբայրներ միասին երգուեցան,
 Իրարու հետ հաստատուն խոտացան,
 — Ինչ արգելքներ ես ստատահելու լինի,
 Մամէ եղբոր փափաքը կատարենք պիտի:
 * *
 Միր, Ղարաթաժախի լուր կը զրկէ.
 Որ Մամէն վերցնէ, իւր հետը բերէ:
 Մամէն ու Թաժախն ելան, դնացին տանան,
 Միր զԹաժախն հրաւիրեց դադանի խորհրդեան.
 — Իմ սիրելի Թաժախն, ասաց, ուղիղն ասան,
 Մամէն թագաւորի, թէ փաշայի է տղայ:
 — Միրս, այն է, ինչ որ դու ասացիր,
 Թագաւորի տղայ է, լաւ գիտցիր:
 — Ղարաթաժախն սիրելիդ իմ,
 Մամէդ գլխուս վերայ կընդունիմ,
 Աշխարհներէն որ քեզ դիմած՝ եկած է,

1 Ակամայ կը համաձայնի Ճագան, որով սիրս չսաներ Ձիմի անունը ճալ, այլ նորա յատկութիւնները կը լիւր:

Քեզ հիւրասիրելու պարտաւորեցուցած է:¹
 Միր Մամէին կանչեց, հանեց իւր ատեան,
 Խաթուն Ձին մի օր առաջ լսած էր մի բան,
 Թէ իւր հայրը Մամէին լաւութիւն պիտի անէր,
 Ձայն մի կարևոր պաշտօնի-գործի հրահրէր:
 Ձին Ավանի Բաքոյի աղջկան կը կանչէ,
 — Ձինէ, տեսնամ դքեզ, ո՞վ ժիր Ձինէ, 2
 Հայրս, Մամէն իւր դիւանը տարած է,
 Մի հասկացիր, տես, ինչ պիտի անէ:
 — Հասկացայ, Խաթուն Ձինս, ասաց Ձին,
 Ստամբոլ քաղաքը պիտի տայ Մամէին,
 Որ այն երկրին իշխէ, այն տեղ մնա,
 Կեանք վարէ, ուտէ, լամէ, ուրախանայ:
 — Ձին, ո՞վ Ձին, հասիր Մամէին, թող չգնայ,
 Մի ճար ու հնար գտնէ, այս տեղ մնայ:
 Հօրս պալտաին մէջ մի պաշտօն ստանայ:
 Մամէն էր, ներկայացաւ Միրի ատենին,
 — Ձեմ կարող Ստամբոլ գնալ, ասաց Միրին:
 — Որդիս, ասաց, փափարս է քեզ մեծացներ,
 Ուրեմն դու ինչ կուզես այս տեղ գործեր:
 — Միրս, քեզ սրտով սիրած եմ ու հոգւով,
 Ձեր ատեանի մէջ ծառայել կուզեմ գործով:
 Միր զՄամէն իւր ապարանք չգեց,
 Իւր խոհանոցին վերաահտուչ կարգեց:
 Այնտեղ ծառայող մէկը նախկին
 — Տեսաւ Մամէ, ասաց Մամէին,
 Ինչո՞ւ իմ հացի առաջ բռնեցիր,
 Ձիս իմ երեխաներով սպանեցիր:
 — Մեծ են դիպուածներ, ասաց, իմ վիճակիս,
 Քեզ ես Աստուած ողորմած է, հոգիս,
 Իմ թոշակս կը նուերիմ քեզ,
 Ասաց Մամէն սրտաղին ու հեզ:
 Պէտք է լաւ ճանաչես քո գործը,
 Ոչ մէկի չը յայտնես այս խօսքը:
 — Հոգիս դուրս դայ այս կաղապարէս,
 Այն գազանիքը սր դու կասես, ես

1 Միր կը կարծէր թէ Մամէն Թաճսիբի նուշակը լսած ու եկած է դուստր փառք ու պատիւը տեսնելու միայն:
 2 Ավանի Բաթոյի աղջիկն էս Ձին է, ւր Ձինի մօտ աղափին է. Մամէն գայն տեսած էր դեռ. Բաթոյ չմտած աղբիւրի վերան:

Գուրս չպիտի հանեմ կողորդէս:
 Մամէն վերուց, տարաւ Խաթուն Ձինը.
 Միասին մտան դարձնի խորհրդարանը.
 Որտեղ երկար-բարակ խօսեցան,
 Իրարու քաղցր արեւով երգուեցան:
 Տարիմ-երկուք այդպէս էր Մամէն,
 Ուշադիր աւարկան էր միայն Ձինին.
 Ինքզինը մտաւցած՝ անօթի կանցներ,
 Միրի սեղանի ժամանակը մտքէն կը հանէր:
 Միրին որ նախաձայ պիտի տանէր,
 Ընթրեաց ժամուն միտքը կընկնէր:
 Բաքոյի Ավանը քսու մի անձ էր,
 Միրի մօտ մեծ-մեծ պաշտօն կը վարէր.
 Առիթ կորոնէ, որ Մամէն հեռացնէ,
 Իւր պաշտած սիրելի Ձինէն զրկէ¹):
 Գնաց Միրի մօտ, յուզուած ասաց.
 — Մամէն է մի անհող մարդ արարած,
 Նորս գործերն որ յայտնի կերևան,
 Յոյց կըրան՝ նա մի տնէ է աննշան:
 Ապարանքի մէջ խելացնոր կը թափառի,
 Մարդ չգիտէր, մէկի՝ միւսին ինչ կը խօսի:
 — Բաքո, ասաց Միր, ինչ քու թիւն է կանես.
 Ձէ Մամէն իմ մարդն է, այդ չգիտես.
 Ես նորս արածներուն կը խնայեմ,
 Նորս սխալմունքին միշտ կը ներեմ:
 Բաքոն քսութիւնը շարունակեց, մնաց.
 Ձինէն այդ ամենը նշմարեց, ասաց:
 — Մամէ, մենք խախտուակ կըլլանք,
 Եթէ այսպէս շարունակենք, գնանք:
 Մամէն Միրի ատեանը գիմեց,
 Արձակման հրաման ինդրեց:
 — Քեզ հրաման է, եթէ գնալ կուզես,
 Ինչ որ կը ցանկաս, արա այնպէս.
 Բայց ուշադիր եղիր, չմոռանաս,
 Օրը երեք անգամ ատեանս ներկայանաս:

† * * *
 Միր մի օր կանչեց Ղարաթաժաժինի,

1) Կախարդութեամբ կուզէր իւր Ձին աղջիկը Մամէին տալ, երբ չյաջողեցաւ, սխալ բեխամարտան:

Ասաց.—Յարմար օր է ձիաթողսի, ջրինդի.
 Շտապէ, պատրաստութիւն տես,
 Զիտի, ձիաւորով, դնանք հանդէս:
 Ղարաթաժտին տուն վերադարձաւ,
 Մամէին ինչ որ հարկն էր, խօսեցաւ.
 Խաղացող ձիաւորներուն ազգարարեց,
 Զրինդ խաղալու հանդէսը պատրաստեց:
 Մամէն ևս հրաւիրուած էր խաղալու,
 Հրապարակ դալ, հաւնաբը ցոյց տալու.
 Բայց նա վաղուց իւր Բորէն լուր չունէր,
 Անօթի, ծարաւ, անխնամ մնացեր էր:
 Շատ մտածեց ու ձիանոց մտաւ,
 Բորը բոլորովին անխնամ գտաւ.
 Բոր աչքերը դարձուց, Մամէն տեսաւ,
 Բարկանալով դառն-դառն խօսեցաւ.
 — Հեռացիր աչքէս, Մամէդ անխոհեմ,
 Աքացու առջև դբեդ կը փարատեմ:
 Մամէն լալով, հառաչելով դուրս ելաւ,
 Զեռքը ծոցին՝ պատի մի տակ նստաւ.
 Նա իւր փառք ու պատիւը մտաբերեց,
 Խեղճ—խեղճ Բորի երեսը դիտեց:
 — Իմ Բորը շատ պատուական է, երգեց.
 Անչափելի ու շատ է Բորիս գուլթը,
 Պիտի ներէ յանցանքներուս հօթը-ութը:
 Բորն ի գուլթ շարժեցաւ, ասաց.—Թող ներս գայ,
 Կահաւորուած թամբը վարնէ մէջքիս վերայ:
 Մամէն սրտապնդած շուտ մի հեծաւ.
 Բչեց, հրապարակի զլուխ կանդնեցաւ:
 Միբը չորս հարիւր ձիաւորով եկաւ,
 Հրապարակի միւս եզրն կանգնեցաւ:
 Այնտեղ երկար-բարակ մտածեց Մամէն,
 — Շատուորի կողմ գնամ՝ երկչոտ է կասին.
 Զին քչեց, երեք եղբայրներու կողմն անցաւ.
 Հրապարակի վերան պատրաստ կանգնեցաւ:
 Միբ մի նշանաւոր կտրիճի այնպէս հրամայեց,
 — Գնա, Մամէին մի ջրինդ վարկ, պատուիրեց,
 Տեսնենք, նա ինչպէս կարող է համբերել,
 Հակառակորդի հարուածը տանել:
 Բաջ ձիաւորը ջրինդը ձեռքի մէջ առաւ,
 Զին խաղցուց, քանի անգամ գնաց, դարձաւ.

Նա ուշով ջրինդի ուղղութիւնը կը դիտէր,
 Որ Մամէին մի հարուածով ցած գլորէր:
 Բորը ասաց.—Մամէ, այ տնաւեր Մամէ,
 Սանձարձակ լեցուած՝ անձիդ վնասը կորոնէ.
 Նա վարժ, հմուտ ձիաւոր և կտրիճ է,
 Իւր մրցակիցը շատ լաւ կը ճանաչէ:
 Ասպանդակները դատարկէ, այ Մամէ,
 Զքեզ Բորի մի կողի կողմի վրայ ձգէ.
 Բեզ տուր իմ ընդարձակ փորի տակ,
 Որ հարուածները անցնին գատարկ:
 Եթէ հարուածներէն մին ինձ առնէ,
 Այն հարուածը թող իմ անձիս վնասէ:
 Զիաւորը մի անգամ ևս լեցուց իւր ձին,
 Ուղղահայեաց 1) ջրինդ մի ձգեց Մամէին:
 — Մամէ, ասաց Բոր, ասպանդակէ երկու կողմէն,
 Որ ասպանդակներ փորիս մէջ իրար դիպնեն.
 Դու ևս բարձրէն ուղիղ ջրինդ մի ձգէ,
 Որ հարուածը նորա աջ բազկին բռնէ:
 Մամէն ձին լեցուց, ուժգին ջրինդ մի ձգեց,
 Հարուածը հակառակորդի ձեռքը կտորեց,
 Իսկոյն ձիու վզի վրայէն գլխիվայր ձգեց:
 Միբ ասաց.—Գնանք, այլ ևս է բաւ,
 Տարածուեցաւ Մամէի համբաւ:
 Դեաւսը սընաւսե ժըմըն դարանի.
 Հեար յի եարա եար զր զոնդան,
 Շեառե, ոսե խամ զր զըլան,
 Կեալե, քարսե, մարե սեա եազ
 կոչըն սկըր թընդան,
 Չի թրամ մաւա զընե

Դու ախոռատանից քալէ,
 Ոսկու ծանր խուրճիճը վրան
 զիլ,
 Փորքաչները իրար հեա մարա-
 ցուր,
 Իմ մէջք ու քու մէջք մարացուր,
 Քո ձեռքը հասուր նազարի տէ-
 զին,
 Կուլը երեք ժամ տնէն հեռու.
 Թէ որ օգնութիւն պատահի
 մեր վրայ
 Եթէ կուլի տեղ շնութիւն չը
 լինի,
 Շարաթէ մինչև շարաթ չխօսի
 մղկիթի դուռը.
 Լուրը կը հասնի ծուռ Համէին:
 Ո՛վ ձիաւոր, դու Աստուծով ասան.
 Դու իմ հօր ասն ձիաւորէն տե-
 զեկութիւն չես տար.
 Ելիք, մեռնելու խօսքը սառը
 խօսք է.
 Իմ գետինը խոր է,
 Իմ դագաղս փայտ է,
 Իրիկուն է, մութն եկած է,
 Իմ աչքս քու ոտքի ուլունքնե-
 ներուն է.
 Քո շուն մարդը կասկածով է.
 Երեկոյ է, ճրագ վառէ, թաղեք
 ձգէ, բարձը դիւր,
 Երանի այն տղին, իր ձեռքը
 վզի ոսկուն կը փաթաթէ.
 Երկու սրտի սիրտերը պաշտել
 տուեց:
 Բագը լճի մէջ կը պալառուէր,
 Աստուած պատճառ եղողին
 տունը քանդէ,
 Յակինթէ ձեռքը ինձմէ կտրեցիր:
 Այն սիրականին, որի սիրուհին
 գիւղերու մէջ է,
 Գիշեր ցերեկ ցաւը սրտի մէջ է.
 Շան աղջիկ, աչքերդ ինձ սպա-
 նեց, կրակի տակ եմ,
 Ի՞նչ անեմ աշխարհի դոյքը.

Սեա հայիճան: Ժընե սպանի թի
 Բեալե զեարե մեր ֆօրի,
 Դեարե զըլե մը Ենգանի.
 Մեր Են միւս մեր քարի,
 Բեալս ու զար Ենմես միւս
 մեր քարի,
 Բեալս ու զար աղարարի վի գա-
 մանի,
 Դեարս զըլե յիւն յեարիճեա.
 Մերե յի կիւս քարի սափնան,
 Հեար յի եարան եար զր զոնդան,
 Շալե, ոսե խամ զըլան.
 Չալան սիլի վաւա սկըր թընդան,
 Կեալե քարսա, շալան
 Տեա եազ կոչը մըն:

Հարիւր անգամ ախոռ՝ սպիտակ
 գեղեցիկ կինը, որ կընկնի վատ
 մարդու ձեռք.
 Իմ սրտի ցաւը չըգիտես,
 Մարդը չի նմանիլ առաջուայ
 մարդին,
 Առաջի մարդու երախտագիտու-
 թիւնն ու խոստումը չմնացիր.
 Երախտագիտութիւնն ու խոս-
 տումը դարուս աղաներուն.
 Սրտի ցաւը շատ դժուար է.
 Մարդը չի առաջ կանգնած.
 Այն սիրականին, որի սիրուհին
 գիւղերու մէջ է,
 Գիշեր ցերեկ երազը սրտե-
 լու մէջ.
 Ինչպէս դատարկ պղինձը՝ կը-
 րակը տակին,
 Թարսա աղջիկ, ինչպէս
 Դու ինձ սպանեցիր:

26

ՆԱԶԱՐ ՕՂԼԻ*)

Մ է թագաւոր կըլի, յինք ու ուր կընկն է, Տղայ-մղայ չը-
 կայ, երկիր բիրուն էնդրա ձեռն ա: Յինք ու ուր կընկ մէ գիշեր
 նստին, կասան.
 — Ախր մէ տղայ շունինք, մեր տեղ թագաւոր ըլի:
 Կերթայ ավ-ճեջիր. մէ դուրի կը տեսնայ, մշլըններին կասայ.
 — Գնացէք, էդ դուրին բերէք, տեսանք, ինչ կայ մէջ:
 Կեթան դուրին կը բերեն. մէ տղայ կայ մէջ:
 Կը տանայ տուն, ուր կնկան կասայ.

*) Սոյն հեքիաքը հայերէն պատմած է Եզրի Միսոն, որը վ.սն. Բայազիտ
 եւ Իզդիր մնալով խառն բարբառով մի ասած է:

— Էս դուքին գտեր ենք, Աստուած մեզի աղէ մի տուեց, կնիկ շապկից ընցուց, էղաւ տղայ: Կասայ.— Անուն զնինք Նաչար օղլի. նաչարից մեր ձեռ անցուա Կրինս մէ տարի, էրկու տարի արանքից կընցնի: Էն թագաւորի կնիկ, Աստուած կը յաջողայ, մէ տղայ կը բերայ: Ընդրա անուն էլ կը զնեն Միրզա Մէհմէտ: Մէ օր՝ Նաչար օղլին շատ դժարով կեղնի. կը խասնի էգ լէհի մէջ կը խաղայ: Տղոցը ձեռիցը կը բռնայ, կը թալայ: Չանդակ կեթայ, ձեռ ձեռաց մէջ կը մնայ: Էն շահարին մէջ մէ պառաւ՝ էն պառաւին էլ մէ տղայ կըլի: Պառաւի տղի ախջից կը բռնայ, կը թալայ: Ականջը կը մնայ ձեռ, ջանդակ կեթայ: Պառաւ կասայ.— Էս յուսա ա, էս օյին կը խանայ մեր գլխին: Էս խեղի կեթայ, կասայ պառաւ.— Դու, Նաչար օղլի, թագաւորի տղայ չիս, նախընտ տղայ իս.— Ընչի էսենց օյին կը խանես մեր գլխին: Նաչար օղլին կը դառնայ, կեթայ դարս ուր մօր կուշտ, կասայ. — Պառաւ ընձի էսենց-էսենց սասայ: Թուր կը խանի, մօր կասայ.— Բեզի կսպանիմ: — Ես քու մէրն իմ, ընձի կսպանիս, ընչի: — Եան իմ խէր, Եան իմ մէր կասիս ընձի, Եան քեզի կսպանիմ: — Որ չուցի ընձի կսպանիս, չօլից դտեր ինք բերեր ինք, կասայ: Տղէն կեթայ քաւլախանեն: Ուրին խամար մէ ձի կը քաշայ, Աստուած կը կանչայ, կեթայ: Նաչար օղլին կեթայ, Միրզա Մէհմէտ կըգայ, էնդրան կհարցու. — Յո՛ւր ա իմ աղբէր: — Դնաց, կասան: — Ո՞ր ճանտով գնաց: — Հա, երևում ա, կասայ: Էն էլ մի ձի կը խեծնի, կեթայ Նաչար օղլու ետև: Նաչար օղլին կը տննայ ուր աղբէրն ա, կասայ. — Աղբէր ջան, դո՞ր կըգաս: — Դու դո՞ր կեթաս, ես էլ քու խեղ կուզամ: — Ես թագաւորի աղէն չեմ, դու թագաւորի աղէն ես, ընչի կուզաս: — Դու իմ աղբէրն իս, ընձի սպանիս, քու քարկ չիմ խոտար, կուզամ: Շատ քիչ կեթան, Աստուած գինայ: Կեթան մէ մեծի ըռասք կըգան: Յուրա կըլի, կրակ չկայ: Միրզա Մէհմէտ կը քնի, Նաչար օղլին իմաց կը մնայ: Տեսնի մեծի օրքալախ կրակ ա վառում. կասայ.— Էթամ, մէ կրակ առնիմ, գամ: Չանէ ու կեթայ:

Տեսնայ օխթը դե, դազան դրած կրակի վրէն քնած ա: Օխթը դոմէշ միթամ՝ լցած ա դազնի մէջ, էվում ա: Էնի դազան կը դնայ գէն, կրակ կառնի: Էլի դազան կը գնայ վրէն, կառնի, կեթայ: Էն գեղից մէկը իմաց կըլի: Էղի որ կեթայ, ուր աղբերներին իմաց կըտայ, կասայ. — Մէ մարդ էկաւ, դազան վերցրեց, կրակ առաւ, տարաւ: Էգ օխթը դե կընկնին էգ աղի յետև, կեթան: Նաչար օղլին էլ ուր խամար կրակ կը վառայ: Կը գանչին էգ Նաչար օղլուն: — Էս մեր տեղն ա, դու ինչ բան ունիս ման գալ էս մեռեն: — Ես դոնախ եմ էկեր: — Մենք զոնախ չենք ճանչնար, սաց մէկը: — Իմ մէ ատամը ընկեր ա, քեզի կը վերցեմ, զնեմ էն ատամի տեղ: — Աստուած օղորմած ա, խկի դամ չիմ քաշի: Գեի ձեռ մէ ջողջի քար կըլի, կը զարկայ աղի գլխին: Նաչար օղլին քարի գէմից կը փախնի, գետնից քօզ ու դու ման կըլի: Էս խեղի դեը կը դառնայ ուր աղբերներին կասայ. — Տես, հողից էր, հող արեցի: Նաչար օղլին կասայ. — Բեզի մի հպարտցի, մէ սուր որ կը վարկայ, օրբլլաէն կանէ էրկու կտոր: Էն մէկէլ դեբըը կը տննան.— Դու մեր աղբէրը սպանիր, կասան: Վերցնեն թուրեր կերթան դարս Նաչար օղլին: Էն մէկէլ դեն առաւ ջաղջի քարը էկաւ: Նաչար օղլին մէ թուր էլ էնդրա դարկաւ: Էն մնացողին էլ էգենց սպանեց, գոխըը թալեց. Դնաց ուր կրակ վառաւ: Աղբէր իլա քնուկ ա: Էլաւ, կրակի գէմ նստաւ: Դուս բացուաւ: Աղբէրն էլ էկաւ, կրակի գէմ նստաւ: Միրզա Մէհմէտ էլաւ գնաց ման գալու: Չանդակներուն ըռասք էկաւ: Որ Չանդակներ տեսաւ, դժաց, սրուկը ձգաւ: Նաչար օղլին կասայ.— Ինչո՞ւ կը վախենաս, ինչ կայ, որն գինայ ոլ է սպանէ, բան չկայ: Խըլուսուն կելին, Աստուած կը դանչին, կերթան: Էնդոնց խէրը խարցրեց.— Էս իմ օխթը տղէն որն ա սպաներ: Չէն կընկնի դուս, կը լսե օր Նաչար օղլին ա սպաներ: Էնդրա բօլը մէ թիգ ա, մուրուք էրկու թիգ:

Գիշեր, ցերեկ ընկեր ա Նաչար օղլու յետև որ հայրն հանայ
Նաչար օղլին, Միրզա Մէհմէտ կեթան: Տեսնին մէ մարդ
էղեր ա Արազի վրէն կարմունջ: Սէլեր, ձիաւորներ, վերեւից կեթան,
խսկի քալաւը չէ:

Նաչար օղլին էնգրա բարև կտայ:
—Աստըծու խեբն ու բարին, բարով գաս, կասայ:
—Քեզի քնչ դար ղվար ա, էլեր իս կարմունջ, խեղճ ես, էս
քնչ ա:

—Իմ ղվար, իմ մարդութեն ինչ ա: Մարդութեն-տղամարդու-
թեն Նաչար օղլուն ա: Էն օխթը դեր սպանեց: Քեաւեկա Նաչար
օղլին տեհայինք, Աստուած իմ խոզին առնէր: Էնգրա անուն լը-
սեր իմ, կարմունջ էղեր իմ, օր տեսնամ:

—Նաչար օղլին ես իմ:
Էդի կը թռնի, ոտը կը պաչայ:
—Ես քու խեա աղբէր կըլլեմ, կասայ:
Կըլլեն իրեք աղբէր, կեթան ճանփով:
Շատ-քիչ Աստուած դինայ, մէ մարդու ըռասը կիգան:
Էրկու քարը շկեր, մէ մեծ դեղի բոլոր ման կիգայ, կասեն,
—Բարև քեզի, դու Աստըծուց չես վախենայ, իմալ էս քարերը
շկեր, ման կիգաս:

Իմ ղվար, իմ մարիմար քնչ ա, մարդութեն Նաչար օղլուն ա
Օխթը դեր մինակ սպանեց, քարերը շկեր ման կիգամ, օր ընցնի
տեսնամ:

—Նաչար օղլին ախր ես եմ:
Քարերն կը թալայ, կասայ. — Ես քեզի ժուռ կիգամ, ըլլեք
աղբէր:

Կըլլեն չորս աղբէր, էլի կեթան մէ սարի գլօխ, կասան:
—Էստեղ մեզի մէ տուն չիքենք: Չորս աղբէր ինք, մէկ դօրով
մնայ տուն. մեզի խաց պատրաստայ, մենք էթանք ման գալու:

Էսօր ջաղջի քար շկողի դօրն էր: Էնի մնաց տուն, խաց
պատրաստեց:
Էն դեերի խէր ախր էգոնց խարցնում ա:

Կիգայ էգոնց ղոնախ կըլլի, կասայ.—Քարև քեզ:—Ա՛յ, խեբն
ու բարին:
—Կանամ մէ քեայ փլաւ, էրկու խաց տաս ընձի, ես ճամբորդ
իմ, էթամ:

—Նաչար օղլին սաղ ըլլի, կուտամ, ասաց:
Չորս խացի մէջ փլաւ լիք լցեց, տուեց էգ մարդին:
Էդի չորս խաց, փլաւ կանէ մէ փրթունձ:
—Ախր քաղցած իմ, կասայ, էդի մէ բան չէ:

—Խօ յըմեն չեմ խտար քեզի, քու փայը տուեցի:
Դեերի խէրը մէ սիլլա լիք զարկայ օր, ուչքը կերթայ, կընկնի:
Էդի ինչքան փլաւ, խաց կայ, կուտայ, կեթայ:

Էդի ուչքը գլօխը կիգայ, կը տեհայ զաս-բան չկայ:
—Վահ, իմ էրես սե էլաւ, իմ աղբօր քնչ շուար տամ:
Յիրկուն ա. փշում անժուռ վռիկ կը չքայ. Նաչար օղլին կի-
գայ, կասայ.—Աղբէր, քաղցած ենք, բան չկայ:

—Գլօխս ցաւում էր, բան չկեարցայ էփեր, անժուռ շորվայ իմ
էփեր:

Նաչար օղլու աղբրներ էն դիշեր քաղցած մացին:
Էն մէկել աղբէր օր էլեր էր կարմունջ.—Դուք գացէք, ասաց.
յէսօր ես մնամ, իմ խաս աղբօր խամար էնեց խաց պատրաստեմ:
Էդի մնաց տուն, մէ տաշտ խաց թխեց: Մէ ղազան փլաւ

հազրաւ, էլի էն մարդը էկաւ ղոնախ:
—Բարև քեզի, ասաց.—Աստըծու խեբն ու բարին:
—Կանամ էրկու խաց, մէ քեայ փլաւ տաս ընձի, ուտեմ, էթամ:

—Նաչար օղլին սաղ ըլլի, ասաց:
Էն էլ չորս խացի մէջ փլաւ լցեց, տուեց: Արաւ մէ փրթունձ:
—Խաց տուր, քաղցած իմ, ասաց:

—Յըմեն չիմ խտար, ջանք:
Մէ սիլլա զարկեց, էդի յընկաւ, ուչքը գնաց: Էնի խաց յը-
մեն կերաւ:

Էդի յիլաւ, տեսաւ զաս չկայ, ասաւ ուրին-ուրին.—Իմ աղբօր
գլօխ էգոնց օլին էկեր ա:
Յիրկուն էլի Նաչար օղլուն ասաւ.—Գլօխս ցաւում էր, փշում

վռիկ չեցի:
Էն մէկել օր Միրզա Մէհմէտ մնաց, էն խալիւրը էլի էկաւ:
—Քարև քեզի, Միրզա Մէհմէտ, ասաց:
—Աստըծու խեբն ու բարով գաս:

Խաց ուզեց, չորս խաց, փլաւ տուեց:
Էլի էրեց մէ բերան. ուզեց, չտուեց էլի:
Էլի մէ սիլլա զարկեց, աղի ուչքը գնաց: Փլաւ-մլաւ ինչ որ

կէր, կերաւ սրբեց, գնաց ուր բանին:
Էն մէկել օր Նաչար օղլին մնաց տուն. էլի էն մարդ էկաւ,
ասաց.—Քարև քեզի:—Աստըծու խեբն ու բարին:

—Դուն Նաչար օղլին ես, կասայ.—Խա, ես եմ:
—Ղոչախ մարդ մեք (տուտաձեռն) կըլլի, կանամ խաց, փլաւ

տաս, ուտեմ, էթամ:
Խինդ խաց լցեց, գրեց առաջ:
Վերցրեց արաւ մէ փրթունձ, ասաց.—Խաց տու, քաղցած իմ:

—Էնդուց աւել ինչ տամ. իմ աղբէրներս անօթի են: Էս էրկու իրեք օր խաց չեն կերած, քու փայն էր, տուեցի:

Սիրլեն կը վերցնէ օր զարկայ՝ Նաչար օղլին կը խասնի, բող-զից կը բռնայ: Պատէպատ կը դարկայ, խա էն պատ, խա էս պատ կը զարկայ: Էդ խալիւոր ետբալու կըլլի, ձեռնից կը սլծնի ու կը փախնի: Մէ ծառ կըլլի, ծառ փոհան կանէ: Կեկերի խէր կառնէ յուս ու կը փախնի:

Նաչար օղլին լարում ա յետե: Գնաց մէ խորունդ բռայի մէջ ծակ կայ, ծառը թալեց ցածր, ընկաւ մէջ:

Նաչար օղլին էլաւ, մէ խորիր քար գրեց իրար վրայ, արաւ մէ դուչկա, օր չկորուտի տեղը, չուրի առաւօտ տեսանք իմալ կեղնի:

Աղբրներ յիրկուն էկան. խաց փլաւ քաշեց, կերան: Աղբորներին բան չասաւ, ընդոնք միտք կենէն:

—Ետբայ, էդ մարդ էկաւ, չեկաւ ըսդու կուշտ. կըլլի չեկաւ:

—Առաւօտը չորսն էլ մէ տեղ կեթանք, ասաց Նաչար օղլին, դործ ունիմ:

Չորս աղբրով դնաց, էդ ծակի վրէն կայնաւ. աղբրներին տասաւ.

—Մէ խալիւոր կայ, ետբալու եմ արեր, էստեղն ա, որ կեր-թայ, կը բերայ:

Կարմունջ կապողը հպարացաւ, ասաւ. — Ես կեթամ, որը սլտի էթայ:

Շիրիս կապեցին էնդրա մէջք, գրին խորի մէջ. կախեցին էդի-օր կախեցին՝ վախեցաւ, ասաց.

—Եաման, ընձի փրթում են, վառում են, խանէք:

Էն մէկել ջաղջի քարով ման դալողն կիջըցնեն. էդ էլ կը դանչայ.

—Եաման, սէրն Ասարծու, ընձի խանէք:

Միրգա Մէհմէտ կիջըցնեն, էն էլ կը դանչայ, էնդրան էլ կը խանեն:

Նաչար օղլին կասայ. — Ընձի փրթին, քրթին, մի քաշէք, կեթամ:

Նաչար օղլին կը կախեն կեթայ, կասայ. — Տեղ մի դնացէք, չուրի ես գամ:

Ինքը իջաւ ցած, տեսաւ էն խալիւոր քներ ա. մէկ աղջիկ կայ էնտեղ, ոչ ուտես, ոչ խմես էնդրա քամաւս էնիտ: Էդ խալիւոր գլօխ գրեր ա էդ աղջկայ շոքի վրէն. քներ ա:

Էդ աղջիկ կասայ. — Դրդի, ետ դարձիր, ափսոս իս, զարի ետբալու ա, որ իմցաւ, կը փրթայ:

—Ո՞րն ա արեր ողբան ետբալու, կասայ:

—Գու փախի, գնա, քու ինչ պէտքն ա:

Նաչար օղլին կը զարկայ էդոր ոտաց, կասայ. — Էլի, ես քու դուստանն իմ:

Թունի օր Նաչար օղլին գլխի վերե կայներ ա. դուստը կը կտորի:

Էդի կը խասնի, ետխից կը բռնայ, թալայ խանչարի դէմ, կը փրթայ:

Աղջիկ կասայ. — Եաման, դու ինչ մարդ ես, դու բուրբ Սար-գիսն ես, դու Խղբընապլեն ես, իմ ետխեն էլ պրծու: Ես թագա-ւորի աղջիկ եմ, զօռալեն բերած ա. էսի ժութ երկիր ա, ինչ դա-սար մալ, դօլվար կայ առ. ընձի խան դուս, լուս աշխարհ:

Աղջիկ գեշերը տեղ կը դցէ. Նաչար օղլին թուրը կը դնէ մէջտեղ, կը պառկին:

—Գու ընձի չխաւնար, կասայ աղջիկ:

—Գու իմ քուրն իս, կասայ Նաչար օղլին, քեզի կը տանեմ իմ աղբոր:

—Մէ օղա ընդի վեր կայ. էդ ինչ դուս ա, լսարցուց Նաչար օղլին:

—Էդ էլ մէ դե ա, էդ դեի թղէն ա մէջ քներ ա:

—Կեթամ, էնդրան էլ կըսպանիմ, կասայ:

—Խեղճ իս, կասայ, էնդրան շարա շըւրբ:

Գուրը կը բանայ, կեթայ. կը տենայ մէ աղջիկ, դանա ըն-դունց պիրուն: Կեզ գրեր ա շօքի վրէն ուր գլօխը, քներ ա:

—Գարձիր, կասայ աղջիկ, Ասարծու սիրուն, կըսպանայ քզի էդի:

Էդի կեթայ ոտը կը դանայ, կասայ. — Էլի, ես քու դուստանն իմ:

Էդի թունի կը կայնի. — Կայ, էսի կասայ, իմ խօր վրից էկեր ա, հեթերք քի իմ խէր սպաներ ա: Մէ ջաղջի քար վերուց, զարկեց էնդրա գլխի վրէն. էնի դէմից կը թունի մէ թուր կը թալայ, գեշ էրկու կտոր կանէ:

Էդ աղջիկ տեղ գցեց որ էրկուով մէ տեղ պարկեն. թուրը էլի դրեց օրթըլալը չուր լուսը բացուաւ:

Աղջիկը ասաց. — Գու ընձի չխաւնար:

—Գու իմ քուրն իս, իմ խարսն իս. ընձի էնեց մէ աղբէր կայ խսկի էնդրա կիտու բարա չիմ ըլլի, քեզի կը տանիմ էնդրան:

Էդի զարկեց էն մէկել գեի օղի դուրը բացեց, տեսաւ գեզ գլօխ գրեր մէ աղջկայ ծնկայ վրէն, քներ ա:

Աղջիկն ասաւ. — Եաման, դուն էկար, քեզի կասանայ:

—Ասարծու կամքով ես էկեր իմ որ սպանիմ, կասայ. — Կե, դե, էլի, ասաց, ես քու դուստանն իմ, էկեր իմ քու ջանին:

Էդի մի ջաղջի քար վերցրեց, հետէն էդրա գլխին զարկեց, բօզ, դուստն սպաներից էլաւ: Նաչար օղլին փախաւ մէ եանի վրէն:

Դևը ասաց.— Խողից ես, արի՛ խող էլի:

Էս խեղճի ու տղէն Աստուած դանչեց, մէ թուր թալեց, օրքը- լըխից արաւ էրկու կտոր:

Էդ աղջիկ էլ տեղ դցեց. թուրը էլի մէջը դրեց տղան:

— Դու իմ քուրն իս, ասաց էնդրան էլ. ընձի մէ լաւ աղբէր մի կայ, քեզի կամ էնդրան:

Խըլուտուն զնաց, էն մէկել դուռը բացեց, տեսաւ էնտեղ էլ դէր ուր գլօխը դրեր ա սիրուն աղջկան շոքին:

Աղջիկ կասայ.— Դե քեզի կսպանայ, յարա չկայ. էսի մէկել դեկրու նման չէ, էսի խկի սպանութեն չեւիլի:

— Էկեր իմ, ասաւ, իմ դոււուման ա, կուլ պտի անեմ:

— Օր թուրը կը գանես, մէ դրաց դարկ, կասայ. օր մէկ էլ դար- կեցի՛ր՝ կը սաղնայ, կեւէ մէ ջաղջի քար կը գարկայ:

Էդի մէ թուր կը գարկայ, դիօխ կը կտրի, կը թունի կեթայ էն տեղ:

Դե կասայ.— Դըդի, մէկ էլ դարկ, մէկ էլ գարկ:

Նաչար օղլին կասայ. — Մեր տան աղաք մէ դրաց ա, գարկի զնաց:

Էդ դե կը մեռնի, դիւնից ըռնաք կըլի, կեթայ էն դիւնէն:

Նաչար օղլին կը վերցնէ ինչ դրը մալ, խազինա կայ, աղ- ջիկն էլ, կեթայ էն մէկել աղջիկներ էլ կառնի կեթայ ծակի վրէն. ազրեներին կը դանչայ.

— Դու էդտեղ հա՞գր էք:

— Թէ մէ ամիս, թէ մէ տարի, քու քարկ չենք տար, կայներ ինք:

— Դէ, Երիս պարզէք, շատ խազինա, աղջիկ բերեր եմ, քաչէք, հանէք դուս:

Երիս կը պարզեն, յըմեն քաչեն կը հանեն:

Էն սիրուն աղջիկ կասայ Նաչար օղլուն.— Դու ավալ էլի, օր ընձի խանեցին դուս, քեզի ծակին մէջ կը թողնին:

Դու յէլի, իմ ազրեներ էնեց աղբէր չեն, օր ընձի թողնեն:

— Ես դինամ, քեզի կը թողնին. մէ վասիար կայ, էնիմ: Երկու դոչ կայ. կիրակնեց կիրակի կիգան, կը կուլին, մէկ սիւտակ ա, մէկ սե. թէ թալիր քեզի սիւտակի քամկին՝ քեզի կը թալայ լուս աշխարհ. չչկըռար, ընկար սևի վրէն՝ օխթը քապաղա կեթաս գետ- նի տակ, մութ աշխարհ:

Էդի ազրեներ թողին ծակին մէջ: Աղջիկներն ամին, առին գացին ուրանց գելս:

Նաչար օղլին մնաց չիւար, խեղճ ու կրակի Դարձաւ զնաց յօդէն, օր դոչեր կուլ կանին:

Էդի արաւ ուրին թալէր սիւտակին վրէն, չչկըռաւ, ընկաւ թուխին վրէն. թուխ դօջը էդի թալեց օխթը քապաղա էլ զնաց գետնի տակ, մութ աշխարհ: Ձեռը ժժխեց, ձեռը ընկաւ մէ գոան վրէն. բացեց, մտաւ ներս, տեսաւ մի պառաւ նստեր ա. դնաց կուշար, ասաւ պառաւին:

— Նանէ, ես էլ քո տղէն իմ, ընձի մէ ջուր տաս:

— Որդի, դու էս երկրից չես, օր ջուր ես ուզում. ջուր յուտ ա, օր ես ջուր տամ քեզի:

— Նանէ, ընչի ջուր չկայ ձեր երկիր:

— Ձանրմ, մէ վիշապ կայ, ջրի գէմը ըռներ ա, չթողայ մարդ էթայ ջուր բերայ. օրը մէ աղջիկ էնգրա քային (բաժին) ա, յէսօր էլ թագաւորի աղջկայ դուս ա, պտի թալի վիշապ ուտայ, ջրի առ- ջիկց ելլայ:

— Նանէ, կասայ, օր թագաւորի աղջիկ տարան, ընձի էլ տար օր ջուր բերեմ:

Թագաւորի աղջիկ տարան. պառաւ ջուր բերեց աղին. տղէն թուրը զափուրի տակ առած կեթայ խեղճերը. կեթայ աղջկայ կուշտ, աղջիկ կասայ.

— Վիշապ կուգայ, ախր ընձի կուտայ. ախր մեղք իս, խեղճ իս, դու ընչի էկար:

— Ես դիօխս պտի գնեմ քո ծնկան վրէն, քնեմ, կասայ. ընձի էլ թող ուտայ, պէտք չէ:

Էդի գլօխ կը դնէ աղջկան շոքի վրէն. կը տեսնայ օր վիշապ կուգայ աղջկան ուտայ: Նաչար օղլին թուրը կը քաչայ, էդի ըռը- տայ ըռըտայ կը փրթայ. աղջկան կասայ.

— Էս խեղճ գնա, քեզի սպաս էրի:

Աղջիկ ձեռներ արնի մէջ կը թաթթայ, կը գարկայ էնգրա մէջքի վրէն, կեթայ:

Թագաւոր կասայ. — Դու ընչի փախար էկար, իմ երկիր խա- րայ կըլի:

— Թագաւոր ասրած, վիշապը մէ տղայ սպանեց:

Կեթան, կը տեսնան օր աղջկայ խօսք օղորդ ա:

— Աղջի, դու էն տղէն կը ճանչնաս, կասայ թագաւորը:

Ինչ դգար երկրին մարդ կայ, յըմէն կը ժողնուին, աղջկայ վշտից կընցնին. տղէն չկէր. թագաւոր կը հարցրցէ.

— Էն պառաւին մէ տղայ մնացեր ա, կասան:

— Դացէք էնգրան դանչէք, կասայ թագաւոր:

Էն տղէն սր կուգայ, աղջիկ կասայ.

— Իմ նշան էլ վրէն ա, էս տղէն ա:

— Չղայ, կասայ թագաւոր, քո սիրտ ինչ կայ, ուգայ:

—Թագաւոր անորո՞ւմ, ընձի պտի խանես լուս աշխարհը:

—Չեքին բան ուզիր. մէ բան կայ. էս վիշապի քայլը կայ, դուռ մի կայ, կեթայ դէր ձագերը կուտայ. էն վիշապը սպանիր, էն դուռը բեզի կը հանայ լուս աշխարհ:

Տղէն կեթայ, հորք կը շքայ ծառի տակ. կը տենայ օր վիշապ ըլլում ա փեռից օր ձագերն ուտայ: Աստուած յաջողութեն կիտայ, թուր կը զանայ կենայ ըսըչտայ, կը թալայ միս ձագերին, ձագեր կուտեն. կը փախնի, կը մտնայ ծառի տակ, կը տախի:

Տայրէ Սըմըր արնէ խոտ կառնէ. ուզում ա էդ տղին դանայ, սպանայ. ձագեր կասան.

—Նամա՛ն, էդ տղից վագն արի, էդի մեզի պըծընց:

Էդի կիջնայ, տղի վրէն թներ կը բանայ, կենայ հով. տղէն օր քնուց էլաւ.

Ասաց.—Դու իմ մուրազ կատարիր. ասան, քու մուրազ ինչ ա:

—Իմ մուրազ էն ա, օր ընձի էցկես լուս աշխարհ:

—Իէ, դնան օխթը կուտ ջուր, օխթը դմակ բեր:

Կեթայ թագաւորից դմակ ու ջուր կը բերայ. կը նստի Տայրէ Սըմըրի (Սիմօնա՛նաւք կասեն հայեր) վրայ, կը թռնին: Հաւքը օր բույ կասայ՝ տղէն ջուր էկտայ. ույ կասայ՝ դմակ կտայ: Դմակներուն մէկը ընկաւ. հաւքը էլաւ էլաւ, մնար մէկ ույ ասել օր էլէք լուս աշխարհ, ույ ասաց, տղէն ուր ճուռը կտրեց, դրեց հաւքի բերանը: Հաւքը կը տենայ թթու ա, չուտեր, բերանը կը պայա. կը խանայ լուս երկիր, կասայ.

—Իէ, դնան, Աստուած քեզի խեռ:

—Դու գնան, կասայ տղէն, ես էլ կեթամ:

—Դուն էլի՛ դնա, իմ աչք տեսնէ, ես էլ կեթամ:

Ղուռ կը տենայ, որ էդի կաղըմա:

—Տղայ, կասայ. արի՛:

Բերնից կը խանայ ճուր միսը, կը դնայ տեղն: Աստըծու հրամանքով կը սաղնայ:

Էս խեռի դուռը կեթայ. Նաչար օղլին կեթայ դպա աղբըներ. մութը կընկնի. իրեք աղբոր յօնախ կըլլի. կը տենայ օր իրեք աղջիկ աուեր են, սիրուն աղջիկ մացեր ա, էնդրա վրէն են. էն ասըմ ա՛ իմն ա, էն ասըմ ա՛ իմն ա: Էն աղջիկն էլ ասըմ ա. — Ընձի կսպանիմ, չեմ թողեր մօտկընաք:

—Սա էլ դարիայ մարդիմ իմ, կասայ Նաչար օղլին, էդ ինչ դավի ա:

Ընդրան կասան, ինչ որ պատահեր ա:

Ասաց Նաչար օղլին. — Դու էն ծակը՝ որ աղջիկ խանեցիք, ընձի նշանց տուեցէք, ես ձեր դիվան կանեմ:

Խըլուտուն դարկին, կեթան ծակի վրէն:

Նաչար օղլին կեթայ մէ շէնք ծակի էս եանը, մէ շէնք էն եանը կը թալէ, կայնի: Էն էրկու աղբէր կեթայ մէկ եանը, էն մէկը մէկ եանը կը կայնին:

Նաչար օղլին կը բունայ էն էրկու աղբոր դիօխ կը դարկայ. իդոր էլ կը թալայ խոր, կասայ.


—Սա Նաչար օղլին եմ, գացէք, էլ աղջիկ կայ, խանէք:

Կեթայ ուր աղբոր կուշտ կասայ. —Սա Նաչար օղլին եմ:

Ինչ դղրը մալ, բան կէր, կը բառնան, կեթան ուրանց երկիր:

Ուրանց խէր ու մէր գէմ կիգան, կառնին կը տանին. օխթը օր, օխթը գիշեր խարսնիս կանեն, կը պսակուին:

Ընդոնք խասան ուրանց մուրազին, դու էլ խասնիս քու մուրազին:



122
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

123
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ

ՅԻԻՍԷՓ ՈՒ ԶԱԼԵՆ

(Մակագ բարբառով) *

Յակուբըն տասուերկու աղայ կէր. աասը մէկ մօրէ, էն էր-
 փուս մէկ մօրէ:

Մէկի անուն Յիւսէփ, մէկն էլ Բենիամ:

Յիւսէփ տանըմէկիցն էլ խօրոտ էր:

Եղա ասա տղէք ամին օր կերթէն նէչիր:

Օրէն մէկ տասն էլ ուրինց խուսը էրըն մէկ.

— Էրթանք տուն, մի խէր Յիւսէփ մի խիտ չը գնի՝ մինք չընք
 իգեայ նէչիր: Մի խէր, Յիւսէփ քեանց մի շատ կուզը, զՅիւսէփ
 բիրինք կուրըսինք:

Եկըն տուն. առաւուտուն էսաց միծ տղէն. — Յիւսէփ չգնի
 խըտ մի, տղէք չըն իգեայ էրթանք նէչիր:

Խէր էսաց. — Չըմ իտայ դեայ զՅիւսէփ:

Յիւսէփ էսաց. — Տ'էրթամ:

Խէր էսաց. — Այ որդի, մ'էրթայ:

Յիւսէփ էսաց. — Չէ, տ'էրթամ:

Աղբէրքիր էլան, ձիանք բիրին, խիծան, դեացըն սար նէչր.
 գուրինչ նէչր էրըն շիւր կէսօրին, ծառուացան:

Մինծ աղբէր էսաց. — Էրթանք խորու զերէն, ջիւր քեչինք,
 խմինք, նուր կգեանք:

Եկան վար խորուն. մինծ աղբէր էսաց. — Ըզը կախեցէք, իս
 էրթամ, ջիւր քեչիմ:

Յիւսէփ էսաց. — Իս տ'էրթամ, դիւ մենծ աղբէր իս, չընը:

Յիւսէփ մտաւ խուր, ջիւր էլան, աղբէրքիր խման. ձիանքն էլ

*) Պատմութիւն: Պատմիկ Թեոօյեանց, որ իր ասկով զբնից երբէք լսած չէ
 Յովսէփ Գեղեցկի պատմութիւնը, այլ իրեն նէրթար: Ամբողջ այս անցըր երդեւն
 երգով կատուի. իննն եւս զիտը, սակայն գրի առնելու միջոց չեմ ունեցած:

խման: Սալ քեչիցըն վար խուրու բերնին. Յիւսէփ թուղըն խուրու մէջ:

Յիւսէփն էլ նստաւ վար աթուռն, աթուռ վար ջրուն. լիւս կամար կայնաւ վերէն:

Աղբբբիւրն էլ ըսիցըն.—Մի խօր սլատասխան ինչիւ աը ասնք յիրիկուն:

Մինձ աղբբ էսաց.—Էրթանք, բանձ սպանինք, անիւ ծուցը քեաօիկ թաթխինք մանջ էրընին, տանընք տանք մի խօր, ըսընք.—Յիւսէփ մէ մօտէն հեռու էր, մինչև մենք խասանը՝ գէլիւ կեբան, ծուցը քեաօիկ մնակ էրընի մէջ մնացեր էր:

Գեացըն, լստարակմ սպանեցըն, գանու քեաօիկ թաթխըցըն մանջ էրընին. յըրըկուն առըն, բիրըն տուն:

Յակուր էսաց.—Հնչ տղէք, գիւ էկըք, Յիւսէփ ինչ էլաւ:

Մինձ աղբբ էսաց.—Յիւսէփ մի մօտէն հեռացաւ, մինչև մինք գեացընք, տըսանք, գէլիւ կերած են, անիւ քեաօիկ մանջ էրընին մնացիւր էր. էլ բանձ չկէր:

Էրընթըթախ քեաօիկ թըցըն յեռջիւ խօր:

Թէրն էլ էլաւ, գագրաւ տանըս. կանչից գէլիւրին:

Գէլիւր ժողվան էկըն:

Էսաց.—Իմ Յիւսէփը մըս վար ձի բերնըն, գիւ ինչու զիմ Յիւսէփ կերաք:

Գէլիւրիւ մինձ էսաց.—Մինք ակախ չունընք Յիւսէփը մօտէն, գՅիւսէփ չընք տըսի:

Յակուր էսաց.—Չէ իմ տղէկներ կըսըն՝ «գէլիւ կերան»:

Էսաց.—Գիւ տղէկներ սուտ կըսըն, գիւր աչք քիւ Յիւսէփը չընկի:

Յակուրն էլ օխնից գէլիւրին, էսաց.—Ձի տտամբիւր քեանց թուր սուր ընը. ձի աչքիւ լիւսով ընը. ձի կամար ամին օր ընը. ձի նէշըն էլ գիւր-գիւր ընը--մէկ ընը, մէկ չընը 1):

Գէլիւրին էսաց.—Գեացէք: Գեացըն:

Գեանք Մարբայ Չալիսին (թագաւորի գուտար):

Մարբայ Չալիս Մարբ էրազ տիտու.—«Յիւսէփ աթուռ գըր վար ջրին՝ խուրու մէջ, նստի վերէն, լիւս կամար կայնի վար գլխին:

Մարբայ Չալիս էսաց.—Վնկ էրթայ Յիւսէփ ձը խամար բիրի, յեռջի Յիւսէփն վուսկը կը կընիմ, տամ անիւ բիրողըն:

1) Մկայ էլ Ասուած մանանայ կայ ուրից կամար. նէշըն էլ օարաբէն օսմ չընը. անիւնց աչքերն էլ արնցկուն յուսով ի՛ բուխ մաբն մանջ խեկըն գաւնան գեւ սար գլխից կը օրսման:

Բագրկեան էսաց.—Խաղար Յիւսէփ գեառնարածն, գեառ կերիծան.

Խաղար Յիւսէփ խուվըուին, ուխար կերէծան.

Խաղար Յիւսէփ նախըւրդ ին, նախիւր կերէծան.

Իս չըմ գըտի սր մէկ Յիւսէփ բիրիմ քի խամար:

Էսաց.—Իս չըմ ըսը խաղար Յիւսէփ գեառնարած ըն, խաղար Յիւսէփ խուվիւ ըն, խաղար Յիւսէփ նախըւրդ ըն: Իս կըսըմ ան Յիւսէփ, ինչ խուրու մէջ աթուռ գըր, վար ջրուն նստը, լիւս կամար գաղըր վար գլխին. իս ան Յիւսէփ կուզըմ:

Բագրկեանն էլ էլաւ, ուր բիւնիր բունից, էրարձ, գնաց, Թա օրմ, Թա քսան օր գնաց: Գնաց մանջ գաշարն ծարաւ-ցաւ. գեացըն վար խուրուն, գիւր տըսան:

Էսաց.—Սալ տարէք գեն, թը ջիւր կայ մանջ խուրուն՝ քեչինք, խմինք:

Սալ տարըն գեն. տըսան մարդմ, աթու գըր վար ջրուն, նստը վերէն, լիւս կամար գաղըր վար գլխին:

Բագրկեան էսաց.—Գետանք էն մարդ, ինչ Մարբայ Չալիս կըսըր:

Յիւսէփ խանըցըն գիւս, խեծըցըն վար ձըուն:

Բագրկեան գուր քաւուան էլմ յիտ գարձուց գնաց Մարբ:

Տարաւ գՅիւսէփ էտու Մարբայ Չալիսըն:

Մարբայ Չալիսն էլ իրի յեռջի Յիւսէփըն վուսկը կընից, էտու բագրկեանըն:

Յիւսէփ առըց տարաւ, էսաց.—Յիւսէփ, ըզձը տ'առնըս:

Էսաց.—Իսկի չըմ առնը:

Էսաց.—Ի՞նչիւր ըզձը չըս առնը, իս յեռջի քի վուսկը կընի-ուիր իմ, աուիր իմ քիւ բիրողըն. ըզքի աուիր իմ, գիւ ըզձը առնիւս:

Յիւսէփ էսաց.—Վուսկը տառ-չտառ, ըզքի չըմ առնը:

Այջըկ գինաց, Թագաւորըն խաղաւ իտու էսաց.—Նա մարդիւ յեռջի իս վուսկը կընուիր իմ, աուիր իմ բագրկեանըն, բագրկեանը մօտէն գնիր իմ, ըզձը առնը. մկայ ըզձը չառնը, թըլիս-բոնատուն:

Յիւսէփ տարըն, թըցըն բոնատուն:

Բոնատուն էլ մէկ խէմ կայ, մէկ էլ ջնիւս:

Օրէն մէկ առաւուտուն էրկուս էլան վի:

Խէն էսաց.—Էրազմ իմ տըսի ասօր:

Ձհիւտ էսաց.—Ի՞նչ էրազ իս տըսի:

Խէն էսաց.—Իս տըսայ՝ ըզձը տարըն վար կարմնջին, իմ վըզ կարըցըն:

Ձհիւտ էսաց.—Իս տըսայ՝ Թագաւորըն ըզձը տարաւ, էրաւ ուր վուզիր:

Խէն էսաց.—Քիւ էրազ աղէկ իւ
 Չհիւտ էսաց.—Չէ, քիւն աղէկ իւ
 Յիւսէփ էսաց.—Ձի էրազքիր փութիցէք:
 Խէն ուր էրազ խոտ ջհիւտին, ջհիւտ ուր էրազ խոտ խայունս
 Յիւսէփ էսաց.—Ան ժամանակ ինչ կը կանչին խայուն, ջհիւտ
 թը էրթայ, ինչ ջըհարն կը կանչին, խէն թը էրթայ:
 Խայուն կանչըցըն, ջհիւտ զնաց:
 Չջհիւտ տարըն վար կարմնջին վըզ կարիցըն:
 Յիւսէփ զըտիր խայուն էսաց.—Էսա ջհիւտը վըզ աը կարըն,
 ըզըն տանըն, էնըն վուզիր. ըզձը չըմուսանաւ:
 Կանչիցըն զիէն, աւըն տարըն, էրըն վուզիր:
 Մէկ ժամանակ վերէն ընցաւ. թագեաւուր էրազմ աըսաւ,
 էսաց.—Մարդմ կուզըմ, զեայ, իմ էրազ խանը:
 Մարըայ քաղաք էլ մարդ չմնաց, զնաց, զթագեաւուրը էրազը
 չէխան. մարդ չգըացաւ թագեաւուր ջինչ էրազը աըսի:
 Վուզիր թագեաւուրըն էսաց.—Թագեաւուր ապրած, թը Յիւ-
 սէփ քիւ էրազ խանը. Յիւսէփ չխանը՝ մարդ չխանը. ան ժամանակ
 մինք ինչ բռնատուն ինք, իս, ջհիւտ էրազ աըսանք. իս աըսայ
 ըզձը տարըն վար կարմնջըն, իմ վըզ կարիցըն. ջհիւտ աըսաւ՝ զան
 տարըն, էրըն վուզիր. իս ըսըցը՝ քիւ էրազ աղէկ ի, ան էսաց՝
 քիւն: Յիւսէփ էսաց՝ ձի էրազքիր փութիցէք: Մինք փութիցընք.
 զջհիւտ տարըն վըզ կարիցըն, իսն էլ էլայ վուզիր:
 Թագեաւուր էսաց.—Քիւ տուն չաւրրը, մկայ Յուսէփը վուս-
 կուրքիրն էլ փթիր իւ.—Չէ, սաղ ի, էսաց վուզիր:
 Թագեաւուր խրկից, աւից իրի, էսաց.—Իս ինչ էրազ իմ աըսի
 էսաց.—Քիւ աըսար ձիմ ծուփէն էլաւ, էկաւ չուրային ձիմ
 կլնից, զինաց մտաւ ծուփ:
 Քիւ աըսար էրընջ մի ծուփուց էլաւ, էզի չուրային էրընջ մի
 կլնից, զինաց մտաւ ծուփ:
 Քիւ աըսար խաչքմ ծուփուց էլաւ, էզի չուրային խաչքմ կը-
 նից, զինաց մտաւ ծուփ:
 —Թագեաւուր, էսաց, քիւ էրազ ան չէր:
 Թագեաւուր էսաց.— Խան, ան էր, Յիւսէփ, էսաց, ինչ տընը
 ան էրազ:
 էսաց.—Սուվ տընը (չըսաց թէ սուվ քինէ տընը):
 Յիւսէփ զըտէր ինչ ժամանակ սուվ տընը:
 Իրի, խատմ մուխըն, մէկ էլ խուղէ չընից, մէկն էլ խըզըն
 քիւփուրէ չնից խաց. ըրըկուն ան իրիք խաց լղի ծուց. ինք թը
 թագեաւուր զեացըն զիւան: Կէս սահար վերէն ընցաւ. թագեա-
 ւուր իրի, Յիւսէփը ախանջ խուսաւ, էսաց.—Աստըծու սիրուն ընը,
 իս սուփու մեռայ:

Յիւսէփ էսաց.—Թագեաւուր ապրած կենա, աստե Յուսե
 կայ, խաց չկայ:
 Թագեաւուր էսաց.—Չընը, ճարըմ զընաի:
 Յիւսէփն էլ մուխըն խաց կըսից, էտար. էզո թագեաւուր
 կիրաւ: Քիւ էլ մնաց, էլմ. — Յիւսէփ, Աստըծու սրբուն ընը, իս
 սուփու մեռայ:
 Կըսից, կտուրմ էլ քիւփուրէ խաց էտու:
 Տաս բոպէ վերէն չընցաւ, էլմ. — Աստըծու սրբուն, իս սու-
 փու մեռայ:
 Կըսից, կտուրմ էլ խուղէ խացէն էտու. էն էլ կիրաւ:
 Քիւ մնաց, էսաց.—Յիւսէփ, իրի, էրթանք:
 էլան էկըն ուրից տեղ:
 էսաց թագեաւուր.—Յիւսէփ, իս ինչ մորէ մեկնիր իմ, մինչիւ
 ասոր ընցկուն անուչ խաց իս չէր կիրի. ան ինչ խաց էր, զիւ աը-
 ւըր ձի, իս կերայ:
 Յիւսէփ մուխըն կտուր էլան զիւս, էսաց.— Յառաջը կտուր
 ինչ տուր՝ աօկից էր, զքիւփուրէ կտուրն էլ էլան գիւս, էսաց՝
 էրկրուրդ էս ա. յեաքըն էլ էլան գիւս, էսաց՝ էս իւ
 ինչ թագեաւուրըն էսաց, թագեաւուր էնտեղ բզգեաւ:
 Սուվ անու փուրէն էլաւ, ընկեաւ ախարս:
 Յիւսէփ նստաւ թագեաւուրութին, բաւըրից խաց ժողվիլը,
 իրի Մարը իւից:
 Յիւսէփ զըտէր թանկութեն տընէր ախարք:
 Սուվ ընկեաւ ախար, ալ տեղ խաց չմնաց, քեանց Մարը
 յաւեր:
 Ախարս բուրը կգեան Մարըայ խաց կը տանըն:
 Յիւսէփայ աղըրքերն էլ էկըն խացը:
 Յիւսէփ գանիւնց բեռ բանից, խաց, կերակուլ էտու կիրան:
 էսաց — Կերթէք, մի անգամ էլ ինչ կգէք, ձի պզտի աղըրքմ
 կայ, չըրէք խիտ ձի, փաց չըմ խայ:
 Բեռնիր տարըն, զեացըն տուն:
 Խը լուսիւն խուր սաըցըն.—Մարըայ թագեաւուր կըսը.— Ձի
 պզտի աղըրքմ կայ, ձի պզտի աղըրքը չըրէք խիտ ձի, խաց չըմ խայ:
 էսաց.— Յիւսէփ տարաք, կուրսուցըք. ձի աչ մնացը զպզտը
 աղըրքն էլ տանըր կուրսուցըք. քարաք. ամին սուփու մեռըն, իս
 չըմ խայ:
 Մէկ, էրկու, փրեք օր վրէն ընցաւ, էլ քաղաք սուփու ճար
 չտուրն. Յաւուրն էլ էսաց.
 —Քիւ գըտիր, ձի Աստուած, Յիւսէփ տարաք կուրսուցըք, աս էլ
 տարէք, ինչ կէնէք, էրէք:

ԶԲԵՆԻՊԱՄՆ Է՛լ առըն խիտ ուրինց, գեացըն:
 Գեացըն խասան Մարբ. գեացըն թագեաւուրը սարը առաջ:
 Թագեաւուր էսաց. — Նա մարդիր տանէք, խաց, կիրակոււ
 Կըտէք ուտըն, բեռնիր կը բունէք. բիրանքտիր չկարէք, իս գեամ,
 Նուր բիրանքտիր կարէք:
 Տարըն խաց, կիրակոււ տուըն զանխնց:
 Բեռնիր բունըցըն, խապար տուըն թագեաւուրըն:
 Թագեաւուր էրի վար բեռնիրիւն: Ուր ծուցը քաս ուր ծու-
 ցէն էխան, խուրից պզտը աղբոր բեռան մէջ. զուր ծուցը քեա-
 ֆիկն էլ քարը ուր քրտընք, իգի մինծ աղբոր բեռան մէջ:
 Բեռնիր կարըցըն, գրեռնիր բառցըն, քեաղքէն ընկեան զիւս,
 գեացըն:
 Թագեաւուր մարդ խրկից խիւ.— Ան մարդիր ինչ գեացըն,
 անխնց բեռնիր ունկ կենէք. իմ թաս գեողցած, տարած. որու
 բեռ կը տեսնէք, զան մարդ բունէք, բիրէք:
 Գեացըն, էրկու, իրիք բեռան բիրան բացըն, բան չտըսան.
 պզտը աղբոր քեակիցըն, կան էկըն, քաս միջէն խանըն:
 Զմարդ առըն, տարըն թագեաւուրըն:
 Թագեաւուր էսաց.— Նա մարդ կը տանէք համամ, կը լեողա-
 ցընէք, ձեռք մողէկ շոր կը բիրէք խագիւցէք, տարէք, գրէք յե-
 դէն. լիւս, դոտէկ կըտէք, չուրս գան անիւ կիրակոււ կը տանէք,
 Իսանանք վար աղբէրբիրուն:
 Աղբէրբիր էրկու աուուր ճանապարհ կար մինչև խասնէն գեդ:
 Յակուր կնկեան էսաց.— Կնըկ, էսաց. Յիւսէփը խուտ կգեայ:
 Կնըկ էսաց. — Աստուած քիւ տուն աւըրը խա քիւ աղբըրըն.
 միայ Յիւսէփը վուսկուրբիր փըթը, զիւ կըսըս Յիւսէփը խուտ կգեայ:
 Մնաց, վրէն ընցաւ էրկու իրիք սահաք. էսաց.
 — Կնըկ, Յիւսէփը խուտ կը մօտանայ, կը շատանայ:
 Կնըկ էլմ չխաւատաց:
 Բեռնիր բիրըն, թըլըն յեռջիւ դաան:
 Յակուր գինաց վար բեռնիրուն, խուտ էրաւ, գինաց վար
 քեռամ գազըաւ:
 էսաց.— Նա բեռ քեակըցէք, Յիւսէփը խուտ նա բեռնէն կգեայ:
 Բեռ քեակըցըն, մանջ բեռան կան էկըն, ծուցու քեաֆիկը
 գնտան մէջ, տուըն Յակուրըն:
 Յակուր առըւ, խուտ էրաւ, քսից ուր աչքիր:
 Որ քսից ուր աչքիր, աչքիր լուսաւորուան:
 — Կնըկ, էսաց. իս չըսը՝, Յիւսէփը խուտ կգեայ. սոս, քար քիւ
 աչքիր:
 Կնըկ առըց, քսից յիւր աչքիր:

Կնիկն էլ քսից, աչքիր լուսաւորուաւ:
 Յակուր էսաց.— Իւ էկըք, Բենիամ ինչ էրաւ:
 էսաց.— Բենիամ թագեաւուրը քաս գեողցիր էր, գրիր էր մանջ
 ուր բեռան. մինք քեաղքէն ընկեանք զիւս, մարդ իրի յիտէն,
 բեռնիր էթալ գեաըն, զըմնն ունկ էրաւ, Բենիամը բեռան մէջ
 քաս տըսաւ, զԲենիամ բունըցըն, առըն տարըն:
 — Յակուր էսաց.— Բան չկայ, թըլս տանըն:
 Խաց կիրան, իլըսան. զիւրընց հեող էրըն, էրթան խացը:
 Խէր, մէր ըսըցըն.— Մինք էլ տը գեամք:
 էլան, խա աղէնիրուն գեացըն:
 Գեացըն Մարբայ քեաղաք, յեռջիւ թագեաւուրը սարըն
 կանգնան:
 Թագեաւուր էսաց. — Նա մարդ, նա կնըկ տարէք, խաց, կի-
 րակոււ տուէք, թը ուտըն. տարէք համամ, լեողացըցէք, մէմէկ
 քամիգ ձեռք լաթ տուէք խաքըն, տարէք յեողէն գրէք: Նա մէ-
 կիւ մարդիր տարէք, խաց կիրցըցէք, չիւր իս գեամ:
 Զխէր, գմէր տարըն համամ, լեողացըցըն, մէմէկ ձեռք մշուր
 տուըն ու խաքեան, տարըն յեողէք գրըն:
 Աղբէրբիրն էլ խաց տուըն, տարըն յեողէմ գրըն:
 էսաց.— Ի՛հ, կանչիցէք ան մարդ, ան կնըկ թը գեան:
 Կանչըցըն, խէր, մէր տարըն:
 էսաց.— Ի՛հ, կանչիցէք ան տաս մարդն էլ թը գեան:
 էսաց.— Նա յառաջի մարդն ինչ բեռնիր էր, բիրէք ըսգայ:
 Զաղբէրն էլ տարըն անտե:
 Աղբէր գինաց թագեաւուրը ձեռ. խէր, մէրն էլ գեացըն թա-
 գեաւուրը ձեռ. թագեաւուր ձեռ չէտու. ինք գիտուր ձեռ պազնից,
 գմօր դօխ:
 էսաց.— Իս ձի Յիւսէփն իմ, իս ձի որդին. գիւ գեաք իմ ձեռ
 պազնիք:
 Խէր, մէրն էլ գեացըն Յիւսէփը դիօխ պազնըցըն:
 Յիւսէփ աղբէրբիրուն էսաց. — Իւ իս ձը էրըք, իս իս ձի
 չըմ ընը. գիւ գըտիք, ձի Աստուած. էլիցէք, մատըցէք ձի քեանըմ
 ցուրըն կըպը, առէք, գեացէք ձի քեաղաք. գիւ գըտէք, ձի Աստուած:
 Աղբէրբիր էլան, զուրինց ցուրըն բառցըն, գեացըն ուրինց
 քեաղաք:
 Յիւսէփ ուր խէր ուր մէր, ուր աղբէր մնացըն Մարբայ քեաղաք:
 Մարբայ քեաղաք Յիւսէփ Մարբայ թագեաւուր:

ՄՈՒՍԻՍԻ ՍԱՅՐԱՆ *

1. Մայրան դուրբան, սուր փե կեայ, ալ կառնու օղե,
նա մըն զօ. սինկ ու բարե Սայրան մայրա բայաֆեկեկայ քարժե
սեարե շօտ, դինե կման . . .
Էամ դինե կման, կաթր սայ բամամ, չը կիւեայ սեա մամ, դինե կման . . .
2. Սայրան դուրբան, ծը Մուսուրե կարանի Հմայե,
նա մըն զօ, ըլի պեյեանկե Սայրանայ մայրա չար ա ծը գմանե, չե չե
դինե . . . :
3. Սայրան դուրբան, բաժնու զուա ըր գօրեկ,
կուզի դապրե Սայրանե մայրա ըր գրքանա, բանկնա կու չարուրե
ժրօրեկ,
Մընե բրդայ ընեկ շիտին մայե դընե, չե չե չե դինե . . . :
4. Սայրան դուրբան, կազ խուշաման սայ վի դուրի,
Բրա սինկե մըն սինկե Սայրանե մայրա ըր ֆուրա,
Հարս սարե գեսս դարե ըրքա Էտի ու զարի, դինե կման . . . :
1. Սայրան դուրբան, սօլեր հագիր, մենք դնանք օղէն.
Չէ, կս սասցի, Սայրանի կուրժ այնպէս սպիտակ է, ինչպէս՝
դեզի գլխի ձիւնը.
Մենք ծանք ախ, եօթ տարի ամբողջ քու յուսով մնացի.
ախ ծուռ, ախ ծուռ . . .
2. Սայրան դուրբան, Մուսուրէն մինչև Համայի
Չէ կս սասցի, Սայրանի մատներ ինչպէս մօլի տան ճրագը
— Համային . . .
3. Սայրան դուրբան բարակ հասակիդ սասցին,
Երանի Սայրանի ձեռքէն բռնէին, բերէին շուկայի մէջ ծա-
խէին,
Ես կտաի քաղցր հոգիս և աշխարհի դոյքը, լէ-լէ . . .
4. Սայրան դուրբան, կս մշակ եմ քու այդ բերնին.
Թող իմ կուրժքըն Սայրանին կուրժքին վերայ ընկնի.
Մինչև գլուխ . . .

* Սոյն սրահարական երգը երգած եւ պատմած է Բարայի Միքայէլան, որ ընդունակ է ասանաւորներ գրելու, թէեւ առանց արհեստի. գրած ունի աստիճանով ասանաւորներ Բագրեանդայ Խասուր զիւղի երկրագործական կեանքէ:

ՔՐԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

ԶԱՅՆԱԳՐԵՑ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Melodies kurdes

RECUEILLIES

PAR


Archimandrite COMITAS.



Imprimerie de musique de P. Jurgenson à Moscou.

На основании определения Совета Специальных классовъ Лазаревскаго Института восточныхъ языковъ отъ 22 декабря 1903 г. печатать дозволяется. Директоръ В. Миллеръ.

1548



1. Դանդիլի Սիափուշ. Ghandili Siapusch.

M. M. ♩ = 120.



Չու. - մա Դան-դի-լի Սիա-փո - շա - ն
Tschu - ma Ghandi - le Sia - po - scha - n



այ փե - քե - շի դը - չո լա դե - յի
ai we khe - schi detscho la de - i



չու-մա Դան-դի-լի Սի-ա-փո - շա - ն ֆեք - րի -
tschuma Ghandi - le Si - a - po - scha - n fekh - ri -



մե _____ լե բըր-ջու բա-դա-նան մար-թուր
me _____ le ber.dju - ba.da.nan marthub



ջը-րի - լեյ-լու-նա - հա - ր ման բա - ւա - րա
dje - ri lei - lu - na - ha - r man ba - wa - ra



ժը փատ-շա-հի ջա - բա - - - ր համ-դա դը բա - րի
je.patscha_hi dja - ba - r hamza de ba - ri



սադ հա-զար դիւ ըն-կա-հա դը-լե մե - նե
sad hazar dü en - ka - ha de - le me - ne

2. Լէյլու Մէջնում. Leili Medjnum.

M. M. ♩ = 160.



Ախ _____ Չը դիւն-եա-յի դե-թա ըլ
Ach _____ Tchedunea - i de - tha el




մը քա-լը - քիւ-րէ դիւ աշուղ հաւ-րա բիւ-նէ բիւ-նէ
me kha.le - khü - re dü aschugh haw - ra bü - ne bü - ne



ե - քի Լէյ-լի եա-դէ մա-լիք շա-ւո-թի ըժ խո մը ջիւ-մէ
e - khi Lei - li ea - de malikh schawothi ej cho Midj - lü me.

3. Զամբալիէ. Djanbalie.


M. M. ♩ = 160.



Վոյ Լէ. Գա-ւա-ռէ խո-բան սէ կո-նա - խա
Woi le. Ga - wa - re choban se ko - na - cha




ն ժը մա-լա - փե - դա _____ վոյ Լէ
n je ma - la we - da _____ woi le.



Զամ-բա-լի - ա մը-նէ խա-մի - լի
Djam - ba - li - a me - ne cha - mi - li



մա - շի - ա - բե - դա _____ վոյ Լէ
ma - schi - a - be - da _____ woi le



Զամ-բա-լի-ա մը-նէ ա-զիզ շուան լը - բե - - - ր բէզ-դա
Djam - ba - li - a me - ne a - ziz schwan le - be - r bez - da

Վոյ լէ մը նէ մը - չըլ խո-կէ-ր.
Woi le me ne me_tchel cho_ke_r.

Ջամբա-լի - ա մը-նէ շու-նա քուր-քու կա-պու-տան ըլ կու լաւ
Djam_ba_li_a me_ne schu_na khur_khu ka_pu_tan el ku law

խո - կէր. Ջամբա-լի-ա մը-նէ շու-ան բիւ մը-նաս նա -
cho - ker. Djam_ba_li_a me_ne schuan bü me_nas na -

կէր. Եար եար եա - ր Ջամբա-լի-ա մը-նէ եա-ր.
ker. Iar iar ia - r Djam_ba_li_a me_ne ia - r.

4. Հասամ աղա.
Hasam agha.

M. M. ♩ = 120.
Ախ մը-նա-թա սագ մը-նա-թա ախ
Ach me_na_tha sad me_na_tha ach

Ժը մը-նա-թա վի բա-յէ վի
je me_natha wi ba_ie wi

բա-լա - յէ քո-ֆի-ա լէյ-լէ խա-նէ դա-լալ
ba_la_ie kho_fi_a lei_le cha_ne da_lal

Հու
hu.

5. Միրզա աղա.
Mirza agha.

M. M. ♩ = 160.
Դա-րի Թամբու-րէ դա - րէ - դա - րա - դըն-եա դըն-եա
Dari tham_bu_re da_re - da_ra - den_ia den_ia

չի մըթ-րըբ-շաշ-ու - փա - րա - դըն-եա դըն-եա.
tschi meth_reb_schash_u - pa - ra - den_ia den_ia:

6. Գուլլեզ Գեարո.
Khulleg Giaro.

M. M. ♩ = 104.
Հա-րէ դա Թո Հա-րէ բա -
Ha_re da tho ha_re ba -

Վո Ա - մեր ա - դա դի - ւա - նէ գրան դա -
wo A_mer a_gha di_wa_ne gran da -

նի գա-զի է - լա Գի-գան Մլան գրա-նիֆին-ջա-նի ֆէր-
ni ga_zi e_la Gi_gan Mlan gra_ni fin_dja_ni fer -

Ֆու-րի լը օր-թա դի - ւա - նէ դա-նի Հա - ջի-գեա-սի ֆին-
fu_ri le or_tha di_wa_ne da_ni ha_dji_gia_si fin -

ջա - նէ ֆէր - ֆու - րի սէր Թա - ջա զէ - րին Տը -
dja_ne fer_fu_ri ser tha_dja ze_rin he -

լի - նէ Հա ոա Հաս-բէ Բէ - ջա - նէ Ժը մի - րէ Ա -
li_ne ha_ra has_be Be_dja_ne je mi_re A -



բա-բան ու-րի-նա բէ Փէ-րի-շա-նէ ժը խո-րա հը-լի - նէ - հէ
ra-ban ra-bi-na be Fe-ri-schane je cho-ra he-li-ne-he



վի - վի - հէ վի - վի - հէ վի վի
wi-wi-he wi-wi-he wi wi

7. Գիւլլեք Գիարօ.
Khullekh Giaro.



Դէ եօ եօ եօ եօ
De eo eo eo



Ա - մար ա - դա - խէ - բէ նա բի - նա վի -
A-mar a-gha-che-re na-bi-na wi-



վի - վի - սէ-կու-ռէ խօ սար-թախ-տա -
wi-wi-se ku-re cho sar-thach-ta-



կի - հը - լի - նա վի - վի - վի - չա - ւա-տու գու-ռէ -
ki-he-li-na wi-wi-wi-tscha-wa-tu-gu-re-



մըն վու-լա-թէ - խա-րի-րա - դը շի - նա
men wu-la-the-cha-bi-ba-de schi-na



հայ վի - վի հայ վի - վի
hai wi-wi hai wi-wi

8. Մամզին.
Mamzin.
(աղջիկ)



Ախ - Արֆան, Զարան, Զարա-Միրթաժ-դին հար սէրը-բա-նա
Ach Arfan, Djakhan, Ghara Mirthajdin har se bera-na-




ա-ւէ մա-յէ Մա-մօ Ա-լա-
a-we ma-je Mamo A-la-




նէ ne է e
ne e



Հայ - Գիա-լի խո-լամ-խը-մա-թե-րան
Hai Gia-li Cholamchezmathkhea-ran
ԲԵ-ԲԵ-ԲԵ-ԼԱ - զի - նան
Bekhen-bela-zin-an
ԲԵ-ՐԻ ԲԵ-ՔՆԸՆ զա-րա
Beri bekhschenda-ra
ԼԵ-ՔՆԸՆ-ՂԻ-ՆԱ զա-րա
Lekhen zina za-ra



հա-դա գան-եա Զամ-րի-լէ մը-սա-ֆա-
ha-da gania Zambile me-sa-fa-



րա ra ա a

9. Դարվիշի Աւդի.
Darwischl Awdi.

M. M. ♩ = 132.

Է - լէ ջար-դէ, ջար-դէ մա չու-նա ջար-դէ
E - le djar - de, djar.de ma tschu-na djar - de

ջար-դէ մա չու - նա ջար - դէ
djar-de ma tschu-na djar - de

ոէ սը - բէ գո - լա գէ - լը Դաւ-րի -
oe se - be go - la ge - le Daw - ri -

չէ Աւ - դի լա-ւան դէ շա - րէ - չի-չադ գէ -
sche Aw - di la-wan de scha-re - tschitschagge

սը-վա-րա դա-լալ յէ - մա-լէ - դա-նա -
se-wa-ra da-lal ie - ma-le - da-na -

վայ լօ - վայ լօ - վայ լօ - վայ լօ - վայ լօ -
wai lo - wai lo - wai lo - wai lo - wai lo -

վայ լէ դայ լը մըն փոր - գո - րէ ոէ սը - բէ
wai le dai le men per-go - re oe se - be

խո-զի դանդաբարայէ մըն բար գուշանէ բա
chozi dandza - bra. ie men bar guschtne ba

ոէ սը - բէ շանդդա բըսմա-մէ մըն հա-յա բար շուստնէ
oe se - be schanzda besma.me men haia bar schustne.

բա ոէ սը - բէ
ba oe se - be

բի-րա դա-լը-գէ հա-յա բար մըր-նէ բա
bi-ra ga - le-ge ha-ia bar merne ba

ոէ սը - բէ ջա - լէ մըն ջա - լէ
oe se - be dja - we men dja - we

Դաւ-րի-չէ Աւ-դի - լա-ւան դէ - շա - րէ - չի - շադ գէ -
Dawri-sche Aw-di - la-wan de - scha-re - tschitschagge -

սը-վա - րա - դա-լալ յէ - մա-լէ - ջա-բը-քա-թա հա-սէբ
se-wa-ra - da lal. ie - ma-le - dja-be - kha. tha ha-seb

գա - նէ հա - մի սաղ - րի ոը դուն-եա - յէ
ga - ne - ha - mi sagh-bi re dun-ia - ie

դուն-եա-յէ դուն-եա-յէ վայ դուն-եա-յէ վայ
dun-ia - ie dun-ia - ie wai dun-ia - ie wai.

10. Սեւահաջէ.
Sewahadjé.

M. M. ♩ = 116.

Հա - րէ - զա-յէ մը-նէ ի-շաւ խաւ-դէ
 Ha - re - da - ie me - ne ischaw chawge
 Լօ խո-ժի - զի-բու - Հա-
 lo cho - ji - di - bu ha -
 րէ զա-յէ խո-զի մը-նէ բը-զա-նի - ա ու-ա բա-ժա-ռէ
 re da - ie cho - zi me - ne be - za - ni - a ri - a ba - ja - re
 Թըլըսխամսէ ո՛է լը քու-յա վայ դը-լօ վայ դը-լօ խա-րի-բօ
 theleschamse oe le khu - ia wai de - lo wai de - lo cha - ri - bo
 վայ դը-լօ Թա-լա-ֆօ, վայ դը-լօ, վայ դը-լօ, վայ դը-լօ
 wai de - lo thala - fo, wai de - lo, wai de - lo, wai de - lo.

11. Համըդէ Շանդէ.
Hamede Schange.

M. M. ♩ = 144.

Հա - մը - դէ Շան - դէ Ժը-մամ բըս-մա - - -
 Ha - me - de Schan - ge Je - mam bes - ma - - -
 մէ խօ զըլ մա - - - յա - - - Հա - մը - դէ Շան -
 me cho del ma - - - ia - - - Ha - me - de Schan -


գէ Ժը-մամ բըս-մա - մէ խօ զըլ մա - յա - -
 ge Je mam bes - ma - me cho del ma - ia - -
 ո՛է սը - րէ գօ - նէ խօ
 oe se - be go - ne cho
 բար գրի տա-նի Թխու-րէ դը նա եա-րան - - - վայ
 bar gri ta - ni thchube de na ia - ran - - - wai
 Լօ - - - - - վայ Լօ
 lo - - - - - wai lo.

12. Համէ Մուսէ.
Hame Muse.

M. M. ♩ = 120.

Դը-լէ մը-նէ վո դը բէ-յա ա-ղա-յէ
 De - le me - ne wo de be - ia a - gha - ie
 մըն սա - քի - նի դա - րը դը գո - նի - ա
 men sa - khi - ni da - re de go - ni - a
 3
 գը-րի գա-զի Այ - շի - ա Այ - շի - գօ նու-րի-ա -
 ge - ri ga - zi Ai - schi - a Ai - schi - go nu - ri - a -
 նու-րի-կօ - բա-սի - ա դա-րա-բա - սար - բէ - ա.
 nu - ri - ko - ba - si - a da - ra - ba - sar - be - a.

13. Սայրան.
Sairan.



Սէյ-րան զուր-բան սօ-լա - փէ - քէ
Sei-ran ghur-ban so-la - pe-khe



ամհար-նա - օ-դէ նա մըն-գօ -
amhar-na - o-de na men-go



սին-գու - բար-բէ սէյ-րանէ - մա-լա բա-լաքընդա
sin-gu - ba-re sei-ra-ne - ma-la balakhenga



բար-ֆէ սա-րէ Լօ-դէ
bar-fe sa-re lo-de



դի-նէ եւ-մա ն դի-նէ - եւ-մա ն
di-ne ia-ma n di-ne ia-ma n



Հաֆթսալ - թա-մա-մ Լը հիվ-եա - դայ մա - մ
haft sal - tha-ma-m le hiw-ea - dai ma-m



դի-նէ եւ-մա ն դի-նէ եւ-մա ն,
di-ne ia-ma n di-ne ia-ma n.

ИЗДАНИЯ ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОГО ФОНДА Н. О. ЭМИНА

подъ редакціей ПРОФ. Г. ХАЛАТЯНЦА.

Выпускъ I: Исторія Арменіи Моисея Хоренскаго, *новый* переводъ Н. О. Эмина, съ примѣч. и приложениями (посмертное изданіе). Москва, 1893, стр. XXXVI + 323. Цѣна 2 руб.

Выпускъ II: Исслѣдованія и статьи Н. О. Эмина по армянской миѳологіи, археологіи, исторіи и исторіи литературы (за 1858—1884 гг.), съ приложен. переводовъ изъ армянскихъ историковъ. Москва, 1896, стр. VII + 431. Цѣна 2 руб.

Выпускъ III: Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературѣ (за 1859—1882 гг.): апокрифы, житія, слова и др. Съ тремя приложениями. М., 1897, стр. XXII + 367. Ц. 2 р.

Выпускъ IV: Исслѣдованія Н. О. Эмина по армянскому языку, литературѣ и исторіи (за 1840—1855 гг.) — на армянскомъ языкѣ — съ портретомъ Эмина и матеріалами къ его біографіи. Москва, 1898, стр. VIII + 272. Цѣна 1 руб. 50 коп.

Покупающіе четыре выпуска вмѣстѣ платятъ 6 руб.

ԱՒԵՏՍՐԱՆ ԸՍՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՆԵԱՅ ՄԵՐՈՑ

գրեալ ՅԼԶ Թ. Հայոց և յամի Տեառն 887. Եւստափոյ Հրատարակութիւն գրչադրի Հաղարեան ձեմարանի արեւել. լեզուաց. Մասիսում, Ռ-ՅԻԸ — 1899, in 4°. Գիրը ճանապարհածախսով 20 րուբլի (60 ֆրանկ): (Евангеліе въ древне-арм. переводѣ, писанное въ 887 году. Фототипич. изданіе рукописи Лазаревскаго Института восточ. языковъ. Москва, 1899, in 4°. Цѣна 20 руб. (60 франковъ) съ пересылкой.

Складъ изданій въ Правленіи Лазаревскаго Института В. Яз., въ Москвѣ.



„ԷՄԻՆԵԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ“

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ.

ՀԱՏՈՐ Ա. Փշրանքներ Շիրակի ամբարներից. մասն ա. Ժողովրդ. գրականութան տեսակներ—Հէքեաթ, առակ, առած, հանելուկ ևն: Մասն Բ. հաւաք և սնտախաղաղութիւն, ժողովրդական սովորոյթ, կենցաղ և զբաղմունք: Յաւելում. Շիրակի բարբառի համառօտ բառարան: հաւաքեց Ա. Միխայլեանց. Մոսկուա—Ալէքսանդրապոլ. 1901 թ. էջ ԺԴ+338. Գինը 1 ա. (2 ֆռ. 50 սանտ.):

ՀԱՏՈՐ Բ. Ժողովրդական վէպ (6 հատ) և Հէքեաթ (42 հատ)—Տաճկահայ գաւառական բարբառներով: հաւաքեց Ս. Հայկունի: Մասն առաջին: Մոսկուա—Վաղարշապատ. 1901 թ. էջ Ժ+447. Գինը 1 ա. 25 կ. (3 ֆռանք):

ՀԱՏՈՐ Գ. Թուրքերէնի ազգայութիւնը հայերէնի վրայ և Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Կարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներում: Գրեց Յ. Աճառեան. Մոսկուա—Վաղարշապատ. 1902 թ. էջ Զ+381. Գինը 1 ա. 50 կ. (4 ֆռանք):

ՀԱՏՈՐ Դ. Ժողովրդական Հէքեաթ (48 հատ)—մեծ մասամբ Տաճկահայ գաւառական բարբառներով: Մասն երկրորդ: Յաւելում. երկու ձիւղ «Դաւիթ և Մհեր» ժողովրդ. դիւցազնական վէպի: հաւաքեց Ս. Հայկունի: Մոսկուա—Վաղարշապատ. 1902 թ. էջ Ը+462. Գինը 1 ա. 25 կոպ. (3 ֆռանք):

—33—

Ն Ե Ր Կ Ա Յ Հ Ա Տ Ո Ր Ի Գ Ի Ն Ն Է

1 ա. 50 կ. (4 ֆռանք):

Հինգ հատորը միասին առնողները վճարում են 5 ռուբլի:

ԴԻՄԵԼՈՒ Է. ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ. ՄՈՍԿՈՒԱ.

Institut Lazareff des langues orientales, Moscou (Russie).

385

8

568
85 ✓ ✓

« Ազգային գրադարան »



NL0236114

55.397

